



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2480

2481

U. S. D. C.

Antique

84

U-63

2011

№ 3003

84

U-63

Է Օ Փ Է Ն — Ս Ի Ի

ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԵԱՅ




ԹԱՐԳՄԱՆԵԱՅ Ի ԳԱՂՂԻԱԿԱՆԷ

ԿԱՐԱՊԵՏ Ս. ԻԻԹԻՃԵԱՆ



ՀԵՏՈՐ Ե.



Կ. ՊՕԼԻՍ.

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ

- 1 8 6 7 -



75030-42

169-92 9

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

ԹՒՆԲՈՒՄՆԵՆԶԻՆ

Իննեւտասներորդ դարուս մէջ փայլող ակա-
նաւոր հանճարոց ծնունդներուն մէջ առաջիննե-
րէն մէկն է Էօթէն-Սիւ գաղղիացւոյն այս գործը :

Մարդկային աղատութեան եւ յառաջդիմու-
թեան ամենէն մեծ ամենէն ճարտիկ եւ ամենէն
վտանգաւոր թշնամւոյն՝ այն է Ճիզվիթութեան
սոսկալի բայց ճշգրիտ նկարագիրն աշխարհի
ներկայացընելով՝ մարդկութիւնն անոր մտադա-
րոգայթներէն զգուշացընել . — այս է հեղինա-
կին նպատակը . — վսեմ նպատակ , որ մատենա-
գրրական հաղուագիւտ տաղանդի մը հետ միա-
նալով՝ համայն լուսաւորեալ աշխարհի սքան-
չացումը գրաւած է :

Ճիզվիթութիւնը՝ ինչպէս կարծեցընել տալ
կուղեն ոմանք՝ կամամտածական եղջերուաքաղ
մը չէ , այլ կազմակերպեալ մարմին մ'է , աշխար-
հատարած ընկերութիւն մ'է յատուկ օրէնքնե-
րով եւ յայտնի ու դադանի անդամներով , որք
խորհրդական անյոյժ կապով մ'իրարու հետ միա-
ցած , եւ կոյր կամ մանաւանդ դիակնակերպ հնա-
զանդութեան ուխտով իրենց մեծերուն ակնար-

կուժեանք ենթարկուած՝ մեքենայաբար կաշ-
խատին ու կը գործեն յօգուտ ընկերութեան նը-
պատկին՝ որ է մարդկային ազգին բարոյական եւ
նիւթական ստրկութիւնը :

Այս խաւարասէր ընկերութեան հիմնադիր
եղած է 1534 թուին Իզնատիոս Լոյսլա անունը Ս-
պանիացի կրօնաւոր մը՝ զոր յետոյ Պապերն 'ի
թիւս սրբոց անցուցած են : Ճիզվիթաց արտաքին
նպատակն էր անհաւատներուն քրիստոնէութիւն
քարոզել, հերետիկոսները դարձի բերել եւ ման-
կունք դաստիարակել : Ահա այս կեղծ պատուա-
կաւ իրենց ընկերութիւնն օր քան զօր մեծցաւ,
զօրացաւ, աշխարհի ամեն կողմերը ճիւղեր արձա-
կեց. եւ որովհետեւ մարդոց հոգւոյն ու սրտին
լծակները՝ կրօնքն ու դաստիարակութիւնը՝ իրենց
ձեռքն էին, մարդկութիւնը բարոյական ստրկ-
ութեան շղթայներով պարաւանդելէ եւ ան-
կենդան դիակ մը դարձնելէ ետեւ՝ մարմնա-
ւորին վրայ ալ տիրելու ձեռնարկեցին. եւ « Աւա-
ւրն ամենամեծ փառացն Աստուծոյ նպատակն
գիժոցը կարդարացրնէ » փտանգաւոր սկզբուն-
քը հնարելով եւ մտքի ու խղճի ազատութիւնը
կաշկանդելով, ոճիրն առաքինութեան եւ իրենց
նպատակին ծառայող եղեաներն աստուածահա-
ճոյ գործոց փոխարկեցին, եւ շատ դաւադ-
րութեանց արիւնքուշա ապստամբութեանց
եւ մինչեւ իսկ արքայասպանութեանց թելա-
դիր թլալով՝ Եւրոպայի շատ երկիրներէն վը-
ռքնատուեցան. 1581 ին եւ 1601 ին Անգղիայէն :

1594 ին եւ 1762 ին Գաղղիայէն , 1598 ին եւ
 1759 ին Բորթուկայէն , 1717 ին եւ 1817 ին Ռու-
 սիայէն , 1753 ին Չինաստանէն , 1767 ին Սպանիա-
 յէն ու Սիկիլիայէն , եւ վերջապէս 1773 ին իսպ-
 ֆանեցաւ Աղեմէս Թ՛Ն պապին կոնդակովը : Սա-
 կայն ճիզվիթներն ուրիշ անուներով շատ եր-
 կիրներու մէջ իրենց չարաչուք պաշտօնը շա-
 րունակեցին , գլխաւորապէս Ռուսիոյ մէջ՝ ուր
 Աատարինէ Բ կայսրուհին իրենց ապաստան տը-
 ւած էր 1779 ին : 1814 ին հանդիսաւոր կերպիւ
 վերահաստատեցան Պիոս Է պապին ձեռք եւ
 նորէն մուտ գտան այն երկիրներէն շատին մէջ
 ուսկից վճատուած էին , ինչպէս նաեւ 'ի Գաղ-
 ղիա՝ Պուրպոնեանց վերահաստատուելէն ետեւ՝
 Հարք Հաւատոյ անունով . բայց ետքը նորէն վը-
 ռնատուեցան , թէ եւ մինչեւ հիմա ուրիշ զանա-
 զան անուներով՝ իրենց խաւարային ու բռնա-
 ւորական գործողութիւնը կը շարունակեն , եւ
 իրենց մեծաւորը մինչեւ այսօր Հռոմնատելով իր
 հրամաններովը ճիզվիթական անհուն մեքենայն
 կանոնաւորապէս կը շարժէ :

Ե ճիզվիթութիւնը , կըսէ գաղղիացի հե-
 ղինակ մը , սուր մ'է , որուն երախակալը Հռոմ

* ճիզվիթներն ամեն կերպարանք ամեն դէմք
 եւ ամեն գոյն կառնուն , եւ իրենց ամենէն մեծ
 նկարագիրն է կեղծաւորութիւն . այս պատճա-
 րաւ ճիզվիթութիւնը կեղծաւորութեան հոմանիշ
 եղած է Յերոպիոյ մէջ :

է, եւ ծայրն ամեն տեղ : »

Մեր ազգն ալ այս գիշերադէմ ընկերութեան
դարաններէն դերժ մ'նայած չէ . երեք հարիւր
տարիէ 'ի վեր բիւրաւոր ազգային ք միամտաբար
անոր թակարդն իցնալէ ետեւ, այսօր իսկ մինչեւ
անդամ ազգիս Նուսաւորչական մասին մէջ ճիգ-
վիթութեան նենդաւոր ազգեցութիւնը բազմա-
գիմի արգելքներ կը յարուցանէ ազգային յառաջ-
դիմութեան դորժին դէմ, եւ ամեն հնար 'ի գործ
կը դնէ որ հայ ազգը միշտ տգէտ միշտ պառակ-
տեալ եւ միշտ տկար մ'նալով անջան եւ դիւրին
որս մ'ըլլայ իրեն :


Այսպիսի վտանգաւոր ազգեցութենէ մը մեր
բարեմիտ ազգայիններն զգուշացընելու պէտ-
քը բազում տարիներէ 'ի վեր զգացուած ըլլա-
լով, արդէն քանի մ'անգամ փորձեր եղան Կո-
ժէն-Սիւի այս հռչակաւոր դորժը հայերէնի
թարգմանելու, բայց տպագրական ծախուց
ծանրութենէն եւ ուրիշ այլ եւ այլ պատճառներ
րէ փորձերն անյաջող ելան եւ յառաջդիմասէր
ազգայնոց շատերուն բաղձանաց հետ նաեւ դո-
հողութիւններն ապարդիւն մ'նային :

Այս գրական պակասը լցընելու եւ միան-
գամայն ազգային յառաջդիմութեան դոյզն ծա-
ռայութիւն մը մատուցանելու փափաքով ձեռք
զարկինք այս մեծ դորժն սկիզբէն թարգմանե-
լով հետ գհեաէ հրատարակել նախ Մասիա լրագ-
րոյ մանր թերթերուն միջոցաւ եւ վեց ամիսն

անգամ մ'ալ գատ հասորով, ինչպէս որ արդէն
Սիւվիո-Բէլլիքօի ԲԱՆՏԲ ԻՄ անուն յիշատակա-
գիրը, Կօլտսմիթի ՎԷՔՅԻԼՏԻ ԵՐԷՑ վէպը եւ
Մ. Վ. Տը Ֆէրէալի ԳԱՂՏՆԻՔ ՀԱԻԱՏԱՔՆՆՈՒ
ԹԵԱՆ վիպասանութիւնը յաջողեցանք թարգ-
մանել եւ հրատարակել:

Կը ցանկայինք մեր այս թարգմանութեան
հասորները պատկերազարդ ընել, բայց Կ. Պօլ-
տոյ մէջ պատկերներ չիսել տալու համար ըրած
քանի մը փորձերնիս չյաջողելով եւ Փարիզէն
բերել տալու համար ալ առաւելագոյն ծախուց
կարօտելով զորս գրոց գնոյն վրայ աւելցընել
հարկ էր, ձեռնթափ եղանք, եւ բաւ համա-
րեցանք միայն առայժմ մեր թարգմանութիւնը
հետզհետէ 'ի լոյս ընծայելով ընթերցասէր աղ-
գայնոց բաղձանքը լցընելու ջանալ:

ԹՒՓԱՌԱԿԱՆ ՀՐԵԱՅ



ՅԱՌԱԶԱԲԱՆ

ԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀՆԵՐԸ

Բեւեռային Ովկիանոսը մշտնջենաւոր սա-
ռոյցէ դօտւով կը պատէ հիւսիսային Ամերիկայի
անմարդաբնակ ծովեղերքը . . . : Աշխարհիս եր-
կու մասանց այս վերջին ծագերը Պէհրինսկի նեղ
ջրանցքով կը գատուին իրարմէ :

Սեպտեմբեր ամսոյ վերջերն եմք :

Աշնան հասարակածին հետ եկան խաւարնե-
րն ու հիւսիսային մրրիկները . քիչ օրէն բեւե-
ռային կարծ եւ տխուր ցերեկներուն դիշերը պի
տի յաջորդէ . . . :

Երկնից մանիշակագոյն թռիս կապոյտը խիստ
տկար կերպով կը լուսաւորի գաղջ արեւէ մը .
որուն ազօտափայլ սկաւառակը՝ հազիւ հորիզո-
նէն վեր բարձրանալով՝ այն անհուն անապատ-
ները ծածկող ձիւներուն ակնախափող պայծառու-
թեան առջեւ կը նսւաղի : Հիւսիսի կողմէն ա-
նասպատը սեւ ու անհեթեթ ապստափներէ շր-
ջապատեալ է , որոյ հսկայակոյտ ամբարտակին

ստորոտը կաշկանդուած կը մնայ քարացեալ Ռի-
կիանոսը : Ծովուն անշարժ կոհակները սառնա-
յին լերանց դօտիներ են , որոց կապտագոյն դա-
գաթները հեռուն ձիւնալից մառախուղներու մէջ
կը կորսուին . . . : Արեւելեան կողմը , Ռւլիքի-
նի հրուանդանին երկու ծայրերուն մէջ տեղը , որ
Սիպերիոյ արեւելեան սահմանածայրն է , թխտ-
րակ կանանչ գունով գիծ մը կը տեսնուի , ուր ծո-
ւը սառոյցի մեծ ամեծ հատորներ ծանրաշարժ կը
քշէ կը տանի . . . : Այն է Պէհրինկի նեղուցը :

Անոր անդիի կողմը բարձրացած կը տեսնու-
ւին հիւսիսային Ամերիկայի վերջին ծայրն եղած
կալի հրուանդանին կրանիթեայ քարակոյտերը :

Այս կլիմայներուն մէջ մարդ չկրնար բնա-
կիւ . վասն զի ցուրան այն աստիճան սաստիկ է ,
որ քարերը կը ճաթին , ծառերը կը ճեղքրան ,
եւ երկիրը պատուելով սառոյցի սրածայր կոտո-
րակներ ամեն կողմ կարծակէ :

Մարդկեղէն էակ մը չկրնար համարձակիլ այն
եղեմնապատ , մրրկալից , սովահար եւ մահաբեր
կողմերն երթալ Բայց եւ այնպէս . . .
զարմանալի՛ բան , Պէհրինկի ջրանցքով բաժնը-
ւած երկու անապատները ծածկող ձիւնին վրայ
մարդու քայլափոխի հետք կը տեսնուի :

Ամերիկայի կողմի երկրին վրայ փոքրիկ ու
թեթեւ ոտքի նշաններէ կը հասկցուի թէ հոնկէց
կին մ'անցեր գացեր է դէպ'ի այն ասպառաժները ,
ուրկից նեղուցին միւս կողմը Սիպերիոյ ձիւնալից
անապատները կը տեսնուին :

Աւելի մեծ եւ խորունկ ոտքի նշան մ'ալ Ալ-
պերիոյ կողմի երկրին վրայ տեսնուելով՝ կը հաս-
կըցուի թէ հոնկէց ալ մարդ մ'անցեր է : Այս
վերջինն ալ վերոյիշեալ կնոջ պէս գէպ 'ի նեղու-
ցը քալեր է : Աարծես թէ մարդն ու կինը երկու
հակառակ կողմերէ երկրագնախա ծայրերը երթա-
լով՝ երկու աշխարհներն իրարմէ զատող նեղցին
երկու կողմէն իրար տեսնել կը յուսային :

Բայց առաւել զարմանալին այն է , որ երկու-
քըն ալ զարհուրելի փոթորկի մը ժամանակ ան-
ցեր են այն անապատներուն մէջէն . . . :

Հարիւրամեայ սեւ պտղիներ՝ որք գերեզմա-
նատանց խաչերուն նման տեղ տեղ անկուած կը
գտնուին եղեր , փոթորկին ուժգնութենէն ար-
մատախիլ ոստակոտոր ու ցիրուցան եղեր էին :

Այնպիսի կատաղի մրրկի մը՝ որ մեծամեծ
ծառերն իսկ արմատէն կը խլէ , սառնակոյտ լեռ-
ները տեղերնէն շարժելով իրարու կը բաղխէ ո-
րտորնգոտ ճարճատմամբ . . . այնպիսի մոլե-
գին մրրկի մը կրցեր են դիմանալ այս երկու ճա-
նապարհորդները , առանց բնաւ խոտորելու իրենց
բռնած գիծէն . . . ինչպէս որ կը հասկցուի ի-
րենց հաւասար , ուղիղ եւ անյողդողդ հետքէն :

Ո՞վ են այս երկու անձինք՝ որք բնութեան
վրդովմանց եւ տակն 'ի վերայութեան ժամանակ
այնպէս հանդարտ կը շարունակեն ճանրանին :

Գիպուած , կամք կամ ճակատագիր , ինչ
կուղես ըսէ , մարդուն կոշիկին տակը եօթն ցըց-
ւեալ բեւեռներ խաչ նշան մը ձեւացընելով բոլոր

անոցած ճանքուն վրայ խաչածեւ տպաւորութիւն
մը կը թողուր . այնպէս որ կարծր եւ ողորկ ձիւ-
նին վրայ այն խորաախիպ նշանները տեսնողը՝ մար-
մարեայ սալայաաակի մը վրայ պղնձի ոտքէ փոր-
ւած քանդակներ կը կարծէր :



Բայց շատ չանցաւ՝ առանց վերջալուսի գի-
շեր մը ցերեկին յաջորդեց . . . չարաշնուկ գի-
շեր . . . :

Չիւնին լուսափայլ բեկբեկման օգնութեամբ
անապատն անասման սպիտակութեամբ դաշտի
մը կը նմանի երկնից դմբեթարդին ներքեւ , ո-
րուն մթին կապոյտը բոլորովին սեւ կը թուի .
տժգոյն աստղեր՝ այն աղօտ ու սառնապատ կամա-
րին խորոցը մէջ անտես կըլլան :

Համատարած խոր լուսթիւն կը տիրէ . . . :

Բայց յանկարծ Պէհրինկի նեղցին կողմը ար-
կար լոյս մը կերեւի հորիզոնին վրայ , 'ի սկզբան
մեղմ եւ կապտադոյն , ինչպէս է լուսնին հորիզո-
նէն վեր ելած ժամանակ իրմէ առաջ տեսնուած
լոյսը . . . յետոյ այն լոյսը կը մեծնայ , կը ճառա-
գայթէ եւ վարդի բաց գոյն մը կառնու : Իսկ երկ-
նից միւս ամեն կողմը խաւարը կը թանձրանայ ,
եւ անապատին սպիտակ տարածութիւնը՝ որ քիչ
մ'առաջ կը տեսնուէր , հաղիւ երկնից դմբեթին

անութեանէն կը տարբերի :

Այն մթ ու թեան մէջ խառնաշփոթ ու այլանօգա՛յ շշուէ՛ջ մը կը լսուի . կարծես թէ գիշերային մեծ թռչուններ, ահաբեկ եւ շուարած, մերթ թեւերնին շտապաւ բարախելով, մերթ ծանր ծանր անապատին գեանին վրայ քսուելով՝ կը թռչտին, եւ վերջապէս կիցնան կը մնան : Բայց աղաղակ չլսուիր :

Այս լռին սոսկումն՝ այն ահաւոր օդերեւոյթներէն մէկուն մօտենալը կը ծանուցանէր, որք ամեն շնչաւոր էակները կը սարսափեցընեն, ամենի գաղաններէն սկսեալ մինչեւ ամենէն անվրնաս կենդանիները . . . : Հիւսիսայգ մը կը փայլի յանկարծ, շքեղ տեսարան՝ որ հիւսիսային բեւեալին կողմերն յաճախ կը պատահի . . . :

Հորիզոնին վրայ պայծառ կիսագունտ մը կը նկարուի, որուն լուսասփիւռ կեդրոնէն անթիւ ճառագայթներ կը ցայտեն, եւ անհուն բարձրութեամբ ծաւալելով՝ երկինքը երկիրը եւ ծովը կը լուսաւորեն . . . : Այն ժամանակ անոնց հրաշէկ ցոլացումը հրդեհի ցոլացման պէս անապատին ձիւնին վրայ կը սահի, սառնամանուալերանց կապոյտ գագաթը ծիրանաներկ կը զարգարէ, եւ երկու ցամաքաց բարձրաբերձ սեւ ապառաժները թխորակ կարմիրով մը կը նկարէ :

Այս գեղեցկաշուք պայծառութեան հասնելէ ետեւ՝ հիւսիսայգը քիչ քիչ նուաղիլ սկսաւ, եւ իր պայծառ լոյսը նշուլափայլ մառախուղի մը մէջ մտրեցաւ :

Այն միջոցին, տեսաբանական դարձանալի
երեւոյթի մ'օգնութեամբ՝ որ երկրագնդիս այն
դօտիներուն ներքեւ յաճախ կը պատահի, Սիպե-
րիայէն ներդուցով բաժնուած Ամերիկայի ծովե-
ղերքն յանկարծ՝ այնչափ մօտեցած երեւցաւ, որ
կարծես թէ մէկ աշխարհէն միւսը կամուրջ մը
կրնար ձգուիլ :

Այն ժամանակ, երկու ցամաքաց վրայ տա-
րածուած թափանցիկ ու կապոյտ դուրըշիին մէջ
յանկարծ երկու մարդոց դէմք տեսնուեցան : Սի-
պերիոյ հրուանդանին վրայ մարդ մը ծունդի վը-
րայ եկած՝ անպատմելի յուսահատութեամբ թե-
ւերը դէպ յԱմերիկա կերկնցընէր :

Ամերիկայի հրուանդանին վրայ ալ մանկա-
մարդ գեղեցիկ կին մը՝ երկինքը ցուցընելով գի-
մացի մարդուն վշտահար շարժմանը կը պատաս-
խանէր . . . :

Քանի մը մանրերկրորդի չափ՝ այս երկու վեհ
դէմքերը՝ հիւսիսայդին վերջին նշոյլներուն դօ-
րութեամբ՝ դժգոյն եւ միզապատ նկարուած մը-
նացին, բայց մշուշն հետզհետէ թանձրանալով
ամեն բան աներեւոյթ եղաւ խաւարին մէջ :

Ուստի՞ կուգային այս երկու անձինք՝ որք եր-
կու աշխարհաց ծայրերը քեւեռային սառնաման-
եաց մէջ այսպէս իրարու հանդիպեցան :

Ո՞վ էին այս երկու արարածները՝ որք տեսա-
բանական խարուսիկ երեւոյթով վայրկեան մ'ի-
րարու մօտեցան, բայց յաւիտեան իրարմէ բաժ-
նուած կը թուէին :

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՖՈՒՔՈՒՆ ՊԼՇՆԻ ՊԼՇՆԴՈՒՄԸ

ԳԼՈՒԽ Ա.

ՄՈՌՕՔ

1831 թ. հոկտեմբեր ամսոյն վերջերն եմք :

Թէ եւ դեռ իրիկուն եղած չէ, չորս պատ-
րոյդով պղինձ կանդեղ մ'ընդարձակ ձեղնայարկի
մը ձեղքատած պատերը կը լուսաւորէ : Ձեղնա-
յարկը միակ պատուհան մ'ունի, բայց միշտ դոց
հոն ելնելու համար սանդուղ մը կար, որուն ա-
տիճանները ձեղնայարկին մէկ կողմն եղած բաց
դեռնատիւղկին ծակէն բարձր են :

Տախտակամածին վրայ, ասդին անդին խառ-
նիխուռն ձգուած են երկաթէ շղթայներ, սրա-
ծայր անուրներ, սղոցածեւ վարապաններ, բե-
ւեռանդէն ցռկակապեր, փայտէ երախակաշներով
պողպատէ երկայն ցուպեր : Մէկ անկիւնն ալ
փոքրիկ դիւրակրելի կրակարան մը կայ, որ կա-
պարադորձներուն անաղ հալեցընելու համար

գործածած կրակարանին կը նմանի , մէջը փայտի
տաշեղներ լցուած եւ վրան ածուխ դիզած ,
այնպէս որ կայծ մը բաւական է վայրկենի մէջ
լաւ կրակ մը վառելու :

Այս ահուկի կարասեաց քով , որք առա-
ւել դահճի մը գործիներու կը նմանին , հին դա-
րերու վերաբերեալ քանի մը զէնքեր կան . դիւ-
րաթեք , բարակ եւ հոծ օղերով հիւսուած գրան
մը , որ պողպատէ բարակ կտաւէ մը կը նմանի :
Այս գրանը սնտուկի մը վրայ ձգուած է՝ երկա-
թէ սոնապաններու եւ բազպաններու քով ,
որք խիստ լաւ վիճակի մէջ պահուած են իրենց
կաշիէ կապերովը : Ուրիշ շատ մը զէնքեր ալ կան,
որոց լրումն են երկու երկայն եռանկիւնի նիզակ-
ներ՝ ամուր ու թեթեւ հացիէ կտթերով , որոց
վրայ արեաննոր բիծեր կը նշմարուին : Այս հին
զէնքերէն զատ՝ երկուք ալ Թիրուխան հրացան-
ներ կան լեցուն ու պատրաստ :

Այսպիսի մահաբոյր գինուց եւ բարբարոսա-
կան գործիներու հետ տարօրինակ կերպով խառ-
նուած է ուրիշ խիստ տարբեր նիւթերու հաւա-
քածոյ մը . փոքրիկ ապակիէ սնտուկներ , որոց մէջ
կան վարդարաններ , համրիչներ , միտաչներ , հար-
Սարուճայէր , օրհնած ջուրի աւաղաններ , չըջանա-
կի մէջ առնուած սրբոց պատկերներ , վերջապէս
ճրիպուրկի մէջ հաստ եւ կապոյտ թուղթի վրայ
տպուած բազմաթիւ դիրքեր , որք մեր օրովը
պատահած կերպ կերպ հրաշքներ կը պատմեն ,
եւ մասնաւորապէս Քրիստոսի մէկ ինքնագիրնա-

մակը կը յիշեն՝ զոր ջերմեռանդ հաւատացելոյ մը
դբեր է, վերջապէս ամբարիշտ եւ յեղափոխա-
կան Քաղղիոյ վրայ 1831ին եւ 1832ին կատար-
ւելիք սարսափելի մարդարէութիւններ կը նեն:

Գեղերու մէջ տեսարաններ ներկայացընող
ձեռնածուաց թատրոնին առջեւ դրուած անհե-
թեթ պատկերներուն նման պատկեր մը կախուած
է ձեղնայարկին մէջի ծառ գերաններէն մէկուն
վրայ, որպէս զի ծալլած մ'նալով չաւրուի:

Պատկերին վրայ հեռեւեալ մակադիրը կայ:

ՄԱՐԳԱՐԷ ՄԱԿԱՆՈՒԱՆԵԱԼ ԻԳՆԱՏԻՈՅ
ՄՈՌՕՔԻ ՃԵՄԱՐԻՏ ԵՒ ՆՇԱՆԱԻՈՐ ԴԱՐՁԸ՝ ՈՐ
ԿԱՏԱՐՈՒԵՅԱԻ 1828ԻՆ ՅՐԻՊՈՒՐԿԻ ՄԷՁ:

Այս պատկերը՝ որ բնականէն աւելի մեծու-
թիւն, բռնազբօսեալ դոյն մ'եւ բարբարոսական
նկարագիր մ'ունի, երեք մասի բաժնուած է, ո-
րոց ամեն մէկը՝ նորադարձ Մարդարէին կենաց
երեք կարեւոր վիճակը կը ներկայացընէ:

Առաջինին մէջ մարդ մը կը տեսնուի երկայն
եւ դեղին մօրուօք, վայրագ դէմքով, շիւսի-
սային Սիպերիոյ վայրենի ժողովրդոց նման եղ-
ջերուի մօրթ հագած, գլուխն աղուէսի մօրթ է
խոյր մը դրած՝ վրան աղաւթի գլխով կերպարանքը
սարսափ կը պատճառէ. վեց վիթխարի դամիռե-
րէ լծեալ բալխիրի մը մէջ նստած՝ ձիւնին վրայէն
սահելով կը փախչի խուժք մ'աղուէսներու, դայ-
լերու եւ կատաղի արջերու առջեւ, որք զար-
հուրելի աղաաներով զինեալ բերանին բացած՝

հետեւէն ինկեր՝ կարծես թէ մարդն ալ շուներն ալ
բալխիրն ալ մէկէն պիտի լափեն :

Այս առաջին մասին ներքեւ հետեւեալը գրու-
ւած է :

1810ԻՆ ՄՈՌՕՔ ՀԵԹԱՆՈՍ ԷՐ, ՎԱՅՐԵՆԻ
ԳԱԶԱՆՆԵՐԷՆ ՎԱԽՆԱԼՈՎ, ԿԸ ՓԱԽԶԷՐ :

Երրորդ մասին մէջ Մոռօք անմեղաբարնո-
րընծայի ճերմակ դգեստն հաղած՝ ծուկի վրայ
ձեռնամած կը կենայ սեւ ու երկայն գգեստով եւ
ճերմակ օձիքով մարդու մ'սողեւ : Պատկերին
մէկ անկիւնն ալ այլանդակ դէմքով հրեշտակ մը
կայ՝ մէկ ձեռքը դալարափող մը, միւս ձեռքն ալ
բոցեղէն սուր մը բռնած . բերնէն ալ հետեւեալ
խօսքերը կելնեն՝ սեւի վրայ դրոշմեալ կարմիր
գիրերով .

ՄՈՌՕՔ ՀԵԹԱՆՈՍ ԵՂԱԾ ԺԱՄԱՆԱԿ ՎԱՅ-
ՐԻ ԳԱԶԱՆՆԵՐԷՆ ԿԸ ՓԱԽԶԷՐ . ԵՐԲՈՐ ՅՐԻ-
ՊՈՒՐԿԻ ՄԷՋ ԴԱՐՁԻ ԵԿԱԻ ԵՒ ՄԿՐՏՈՒԵՑԱԻ,
ՎԱՅՐԻ ԳԱԶԱՆՆԵՐԸ ՊԻՏԻ ՓԱԽԶԻՆ ԻԳՆԱՏԻՈՍ
ՄՈՌՕՔԻ ԱՌՁԵԻԷՆ :

Երրորդ մասին մէջ Մոռօք խրոխտ սիդա-
պանծ եւ կոկողավիղ կը ճոխանայ երկար եւ լայն
կապոյտ պատմուճանի մը ներքեւ, ձախ ձեռքն
աղբրին վրայ դրած եւ աջ ձեռքն երկնցուցած՝
կարծես թէ կը սարսափեցընէ վազրերու բորե-
նիներու արջերու եւ առիւծներու բազմութիւնը,
որք ճիրաններնին ամփոփած, ալուաներնին պա-

հաժ , հլու եւ երկչոտ դէմքով անոր ոտքին ներքեւ կը սողան :

Այս վերջին մասին ներքեւ հետեւեալը գրուած է բարոյական վերջաբանի ձեւով .

ԻՔՆԱՏԻՈՍ ՄՈՌՕՔ ԴԱՐՁԻ ԵԿԱԾ Է , ՎԱՅՐԻ ՔԱԶԱՆՆԵՐՆ ԱՆՈՐ ՈՏՔԻՆ ՏԱԿԸ ԿԸ ՆՈՒԱՃԻՆ :

Այս պատկերներէն քիչ մ'անդին՝ նոյնպէս Յրիպուրկ տպուած մանր գրքերու բազմաթիւ կապոցներ կան , որոց մէջ կը պատմուի թէ հետեւանոս Մոռօք դարձի եկածին պէս՝ ինչ դարմանալի հրաշքով մէկէն՝ ի մէկ գերբնական եւ դրեթէ աստուածային զօրութիւն մ'ստացեր էր , որուն ձեռքէն ամենէն ամեհի դաճանները չէին կրնար պրծիլ , ինչպէս որ յայտնի կը տեսնուէր ամեն օր ըրած կրթութիւններէն , որոց նպատակըն իր քաջութիւնն ու աներկիւղութիւնը ցուցընել չէր , այլ մանաւանդ Աստուած փառաբորել շնորհքով

Չեղնայարկին մէջ բացուած գետնադռնէն՝ վայրենի , բարկ , կծու եւ ազգու հոտ մը վեր կը բուրէ շողիլ պէս : Նրբեմն ալ սուր եւ մեծածայն խոնչիւններ եւ խորին շնչառութիւններ կը լրսւին , եւ անոր ետեւէն ուրիշ շնչիւն մը՝ որ մեծ աւճանրաշարժ մարմնոց տախտակամածի մը վերայ տարածուելու եւ երկնալու ձայնին կը նըմանի :

Չեղնայարկին մէջ միակ մարդ մը կայ , այն

մարդն է Մոռօք, զսպիչ դադանաց, մականուան-
եալ Մարգարէ : Քառսուն տարեկան մարդ մ'է,
միջահասակ բարակ եւ վերջին աստիճան վախտ :
Աարմիր երեսով երկայն սեւ մուշտակ մը հագած
է, որ բոլոր մարմինը կը ծածկէ . մարմնոյն մոր-
թը թէ եւ բնականաբար ճերմակ է, բայց ման-
կութենէ 'ի վեր ճանապարհորդի կեանք վարած
ըլլալով պղնձի գոյն ստացած է : Մազերը՝ բե-
ւեռային ժողովրդոց յատուկ եղած դժգոյն դեղ-
նութեամբ՝ սղնձի թելերու պէս ձիգ պնդու-
թեամբ ուղղապէս ուսերուն վրայ կիյնան, քիթը
բարակ սրածայր եւ կոր է, յցուեալ ծնօտներուն
բոլորտիքը երկայն մորուք մը կայ, այն աստի-
ճան բաց դեղին՝ որ գրեթէ ճերմակ կը թուի :

Այս մարդուն դէմքն այլանդակ երեւցընողն
իր արտեւանունքն են, որք խիստ բաց եւ բարձր
ըլլալով՝ ճերմակ շրջանակով պատած դեղին բիրբր
երեւան կը հանեն . . . : Իր անշարժ ու կարգէ
դուրս նայուած քը կախարդիչ ազդեցութիւն մը
ունէր կենդանեաց վրայ . բայց այս զօրութիւնը
բաւական չըլլալով, շատ անգամ Մարգարէն իր
չօրջն եղած սարսափելի դէնքերուն օգնու-
թեամբը զանոնք կը զսպէր :

Սեղանի մ'առջեւ նստած, գաղանի վաւկան-
քով երկու յատակ ունեցող սնատուկ մը կը բանայ,
որուն մէջ շատ մը համրիչներէ եւ ջերմեռանդ
մարդոց վերաբերեալ զանազան նիւթերէ զատ
բաղմաթիւ նամակի կնքաւոր պատեաններ ձկան,
որոց հասցէն թուանշանէ մ'ու գիրէ մը կը բաղ-

կանայ : Մարդարէն ծրարներէն մէկը կառնու ,
մաւշտակին գրպանը կը նետէ , յետոյ երկյաւասի-
կայ դադանի սնտուկը գոցելով սեղանին վրայ կը
դնէ :

Այս իրողութիւնը կը կատարուէր կէս օրէն
չորս ժամ ետքը՝ Ծօքօն — Պլանի պանդոկին մէջ ,
որ հիւսիսային կողմէն Գաղղիա երթալու ճան-
քուն վրայ Նիքսիքայի մօտ Մօքէրն ըսուած փոք-
րիկ գիւղին միակ պանդոկն է :

Քիչ մ'ետքը դեանին տակէն խեղդուկ մը
որնչիւն մը կը լսուի որ ձեղնայարկը կը սարսե-
ղընէ :

« Լոէ , Յուզան » կըսէ Մարդարէն սպառնա-
կան ձայնիւ՝ գլուխը դէպ 'ի դեանադուռը դար-
ձընելով :

Նոյն միջոցին հեռաւոր որոտման ձայնի պէս
տհաղին մռնչիւն մ'ալ կը լսուի :

« Լոէ , կայէն » կը պօռայ Մոռօք օտքի վը-
րայ ելնելով :

Յանկարծ անպատմելի կատաղութեամբ եր-
րորդ մռնչիւն մ'ալ կը լսուի :

« Կը լսես , Ման » կը գոչէ Մարդարէն եւ
դէպ 'ի դեանադուռը կը վազէ՝ խօսքը երրորդ
անսեռանելի կենդանուոյ մը մ'ուղղելով , որ սոս-
կալի « Ման » անունը կը կրէր :

Բայց ոչ Մոռօքի ձայնին ստիտրական աղղե-
ցութիւնը , ոչ անդուլ սպառնալիքները չեն կըր-
նար դադանները լսեցընել : Ընդհակառակն , ա-
նոնց մռնչման հետ շատ մ'ալ շուներու հաչիւնը

կը միանայ :

Մոռօք նիզակ մը կառնու , սանդուղին կը մօտենայ , եւ երբոր վար պիտի իջնէր , կը տեսնէ որ մէկը ներս կը մտնէ գետնադռնէն :

Նոր եկողը թխորակ եւ արեւակէզ գէմքով մարդ մ'է , բոլորաձեւ լայն եզերքով գորշ փեղոյր մ'ունի գլուխը , կարծ բաճկօն մ'եւ կանանչ չուխայէ տախտակ մը հագած է , կրնակը կապած մախաղէն եւ փոշելից սեկէ սոնասդաններէն կը հասկըցուի որ երկար ուղեւորութենէ մը կուգար :

« Գետինն անցնին այս կենդանիները , պոռայ ոտքը տախտակամածին վրայ դրած ատեն . — ասկէց մեկնիլս դեռ երեք օր է , կարծես թէ զիս մոռցեր են . . . Յուզա ճիրանները գառագիղին վանդակասիւններէն դուրս երկնցուց . . . Մահն ալ կատաղաբար ցատկեց . . . միթէ զիս բնաւ չեն ճանչեր : »

Այս խօսքը գերմաններէն լեզուով ըսաւ նոր եկողը : Մոռօք ալ նոյն լեզուով պատասխանեց , թէ եւ քիչ մ'օտար արտասանութեամբ . . .

» Բերած լուրերդ բարի՞ են թէ գէշ , Գարլ , հարցուց Մոռօք անհամբերութեամբ , — Բարի են . . .

— Հանդիպեցամք անոնց : — Երէկ , Վիթէնպէրկէն հինգ վեց մղոն հեռու . . .

— Օրհնեան է Աստուած , գոչեց Մոռօք ձեռքերն իրար կցելով խորին գոհունակութեամբ :

— Այնպէս ըլլալիքը յայտնի էր . . . վասն զի

Ռուսաստանէն Գաղղիա երթալու համար ուրիշ
ճանքայ չկայ : Ես մէկի դէմ հազար գրաւ կը դը-
նէի որ Արթէմալէրկէ եւ Լիբոսիքայի մէջ տեղը
պիտի հանդիպէինք անոնց : — Տուած նշաններս
ճի՞շդ են : — Աստարելապէս ճիշդ . երկու ման-
կամարդ աղջիկները սեւեր հագած են . ճին ճեր-
մակ է , ծերունին երկայն ընչացք մ'ունի , ոստի-
կանութեան զինուորի կապոյտ գլխարկ մը դրած
է գլուխը եւ մօխրագոյն վերարկու մը հագած . ե-
տեւնուն ալ Սիպերիացի շուն մը : — Ո՛ւր թողու-
ցիր դանոնք : — Ասկէց երեք մղոն հեռու : Աէս
ժամ չանցած՝ հոս են : — Եւ այս պանդոկիս մէջ
. . . որովհետեւ ուրիշ չկայ հոս » ըսաւ Մոսօք
խոկուն դէմքով մը :

— Եւ իրիկունն ալ մօտ է Պաւելցուց Քարլ :
— Ծերունիին հետ խօսեցա՞ր : — Անոր հետ . . . Ձեր
կարծածին պէս չէ : — Ի՞նչպէս : — Գացէք ան-
դամ մը քովը մօտեցէք եւ տեսեմ : — Ի՞նչ պաա-
ճառաւ : — Անհնարին է , անհնարին : — Ինչո՞ւ : —
Մտիկ ըրէք որ ըսեմ . . . : Նախ ետեւնուն դացի
մինչեւ երէկ իրիկուան օթեւանը , այնպէս ձե-
ւացընելով՝ որպէս թէ դիպուածով հանդիպած
էի իրենց : Գերմաներէն լեզուով խօսեցայ ծերու-
նիին հետ , եւ ինչ որ հետեւակ ճանքորդներ իրա-
րու կըսեն , ես ալ նոյնը ըսի անոր . այսինքն ,
բարեւ , ընկեր , բարի երթաք : Բայց նա փոխա-
նակ պատասխան տալու՝ ծուռ ծուռ երեսնայե-
ցաւ , եւ դաւադանին ծայրովը ճանքուն միւս կող-
մը ցուցուց — Գաղղիացի ըլլալուն թերեւս դեր-

մաներէն չհասկընար. — Ի՞նչպէս չհասկընար, ձե-
զի չափ գերմաներէն կը խօսի : Գիշերը օթեւան
իջած ատեննիա լսեցի որ թէ իրեն, եւ թէ օրիորդ-
ներուն համար պէտք եղածը գերմաներէն լեզ-
ւով կը խնդրէր պանդոկապետէն : — Պանդոկին
մէջ ալ հետը խօսք բանալու փորձ չըրի՞ր . . . :
— Մէկ անգամ . . . բայց այնպէս բիրտ կերպով
պատասխանեց ինձ, որ պաշտօնս վտանգի մէջ չի
ձգելու համար՝ նորէն հետը խօսելու փորձ չըրի :
Խօսքը մէջերնիս, գիտցած եղիք որ այն մարդը
սատանայի պէս չար մէկը կերեւի ինձ. ասկէց
զատ, թէ եւ ընչայքը ճերմկած եւ ինքն ալ կը-
մախքի պէս վատուժ է, բայց տակաւին այնչափ
կորովի եւ աներկիւղ կերեւի, որ չեմ գիտեր թէ
կախի մէջ մն յաղթող կելնէ թէ իմ հսկայ Գողի-
աթ ընկերս . . . : Ես ձեր միտքը չեմ գիտեր,
բայց զգոյշ կեցէք, զգոյշ կեցէք . . . : — Իմ
ճավացի սեւ յովազս ալ խիստ հուժկու եւ չար էր
. . . . ըսաւ Մուօք արհամարհու եւ չարամիտ
ժպիտով մը : — Մահը . . . անշուշտ տակաւին
հիմա ալ խիստ սեժեղ եւ չար է . . . բայց ձեզ
համար խիստ կակուղցած է . . . : — Անոր պէս
քու ծերունիդ ալ կը կակուղցընեմ՝ որչափ եւ կո-
րովի ու դժնեայ ըլլայ : — Հը՛, հը՛, բայց զգու-
շացիք, տէր իմ, գիտեմ որ դուք խիստ ճարպիկ
եւ քաջասիրտ էք, բայց, հաւատացէք ինձ որ
հոս եկող ծեր գայլը չէք կրնար երբէք դառն
դարձընել : — Միթէ իմ կայէնս եւ Յուզա վազ-
ընս դողալով ոտքս չեն իյնար : — Անշուշտ . վա-

սրն զի դուք այնպիսի միջոցներ ունիք որ . . .
 — վասն զի հասարակ ունիմ . . . եւ ոչ ուրիշ բան
 . . . » ըսաւ Մոռօք խրոխտաբար Քարլին խօս-
 քնն ընդ միջելով եւ այնպիսին այսուած ք մ'արձա-
 կելով անոր վրայ, որ զլուխը ծռեց եւ լուռ կե-
 ցաւ :

« Միթէ Աստուծոյ օգնութեամբ դադաններ-
 ուն գէմ կառուող ու յաղթողը՝ չար եւ ամբարիշտ
 մարդոց հետ կառուած ժամանակ անօգնական կը
 մնայ » յաւելցուց Մոռօք յաղթող եւ ներշնչեալ
 գէմքով :

Քարլ իր տիրոջը համոզմանը հաւատալով,
 կամ այսպիսի փափուկ նիւթոյ մը վրայ անոր հետ
 վիճարանելու անկարող ըլլալով, խոնարհութեամբ
 ըսաւ անոր .

« Դուք ինձմէ աւելի դիտուն էք, աէր իմ,
 ինչ որ ընէք՝ հարկաւ աղէկ է :

— Բոլոր օրն այն ծերունիին եւ երկու աղ-
 ջիկներուն ետեւէն դայի՞ր » հարցուց Մարգա-
 րէն քանի մը վայրկեան լուռ կենալէ ետեւ . —
 Այո՛, բայց հեռուէն . ես այն կողմերը լաւ ճան-
 չելուս համար, մերթ դաշտին մէջի կարճ ճան-
 քաները կը բռնէի, մերթ լեռներէն կանցնէի,
 բայց աչքս միշտ անոնց դադած ճանքուն վրայ
 էր, եւ բնաւ չէի կորսնցրներ դանոնք աչքիս առ-
 ջեւէն . վերջին անգամ դանոնք տեսած ժամանա-
 կըս՝ կղմինտրի թրծարանին քովի ջրաղացքին
 ետեւը պահուտած էի . . . : Եւ որովհետեւ անոնք
 մեծ ճանքուն մէջ էին եւ գիշերը կը մօտենար, ես

քայլերս խոչորցուցի եւ անոնցմէ առաջ անցնել
լով փութացայ եկայ ձեր բարի կոչած լուրը տա-
լու: — Խիստ բարի լուր . . . այո՛ . . . խիստ բա-
րի լուր . . . եւ դուն անվարձ չսխտի մնաս,
Քա՛րլ . վասն զի եթէ այդ մարդիկը ձեռքերնիս
ազատէին . . . »

Մարգարէն ցնցուելով շիրցաւ այս խօսքը
լմնցնել: Դէմքէն ու ձայնէն կրնար գուշակ-
ւիլ թէ Քարլին բերած լուրն ի՛նչ աստիճան կա-
րեւոր էր:

« Ստուգիւ , ըսաւ Քարլ , այս բանն ուշադ-
րութեան արժանի պէտք է ըլլայ , վասն զի այն
ժապաւինադարդ համադրեալով սուրհանդակն՝
որ Բեդրապուրկէն Նիքսիքա եկաւ ձեզ դռնե-
լու . . . թերեւս . . . »

Մտօք անմիջապէս Քարլին խօսքը կտրեց
ըսելով .

« Ո՞վ ըսաւ քեզ թէ այն սուրհանդակին գա-
լին այդ ճանապարհորդներուն համար էր , դուն
պէտք չէ որ իմ զրուցածէս զատ ուրիշ բան գիտ-
նաս . . . — Շատ աղէկ , տէր իմ , ներեցէք եւ
այլ այդ խօսքը չընենք . . . բայց երթամ մա-
խաղս կրնակէս հանեմ եւ Գողիաթին օգնեմ որ
գազաններուն ուտելիք տայ , վասն զի կերակու-
րին ժամանակն եկած եւ թերեւս անցած ալ է:
Արդեօք զանցառութիւն ըրած է իմ խոչոր հսկաս:
— Անիկայ դուրս ելաւ եւ քու ետ դարձած ըլլա-
լով պէտք չէ գիտնայ , մանաւանդ պէտք չէ որ
ձերունին եւ աղջիկներն ալ քեզ հոս տեսնեն , որ-

պէս զի կասկած մը չընեն : — Աւրեմն ո՞ւր կու-
զէք որ երթամ : — Ախոռին մէջի շտեմարանը
դնայ , եւ հոն իմ հրամանիս սպասէ , որովհետեւ
կարելի է որ այս գիշեր Ախրաքա երթաս : — Աամ-
քը ձերն է : Մախաղիս մէջ քիչ մ'ուտելիք կայ
մնացած , երթամ ախոռին շտեմարանին մէջ ու-
տեմ եւ միանգամայն յողնութիւն առնում : Քայց
. . . տէ՛ր իմ , ըսածս մի մտնաք , ձերմակ ընչաց-
քով ծերունիէն զգուշացէք , վասն զի շատ սրտատ
եւ անսկէր մարդ մ'է . ես այն տեսակ մարդիկը
լաւ կը ճանչեմ . . . : — Գուն անհող եղիր . . .
եւ միշտ զգոյշ կը կենամ , ըսաւ Մուօք : — Աւրե-
մն , բարի յաջողութիւն . տէ՛ր իմ » : Եւ սանդու-
ղէն վար իջնելով աներեւոյթ եղաւ Քարլ :

Մարգարէն քիչ մը ժամանակ ձեզնայարկին
մէջ ձեմեց խորին մտածութեամբ . յետոյ երկյա-
տակեաց սնտուկին քով երթալով մէջէն երկար
նամակ մ'առաւ եւ քանի մ'անգամ ուշադրու-
թեամբ կարդաց : Ղնթերցման ժամանակ երբեմն
տեղէն կելնէր , եւ սանդուկին ներսի բակին վրայ
նայող գոց սլառու հանին քով երթալով անհամ-
բերութեամբ ականջ կը դնէր . վասն զի երեք
ճանապարհորդաց գալուն կ'սպասէր , որոց մօտ
հասած ըլլալը քիչ մ'առաջ իմացեր էր :



ՃԱՆԱՊԱՐ ՀՈՐԴՆԵՐԸ

Տօքօն Պլան սրանդ սկիին մէջ այս անցքն ան-
 ցած ժամանակ , Մուօքին անհամբերութեամբ
 սպասած երեք անձերը դալարագեղ դաշտի մը
 մէջէ ճանբանին խաղաղութեամբ շարունակելով
 կուգային : Գաշտին մէկ կողմը գետ մը կար , ու
 ըոյ հոսանքը ջաղացք մը կը դարձնէր , միւս
 կողմն ալ մեծ ճանապարհ մ'էր , որ երեք մղոնի
 շտի հեռուն բարձրիկէկ ըլլոյ մը վրոյ շինուած
 Մօքեուն գիւղը կը տանէր :

Օղը սգարդ եւ գեղեցիկ էր , եւ այս խորա-
 հանդարտ երեկոյին լռութիւնն աւրոյը միմիայն
 գետին ձայնն էր , որոյ ջուրերը ջաղացքին ա-
 նիւէն զարնուելով կը փրփրէին ու կեռային : Ու-
 տախիտ ուռիներ՝ ջուրին վրայ կախուած՝ կանանչ
 ու թափանցիկ ստուեր մը կը ձգէին անոր վրայ ,
 մինչդեռ քիչ մ'անդին գետն այնպէս սրայծատ ու
 գեղեցիկ կերպով երկնից կապոյտն եւ արեւմտից
 բոցերանդ գոյները կը ցոլացնէր , որ եթէ բլուր-
 ները զայն երկինքէն բաժնած չըլլային , երկ-
 նից ասկեգոյն կապոյտը գետին ասկեճամուկ կա-
 պոյտին հետ խառնուելով հրաշալի տեսարան մը
 սկիտի ընծայէին : Գետին եղերքը բուսած մեծա-
 մեծ եղեգներուն սեւ թուիչէ պցունքն երեկոյեան

մեզմ' զեփիւռէն կը ծռէին : Արեւը ծիրանեզոյն
եւ հրածոսյ տոնկերու լայն ժապաւէնի մ'ետեւը
քաշուելով քիչ քիչ անհեա կըլլար . եւ զուարթ
ու հնչուն օդն ալ հեռաւոր հօտի մը բոժոժնե-
րուն ձայնը կը բերէր :

Մարգագետնին խոտերուն վրայ բացուած
շաւղի մը մէջէ՛ տասնեւհինգ տարեկան երկու
մատաղ օրիորդներ՝ ձերմակ ու միջահասակ ձիու
մը վրայ նստած կերթային : Չիուն համեար լայն
եւ ետեւն ալ յեն սրան մ'ունենալուն՝ երկուքն ալ
դիւրաւ կրնային նստիլ . վասն զի նրբամարմին եւ
փափուկ էին . . . : Բարձրահասակ, ցորենագոյն
դէմքով եւ երկար ու մոխրագոյն բնչացքով մարդ
մը՝ մէկ ձեռքով ձիուն սանձէն բռնած առջեւէն
կերթար , եւ ժամանակ ժամանակ կը դառնար
աղջիկներուն կը նայէր՝ տկնածու եւ միանգամայն
հայրախնամ դէմքով : Միւս ձեռքն ալ երկար
գաւազան մը կար : Իր հուժկու ուսերուն վրայ
դինուորի մախաղ մը կար : Փոշելից կոշիկներէն
եւ ծանր քայլափոխներէն կը հասկցուէր որ եր-
կար ժամանակէ 'ի վեր ձանրայ կը քալէր : Մար-
դուն ետեւէն շուն մը կերթար , այն ուժեղ շու-
ներուն տեսակէն՝ զորս հիւսիսային Միսերիոյ ժո-
ղովուրդները բալխիրներու կը լծեն , եւ որոց հա-
սակը , ձեն ու մորթը գայլի կը նմանին : Հաւա-
տարիմ կենդանին քայլ առ քայլ ձին վարողին ե-
տեւէն կերթար , եւ ինչպէս ուսկօրէն կրտեն ,
իր տիրոջը գարշապարներէն շէր զատուեր :

Արկու աղջկանց զուգախառն դիրքէն աւելի

դեղեցիկ բան չէր կրնար ըլլար: Մէկը ձախ ձեռքով ձիուն թոյլ երասանակը բռնած էր, եւ աջովն ալ քրոջը մէջքը դրկեր էր, որ դլուխը միւսին ուսին վրայ դրած կը ննջէր: Ձիուն ամեն մէկ քայլափոխն՝ այս երկու դիւրաթեք մարմիններուն շնորհալի շարժում մը կուտար, եւ անոնց փոքրիկ ոտքերը կը տատանէր, որք ասպանդակի տեղ փայտէ սնակներու վրայ կոխած էին:

Այս երկուորեակ քոյրերուն մէկուն անունը Ռօզ (վարդ) եւ միւսինը Պլանչ (ձերմակ) դրուած էր մօրերնուն մէկ քաղցր մտահաճութեամբ, եւ իրենց հաղած կիսամաշ սուգի տխուր զգեստէն յայտնի կը տեսնուէր թէ որք էին: Հասակնին մէկ, դէմքերնին ալ վերջին աստիճան նման ըլլալով, իրարմէ զանազանելու համար երկար ժամանակ զանոնք տեսած ըլլալու էր մէկը. ուստի արթուն կեցողին պատկերը երկուքին ալ տեղը կրնար բռնել: Մէջերնին եղած տարբերութիւնը նոյն վայրկենին մէջ այս էր որ Ռօզ արթուն կենալով մեծ քրոջ պաշտօն կը կատարէր. որովհետեւ իրենց առաջնորդը՝ որ առաջին Նարօլէոնի դիւրներէն էր, կարգի կանոնի սաստիկ նախանձայոյզ ըլլալով, այնպէս պատշաճ դատեր էր, որ փոփոխակի կարգաւ՝ օր մը մէկ քոյրը՝ օր մ'ալ միւսը հրամայէ կամ հնազանդի:

Աթէ Արէօզ պատկերհանն այս երկու դէմքերը տեսնէր, երեւակայութիւնը ներշնչող գեղեցիկ տիպարներ պիտի ունենար: Գլուխնին սեւ թաւիչէ կտակներ դրած էին, որոց ներքեւէն

չազանակազոյն մազերու առատ խոսպոսկիք դուրս
 թափելով իրենց պարանոցին եւ ուսերուն վրայ
 կը ծածանէին, եւ կլոր, վարդագոյն եւ փայլուն
 այտերուն բոլորափքը շրջանակ մը կը ձեւացը-
 նէին : Աարմիր եւ ցօղաթուրս շահոքրամին գոյ-
 նըն անոնց շրթանց բոսորագեղ գոյնին չափ փայ-
 լուն շէր . մշտադալար անթառամին փափուկ
 կապոյտը կը նսեմանար անոնց խոշոր աչքերուն
 վճիտ կապոյտին քով, ուր իրենց բարուց քաղց-
 րութիւնն ու սաւրիքին անմեղութիւնը նկար-
 ւած էր : Ամբիծ եւ սպիտակ ճակատ մը, փոք-
 րիկ եւ վարդագոյն քիթ մը, այտին վրայ փոստ-
 րակ մը՝ այս շնորհալի դէմքերուն սքանչելի ա-
 նարատութիւնն ու բարութիւնն մը կուտային :

Տեսնելու տրժանի էին նաեւ երբոր անձրեւի
 կամ փոթորիկի մօտեցած ժամանակ ծերունի զօ-
 րականն եղջերուի մորթէ մեծ մուշտակի մը մէջ
 կը փաթթէր զանոնք խնամով, եւ այն անթա-
 փանց զգեստին մեծ կնդուղն անոնց գլուխը կան-
 ցունէր, որով այն երկու թարս եւ զուարթ ե-
 րեաներն այն թխորակ կնդուղին ներքեւ զմայ-
 լելի տեսիլ մը կը ներկայացնէին :

Բայց այն իրիկունն օդը գեղեցիկ եւ հան-
 դարտ ըլլալով, ծանր մուշտակը երկու քոյրե-
 րուն ծնդացը վրայ ձգուած էր, եւ կնդուղն ալ
 համեաին յենարանին վրայ ինկած էր :

Ռօզ՝ աջ թեւովն իր քնացած քրոջը մէջքը
 միշտ դրկած՝ անպատուելի եւ դրեթի, մայրական
 գորովանօք կը նկատէր զայն . . . փասն զի այն

60030.14



օրը մեծ քրոջ պաշտօնը Ռօղին ինկած էր, եւ
մեծ քոյր մ'ալ գրեթէ մալր մ'է . . . :

Այս աղջիկները սչ միայն իրարու վրայ հողի
կուտային, այլ եւ հողերանական ազդ մամբ մը՝
որ յաճախ կը պատահի երկւորեակներու, ինչ որ
մէկն զգար, նոյն ժամուն միւսն ալ կ'զգար. մէ-
կուն օրտայուզութիւնն անմիջապէս միւսին դէմ-
քին վրայ ալ կը տեսնուէր: Մի եւ նոյն պատճա-
ռէ երկուքն ալ կը յուզուէին ու կը կարմրէին,
այնչափ երկուքին ալ սիրտը միակերպ եւ մէկտեղ
կը բաբախէր: Անմիջապէս անմեղ ուրախութիւն
կամ դառն կսկիծ, ամեն բան փոխադարձաբար
եւ 'ի միասին կ'զգային:

Իրենց մանկութեան ժամանակ երկուքն ալ
ծանր հիւանդութիւն մը կրելով, մէկ ճիւղի վրայ
բուսած երկու ծաղիկներու պէս մէկտեղ ծռեցան,
մէկտեղ թօշնեցան, մէկտեղ հիւժեցան, բայց ետ-
քը մէկտեղ առողջացան եւ իրենց անարատ ու
թարմ գոյներովը նորէն գեղեցկացան: Հարկ է ը-
սել թէ այս երկւորեակները միացընող ներքին
եւ անլուծանելի կապերը չէին կրնար խզիլ՝ ա-
ռանց այս խեղճ աղայոց էութեանը դպչելու, ինչ-
պէս որ ~~անժամ~~ կոչուած սիրուն թռչնիկները՝
որ զոյգ զոյգ միայն կրնան ապրիլ, երբոր բար-
բարոս ձեռք մը զիրենք իրարմէ բաժնէ, կը տըխ-
րին, կը տառապին, կը յուսահատին եւ վերջա-
պէս կը մեռնին:

Որքերուն առաջնորդը՝ որ գրեթէ յիսուն
տարու կար, Գաղղիոյ առաջին Հասարակապե-

առ թեան եւ կայսերութեան արի զինուորներուն
անմահ տիպն ունէր, որք հասարակ ժողովրդեան
որդիք էին, բայց մէկ պատերազմով աշխարհի
առաջին զինուորներն եղան, ցուցընելով աշ-
խարհի թէ որչափ մեծ արժէք ունի ժողովուրդը,
եւ որչափ մեծ բաներ կրնայ ընել՝ երբոր իր ճշ-
մարիտ ընտրեալներն իրենց վստահութիւնը դո-
րութիւնն ու յոյսն անոր վրայ կը դնեն: Այս հին
դօրականը կայսերական անձնապահ դօրաց ճիւղ-
ւոր սմբաձիգներէն էր, եւ մականուան էր Տակօ-
պէս: Ծանր, լուրջ եւ քիչ մ'ալ խիտ դէմք մ'ու-
նէր. մոխրագոյն երկայն եւ թաւախիտ ընչացքը
բոլորովին ծածկած էր վարի շրթ ունքը եւ ծնօտ-
ները ծածկող մօրուքին հետ խառնուած: Նինար
աղիւսագոյն եւ պիսակաւոր այտերն ու թու-
շը խնամով գերծուած էին: Հաստ եւ տակաւին
թուխ յօնքերը գրեթէ ծածկած էին իր խաժագոյն
աչքերը: Ականջէն կախուած ոսկի օղերը մինչեւ
իր զինուորական ճերմակ ժայաւէնով բանուած
օձիքին վրայ կը հասնէին. գորշ հուխայէ վերար-
կուն կաշիէ դօտիով մը սեղմուած էր մէջքին վը-
րայ. եւ կարծիր բոցի ճաճանչներով բանուած
ոստիկանութեան զինուորի գլխարկը՝ ձախ ու-
սին վրայ ինկած կը ծածկէր իր ճաղատ դլախը:

Ժամանակաւ Տակօպէս Հէրակլէսի պէս ու-
ժեղ էր, բայց միանգամայն առիւծի պէս սիրտ
ունէր, բարի եւ համբերող, վասն զի կորովի եւ
անվեհեր էր: Արդէմքին խստութեան հակառակ
դարմանալի եւ գրեթէ մայրական գութ խնամք

աէր եւ գորով կը ջուցընէր որբերուն . . . մայրական կըսեմ, վասն զի սիրոյ գիւցաղնութեան մէջ՝ մօր մը սիրտը զինուորի սիրտ ըսել է : Տակօպէս ստոյիկեան հանդարտութիւն մ'ունէր . ամեն սրտայուզութիւն կը զսպէր, եւ իր պազարիւնութիւնը բնաւ խռովիլ չէր գիտեր : Թէպէտ եւ կատակն իրմէ շատ հեռու էր, բայց ամեն բանի մէջ անժպիտ լըջութիւն բանեցընելով երբեմն ակամայ ծիծաղաշարժ կըլլար :

Ճանքան քալած ժամանակ՝ Տակօպէս մերթ ընդ մերթ ետեւը դառնալով՝ ձեռօքը կը գըզէր կամ բարեկամական խօսք մը կըսէր որբերուն հեծած ձերմակ եւ հեզիկ ձիուն, որուն աչքերուն մէջի խորոյիլ քն եւ երկար ակռաներն անոր բաւական ծեր ըլլալը կը յայտնէին : Արկու խորունկ սպիներ ունէր, մէկը կուշաին եւ միւսն ալ լանջ քին վրայ, որոցմէ կը հասկցուէր թէ այս ձին արիւնտուշտ պատերազմներու մէջ մասած ելած էր . ուստի կարծես թէ ասոր համար էր որ երբեմն խրոխտալով կը թօթվէր իր զինուորական հին սանձը, որուն պալարին վրայ տակաւին արծիւ նշանը կը տեսնուէր : Քալուած քը կանոնաւոր, զգոյշ եւ ուժով էր, մորթը վայլուն եւ գիրութիւնն ալ չափաւոր . սանձին վրայ գիղւած առատ փրփուրը նշան մ'էր այն քաջառողջութեան՝ զոր ձիերը կ'ստանան երբոր շարունակ բայց չափաւոր աշխատութեամբ երկար ճանքայ քալեն : Թէ եւ վեց ամիսէն աւելի էր որ կը ճանապարհորդէր, բայց եւ սոյնպէս բարի կեն-

դանին ճանքայ ելած օրուան պէս դիւրութեամբ
կը կրէր երկու որբերն եւ համեաին ետեւը կապ-
ւած ծանր պայուսակը :

Այս ձիուն երկար ակռաներն յիշելնուս պատ-
ճառն այն է, որ իր անուանը հաւատարիմ մնա-
լու համար, վասն զի անունը Ժօվիալ (զուարթ-
երես) էր, շատ անգամ կը ցուցնէր զանոնք,
եւ շունին հետ բաւական կոշտ կատակներ կրնէր:
Այս վերջինը՝ օրուն անունն ընդ հակառակն Ռա-
պա-Ժօա (ուրախութիւն խանդարող) էր, տիրոջը
դարչապարէն բնաւ չզատուելուն համար Ժօ-
վիալին մօտը գտնուելով, Ժօվիալ երբեմն կամա-
ցուկ մը կրնակի մորթէն զայն կը խածնէր, կը վեր-
ցնէր եւ քանի մը վայրկեան օդին մէջ երերցընե-
լով կը տանէր: Շունն ալ իր թաւաստեւ մորթէն
պաշտպանեալ, եւ անշուշտ երկար ժամանակէ
'ի վեր իր ընկերին ծաղրածութեանցը վարժուած
ըլլալով, ստոյիկեան հաճոյակատարութեամբ կը
համբերէր. միայն թէ երբոր կատակը երկար տե-
ւէր, Ռապա-Ժօա գլուխն անոր դարձընելով կը
մռնչէր: Ժօվիալն ալ իսկոյն հասկընալով վար կը
դնէր զայն: Երբեմն ալ՝ Ժօվիալ՝ միակերպութե-
նէ ճանճրանալով՝ զօրականին մախաղը կը խա-
ծատէր, որ իր շանը պէս վարժուած կը թուէր
այս զուարճութեանց:

Այս մանրամասն նկարագրէն կրնայ հասկըց-
ւիլ թէ ի՞նչ սիրալիր յարաբերութիւն ու ներ-
դաշնակութիւն կար երկու քոյրերուն, ծերունի
զօրականին, ձիուն ու շան մէջ:

Փոքրիկ կարաւանը բաւական անհամբերութեամբ յառաջ կերթար, որպէս զի զիչեր չեղած Մօքեան զիւզը հասնի, որ գիմացի բլրին վրայ կը տեսնուէր :

Տակօպէս մերթ ընդ մերթ իր բոլորաթիքը կը նայէր եւ կարծես թէ մտքին յիշատակները կը հաւաքէր : Քիչ քիչ դէմքը ախրեցաւ : Երբոր ջաղացքին մօտ հասաւ, որուն ձայնն իր ուշադրութիւնը գրաւեր էր, կանդ առաւ, եւ քանի մ'անդամ իր երկայն ընչացքը բժամատին ու ցուցամատին մէջէն անցուց, ինչպէս որ սովորութիւն ունէր ընելու՝ երբոր սիրտը սաստիկ կերպով խռովէր : Ժօվիտայ իր սիրտը պէս յանկարծ կանդ առնելով, Պլանչ անոր շարժումէն արթընցաւ ու զլուխը վեր առնելով նախ իր քոյրը փրնարուց եւ քաղցր ժպիտ մ'արձակեց անոր . յետոյ երկուքը մէկէն տեսնելով որ Տակօպէս երկու կու ձեռքը դաւաղանին վրայ կցած՝ լուռ եւ ախրազգած կեցեր էր, դարմացմամբ իրարու երես նայեցան . . . :

Արբերն այն ատեն փոքրիկ բարձրաւանդակի մը ստորոտը հասած էին, որուն դադաթը մեծ կազնիի մը խիտ տերեւներուն մէջ ծածկուած էր :

Ռօզ տեսնելով որ Տակօպէս միշտ անշարժ եւ խռկուն կեցեր էր, համետին վրայէն ծռելով իր փոքրիկ ու ձերմակ ձեռքը դօրականին ուսին վրայ դրաւ, որ կրնակն իրենց դարձուցած էր, եւ հարցուց քաղցրութեամբ .

« Ի՞նչ ունիս, Տակօպէս : »

Յերուսի դօրականն ևտին դառնալուն , աղ-
ջիկները դարմանալով տեսան որ աչքէն արտասու-
քի խոշոր կաթիլ մ'իւր այտին վրայ խոնաւ ակոս
մը գծելով սահեցաւ իջաւ թանձր ընչայքին մէջ
ևւ անհետացաւ :

« Գուն կուլնս կոր . . . Տակօպէն » գոչե-
ցին Ռօզ ևւ Պլանշ սիրտերնին սասակապէս վըր-
դովելով .կա դաչենք քեզ , ըսէ , ի՞նչ ունիս . . . »

Զօրականը վայրկեան մը վարանելէ ետև ,
կոշտացեալ ձեռքն աչքը սրբեց , ևւ մօտը դըտ-
նուած հարիւրամեայ կաղնին ցուցընելով , յուղ-
եալ ձայնիւ մ'ըսաւ որբերուն .

« Զեզ պիտի տրամեցընեմ , խեղճ որդեակք .
. . . բայց ըսելիքս սուրբ բան մ'է . . . : Աս-
կէց տան եւութ տարի առաջ՝ Աիբսիքայի մեծ
պատերազմին նախընթաց օրը՝ ձեր հայրն այս
ծառին քով բերի . . . երեք տեղէն վիրաւոր-
եալ , երկուքը գլխէն՝ սրով , ևւ մէկն ալ ուսէն
հրացանով : Արիւն նիզակի վէրք ալ ևս առած էի :
Ահա այս տեղն է որ երկուքս ալ գերի բռնուե-
ցանք . . . ևւ որմէ . . . ազգուրաց դաղղիա-
ցի մարքիղէ մը , որ Գաղղիայէն փախչելով դա-
ցեր ոււսաց կը ծառայէր գնդապետի պաշտօնով
. . . ևւ ևտքն ալ . . . վերջապէս օր մը . . .
ամեն բան կիմանաք . . . »

Յերուսի դօրականը քիչ մը լուռ կենալէ ե-
տև , դաւապանին ծայրովը Մօքէնն գիւղը ցու-
ցընելով յաւելցուց .

« Այո , այո , կը յիշեմ . ահա այս բլուրնե-

բուն վրայ էր, որ ձեր քաջագուն հայրը՝ որ մեր
եւ լեհացւոց գնդին հրամանատարն էր, առասաց
գրահաւոր հեծեալները ջարդեց եւ թնդանօթնե-
րու մարտկոց մ'առաւ անոնց ձեռքէն . . . Ա՛հ
որդեակներս, յարեց զօրականը պարզութեամբ,
տեսնելու էր թէ ի՞նչպէս ձեր հայրը՝ մեր գլուխը
կեցած՝ արիարար թշնամեաց վրայ յարձակեցաւ
կարկուտի պէս անդացած առմբերու մէջէն: Ա-
նոր պէս գեղեցիկ մէկը չկար այն օրուան պա-
տերազմին մէջ: Ծ

Արբոր Տախօպէս այս կերպով իր սրտին կըս-
կիծն ու յիշատակները կարտայայտէր, երկու
որքերն ինքնաբերաբար կամացուկ մը ձիէն վար
իջան, եւ ձեռք ձեռքի տուած գացին ծունր դրին
հինաւուրց կաղնիին ստորոտը, եւ իրարու փաթ-
թուելով սկսան լալ, մինչդեռ ծերունի զօրակա-
նը ետեւնին կանգնած եւ ձեռքերը երկար դա-
ւաղանին վրայ իրարու կցելով ճաղատ գլուխն
անոր կրթնցուցած էր:

«Օ՛ն, ելէք կանգնեցէք, լալ պէտք չէ,
ըսաւ քաղցրութեամբ քանի մը վայրկեան ետքը՝
տեսնելով որ Ռօզին ու Պլանչին կարմրուկ այ-
տերէն վար արտառք կը թորէր: Թերեւս Միսօն
զօրապետը Փարիզ կը գտնենք: Այս իրիկուն
պառկելու ժամանակնիս ամեն բան կը հասկցը-
նեմ ձեզ . . . ես ձեր հօրը վրայ շատ բան ունիմ
ձեզ պատմելիք, եւ դիտմամբ այս օրուան ըս-
պասեցի, վասն զի այս օրս ինձ համար տարեգաբ-
ձի պէս օր մ'է: — Մեք ոչ միայն հօրերնուս՝ այլ

եւ մօրերնուս համար կուլանք ըսաւ Ռօզ: — Այ՛ն,
մօրերնուս համար՝ դոր երկինքը միայն պիտի կըր-
նանք տեսնել » յարեց Պլանչ:

Զօրականը որբերուն ձեռքէն քսնելով սա-
քի վրայ հանեց եւ դորովագին սիրով մ'երկու-
քին ալ երեսը նայելով ըսաւ .

« Պէտք է որ այդպէս արամիք, որդեակ-
ներս . արդարեւ ձեր մայրը կանանց ամենէն
ընտիրն էր . . . Ահաստան քնակած ժամանակը
« Աարշաւիայի մարդարիտը » կը կոչէին զինքը,
բայց աւելի ճիշդ կըլլար եթէ աշխարհի մարդա-
րիտը կոչէին . . . վասն զի բոլոր աշխարհի մէջ
նմանը չկար . . . ոչ . . . ոչ: »

Տակօպէտի ձայնն այլայլելով լռեց, եւ ինչ-
պէս որ սովորյալ ըրեր էր, իր երկայն ընչացքը
բուժին ու ցուցամատին մէջէն անցունելով « Մը-
տիկ ըրէք, որդեակներս, ըսաւ, սրտին փղձկ-
մանը յաղթելով, ձեր մայրը խիստ բարի խրատ-
ներ կուտար ձեզ, այնպէս չէ: — Այ՛ն, Տակօ-
պէտ: — Աւրեմն միտքերնիդ բերէք. մեռնելու
ժամանակը չպատուիրեց ձեզ որ զինքը յաճախ
յիշէք, բայց առանց տրամելու: — Ճշմարիտ է,
Տակօպէտ, այդպէս պատուիրեց եւ ըսաւ թէ Աստ-
ւած միշտ գթալով այն խեղճ մայրերուն՝ որք ի-
րենց դաւակներն երկրիս վրայ թողլով կը ձգեն
կերթան, թոյլ կուտայ որ երկինքէն մեզ լսէ »
ըսաւ Պլանչ: — եւ աչքն ալ միշտ մեր վրայ ըլ-
լայ » յաւելցուց Ռօզ:

Յետոյ երկու քայրերն ինքնայօժար ձեռք

ձեռքի տալով անմեղ աչքերնին դէպ երկինք վեր-
բացին, եւ շնորհալի դէմքով եւ իրենց հասա-
կին վայլած պաշտելի հաւատքով մ'ըսին .

— Այնպէս չէ, մայր . . . դու մեզ կը տես-
նես . . . մեզ կը լսես :

— Որովհետեւ ձեր մայրը ձեզ կը տեսնէ ու
կը լսէ, ըսաւ Տակօպէտ յուղեալ սրտիւ, ուրեմն
դինքը մի վշտացընէք ձեր արամութեամբը . . .
քանի որ ինք պատուիրեց ձեզ որ չընէք . . . :

— Իրաւունք ունիս Տակօպէտ, ալ չենք տրու-
միր : » Եւ երկուքն ալ աչքերնին սրբեցին :

Տակօպէտ՝ ջերմեռանդ կաթոլիկի մ'աչքին
ճշմարիտ անհաւատ մ'էր . վասն զի ժամանակաւ
Սպանիոյ մէջ անխնայ ջարդեր կոտորեր էր այն
ամեն կարգի եւ աստիճանի կրօնաւորները՝ որ
մէկ ձեռքերնին խաչ եւ միւս ձեռքերնին դաշոյն
առած պաշտպան կանգներ էին՝ ոչ թէ աղատու-
թեան, վասն զի հաւատաքնութիւնը դարերէ
'ի վեր կաշկանդեր էր դայն, այլ իրենց նողկալի
արտօնութիւններուն : Սակայն Տակօպէտ քառ-
սուն տարիէ՛ ի վեր այնչափ սարսափելի տեսարան-
ներու ներկայ դանուեր էր, այնչափ անդամ մահը
մօտէն տեսեր էր, որ բնական հաւատոյ զգացու-
մը՝ որ ամեն պարզ եւ ուղիղ սրտերու մէջ կը դրա-
նուի, միշտ վառ մնացեր էր անոր հողւոյն մէջ :
Այս պատճառաւ թէ եւ երկու քոյրերուն միսի-
թարար դաղափորներուն համամիտ չէր, բայց
եւ այնպէս անոնց դպչիլը մեծ ոճիր կը համարէր :

Տեսնելով որ տխրութիւննին փարատեր էր,

« Ահա այդպէս պէտք է ըլլաք, որդեակներս,
 ըսաւ. աւելի կուզեմ որ երէկուան ու այս առ-
 առուան պէս իրարու հետ շատխօսութիւն ընէք,
 մերթ ընդ մերթ ծիծաղելով եւ իմ խօսքերուս
 պատասխան չտալով . . . այնչափ ձեր խօսակցու-
 թեամբն զբաղած էիք . . . Այո՛, այո՛, աղջիկ-
 ներս, երկու օրէ 'ի վեր մէջերնիդ գործ մ'ու-
 նիք . . . քայց հոգ չէ, մանաւանդ ուրախ կըլ-
 լամ եթէ դուարձութիւն կը պատճառէ ձեզ : »


Աղջիկները կարծելով իրարու երես նայե-
 ցան կէս ժպտով մը՝ որ աչքերնուն մէջ լցուած
 արտասուաց հետ հակապատկեր մը կը ձեւացը-
 նէր, եւ Ռօզ շփոթութեամբ մ'ըսաւ գորակամին.

« Բայց ոչ, Տակոպէս, հաւատա որ անմեղ
 բաներու վրայ կը խօսինք, — Շատ աղէկ, եւ
 դարձեալ չեմ ուզեր իմանալ . . . օ՛հ, հանդ չե-
 ցէք քիչ մը, եւ նորէն ճանքայ ելնենք. արդէն
 ժամանակն ուշ է, պէտք է որ գիշեր չեղած Սօ-
 քեան հասնինք, որպէս զի գիշերը հանդատանա-
 լով վաղ առաւօտ կանուխ ճանքայ ելնենք, —
 Տակաւին շատ ճանքայ ունի՞նք Փարիզ հասնելու
 համար, հարցուց Ռօզ, — Այո՛, որդեակներս,
 հարիւրի չափ իջեւան . . . թէպէտ ծանր կեր-
 թանք, քայց միշտ կը յառաջանանք . . . եւ քը-
 տակնիս ալ փոքր ըլլալով պէտք է որ արժան գը-
 նով ճանապարհորդ ենք : Ձեզ համար խուց մը,
 ինձ համար խոտէ անկողին մ'եւ ծածկոյթ մը ձեր
 դրան առջեւ, Ռապա-Ժօան ալ ոտքիս վրայ, ձեր
 Ժօլիային տակն ալ քիչ մը թարմ խոտ, ասոնք

են մեր ճանգու ծախքը : Կերակուրին խօսքը չեմ
ընել , վասն զի դուք երկուքդ մկան մը չափ հա-
ղիւ կուտէք . ես ալ Յգիպտոսի ու Սպանիոյ պա-
տերազմներուն ժամանակ սովրած եմ , որ երբ
կարելի ըլլայ՝ այն ատեն անօթ եմամ . . .

— Աը մտնաս ըսելու որ աւելի խնայո-
ղութիւն ընելու համար մեր փոքրիկ անաւ-
տութիւնն ալ դուն կընես եւ չես թողուր որ
քեզ օգնենք : Ա երջապէս , բարի Տակոպէր , եր-
բոր կը մտածենք որ գիշերները պառկած ժա-
մանակնիս լաթերնիս դուն կը լուաս . . . որ-
պէս թէ այն ալ մեր գործը չըլլար . . . — Ձեր
գործը մի . . . ըսաւ դօրականը Պանչին խօս-
քը կարելով , կը յուսամք որ ձեր փոքրիկ ու դե-
ղեցիկ ձեռքերը թողում որ աճառաջուրի մէջ
ձեզ քրտին : Միթէ պատերազմի ժամանակ դօ-
րականներն իրենց աղտոտները չեն լուար : Ես
լիմ վաշախ առաջին լուացարարն էի . . . եւ շի-
տակ ըսէք , ձեր լաթերը լաւ չեմ արդուկեր :
— Խիստ լաւ . . . բայց երբեմն կը դեղնեյրնես ,
ըսաւ Ռօզ ծիծաղելով : — Այո , երբոր արդուկը
խիստ սաք ըլլայ . . . Չոր անգն երեսիս կը
մօտեցնեմ . . . մորթս այնչափ կարծրացած է
որ արդուկին շատ սաք ըլլալը չեմ զգար . . .
ըսաւ Տակոպէր անժպիտ լրջութեամբ : — Չես
տեսներ որ կատակ կընենք , բարի Տակոպէր : —
Ուրեմն , որդեակներս , եթէ լուացարարութեանս
կը հաւնիք , ձեր լաթերն այսուհետեւ ալ ինձ առ-
ւէք լուալու . ես աժան կը լուամ , եւ ճանա-

պարհորդութեան մէջ մանաւանդ մեղի պէս աղ-
քատ մարդոց խնայողութիւնը շատ հարկաւոր է .
վասն զի պէտք է որ ունեցած ստակնիս մեղ մինչեւ
Փարիզ հասցընէ . . . : Մեր ունեցած թուղ-
թերն եւ ձեր վրայի միտալը կը յուսամ որ բաւա-
կան են հոն . . . — Այս միտալը մեզ համար
սուրբ է . . . վասն զի մայրերնիս առւառ մեզ
զայն մեռնելու ժամանակը . . . — Ուրեմն նա-
յեցէք որ չկորսնցընէք, եւ վրանիդ բլլալն ալ
ժամանակ ժամանակ ստուգեցէք : — Ահա վրաս
է, ըսաւ Պլանչ, շապիկին տակէն փոքրիկ պղնձէ
միտալ մը հանելով որ նոյնպէս պղնձէ շղթայով
մը պարանոցէն կախուած էր : Միտալին երկու
երեսին վրայ հետեւեալ արձանագրութիւնները
կային .



Եր՞նչ կը նշանակեն ասոնք, Տակօպէր, ըսաւ
Պլանչ միտալին վրայի տխուր արձանագրու-
թիւնները նկատելով, մայրերնիս չկրցաւ ասոնց
մեկնութիւնը մեզ տալ : — Այդ ամենը կը հաս-
կըցընեմ ձեզ այս իրիկուն, պատասխանեց Տակօ-

պէս . ժամանակն ուչ է , պահեցէք այդ միտայլը
. . . եւ ճանքայ ելնելնք . դեռ մէկ ժամէն աւե-
լի պիտի երթանք ի ջեւանը հասնելու համար . . .
Յ'ն , որդեակներս , անգամ մ'ալ աչքերնիդ այս
բարձրաւանդակին վրայ դարձուցէք՝ ուր ձեր
քաջարի հայրը գերի ինկաւ . . . եւ ձի հեծէք .
Երկու որբերը վերջին եւ երկիւղած հայ-
ւածք մը ձգեցին այն տեղւոյն վրայ՝ որ այնպիսի
ցաւադին յիշատակներ կը ձգէր իրենց առաջ-
նորդին միտքը , եւ յետոյ անոր օգնութեամբ Ժօ-
վիայի վրայ հեծան :

Բարի կենդանին վայրկեան մը չէր հեռացեր
հոնկէց , բայց իրիւր հախաատես ծերունի՝ պատե-
հութիւնը շկորանցընելով օտարի հողէն կա-
հանչ եւ կակուղ խոտերու առատ տասանորդ մը
քաղեր էր Ռապա-Ճօայի հախանձոտ աչքին
առջեւ , որ դալարավայրին վրայ հանգիստնաւեր
էր՝ ցռուկն իր երկու առջեւ թաթերուն մէջ եր-
կընցուցած : Երբոր ճանքայ ելնելու նշանը տըր-
ւեցաւ , շունն անմիջապէս իր տեղը դնաց անցաւ
տիրոջն ետեւը : Տակոպէս ձիուն սանձէն բռն-
նած զգուշութեամբ կը քալեցընէր , եւ դաւա-
զանին ծայրովն ալ գետինը կը գննէր , որովհետեւ
դալարավայրը քանի կերթար ճախճախուտ էր :
Քանի մը քայլ երթալէ ետեւ պարտաւորեցաւ
դէպ'ի ճախխոտորելու , որպէս զի արահետ ճան-
քան ելնէ :

Երբոր Մօքէրն հասան , Տակոպէս՝ գիւղին
ամենէն աղքատիկ պանդոկը փնտռեց , եւ պա-

ասասխանն ատուին թէ միայն մէկ պանդոկ մը կար
զիւղին մէջ Ծօքօն-Պլանն անուենով :
& Ուրեմն Ծօքօն-Պլանի պանդոկը երթանք
ըսաւ զօրականը :

ԳԼՈՒԹ Գ .

ԺԱՄԱՆՈՒՄ

Մօռօք արդէն անհամբերութեամբ քանի
մ'անգամ Ծօքօն-Պլանի պանդոկին բակին վրայ
նայող պատուհանը բացեր էր , որպէս զի երկու
արբերուն եւ զօրականին հասնիլը դիտէ : Տես
նելով որ չէին գար , սկսաւ նորէն ծանր ծանր ճե-
մել թեւերը խաչաձեւ կուրծ քին վրայ կցած ,
պլուխը ծռած , հնար մը փնտռելով մտքին խոր-
հուրդն 'ի գործ դնելու : Իր գաղափարներն ան-
շուշտ կը տաղնապեցընէին զինքը , որովհետեւ
սովորականէն աւելի ժանտաղէմ կերել էր :

Այսու ամենայնիւ անխելք մարդ չէր Մօռօք
իր կրթութեանց մէջ ցուցրցած անվեհերութեամ-
բը՝ զոր ճարտար խաբերայութեամբ մ'իր նոր
գաւանած կրօնքին զօրութեանը կուտար , իր
խորհրդազդած եւ պատգամակերպ խօսքերովն եւ
կեղծ խառակրօնութեամբ տեսակ մ'աղդեցու-
թիւն ստացեր էր շրջակայ ժողովրդոց վրայ՝ որոց
յաճախ այցելութիւն կընէր :

Գիւրաւ կը հասկցուի որ Մօռօք՝ զարձէն

չառ առաջ ընտանեցած էր վայրենի գաղանաց
հետ : Միպերիոյ հիւսիսային կողմը ծնած ըլլա-
լով , արջերու եւ եղջերուներու քաջասիրտ որ-
սորդ մ'եղած էր 'ի մանկութենէ : 1810ին , որսոր-
դութեան արհեստը թողլով՝ բեւեռային երկիր-
ները զննելու զրկուած ուս ճարտարապետի
մը առաջնորդ եղած եւ յետոյ անոր հետ Բեդ-
րասպուրկ գացած էր : 2ոն Մոսք այլ եւ այլ
յաջող ու ձախող վիճակներ անցունելէ ետեւ ,
կայսերական սուրհանդակներուն մէջ մտեր էր ,
որք ըստ հաճոյից բռնակալ միապետին՝ ինք-
նաշարժ երկաթէ մեքենայներու պէս փոքրիկ
բալխիրով մը կերթ եւեկեն Բուսիոյ լայնածաւալ
երկիրներուն մէջ՝ Պարսկաստանէն մինչեւ Սա-
ռուցեալ ծովը : Այս մարդոց համար ոչ ամառ
ձմեռ կայ , ոչ յողնութիւն , ոչ արդելք եւ ոչ
վաանգ . այլ գիշեր ցերեկ կայծակի արագու-
թեամբ կը ճանապարհորդեն : Մարդկեղէն ուռմ-
բեր են , որք կամ պէտք է խորտակին , կամ ի-
րենց նախատակին հասնին : Այսպիսի կենաց վար-
ժուող մարդու մը յանդգնութիւնը , ուժն ու
համբերատարութիւնը կրնայ հասկցուիլ :

Անոգուտ է հիմա պատմել թէ ինչ զարմանա-
լի պարագայներով Մոսք այս դժնդակ արհեստը
ձգեր եւ Յրիպուրկի մէջ վանք մը մտեր էր իբրեւ
նորընծայ , եւ յետոյ բարի ու արժանաւոր դարձ
մ'ունենալով այս թափառայած ճանապարհոր-
դութիւններն սկսեր էր , հետը վայրի գաղանաց
փակարան մը պարտոցընելով , որուն ուրկէ ձեռ-

քրն անցնիլն յայանի չէ :

Մտօք միշտ կը պարտէր իր ձեզնայարկին մէջ : Արդէն դիշեր եղեր էր , եւ անհամբերութեամբ սպասած երեք ան ձինքը դեռ չէին երեւնար : Իր քայլերն սկսեր էին ցնցիլ ու շփոթիլ : Յանկարծ կանգ առաւ , գլուխը դէպ'ի պատահանք ծռեց եւ մտիկ ըրաւ : Այս մարդը վայրենեաց պէս սուր ախանջ ունէր : « Ահա եկան . . . պոռաց , եւ աչքին դեղին բիրք սատանայական ուրախութեամբ փայլիլ սկսաւ : Մարդուն եւ ձիուն ռոտաձայնը լսեր էր : Գնաց ձեզնայարկին պատահանն զգուշութեամբ բացաւ , եւ տեսաւ որ երկու աղջիկները ձիով , եւ ծեր դորականն ալ առջեւէն պանդոկին բակը կը մտնէին :

Արդէն դիշեր էր , տխուր եւ ամպամած գիշեր մը . ուժգին հով մ'ալ կար որ հիւբերն ընդունելու համար դուրս հանուած լապտերներուն լոյսը կը պլպլացընէր : Մտօքին տրուած նշաններն այնչափ ճիշդ էին , որ անհնար էր սխալիլ . ուստի ձեռքն ինկած որսին վրայ աներկմիտ ըլլալով պատահանը փակեց :

Իր խորհուրդները լաւ մը կարգի դնելու համար քառորդի մը չափ մտածելէ ետեւ՝ գնաց դեռ նադանէն վար ծռեցաւ ուր ամուրուղը դրուած էր , եւ Գողթաթը կանչեց : — Հոս եմ , տէր իմ , գոչեց խապտա ձայն մը : — Աեր եկու : — Աւասիկ եմ , տէր իմ . . . սպանդարանէն միս առեր կուգամ : »

Սանդուղին աստիճանները սարսեցան եւ շատ

Հանցած՝ ահագին գլուխ մը գեանէն դուրս ելաւ :
Գողիաթ , (այս մականունը խիստ լաւ յարմարերէր էր անոր) վեց ոտնաչափ հասակ եւ Հերակլէսի պէս յազթանդամ իրան մ'ունէր . դէմքը խիստ սղեղ , աչքերը շիւ ու խորունկ , ճակատը ցած ու ցցուեալ , մազերն ու մորուքը գեղին եւ ճիւղ բաշի պէս հաստու խիտ էին , այնպէս որ վայրենի գազաններու կը նմանէր : Եր լայն ծամելիքներովը՝ որք ճանկի նման ակռաներով զինեալ էին , տան կամ տաններկու լիպրա ծանրութեամբ մտի կտոր մը խածած կը բերէր , որպէս զի ձեռքերն ազատ մնալով կարենայ ամուղուղը մագըղցել , որ իր ծանրութեան ներքեւ կը դողար ու ու կը ճարճատէր :

Աերջապէս այս վիթխարի մարմինը գեանադրունէն վեր ելաւ : Տուլի պարանոցի պէս հաստ վիղը , լանջերուն եւ ուսերուն զարմանալի լայնութիւնը , թեւերուն ու սրունքներուն կարգէ դուրս հաստութիւնը տեսնողը դիւրաւ կը դուշակէր որ այս հական կրնար արջի մը հետ աներկիւղ կռուիլ : Արայի հագուստն էր՝ ժապաւէններով ու սերեկներով շինուած հին կապոյտ տախատ մը , հաստ կաշիէ բաճկոն կամ մանաւանդ դրահ մը , որ տեղ տեղ խղրատած էր գազանաց սուր ճիրաններէն :

Երբոր Գողիաթ գեանադրունէն դուրս ելնելով կանգնեցաւ , ակռաները թուլցուց , բերանը բացաւ եւ մտին կտորը վար ձգելով արիւննաշախաղ ընչացքները որկրամուտութեամբ լըզ-

ւրբանց : Այս հրէշը՝ ուրիշ շատ ձեռնածուաց
 պէտ՝ տօնափաճառներու մէջ ստակ շահելու հա-
 մար հուժմ միս ուտել սխտեր էր, եւ ետքն այս վայ-
 րենաւկանն կերակուրին վարժուելով, ոչ միայն իր
 շահունն այլ եւ իր ախորժակին համար՝ ամեն ան-
 դամ Մոռօքի կրթութիւններէն առաջ քանի մը
 լիպրա հուժմ միս կուտէր բազմութեան առջիւ :

Գողթիսթ եղան մտին կտորը ցուցընելով ը-
 սու . . . & Մահին եւ իմ բաժինս վարն է . այս ալ
 կայէնին եւ Յուդայի բաժինն է . ուր է սակրը .
 տուէք որ երկու հաւասար կտորի բաժնեմ . . .
 ոչ աւելի ոչ պակաս . . . վասն զի պէտք է որ
 թէ մարդ եւ թէ գաղան՝ ամեն մէկուն որկորն
 իր միան ունենայ . . . » Այս ըսելով բաճկոնին
 մէկ թեւը սօթ թեց, եւ գայլի մորթի պէս թա-
 ւանաղ բազուկ մ'երկեան հանեց, որուն վրայ
 թամաաթի հաստութեամբ երակներ կային :

& Ո՞ւր է սակրը, աէր իմ, հարցուց նորէն՝
 աչքովը զայն փնտռելով :

Մարդարէն փոխանակ այս հարցման պա-
 տախանելու՝ քանի մը հարցումներ ըրաւ իր ախ-
 բանեակին :

& Քիչ մ'առաջ վներն է իր կրքնոր ճանապարհ-
 հորդներ պանդոկը հասան : — Այս աէր իմ, ըս-
 պանդարանէն կուդայի : — Ո՞վ են այդ ճանա-
 պարհորդները : — Երկու գեռահաս աղջիկ ճեր-
 մակ ձիու մը վրայ հեծած եւ հեռեմնին ալ մեծ
 ընչացքով ծերուկ մը . . . բայց սակրը . . .
 գաղաններն անօթի են, ես ալ նոյնպէս . . .

սակրը . . . : — Գիտես արդեօք ուր տեղաւոր-
 ւեցան այդ ճանապարհորդները : — Պանդոկա-
 պետը դանոնք բակին հերսի ծայրը տարաւ : —
 Գաշտին վրայ նայող շէնքի՞ն մէջ : — Այո՛, տէր
 իմ . բայց սակ . . . : Այս միջոցին դադանաց մի-
 աճայն մռնչիւն մը ձեզնայարկը սարսելով Գո-
 դիաթին խօսքն ընդմիջեց :

« Կը լսէք , տէր իմ , դոչեց , դադաններն ա-
 նօթենէ կը կատողին : Նթ է ես ալ կարենայի մռնչ-
 չել , անոնց պէս կընէի : Երբէք տեսած չէի Յու-
 դային եւ Ասայէնին այս աստիճան կատաղութիւ-
 նը , այնպէս կը ցատկեն իրենց դարագեղին մէջ
 որ կարծես թէ ամեն բան պիտի կոտորուն . . . :
 Մահին աչքերն ալ այնպէս կը փայլին , որ անս-
 նողը երկու ճրագ կը կարծէ . . . : խեղճ Մահ : »

Մտօք Գոդիաթին խօսքերուն ականջ չկա-
 խելով նորէն հարցումները շարունակեց :

« Ըսել է որ երկու աղջիկները բակին ծայրի
 շէնքին մէջ դրուած են , այնպէս չէ : — Այո՛ ,
 այո՛ . բայց սատանային սիրուն ըլլայ , սակրն ուր
 է : Քարլին երթալէն 'ի վեր' ամեն դործերն իմ վը-
 րայ մնացած են , եւ ասով ճաշերնիս կուշանայ :
 — Յերուկն աղջիկներուն քով մնաց , հարցուց
 Մտօք :

Գոդիաթ դարմանալով որ իր ասնչափ թա-
 խանքէն ետեւ տակաւին իր տէրը դադաններուն
 կերակուր տալու փոյթ չունէր , ապշութեամբ
 Մտօքին երեսը կը նայէր :

« Պատասխան տուր , դադան . . . : — Նթ է

ես գաղան եմ, գաղանաց պէս ալ ուժ ունիմ, ք-
 սաւ Գողիաթ ներգանալով, եւ գիտէք որ գա-
 ղանաց հետ կռուած ժամանակս ալ միշտ շեմ
 յաղթուիր : — Ար հարցընեմ քեզ թէ ծերուկն
 աղջիկներուն քով մ'անց կրկնեց Մոսք : — Ա՛յ,
 պատասխանեց Գողիաթ, ծերուկն իր ձին արա-
 ռը տանելէ ետեւ, տաշտ մ'եւ ջուր ուղեց, եւ
 դաւթին մէջ լսապետիին մօտ նստած լաթ կը լը-
 ւայ . . . դարմանալի՛ք քան . . . ճերմակ ըն-
 չաց քով մարդ մը նստի լուացարար կնկան պէս
 լնթ աճուէ . ի՞նչ կըսէ արդեօք մէկը երբ գիտ-
 տեանէ որ դեղձանիկներու կորեկ կուտամ, ա-
 ւելցուց Գողիաթ արհամարհոտ դէմքով եւ ու-
 սերը վեր վերցընելով : Հիմա որ ճերմարցմանց
 պատասխանեցի, տէր իմ, թող տուէք որ երթամ
 գաղաններուն ուսելիք տամ : Յետոյ աչքը նո-
 ղէն չորս կողմը պտտցընելով՝ աւելցուց . « Բայց
 ձեր է սակրք : »

Մարդարէն վայրկեան մը խորհելէ ետեւ՝
 ըսաւ Գողիաթին . . .

« Այս իրիկուն գաղաններուն կերակուր չի
 պիտի տաս : »

Այս խօսքն անհաւի Գողիաթին խելքին
 դէմ էր, որ չհասկցաւ . . .

« Ի՞նչ հրամեցիք, տէր իմ, հարցուց Մոսք-
 թին : »

— Չեմ ուղեր որ այս իրիկուն գաղաններուն
 կերակուր տաս : »

Գողիաթ իր խաշոր շի աչքերը բանալով՝ եւ

ձեռքերն իրար կցելով՝ երկու քայլ ետ գնաց առ
առնց պատասխան տալու :

« Կսեցիր հրամանս , ըսաւ Մոռօք անհամ-
բերութեամբ , կրցիր հասկըցընել :

— Միտը պատրաստ կը կենայ , ճաշին ժա-
մանակը երեք ժամէն աւելի անցած է , եւ մենք
բան մը չուտինք , ըլլալիք բան է , դռչեց Գո-
ղիասթ առաւել եւս ապշութեամբ :

— Հնազանդէ՞ ու լուռ կեցիր :

— Բայց կուզէք որ այս իրիկուն գէշու-
թիւն մը պատահի : Պազաններն անօթութենի
պիտի կատղին . ես ալ նոյնպէս :

— Շատ աղէկ :

— Պիտի կատղին , կըսեմ :

— Շատ աղէկ :

— Ի՞նչպէս շատ աղէկ . . . քայց . . .

— Բաւական է :

— Բայց սատանային մորթին վրայ կերդնում
որ ես ալ դազաններուն չափ անօթի եմ . . .

— Կէր . ո՞վ կարգիլէ քեզ . քու կերակուրդ
պատրաստ է , որովհետեւ հում կուտես :

— Ոչ ես առանց դազաններու՝ ոչ ալ դա-
զաններս առանց ինձի կերակուր չենք ուտեր :

— Նորէն կըսեմ քեզ , որ եթէ դազաննե-
րուն կերակուր տաս՝ քեզ կը գոնտեմ : »

Գողիասթ ապուշ եւ բարկացայտ դէմքով
Մարգարէին երեսը նայելով՝ արջու պէս հաստ ե-
լակող ուկ ճայնով մը մրմռաց :

Մոռօք այս հրամանը տալէ ետեւ , ձեռնու-

ցարկին դէպ 'ի լայնքն ու երկանքը ճեմել սկսաւ
խակուն դէմքով . յետոյ Գողթաթին դառնալով
որ խորին ապշութեան մը մէջ ինկեր էր . Միտ-
քը կուգայ արդեօք դիւղապետին տունը՝ ուր
այս իրիկուն դացեր էի հրամանադիրս ստորագ-
րել տալու համար , եւ կնոջն ալ մանր դրքեր ու
համրիչներ ծախեցի :

— Այո , պատասխանեց հսկան բրտութեամբ :

— Գնա հարցնու իր սպասուհիին թէ վաղն
առտու կանուխ կրնամ իր տիրոջը հետ տեսնուիլ :

— Ի՞նչ բանի համար :

— Թեքեւս հարկաւոր խօսելիք պիտի ունե-
նամ . ուստի ըսէ իրեն թէ կաղաչեմ որ դիւ չտե-
ամ դուրս չելնէ :

— Լաւ . . . բայց դադանները . . . արդ-
եօք դիւղապետին տունն երթալէս առաջ անոնց
կերակուր չեմ կրնար տալ . . . դոնէ Ժամայի
Յովազին , որ տեսնէն աւելի անօթեցած է . . .
եկէք , տէր իմ , միայն Մահին պատառ մ'ուտե-
լիք տանք . Կայէն , Յուդա եւ ես կ'սպասենք :

— Ամենեւին չըլլար , մանաւանդ Յովազին :

— Սատանային եղջիւրներուն վրայ կերդ-
նում որ չեմ հասկընար ինչ ունիս այսօր . բաղդէս
Քարին ալ հոս չէ . անիկա խորամանկ է , թեքեւս
հասկընար եւ ինձ ալ հասկըցընէր թէ ինչնու հա-
մար թող չէք տար որ անօթի դադաններուն կե-
րակուր տամ :

— Հասկընալու պէտք չունիս :

— Արդեօք Քարլ տակաւին շատ պիտի ու-

շանոյ :

— Սրդէն եկած է :

— Ո՞ւր է :

— Նորէն տեղ գնաց :

— Ի՞նչ անցք կը դառնայ հաս . . . անշուշտ
բան մը կայ : Քարչ կերթայ , կուգայ , նորէն
կերթայ . . . եւ . . .

Քարչին խօսքը պէտք չէ հիմա . դործը քու
վրայ է . թէպէտ եւ դայլի պէս անօթի ես , բայց
աղուէսի պէս ալ խորամանկ ես , եւ եթէ ուղեւ
Քարչէն վար չես մնար վարպետութեան մասին »

Այս խօսքն ըսած ժամանակ Մօռօք իր առջի
դէմքն ու լեզուն փոխելով կամացուկ մը հակային
ուսին դարկաւ :

— Ե՞ս խորամանկ եմ , ըսաւ Չողիաթ :

— Այո՛ , դուն , եւ ապացոյցն այս է որ եթէ
խմանաս թէ այս դիշիբ տասն Քիօրին վասարկե-
լիք դործ մը կայ , ամեն վարպետութիւն կը բա-
նեցընես վասարկելու համար եւ չես փախցըներ :

— Այդպիսի վաստակներու համար վարպետ
եմ , ըսաւ հական տխմար գոհութեամբ մը ժպտե-
լով , ի՞նչ քնելու է այդ տասն Քիօրինը վասար-
կելու համար :

— Ար տեսնես :

— Ընելիքս դժուար դործ է :

— Ար տեսնես : Նախ դիւղապետին պիտի
երթաս . բայց մեկնելէ առաջ աս վասարանին մէջ
կրակ վառէ :

— Ես ա աղէկ , ակը խե . . . ըսաւ հական

Քիչ մը մխիթարուելով ճաշին ուշանալուն վրայ,
վասն զի տասն Ֆիօրին պիտի վաստըկէր :

— Կրակը վառելէդ ետեւ սա պողպատէ ցու-
պը մէջը դիր որ կարմրի , յաւելցուց Մարգարէն :

— Շատ աղէկ , տէր իմ :

— Թող այդ հոտ մ'նայ , դուն գիւղապետին
տունը գնա , եւ դարձիր հոս սպասէ :

— Շատ աղէկ , տէր իմ :

— Նայէ որ կրակը վառ պահես վառարանին
մէջ :

— Շատ աղէկ , տէր իմ :

Մօռօք քայլափոխ մ'ըրաւ դուրս ելնելու
համար , բայց միտքը բան մ'իյնալով կանգ առաւ :

« Ըսիր թէ ծերուկը գաւթին մէջ լաթ կը
լուայ :

— Այո , տէր իմ :

— Զմտնաս , պողպատէ ցուպը կրակին մէջ
գիր , գիւղապետին գնայ եւ ետքը հոս եկո իմ
հրամանիս սպասէ : »

Այս ըսելով Մարգարէն գետնադուռին սան-
դուղէն վար իջաւ գնաց :



Գ.Ն.ՈՒԽ Դ.

ՄՈՌՕՔ ԵՒ ՏԱԿՕՊԷՌ

Գողիաթ առաւ չէր ըսած . . . Տակօպէս իր
սովորական անժպիտ լրջութեամբը դատարարն մէջ
նստէր լաթ կը լուար :

Այս առերեւոյթ արտակերպութեամբ կան վրայ
մարդ չզարմանար երբ որ պատերազմի մէջ գըտ-
նուող դօրաց սովորութիւնները միտքը բերէ :
Բայց Տակօպէսին զլխաւոր ջանքը որբերուն ըս-
տակը իննայել եւ անոնց հոգ աւ ներդրութիւնն չի
պատճառել էր . ասոր համար ասին իրիկունն օթե-
ւան իջած ժամանակնին կանանց վերաբերեալ
պաշտօններ կը կատարէր , եւ ձեռքէն ալ կու-
դար : Շատ անգամ պատերազմներու մէջ կսիւք
վերջանալէն ետեւ կը նստէր իր հաղուսար կը
կարկըսէր մեծ իննամով եւ առաւել մեծ ճարտա-
րութեամբ , որովհետեւ դօրականի մը համար պա-
տերազմի մէջ թուրի հարուածներ միայն առնու-
լը բաւական չէ , այլ պէտք է նաեւ իր համադ-
ղեանն ալ նորոգել . վասն զի թուրը կամ սուրնը
մարմինը վիրաւորած ժամանակ հաղուսանն ալ կը
պատռուէ : Առաջի կոխներուն իրիկունը կամ հե-
տեւեալ օրը կը տեսնես որ ամենէն քաջ եւ ընտիր
դօրականները (որք իրենց համադղեանն ու դէն-
քերը լաւ եւ մաքուր պահելու մտադիր են) , ի-

րենց մախաղէն ասեղ, դերձան : մկրատ, կոճակ
եւ այլն կը հանեն, եւ կ'սկսին սյնալիսի կարկը-
տու քներ ընել, որոց վրայ ամենէն փութաջան
եւ մանրահոգ տանտիկիմները կրնան նախանձիլ :

Հոս ամենէն յարմար տեղն է բացատրելու
թէ ինչ պատճառաւ երկու որբերուն առաջնոր-
դը Տակօպէս կը կոչուէր : Սյամարդը կայսերա-
կան անձնապահ զօրաց ամենէն գեղեցիկ եւ քաջ
ճիաւոր ու մբաճիգներէն մէկն էր, եւ բուն անու-
նըն ալ Յրանսօա Պօտօէն էր :

Սաստիկ բայց անորոշ պատերազմի մ'իրի-
կունը՝ այս մարդուն գունդը պահպանութեան
դրկուեր էր մօտակայ աւերակ գիւղ մը՝ որուն քը-
նակիչները ձգեր փախեր էին : Գիւղին չորս կողմը
պահնորդներ դրուելէ ետեւ, ճիաւ որներուն կէ-
սը ձիւլ վրայ պատրաստ կեցան, կէսն ալ ձիերէն
վար իջնելով քիչ մը հանդ չիլ սխան : Սեր ուրմ-
բաճիգն այն օրը պատերազմին տաք տեղը դանը-
ւելով, Քէզէրլից (աւսարիացի զօրական) մը վա-
րէն վեր ձախող սուինի հարուած մը տուեր էր ա-
սոր ազգրին, բայց վէրքը ծանր չըլլալուն համար
մեր մարդը պարզ ճանկրտուք կը կոչէր զայն եւ
վէրքի տեղ չէր դներ :

«Յելուզակ, նոր վարաիքս պատուեցիր» գո-
չեր էր մեր արի ումբաճիգը՝ տեանելով որ սուինի
հարուածը մեծ ձեղք մը բացեր էր վարաիքին
վրայ, եւ առաւել սսոր՝ քան թէ վիրաւորուե-
լուն համար կատկելով թուրի ճարտար հարուա-
ծով մը զարկեր սպաննելու էր զաւսարիացին :

Ուստի նոյն իրիկունը քիչ մը հանդիսաւ առ-
նելու միջոցին՝ առաջին դործն եղաւ իր մեծ կո-
շիկներն ու վարտիքը հանել, դրպանին մէջ պա-
հած ամենէն լաւ ասեղն ու դերձանը ընտրել,
մատնոցը մատը դնել, ու վարտիքին մէջի կողմը
դուրս դարձունելով՝ որպէս զի կարը երեսէն չե-
րեւնայ, մօտը վառուած կրակին լուսովը կար-
կըտել:

Այս կէտ մերկուեթիւնը քիչ մը գէմէր գին-
ւորական կանոնաց, բայց հարիւրապետը՝ որ նոյն
միջոցին հսկողու թեան ելեր էր՝ չկրցաւ խնդալը
բռնել տեսնելով որ բազմամեայ դօրականը լըր-
ջուեթեամբ ծնկան վրայ եկած, մորթէ մեծ գըլ-
խարկը գլուխը, գինւորական համազգետը
կրնակը, մեծ կոշիկները քովը, վարտիքը մերկ
ծունկին վրայ տարածած, խանուեթին մէջ հան-
դիսաւ նստող դերձակի մը պէս հանդարտ սրտով
կը կարէր ու կը կարէր:

Յանկարծ հրացաններու ձայն մը բրդաւ, եւ
պահնորդները տեղերնուն վախչելով դունդին
վրայ եկան ինկան « դէնք առէք » գոչելով:

« Զի հեծէք » գոչեց հարիւրապետը սրտա-
դին ձայնիւ. եւ անմիջապէս ամեն մարդ ձիւ-
րուն վրայ ցատկեցին: Մեր գծբաղդ կարկտողն
ալ՝ որ դունդին յառաջապահներէն էր, ժամա-
նակ չունեցաւ վարտիքը դարձունելու, ուստի
կէս կարկրտած՝ գէշ աղէկ ոտքն անցուց, եւ
առանց կոշիկներն հագնելու՝ ձիուն նուր նետ-
ւեցաւ:

Խաղախններու գունդ մը՝ մօտակայ անտառէ մը օգուտ քաղելով՝ գաղղիական դունդը կոխելու եւ ցիրուցան ընելու փորձ փորձեր էր։ Առիւը խիստ արիւնտու եղաւ։ Մեր ումբաձիգը՝ վարտի քին պատուելուն եւ կոշիկները կորսնցընելուն վրայ կրակ կտրած, որովհետեւ իր հագուստները շատ կը սիրէր, այն գիշերուան պէս կատաղաբար կը ըլլած եւ մարդ ջարդած հունէր։

Լուսնի պայծառ լոյս մը ծագած ըլլալով, բոլոր դունդը կրցաւ զմայլմամբ տեսնել այս արի դինուորին շահատակութիւնը, որ երկու խաղախ սպաննեց եւ պաշտօնակալ մը գերի բռնեց։

Վերջապէս գաղղիական դունդն իր գիրքը պահելով խաղախները վանեց։

Առիւը փերջանալէն ետեւ՝ հարիւրապետն իր զօրականները պատերազմի կարգաւ շարեց որպէս զի իւր շնորհակալութիւնը յայտնէ, եւ հրաման ըրաւ կարկտողին՝ որ կարգէն դուրս ելնելով յառաջ գայ՝ իր գեղեցիկ վարմունքին համար հրապարակաւ գովեստ լսելու։ Մեր մարդն առաւել զոհ կըլլար եթէ զրկուէր այս փառքէն, բայց հնազանդիլ հարկ էր։

Գժուարին է երեւակայել հարիւրապետին եւ բոլոր զօրականներուն զարմանքը, երբոր տեսան այս փեհ եւ լուրջ դէմքով զօրականը՝ որ բոպիկ ոտքերն ասպանդակներուն մէջ դրած եւ մերկ սրունքներովն ալ ձիուն փորը սեղմելով յառաջ կուգար։

Հարիւրապետն ապշելով անոր մօտեցաւ եւ

կոխէն քիչ մ'առաջ անոր ունեցած դրաղմունքը
միտքը բերելով ամեն բան հասկըցաւ :

Հա՛, հա՛, հին նապաստակ , ըսաւ անոր ,
դուն ալ Տակօպէս թագաւորին պէս վարտիքդ
մէջը դուրս դարձուցած կը հագնիս . . .

Գունդին բոլոր դօրականներն՝ իրենց կանու-
նին հակառակ՝ չկրցան ծիծաղնին բռնել հարիւ-
րապետին այս դուարձարանու թեանը վրայ : Իսկ
մեր մարդը՝ թամբին վրայ արձանի պէս նստած ,
ձախ բթամատը երատանակին կոճակին վրայ եւ
թուրին երախտակալն ալ աջ ազդրին կոթնած՝ բը-
նաւ շաւրեց իր հանդարտ լրջութիւնը , եւ հա-
րիւրապետէն գովեստաւ ու շնորհակալութիւն լսե-
լէ ետեւ դարձաւ իր տեղը դնաց : Այն օրէն ՚ի վեր
Ֆրանսօսա Պօտօէնի մականունը Տակօպէս մ'նաց :

Ինչպէս որ վերն ըսինք , Տակօպէս պանդո-
կին դաւիթը նստած լաթ կը լուար՝ մեծ դար-
մանք պատճառելով մօտի սրահին մէջ նըս-
տող եւ դարեջուր խմող քանի մ'անձանց , որք
հետաքրքրութեամբ անոր կը նայէին :

Եւ արդարեւ տարօրինակ տեսարան մ'էր
այս :

Տակօպէս , իր դորչ թիկնօցը հանած եւ շա-
պիկին թեւերը սօթ թած , տաշտէն դուրս դէպ
՚ի վեր երկնցած տախտակի մը վրայ ինքրիկ թաշ-
կինակ մը կանոէր ուժեղ ձեռօք . իր աջ թեւին
վրայ կարմիր ու կապոյտ պատերազմական նշան-
ներ եւ երկուք ալ խորին սպիւններ կը տեսնուէին՝
որոց մէջ մատ կը սղմէր :

Ուստի մօտի սրահին մէջ դարև ջուր խմող եւ
 ծուխ քաշող Գերմանացիներն իրաւունք ունէին
 զարմանալու այս մեծ ընչաց քով ճաղատ դիմով
 եւ խոժոռ դէմքով ծերունիին տարօրինակ դրադ-
 մանը վրայ : վասն զի Տակօպէս աղջիկներուն
 քով չեղած ժամանակ՝ երեսը կը կախէր եւ դա-
 ժան երեւոյթ մը կ'ստանար :

Ասոնց այսպէս ուշադրութեամբ դինքը դի-
 տելուն վրայ Տակօպէս նեղանալ սկսեր էր, վա-
 ւրն զի ըրածն իր աչքին խիստ պարզ եւ բնա-
 կան բան մը կերեւէր :

Այս միջոցին Մոռօք դաւիթը մտաւ, եւ
 քանի մը վայրկեան ուշադրութեամբ դօրակա-
 նին երեսը դիտելէ ետեւ՝ քովը դնաց եւ հեղ-
 նական ձայնիւ մը ըսաւ անոր գաղղիերէն.

« Ընկեր, կերեւի թէ Մօքէնի լուացարար
 կանանց վրայ վստահութիւն չունիք : »

Տակօպէս՝ առանց լուացքը դադրեցընելու՝
 արտււանունքը կնճակց, գլուխը կէս մը դար-
 ձուց եւ ծռռ ծռռ Մարգարէին երեսը նայե-
 ցաւ : Մոռօք զարմանալով անոր լռութեանը վը-
 րայ, յարեց :

« Գիտեմ, քանզի իմ, որ դուք գաղղիացի
 էք, ինչպէս որ թեւերնադ վրայ նկարուած խօս-
 քերն ալ յայտնի կը ցուցնեն. ասկէց զատ ձեր
 դիտւորական դէմքէն կը հասկնուի որ դուք
 կայսրութեան հին դիտւորներէն մէկն էք. ասոր
 համար այս դրադմունքը չեմ վայելցընելի ձեզ,
 վասն զի գիւցաղնութեան աստիճանէն քոք մա-

նոր պատառի կարգը իջնել է : »

Տակօպէս լուռ կեցաւ , բայց ակռաներուն ծայրումն ընչացքը խածկրտեց եւ ձեռքի անտորն աւելի շուտով եւ բարկութեամբ տարուբերել սկսաւ լաթին վրայ . վասն զի գազանգրսպողին գէմքն ու խօսքերը վերջին աստիճան տեղահանութիւն կը պատճառէին իրեն , զոր չէր ուզեր յայտնի ցուցընել :

Մոռօք՝ առանց յուսահատելու շարունակեց . « Անտարակոյս եմ , քանզի իմ որդուք ոչ խուլ էք եւ ոչ համր , ինչո՞ւ պատասխան չէք տար ինձ : »

Տակօպէս չկրնալով այլ եւս համբերել , գըլուխը բարկութեամբ անոր գաջձուց եւ նորէն ծուռ ծուռ երեսը նայելով խլիտ ձայնով մ'ըսաւ .

« Ձեզ չեմ ճանչեր , եւ չեմ ալ ուղեր ճանչել . զիս հանգիստ թողէք . . . եւ սկսաւ նորէն իր գործը շարունակել :

— Բայց գաւաթ մը ջրի գինի խմելով կըրնանք իրար ճանչել . պատերազմի վրայ խօսիլ , վասն զի ես ալ պատերազմ տեսած եմ . . . ասիկայ դիտմամբ կ'իմացընեմ ձեզ որպէս զի աւելի քաղաքավարութեամբ վարուիք հետս . . . : »

Տակօպէսի կուռտ ճակտին երակները սաստիտ ուռեցան , վասն զի կը տեսնէր որ իր հետ անպատճառ խօսակցիլ ուղողին թէ նայուած քնիւ թէ ձայնը գրգռիչ էին , բայց ինքզինք բռնեց :

« Կը հարցընեմ ձեզ թէ ի՞նչ պատճառաւ չէք ուղեր ինձ հետ գաւաթ մը գինի խմել , որով

տո ի թ կուեննանք Գաղղիոյ վրայ խօսակցելու :
Գաղղիա գեղեցիկ երկիր մ'է , եւ ես երկար ժա-
մանակ նստած եմ հոն . ուստի երբոր գաղղիացի
մը տեսնեմ , ուրախ կըլլամ , մանաւանդ երբոր
ձեզի պէս լաթ լուալ դիտնայ : Աթէ անտեսուհի
մ'ուեննայի , ձեր քով աշակերտութեան կը ղըր-
կէի : »

Երգիծ անութ իւնը բոլորովին յայտնի էր ,
յանդ գնութիւնն ու յոխորտանքը Մոռօքի նայ-
ւած քին մէջ կը փայլէին : Տակօպէս մտածելով որ
այսպիսի ոսոխի մը հետ մէծը կրնար մեծնալ եւ
գէշ հետեւանքներ ունենալ՝ որ իր բանին չէր
գար , տաշտը վերցուց եւ դաւթին միւս ծայրը
տանելով՝ հօն իր գործը շարունակեց , յուսալով
այս կերպիւ վերջ տալ այս տեսարանին՝ որ իր
համբերութիւնը չարաչար կը փորձէր :

Մոռօքի գեղին աչքերուն մէջ ուրախու-
թեան ճառագայթ մը փայլեցաւ , եւ բիբերուն
բոլորի ձերմակ շրջանակը կարծեա թէ մեծցաւ :
Երկու երեք անգամ իր ճանկի նման մատները մո-
րուքին մէջ խօթեց ուրախութենէն : Յետոյ
դարձեալ կամաց կամաց դօրականին քով գնաց՝
դարեջուրի սրահէն դուրս ելնող քանի մը հետա-
քըրքիրներու հետ :

Տակօպէս՝ զարմանալով եւ մանաւանդ դայ-
րանալով անոր անամօթ հետամտութեան վրայ ,
քիչ մնաց որ իր սովորական անխոռով պաղարիւ-
նութիւնը պիտի կորսնցընէր եւ աճառին տախ-
տակը Մոռօքի դլխուն իջեցընէր , բայց որքերը

միտքը բերելով՝ դարձեալ ինքզինք բռնեց :

Մտօք թեւերը խաչաձեւ կուրծքին վրայ դնելով, ցամաք եւ յանդուզն ճայնիւ ըսաւ ահար :

« Ստուգիւ, աճառաւոր մարդ, դուք քաղաքավար չէք եղեր . . . Յետոյ ներկայ դանդաղներուն դառնալով շարունակեց գերմաներէն .
« Այս մեծ ընչացքով դազդիացիին կըսեմ թէ քաղաքավար չէ, նայինք ինչ պատասխան պիտի տայ . . . թերեւս իրեն դառ մը տալ հարկ պիտի ըլլայ : Ես կըսուասէր մարդ չեմ, {Աստուած չընէ, յարեց կեղծաւորութեամբ, բայց Աստուած զիս լուսաւորած, եւ ես ալ Սնոր արարածն ըլլալով պարտքս է որ 'ի պատիւ Անոր' իր արարածն յարդել տամ . . . »

Այս կեղծ բարեպաշտական լրբեհի վերջաբանը խիստ զուարճալի երևցաւ հետաքրքիրներուն . վասն զի Մարգարէին համբաւը մնալէ Մօքէնն հասած ըլլալով, կարծեցին թէ հետեւեալ օրը ներկայացընելիք խաղի մը նախապախտէր :

Տակօպէս՝ հակառակորդին գրգռիչ սպառնալիքը լսելով՝ ալ չկրցաւ համբերել, եւ ըսաւ գերմաներէն .

« Ես գերմաներէն կը հասկընամ . . . գերմաներէն խօսէ որ ամեն մարդ ալ հասկընայ : »

Այս միջոցին ուրիշ նոր հետաքրքիրներ ալ եկան միւսներուն քով, եւ վիճաբանութեան հետ զհետէ տաքնալը տեսնելով, ակուսք մը կաղմե-

ցին երկու վիճաբանողներուն բոլորախիքը :

« Քիչ մ'առաջ կըսէի թէ դուք քաղաքա-
վար չէք, յարեց նորէն Մօռօք գերմաներէն,
հիմա ալ կըսեմ թէ անամօթ եւ կոպիտ մարդ
մ'էք . ի՞նչ պատասխան պիտի տաք ասոր : — Ո-
չինչ, ըսաւ Տակօպէս պաղուծեամբ եւ ձեռքն
ուրիշ լաթ մ'առնելով լուալու : — Ոչինչը բան մը
չէ, ըսաւ Մօռօք, ես այդչափ հակիրճ չեմ խօսիր,
եւ կըսեմ թէ երբ պարկեշտ մարդ մ'օտարականի
մը դաւաթ մը գինի կը հրամցընէ, օտարականն
իրաւունք չունի լրբաբար մերժելու . . . եւ
եթէ ընէ, հարկ կըլլայ որ մարդավարութեան
դաս մը տրուի իրեն »

Տակօպէսի ճակատէն ու այսերէն քրտինքի
խոշոր կայլակներ վիժիլ սկսան, մօրուքը ջղային
ցնցմամբ անդադար կերերար, բայց դարձեալ
ինքզինք կը բռնէր . ջուրը խոթած թաշկինակը
երկու ծայրէն բռնելով թոթվեց, եւ սկսաւ քը-
թին տակէն հետեւեալ դօրանոցի հին երգը եր-
գել :

Թիրլըմօնէն, որ նկուղ մ'է սատանային,
Վաղ առաւօտ պիտի մեկնինք սուր 'ի ձեռին,
Մնաս բարով ըսելով . . . եւ այլն :

(Մնացեալը խիստ համարձակ խօսքեր ըլլա-
լուն՝ արժան չենք դատիր հոս գնել :)

Տակօպէս՝ որ ինքզինք բռնի լուռ պահելով
կը խեղդուէր, այս երգը մըմ'նջելով քիչ մ'ափո-
փեցաւ :

Ասոր զրայ Մոռօք հետաքրքիրներուն դառնալով կեղծ երկիւղածութեամբ մ'ըսաւ .

« Աղէկ գիտէինք որ Նաբօլէօնի զինուորներն անհաւատ էին . ձիերնին եկեղեցիներուն մէջ կը կապէին , օրը հարիւր անգամ Աստուծոյ դէմ կը մեղանչէին , եւ ասոր համար ալ լաւ վարձատրուեցան Փարաւոններուն պէս խեղդամահ եւ քմբահար ջարդուելով Պէրէզինա դեպին մէջ , բայց չէինք գիտեր որ Աստուած՝ այս թշուառականները պատժելու համար՝ իրենց միակ առաքինութիւնն ալ վրանուն առեր է , այն է քաջութիւնը . . . : Ահա մարդ մը՝ որ զիս թշնամանելով՝ Աստուծոյ շնորհքն ստացող արարած մը նախատեց , եւ հիմա ինձմէ ներում խնդրելու պարտականութիւնը չհասկընալու կը դարնէ . բայց ես կը պահանջեմ որ անպատճառ ներում խնդրէ , ապա թէ ոչ՝ . . . — Ապա թէ ոչ՝ ի՞նչ պիտի ընէք , հարցուց Տաղօպէռ առանց Մարգարէին երեսը նայելու : — Հատուցում պիտի տաք ինձ . . . Արդէն ըսէ ձեզ թէ ես ալ պատերազմ տեսած եմ . կրնանք հոս տեղ մը երկու սուր դանակ , եւ վաղ առաւօտ աւերակ պատի մ'ետեւ իրարու արեան գոյնը տեսնել . . . նայինք թէ ձեր երակներուն մէջ արիւն կայ . . . : »

Այս դրդուիչ առաջարկութենէն վախցան հոն դանուող հետաքրքիրները՝ որք այսպիսի վըտանդաւոր վախճանի մը չէին սպասեր :

« Ի՞նչ խելքով պիտի մենամարտիք , սրտաց մէջերնէն մէկը . երկու քնիդ ալ բանաղ կեր-

Թաք . . . Չէք գիտեր որ մենամարտութիւնը
խափու արդիւեացի է : — Մանաւանդ եթէ մենա-
մարտողներն հասարակ մարդիկ կամ օտարական
ըլլան , յարեց ուրիշ մը . եթէ դէն 'ի ձեռին բռն-
ուելիք , գիւղապետը ձեզ վանդակը կը դնէ , եւ
հոն երկու երեք ամիս կը մ'նաք՝ մինչեւ որ դա-
տաւատաննիդ տեսնուի :

— Միթէ ձեր մէջ մատնի՞չ կայ որ երթայ
խնացընէ , հարցուց Մոսօք : — Քաւ լիցի , ըսին
մարդիկը . . . ինչպէս կուզէք՝ այնպէս ըրէք

. . . Մերը բարեկամական խրատ մ'է , եթէ
կուզէք՝ մտիկ ըրէք , իսկ եթէ ոչ՝ դուք գիտէք :

— Բանտն ամենեւին փոյթս չէ , գոչեց Մո-
սօք , բաւական է որ երկու սուր գանձմ , եւ կը
տեսնէք վաղ առաւօտ թէ գիւղապետին ըսելի-
քը կամ ընելիքը կը մտածեն :

— Երկու սուրը ի՞նչ պիտի ընէք , հարցուց
հանդարտութեամբ Տակօպէս Մոսօքին :

— Երբոր մէկը դուք առնուք ձեռքերնիդ ,
եւ միւսն ալ ես , այն ժամանակ կը տեսնէք . . .
Աստուած կը հրամայէ որ ամեն մարդ իր պատ-
ւոյն հող տանի . . .

Տակօպէս ուսը թոթվելով լաթերը թաշկի-
նակին մէջ ծրարեց , աճառը սրբեց մումազօծ քը-
սակի մը մէջ դրաւ , եւ Թիրլըմօնի երգին եղա-
նակը սուլելով քիչ մ'առաջ գնաց :

Մոսօք վախնալով որ իր երգիծանութիւն-
ները պարապ պիտի ելնէին , արտեւանունքը
կնձռելով Տակօպէսին առաջքը գնաց տնկուե-

ցաւ՝ ճօնքան կտրելու կերպով . յետոյ թեւերը
խաչածեւ կուրծքին վրայ դրաւ, եւ յանդուգն
լրբութեամբ գլխէն մինչեւ ոտքը դայն դիտե-
լով ըսաւ .

« Այսպէս ահա յելուզակ Նաբօլէոնի հին
դինուոր մը՝ լուացարար կնոջ մ'արհեստը դոր-
ծելէ ուրիշ բանի չգար, եւ մենամարտիլ յանձն
չառնուր .

— Այո, յանձն չառնուր . . . » պատասխա-
նեց Տակօպէռ զօրեղ ձայնիւ, բայց երևօին դոյնը
սոսկալի կերպով դեղնեցաւ :

Ծերունի զօրականը թերեւս երբէք այս աս-
տիճան սիրոյ եւ անձնուիրութեան փորձ մը տը-
ւած չէր իր խնամոց յանձնուած որբերուն : Իրեն
պէս մարդ մը թող տար որ զինքն անտառուհաս
նախատեն եւ մենամարտիլ յանձն չառնուր, խել-
քէ մտքէ դուրս զոհողութիւն մ'էր :

Ուրեմն դուք ինքնին կը խոստովանիք թէ
կը վախնաք . . . վատ էք :

Այս խօսքին վրայ Տակօպէռ յանկարծական
չարժուամ'ըրաւ որպէս զի Մօռօքին վրայ յար-
ձակի, բայց մէկէն ինքզինք բռնեց՝ երկու որ-
բերն եւ մենամարտութեան յաջող կամ անյաջող
եղքէն իրենց ճանապարհորդութեան ետ մնալը
մտածելով :

Բայց ծերունի զօրականին այս բարկացայտ
արագ շարժումն եւ դեղնած ու քրտնալից դէմ-
քին ահեղ երեւոյթն այնչափ ազդու ասպաւորու-
թիւն մ'ըրաւ, որ Մօռօք եւ հետաքրքիրները

քայլ մ' ետ քաշուեցան : Քանի մը վայրկեան խոր
չու թիւն տիրեց , բայց նոյն միջոցին բազոր ներ-
կայ դանուողներուն սրտին մէջ յանկարծ հա-
մակրութիւն մը ծագելով Տակօպէտի վրայ , մէ-
ջերնէն մէկն ըսաւ միւսներուն .

« Իրօք այս մարդը վատ չէ , բարեկամք ,
երբեմն մենամարտութիւն յանձն չառնուլն յանձ-
առնելէն աւելի քաջութեան կը կարօտի . . .
Ասկէց դատ՝ յանցանքը Մարգարէին է որ գնաց
առանց պատճառի այս մարդուն հետ կռիւ հանել
ուզեց . խեղճը օտարական է , եւ եթէ մենամար-
տութեան ժամանակ բռնուելու ըլլայ՝ երկար
ժամանակ բանտը կը մնայ . . . Ասկէ՛ դատ ,
չաւելցուց ուրիշ մը , մարդը ճանապարհորդու-
թիւն կընէ երկու նորասի աղջկանց հետ , ի՞նչ-
պէս կրնայ չնչին բանի մը համար կռուիլ , վասն
դի եթէ մեռնի կամ բանտարկուի , խեղճ աղջիկ-
ներն ի՞նչ կըլլան . . . »

Տակօպէտ այս խօսքերն ըսող հանդիսատե-
սին դարձաւ , որ անկեղծ եւ բարետիրտ դէմքով
դէր մարդ մ' էր , եւ ձեռքն անոր երկնցընելով՝
« շնորհակալ եմ , Պարոն , ըսաւ յուզեալ ձայնիւ :
Չերմանացին ալ բարեկամաբար Տակօպէտին ձեռ-
քը սեղմելով . « խնդրեմ , Պարոն , ըսաւ , հաճե-
ցէք մեզ հետ բան մը խմելու , մեք կ'ստիպենք
այդ Մարգարէ կոչուած սատանան խոստովանե-
լու թէ յանցանքն իրն է . . . »

Մինչեւ այն ժամանակ Մոսօք յուսացեր էր
որ զօրականն իր գլխով առաջարկութիւնը կրն-

դուռնի, բայց իր յուսոյն 'ի դերու ելնելը տեսնու-
 լով՝ արհամարհոտ եւ վայրագ աչօք կը նկատէր
 իր կողմէն չեղողները . սակայն ետքը մտածելով
 որ իր խորհրդոց յաջողութեան համար այս անյա-
 ջողութիւնը ծածկել պէտք էր, քիչ քիչ դէմ-
 քը մեղմացուց, եւ դորականին մօտենալով քաղց-
 րութեամբ ըսաւ .

« Ես կը հնազանդիմ այս պարօններուն եւ կը
 խոստովանիմ որ յանցանքն իմս է . բարեկամա-
 կան առաջարկութիւնս մերժելնիդ զիս վիրաւո-
 րեց եւ չկրցայ ինքզինքս բռնել . . . կրկին կը-
 սեմ, յանցանքն իմս է, յարեց սրտին դառնու-
 թիւնը ծածկելով, Աստուած խոնարհութիւն կը
 պատուիրէ մեզ . . . ուստի ներում կը խնդրեմ
 ձեզնէ . . . »

Հանդիսատեսները միաձայն գովեցին անոր
 այս համեստութիւնն ու ապաշաւը .

« Ահա ձեզնէ ներում կը խնդրէ, քանզի ինուորս
 ըսաւ մէջերնէն մէկը Տակօպէռին, եւ դուք ալ
 ըսելիք մը չունիք անոր . ուրեմն եթէ անք դա-
 ւաթ դաւաթ ի դարնենք . այս հրաւերը բոլորով
 սրտիւ կընենք ձեզ, դուք ալ այնպէս ընդունե-
 ցէք . . . — Այո, մեք ալ կաղաչենք, ընդու-
 նեցէք 'ի սէր գեղեցիկ ազջիկներուդ, ըսաւ գեր-
 մարդը՝ սրպէս զի Տակօպէռ համոզուի . »

Յերունի դորականը գերմանացւոց այս սի-
 րալիւ հրաւերէն շարժեալ՝ պատասխանեց .

« Ենորհակալ եմ, պարօններ, դուք ազնիւ-
 մարդիկ էք . բայց գիտէք որ խմելու հրաւեր

ընդունողը պէտք է որ ինք ալ խմցունէ : — Արն-
դունինք ըսին միաբերան , ամեն մարդ թող կար-
գաւ խմցրնէ . առաջին գաւաթը մեք կը վճա-
րենք , երկրորդը դուք :

— Աղքատութիւնն ամօթ չէ , սրատասխա-
նեց Տակօպէս . ուստի եւ համարձակ կըսեմ ձեզ
թէ ես իմ կողմանէս ձեզ ըմպելիք հրամցընելու
կարողութիւնն չունիմ . տակաւին երկար ճանքաց
ունինք առջեւնիս , չեմ կրնար աւելորդ ծախք
ընել :

Այս խօսքերը Տակօպէս այնպիսի պարզ բայց
արժանաւոր ծանրութեամբ մ'ըսաւ որ գերմա-
նացիք չհամարձակեցան իրենց հրաւերը կրկնել
հասկընալով որ անոր պէս մարդ մը չէր կրնար
առանց նուաստութեան ընդունիլ :

« Աը դաւիմ այդպէս ըլլալուն վրայ , ըսաւ
գերմարդը . շատ կը վախաքէի ձեզ հետ գաւաթ
մ'ըմպելու , բայց չեղաւ . ուրեմն գիշեր բարի ,
քանզի գինուոր . . . գիշեր բարի , ժամանակն
ուշ է , պանդոկապետը հիմա մեզ դուրս կընէ :

— Երթաք բարով , պարտններ , ըսաւ Տա-
կօպէս , եւ գէպ 'ի ախտը շտկուեցաւ որ ձիուն
մ'նայած խարին կէսն ալ տայ :

Մտօք անոր մօտենալով խոնարհագին կեր-
պով մ'ըսաւ . « Ահա ես յանցանքս խոստովանե-
ցայ , եւ ձեզնէ ներում ու թողութիւն խնդրեցի .
բայց դուք պատասխան մը չտուիք ինձ . . .
տակաւին արտերնուդ մէջ բան մը մ'նայ :

— Երբ աղջիկներս ինձ պէտք չունենան եւ

ևս տեղ մը ձեզ դանկամ, ըսաւ ծերունի զօրակա-
նը, երկու կարծ խօսք ունիմ ձեզ ընելիք: Յի-
տոյ մէկէն կրնասկն անոր դարձուց: Մօռօք ալ
կամաց կամաց գաւթէն դուրս ելաւ:

Ծօքօն-Պլանի պանդոկը դուգահեռագիծ
ձեւ մ'ունէր: Մէկ ծայրը գլխաւոր շէնքը բարձ-
րացած էր, միւս ծայրն ալ սպասաւորներուն
ջարկն էր, ուր աղքատ ճանապարհորդաց վար-
դնով վարձու տրուելիք քանի մը սենեակներ ալ
կային: Այս կողմի շէնքին մէջ տեղէն կամարա-
ջարկ ճանրաց մը կար՝ որ դաշար կելնէր. բակին
երկու կողմն ալ կառք պահելու յարկեր եւ ա-
խոռներ կային՝ վրան համբարանոցներով ու ձեղ-
նամէջ խուցերով:

Տակօպէռ ախոռներէն մէկը մտնելով՝ դնաց
անտուկի մը վրայէն իր ձիուն համար պատրաստ
դրուած վարսակի բաժինն առաւ, խարքալի մը
մէջ լցուց, եւ շարժելով Ժօվիալին քով դնաց:
Բայց շատ գարմացաւ որ իր հինաւուրց ճանրու ըն-
կերն ուրախութեամբ չէր խննջէր վարսակին
խօշիւնը լսելով: Տակօպէռ կասկածի մէջ իյնա-
լով քանի մ'անդամ կանչեց զայն բարեկամական
ձայնիւ, բայց կենդանին՝ փոխանակ իր ուշիմ
աչքը ախրոջը դարձունելու եւ առջևի տաքերն
անհամբերութեամբ գետինը դարնելու, անշարժ
կեցաւ:

Ծերունի զօրականին դարմանքը մեծնալով
աւելի մօտեցաւ անոր, եւ ախոռին մէջ դրուած
ըսպտերին աղօտ լուսովը տեսաւ որ խեղճ կեն-

դանին սարսափահար դիրքի մը մէջ անշարժ կե-
 ցեր էր, ծուկները կէս մը ծռած, գլուխը եր-
 կընցուցած, ականջները կախած, ուռնուները
 դողդոջուն, եւ պախուրցը կը քաշէր՝ որպէս թէ
 փրցընել հեռանալ ուզելով մտերին քովի տախ-
 տակորմէն. պաղ եւ յորդ քրտինք մը կապոյտ
 բիծեր ձեւացուցեր էր մորթին վրայ, որուն մա-
 դերը՝ փոխանակ արծաթի պէս ողորկ հարթու-
 թեամբ այն մուտք անոռին մէջ փայլելու, քստմը-
 նափուշ անկուած էին, եւ ժամանակ ժամանակ
 շղային ցնցմամբ բոլոր մարմնովը կը թոթվուէր:

« Ի՞նչ է այդ, ծեր Ժօվիալս, ի՞նչ ունիս,
 ըսաւ դօրականը խարբալը վար դնելով որպէս զի
 դդուէ իւր ձին, միթէ դուն ալ տիրոջդ պէս կը
 վախնաս, յարեց դառնութեամբ քիչ մ'առաջ
 կրած թշնամանքը միտքը բերելով. դուն բնու-
 թեամբ երկչոտ չէիր, ի՞նչ է այդ վախիդ պատ-
 ճառը . . . »

Բայց Ժօվիալ, հակառակ իր տիրոջը ձայնին
 եւ դդուանաց՝ միշտ կը դողար. միայն թէ՛ պա-
 խուրցն առաջուան շափ պինդ չքաշելով, քիթը
 վարանմամբ Տակօպէսի ձեռքին մօտեցուց եւ վը-
 րընջելով հոտուըտաց, կարծես թէ տէրն ըլլա-
 լուն վրայ կասկածելով:

« Միթէ դիս ալ չես ճանչեր, դոչեց Տակօ-
 պէս, ուրեմն հոս կարգէ դուրս բան մ'ըլլալու
 է: »

Եւ կասկածանօք բոլորտիքը նայեցաւ:
 Մխտան ընդարձակ եւ մուտք տեղ մ'էր. ձե-

դունէն՝ անհամար սարգի ոստայններու մէջէ
կախուած կանդեղ մը հազիւ քիչ մը կը լուսա-
ւորէր զայն : Ախտին միւս ծայրը՝ Ժօվիալէն հե-
ռու եւ քանի մ'երկաթի ձողերով զատուած՝ դա-
ղան զսպողին երև ք ու ժեղ ու սեւ ձիերը կեցած
էին հանդիստ եւ հանդարտ, մինչդեռ ասդին Ժօ-
վիալ սարսափէն կը դողար ու կը վայրենանար :

Տակօպէս զարմանալով այս իրարու հակա-
ռակ տեսարանին վրայ, որուն մեկնութիւնը շատ
չանցած պիտի հասկընար, նորէն փայփայեց
իր ձին, որ տիրոջը ներկայութենէն քիչ քիչ
սիրտ առնելով սկսաւ անոր ձեռքը լղել, գլուխն
անոր քսել, մեղմով խխնջել, եւ իր բոլոր սովո-
րական սիրոյ նշանները ցոյց տալ :

« Ահա այդպէս կուղեմ տեսնել քեզ, սիրե-
լի Ժօվիալս, ըսաւ Տակօպէս խարբալը գեանէն
առնելով ու մէջի վարսակը մտերը լցընելով :
— Անր նայիմ, բարի ախորժակ, վաղուան եր-
թալիք ճանքանիս երկար է, նայէ որ այսուհետեւ
ոչինչ տեղը վախնալու խենդութիւն չընես . . .
Եթէ Ռապա-Ժօս ընկերդ հօս ըլլար՝ չէիր վախ-
նար, բայց ան ալ վերն աղջկանց քով է, իմ քո-
վերնին չեղած ժամանակս անոնց պահապանն է
. . . բայց կեր նայինք . . . Ի՞նչ կայ որ երեսօ-
կը նայիս ու չես ուտեր : Անդամին, որպէս թէ
տիրոջը հնազանդելու համար՝ շրթունքին ծայ-
րով վարսակը քիչ մը խառնելէ ետեւ՝ դարձեալ
չկերաւ եւ Տակօպէսի վերարկուն թեւը իս-
ծատել սկսաւ :

Ո՛հ , խեղճ Ժօվիալ , դուն բան մ'ունիս . ա-
մեն ժամանակ վարսակդ ախորժակով կուտէիր
• • • հիմա վրան անգամ չես նայիր • • • ճան-
քայ ելնելնէս 'ի վեր առաջին անգամն է որ այս
բանը քեզի կը պատահի , ըսաւ զօրականը տա-
րակուսելով , վասն զի իւր ճանապարհորդու-
թեան յաջողութիւնը մեծ մասամբ անոր Եւթէն
ու առողջութեան կախուալ էր :

Յանկարծ սարսափելի մռնչիւն մը լսուեցաւ
այնքան մօտէն՝ որ կարծես թէ ախոռին մէջէն
կեղնէր , եւ Ժօվիալ զարհուրելով պախուրցը բըր-
ցուց , իր տեղը որոշող ձողերուն վրայէն ցատկեց
եւ բաց դռնէն դուրս ելնելով բակը փախաւ :

Այս յեղակարծ մռնչման ահռելի ձայնէն Տա-
կօպէռի սիրտն ալ ցնցուելով իսկոյն հասկըցաւ
իր ձիուն սարսափին պատճառը :

Մօռօքի դադանները քովի ախոռը դրուած
էին , որ տախտակորմով մը միայն բաժնուած էր
Ժօվիալին դրուած ախոռին մտերներէն : Մօռօ-
քին ձիերը՝ դադանաց մռնչիւններուն վարժուած
ըլլալով՝ անհող կեցեր էին :

« Լաւ , լաւ , ըսաւ զօրականը քաջալերուե-
լով , հիմա հասկըցայ • Ժօվիալ արդէն այսպիսի
մռնչիւն մը լսելով՝ այն անդգամին դադաններուն
ներկայութիւնն զգացեր է , եւ վախնալուն պատ-
ճառն այս էր : Հոս ուրիշ ախոռներ ըլլալու են ,
անոնցմէ մէկուն մէջ դրուելով կուտէիր վարսա-
կը , եւ վաղ տաւառօտ կանուխ կրնանք ճանրայ
եղնել : » Եւ մտերին մէջի վարսակը խնամով վեր-

ցուց խարրաւը լցուց, Ժօվիալ, բակին մէջ ցատկելով վազվազելէ ետեւ՝ տիրոջը ձայնին հնազանդելով քովը դնաց, որ անաշխատ պախուրցէն բանեց, եւ ձիադարման մը տեսնելով հարցուց թէ ուրիշ պարապ ախոռ մը կ'ան: Ան ալ փոքրիկ ախոռ մը ցուցուց, ուր մէկ ձիէն աւելի չէր կըրնար դրուիլ, Ժօվիալ հոն տարուեցաւ: Կենդանին իր վայրենի դրացիներէն հեռանալով ոչ միայն հանդարտեցաւ, այլ եւ ուրախանալով Տակօսէտի վերարկուն հետ խաղալ ու ծամծ մել սկսաւ, այնչափ որ ծերունի դօրականն այն իրիկունն իր դերձակութեան տաղանդը փայլեցընելու բաւական գործ կրնար ունենալ. բայց Տակօսէտ Ժօվիալին ախորժանօք եւ շուտ շուտ վարսակ ուտելուն զմայլելով՝ ուրիշ բանի միտ չդրաւ: Աւերջապէս բոլորովին ապահովելով, ախոռին դուռը դոցեց եւ անապարեց քիչ մը կերակօւր ուտելու, որպէս զի շուտով որքերուն քով երթայ, դորա քանի մը ժամէ 'ի վեր մինակ թողուցած ըլլալուն վրայ կը'դժգոհէր:



ԳԼՈՒԽ Ե .

ՌՕՁ ԵՒ ՊԼԱՆՇ

Արքեւորը պանդոկին ծայրի շէնքերէն մէկուն
մէջ փոքրիկ ու խարխուլած սենեակ մը նստած է-
ին , որուն միակ պատուհանը դաշտին վրայ կը
բացուէր . մէջը դանուած կարասին՝ առանց վա-
րագորի անկողին մը , սեղան մ'եւ երկու աթո-
ռակ էին : Կանդեզ մը կը լուսաւորէր դայն , եւ
պատուհանին քով կեցած սեղանին վրայ Տակո-
պէսի պայուսակը դրուած էր :

Ռապա-Ժօա դրանը քով պառկած , երկու
անգամ գլուխը պատուհանին դարձունելով մըր-
մըռացեր էր առանց աւելի բան մ'ընելու :

Երկու քայրերը՝ անկողնին մէջ կէս պառկած
էին՝ զիշերային սպիտակ ու երկայն պատմու-
ճանի մը մէջ փաթթուած , որուն պարանոցն ու
թեւերը կոճկուած էին . դուքանին գդակ չկար ,
այլ կտուէ լայն ժապաւէնով մ'իրենց շագանա-
կագոյն մաղերը շրջանակաձեւ կապեր էին քուն-
քերնուն վրայօքը , որպէս զի զիշերը չաւրուին :
Այն սպիտակ պատմուճանն եւ ճակատնուն վրայի
պսակաձեւ ճերմակ ժապաւէնն անոնց թարմ եւ
սիրուն գէմքին առաւել անմեղաթիւն մը տուեր
էին : Թէպէտ եւ իրենց տարիքին նայելով շատ
վիշտ կրած էին , բայց եւ այնպէս իրենց հասա-

կին անմեղ զուարթ ու թիւնը կտրուած չըլլալով,
կը խնդային ու կը խօսէին պառկած տեղերնին .
երբեմն մօրերնուն յիշատակը դիրենք կը տըխ-
րեցընէր , բայց այս տխրութիւնը բնաւ դատ-
նութիւն չունէր , այլ մանաւանդ քաղցր մելա-
մաղձութիւն մ'էր , զոր չէին ուզեր փարատել .
ինչու որ իրենց համար ամենասիրելի մայրերնին
չէր մեռած , այլ միայն հեռացած էր :

Արօնական շերմեռանդութեան մասին ասոնք
ալ ծակօպէռի սէս ազէտ էին . որովհետեւ Սի-
պերիոյ անապատներուն մէջ՝ ուր մեծցեր էին ,
ոչ եկեղեցի կար , ոչ ալ քահանայ . միայն կը հա-
ւատային թէ բարի եւ արդարն Աստուած մեծ
դուժ ունի այն մայրերուն վրայ՝ որք աշխարհիս
վրայ դաւակներ ձգելով կը մեկնին , եւ թէ անոր
չնորհիւ այնպիսի մայրերը կրնան միշտ երկինքէն
իրենց դաւակները տեսնել ու լսել , եւ երբեմն
դեղեցիկ պահապան հրեշտակներ զրկել որ դա-
նոնք պաշտպանեն :

Այս միամիտ հաւատքով որբերն համոզուած
էին թէ մայրերնին հանապազ վրանին կը հսկէր ,
եւ թէ գէշութիւն մ'ըրած ժամանակնին անոր
սիրտը կը վիրաւորէին , եւ բարի հրեշտակներն ալ
կը դադրէին դիրենք պաշտպանելէ :

Ռօզին եւ Պանչին աստուածաբանութիւնն
ասկէ անդին չէր անցներ , բայց այս ալ բաւական
էր այս սիրալից եւ անարատ հոգիներուն :

Այն իրիկունը երկու քոյրերը Տակօպէռին
զալուն սպասելով կարեւոր եւ բերկրառիթ

խնդրոյ մը վրայ կը խօսակցէին . վասն զի քանի մ'օրէ 'ի վեր գաղտնիք մ'ուէնէին, այնպիսի մեծ գաղտնիք մը՝ որ իրենց կուսական սիրտը բարախել կուտար . իրենց նորածին կուրծքը կը յուզէր, երեսնուն վարդադոյն կարմիրը ծիրանիի կը փոխէր, եւ դեղակապուտ աչքերնուն վրայ մըտախոհ անձկութեան քող մը կը ծածկէր :

Ռօզ այն իրիկուն անկողնին եզրը պառկեր էր, երկու կլորակ թեւերը խաչաձեւ գլխուն ներքեւ դրած, զոր կէս մ'իր քրոջը դարձուցած էր : Պլանչ ալ արմուկովը բարձին վրայ կը թնած ժպտելով քրոջը կը նայէր ու կըսէր .

« Կը կարծես որ այս դիշեր ալ դայ :

— Այո՛, վասն զի երէկ խօսք տուաւ մեզ :

— Ի՛նչ բարի մարդ է, անշուշտ իր խոստու մը չմոռնար :

— Ո՛րչափ ալ աղուոր է իր դեղին գանգուր մաղերովը :

— Անունն ալ ի՛նչ գեղեցիկ է, եւ որչափ վայլեր է իր դէմքին :

— Հապա խնդալուն անուշութի՛ւնը, հապա ձայնին քաղցրութի՛ւնը, երբոր մեր ձեռքէն բռնելով կըսէր . « Որդեակք, օրհնեցէք զԱստուած՝ որ երկուքիդ ալ մի եւ նոյն հողին տուած է . ինչ որ ուրիշներն ուրիշ տեղ կը փնտռեն, դուք ձեր սրտին մէջ պիտի գտնէք, ինչու որ ձեր երկուքին ալ սիրտը մէկ է » :

— Ի՛նչ երջանկութիւն է մեզ, քոյր իմ, որ այս խօսքերը կը յիշենք :

— Ո՛րչափ ուշադիր ենք անոր խօսքերուն
• • • երբոր զինքը մտիկ ընելի՞ կը տեսնեմ, կը
կարծեմ թէ ես եմ մտիկ ընողը, ըսաւ Ռօզ ժըպ-
տելով եւ քրօջը ճակատը պաղնելով:

— Նրբոր կը խօսի, քու աչքդ կամ մանա-
ւանդ երկուքիս ալ աչքն ի՞նչպէս խոշոր կը բաց-
ւին եւ չբժուն. քնիս ալ կը շարժին • • • կար-
ծես թէ անոր ամեն մէկ խօսքը մեք ալ կը կըրկ-
նենք • • • ուստի զարմանք չէ որ ամեն ըսած-
ները միտքերնիս կը մ՛նան:

— Ըսած խօսքերն ալ ի՞նչ ազնիւ եւ վսեմ
են:

— Ասկէ դատ, անոր խօսած ժամանակը սր-
չափ բարի խորհուրդներ կղզանք մեր սրտին մէջ.
այնպէս չէ, քոյր իմ, Նրանի թէ դանոնք միշտ յի-
շելու կարող ըլլայինք • • •:

— Անհոգ եղի՞ր, անոնք մեր սրտին մէջ կը
մ՛նան, ինչպէս որ փոքրիկ թռչուններն իրենց
մօրը բոյնին մէջ:

— Գիտե՞ս, Ռօ՛զ, որ մեծ երջանկութիւն մ'է
որ երկուքս ալ միանգամայն կը սիրէ:

— Ուրիշ կերպ չէր կրնար ընել՝ քանի որ
երկուքս ալ մէկ սիրտ մ'ունինք:

— Ի՞նչպէս կրնար Ռօզը սիրել՝ առանց Պը-
լանչն ալ սիրելու:

— Սթէ մէկերնիս միայն սիրէր, չսիրուողն
ի՞նչ կըլար:

— Ասկէ դատ՝ երկուքէս ո՞րը կրնար ընտրել,
երկուքս ալ իրարու կը նմանինք:

— Այդ դժուարութենէն ազատ մնալու համար երկուքս ալ ընտրեց, ըսաւ Ռոզ :

— Այդ պէս ըլլալն աւելի աղէկ չէ մի • ինքը մինակ մեզ կը սիրէ եւ մեք երկուքս զինքը կը սիրենք :

— Երանի թէ մինչեւ Փարիզ մեզ չթողուր, եւ հոն հասնելնէս ետքն ալ զինքը տեսնէինք . . .

— Մանաւանդ Փարիզի մէջ շատ աղէկ կըլլար որ հետերնիս դառնուէր, ան եւ Տակօպէտ . . . այն մեծ քաղաքին մէջ . . . ան, քոյր իմ, արդեօք ի՞նչ ազւոր տեղ է, ըսաւ Ռոզ :

— Փարիզ • ոսկիէ քաղաք մ'ըլլալու է . . .

— Այնպիսի զեղեցիկ քաղաքի մը մէջ ամեն մարդ երջանիկ պէտք է ըլլայ . . .

— Բայց մեք՝ որ խեղճ ուրբեր ենք՝ պիտի համարձակի՞նք հոն մանուկու . . . արդեօք ի՞նչ պէս ամեն մարդ մեր վրայ պիտի նայի :

— Այո . . . բայց որովհետեւ հոն ամեն մարդ երջանիկ է, պէտք է որ բարի ալ ըլլան եւ մեզ սիրեն . . .

— Աղկէ զատ մեր խարտեաց մազերով եւ կատուատ աչքերով բարեկամն ալ հետերնիս պիտի ըլլայ :

— Բայց դեռ Փարիզի վրայ խօսք չբացաւ մեզ :

— Մոռցած ըլլալու է • այս գիշեր միտքը ձգենք :

— Եթէ խօսելու միտում ունենայ • վասն զի չես գիտեր, շատ անգամ լսու թեամբ մեր երեսը

միայն կը նայի, աչքը աչքերնուս մէջ . . . :

— Այո, եւ իր այն նայուածքը երբեմն մեր սիրելի մօր նայուածքը միտքս կը բերէ :

— Արդեօք մայրերնիս ալ սրչափ երջանիկ պէտք է ըլլայ այսպիսի այցելութիւն մ'ընդունելնուս վրայ . . . որովհետեւ մեզ կը տեսնէ երկինքէն . . .

— Վասն զի երբոր մեզ այնչափ կը սիրեն, պէտք է որ սիրուելու արժանի եղած ըլլանք :

— Կը տեսնեն սնապարծը . . . ըսաւ Պլանշիր բարակ մասներով քրոջը ճակտին վրայի մազերը շտկելով :

Ռօզ քանի մը վայրկեան մտածելէ ետեւ ըսաւ .
« Ի՞նչ կըսես, պէտք չէ որ այս բաները Տակօպէտին պատմենք :

— Եթէ կը կարծես որ պէտք է, պատմենք :

— Ինչպէս որ ամեն բան մօրերնուս կըսելինք, անոր ալ կըսենք . ինչո՞ւ պահենք :

— Մանաւանդ այսպիսի բան մը՝ որ մեծ երջանկութիւն կը պատճառէ մեզ :

— Քանի որ մեր այս բարեկամը կը ճանչենք, սրտերնիս աւելի արագ եւ ուժգին կը բարախէ, այնպէս չէ :

— Այո, կարծես թէ հիմա աւելի լցուն է :

— Վասն զի մեր բարեկամը մեծ կակ տեղ մը բռնած է հոն :

— Ուրեմն այս մեր բարեբաղդութիւնը Տակօպէտին իմացընելնիս գէշ չըլլար :

— Իրաւունք ունիս :

Այս միջոցին շուներ նորէն մոմաաց խորունկ
ձայնով մը :

« Քոյր իմ , ըսաւ Ռօզ Պլանչին փաթթուե-
լով , ահա շուներ նորէն կը մոմաաց , ի՞նչ ունի
արդեօք : — Ռապա-Ժօան , մի մոմաար , հոս եկու ,
յարեց Պլանչ փոքրիկ ձեռքովը անկողնին եզրին
դարնելով :

Շուներ տեղէն ելաւ , նորէն մոմաաց եւ եկաւ
իր խոշոր գլուխը ծածկոցին վրայ դրաւ՝ աչքը
պատուհանին կողմը անկելով : Նրկու քոյրերը
ծռելով՝ անոր լայն ձակատը դգուեցին , որուն
մէջ տեղը դուրս անկուած ցցունք մը կար , որ ա-
նոր ընտիր տեսակէ ըլլալուն յայտնի նշան մ'էր :

« Ի՞նչ կայ որ այդպէս կը մոմաաս , Ռապա-
Ժօան , ըսաւ Պլանչ կամացուկ մ'ականջը քաշե-
լով . խեղճ կենդանին միշտ անհանդիստ կ'ըլլայ
երբոր Տակօպէս հոս չէ :

— Զշմարիտ է , կարծես թէ գլխէ որ անոր
բացակայութեան ժամանակ աւելի պարտաւոր է
մեր վրայ հսկելու :

— Ինձ կերելի , քոյր իմ , թէ Տակօպէս կու-
շանայ մեզ բարի իրիկուն ըսելու :

— Անշուշտ Ժօվիալը կը դարմանէ : Աղէկ
միտքս եկաւ . մեք ալ այս իրիկուն մտցանք
գիշեր բարի ըսել մեր ծերունի Ժօվիալին : — Կը
ցաւ իմ որ մտցեր ենք . խեղճ կենդանին նրչափ
դոհ կերելի երբոր մեր ձեռքը կը լղէ . կարծես
թէ շնորհակալ ըլլալ կուզէ մեր այցելութենէն :

— Բարեբաղդաբար մեր տեղը Տակօպէս գիշեր

բարի ըսած կըլլայ անոր : — Ազնի՛ւ Տակօպէս , միշտ մեզ կը հողայ . մեր ընելիքն ալ ինք կընէ . մեք հոս ծոյլի պէս հանդիստ նստեր ենք , ինքը հարաշար կը յողնի . . . — Ի՞նչպէս ընենք որ այսչափ չ յողնի :

— Դժբաղդարար հարուստ չենք որ քիչ մը հանգստութիւն դանել ասնք իրեն : — Հարնւստ . . . սէ , քոյր իմ , մեք միշտ այսպէս խեղճ որբեր պիտի մնանք : — Հասկա այս միտալն ի՞նչ է : — Անշուշտ բան մը կը յուսացուի անկէ , ապա թէ ոչ՝ այս երկար ճանապարհորդութիւնը չէ՛ ինք ըներ : — Տակօպէս խոստացաւ որ այս իրիկուն ամեն բան մեզ պատմէ : »

Աղջիկը չկրցաւ խօսքը շարունակել . վասն զի յանկարծ պատուհանին երկու աղակիները մեծ շառաչմամբ կտոր կտոր եղան : Որբերը լեզապատառ ըլլալով իրարու փաթթուեցան , մինչդեռ շունը կատաղաբար պատուհանին վրայ յարձակեցաւ հասելով :

Աղջիկները վախերնուն անշարժ իրարու փաթթուած կը դողային առանց շունչ անդամ առնելու , եւ աչքերնին դէպ 'ի պատուհանը դարձունելու չէին համարձակել :

Ռապա-Ժօա՝ թաթերը պատուհանին կըրթ ընցուցած՝ անդադար կը հաչէր :

« Ռ՛հ , այս ի՞նչ էր , ըսին սասանեւոր որբերը կամացուկ մը . Տակօպէս ալ հոս չէ . . . »

Յետոյ յանկարծ Ռօղ Ալանչին թեւը բռնելով « ահանջ դիր , քոյր իմ , ահանջ դիր , ըսաւ .

սանդուղէն մէկը վեր կելնէ . ինձ կը թուի թէ
Տակօպէսին ոտքին ձայնը չէ . կը լսես ինչ ծանր
քաղուածք է : Ռասպա-ժօան , հոս եկու , հոս , մեզ
պաշտպանէ , դռչեցին երկու քայրերը՝ վերջին
ծայր սարսափած :

Եւ արդարեւ , կարգէ դուրս ծանրութեամբ
տանաձայն մը կը լսուէր փայտէ սանդուղին
վրայ , եւ սենեակը սանդուղէն բաժնող բարակ
տախտակորմին երկայնութեամբն ալ կարծես
թէ բան մը կը քսքսուէր : Ա երջասէս ծանր բան
մը դրան հանուն իյնալով դայն սարսկեցուց : Աղ-
ջիկները եւս առաւել դարհուրելով իրարու երես
նայեցան անշնունջ . դուռը բացուեցաւ եւ Տա-
կօպէս ներս մտաւ :

Ռօզ եւ Պյանչ դայն տեսնելուն՝ ուրախու-
թեամբ իրար գրկեցին՝ մեծ փտանդէ մ'ազատա-
ծի պէս :

« Ի՞նչ ունիք , ինչո՞ւ այդպէս կը դողաք ,
հարցուց Տակօպէս զարմացմամբ :

— Ռ՛հ , եթէ գիտնայիր , ըսաւ Ռօզ դողդո-
ջուն ձայնիւ , որովհետեւ երկուքին ալ սիրտն
ուժգին կը բաբախէր , եթէ գիտնայիր պատա-
հածը . . . ասկէ դառ քու ոտքիդ ձայնն ալ այն
աատիճան ծանր երեւցաւ մեզ՝ որ չկրցինք ձան-
չել . . . եւ տախտակորմին ետեւի խշրտոցը . . .

— Բայց , վախկոտներ , միթէ կրնայի՞ր սասնե-
հինք տարեկան ազու արագութեամբ սանդուղէն
վեր ելնել՝ յարգէ անկողինն ալ կրնակս բարձած ,
զոր դրանն առջեւ վար նստեցի հոն պատկերու

համար՝ ինչպէս որ սովորութիւնս է :

— Ո՛հ, ինչ խենդ ենք եղեր, քոյր իմ, որ այս բանը չմտածեցինք, ըսաւ Ռօղ Պլանչին երեսը նայելով. եւ երկուքին ալ դեղնահար դէմքերն իրենց առջի թարմ դոյներն առին :

Այս խօսակցութեան միջոցին՝ շուներ միշտ պատուհանին առջեւ կանգնած կը հաչէր :

« Ի՞նչ կայ որ Ռապա-Ժօա այն կողմը դարձեր կը հաչէ, որդեակներս, հարցուց զօրականը : — Չենք գիտեր . . . քիչ մ'առաջ պատուհանին ապակիները կտարտեցան եւ մեր այնչափ վախնալուն առաջին պատճառն ալ այն եղաւ : »

Տակօպէս՝ առանց պատասխանելու պատուհանին քով վազեց, բացաւ, վանդակափեղկը դուրս հրեց եւ վար ծռելով շորս կողմը նայեցաւ. բայց դիչերը խիստ մութ ըլլալուն բան մը չկրցաւ տեսնել . . . ահանջ դրաւ, բայց հովին մոնչիւնէն զատ ուրիշ ձայն չկրցաւ լսել :

« Ռապա-Ժօան, ըսաւ շունին՝ բաց պատուհանը ցուցընելով, ցատկէ վար ու փնտռէ նայլամ, »

Քաջ կենդանին իսկոյն պատուհանէն դուրս ցատկեց ու աներեւոյթ եղաւ : Պատուհանը դեռնէն ութ օտնաշափ բարձրութիւն ունէր : Տակօպէս պատուհանէն դուրս ծռած՝ ձայնով ու շարժմունքով շունը կը դրդոէր :

« Փնտռէ նայլամ, սիրելիս, փնտռէ, եւ եթէ մէկը տեսնես՝ վրան ցատկէ, քու ճանկերդ զօրաւոր են . . . բռնէ եւ թող մի տար մինչեւ որ, ես վար իջնեմ :

Ռապա-ժօա դնաց, եկաւ, որտորդ շանս պէս
մերթ ընդ մերթ խեղդուել ձայն մը հանելով աս-
դին անդին հետախուղեց, բայց մարդ չգտաւ :

« Աւրեմն մարդ չկայ, կարիճ չունս. եթէ
ըլլար, անշուշտ վիզէն կը բռնէիր, ըսաւ Տակօ-
պէս : Յետոյ աղջիկներուն դառնալով, որք ան-
հանդատութեամբ իր խօսքերը մտիկ կընէին եւ
չարժուեմները կը դիտէին, հարցուց. — Այս ա-
պակիներն ի՞նչպէս կոտորտեցան, որդեակներս,
դուք տեսա՞ք : — Ոչ, Տակօպէս, մեք կը խո-
սակցէինք իրարու հետ, յանկարծ դղրդիւն մը ըլ-
սեցինք, եւ ապակիները սենեակին մէջ թափե-
ցան : — Ինձ այնպէս թուեցաւ թէ, յաւելցուց
Ռօզ, փեղկը յանկարծ պատուհանին դարնուե-
ցաւ : »

Տակօպէս վանդակափեղկը ղննելով երկայն
ու շարժուն ճանկ մը տեսաւ որ դայն ներսէն դո-
ցելու սահմանուած էր :

« Հովը սաստիկ ըլլալուն, ըսաւ, վանդակա-
փեղկը հրած եւ այս ճանկն ալ ապակիներուն
դարնուելով կոտորած ըլլալու է : Այն, այնպէս
ըլլալու է . . . վասն զի ո՞վ պիտի ընէր այս շա-
րութիւնը եւ ի՞նչ պատճառաւ : Յետոյ Ռապա-
ժօայի դառնալով. — Աւրեմն մարդ չկայ հոտ »
ըսաւ : Շունը հաչել սկսաւ այնպիսի կերպով մը
որմէ զօրականը հասկըցաւ թէ չկայ ըսել կուզէր :
— Աւրեմն, ըսաւ Տակօպէս շունին, տանը բո-
լորտիքը մէկ մը դարձիր, հարկաւ բայց դուռ
մը կրնաս գտնել, անկէցներս մտիր ու հոս եկու : »

Ռապա-Քօա ըսածին պէս ըրաւ . քանի մը
վայրկեան պատուհանին տակը քրթ մ'նջելէ ետեւ
վազեց պտոյտ մ' ըրաւ պանդոկին բոլորտի քը որ-
պէս զի բակը մտնէ :

« Ալ մի վախնաք , որդեակներա , ըսաւ դօ-
բականը որքերուն քովը դալով . ահա հասկցուե-
ցաւ որ հովէն եղեր է : — Բայց շատ վախցանք ,
ըսաւ Ռօղ : — Ար հաւատամ , պատասխանեց դօ-
բականը , եւ ասոր ճարը պէտք է նայիմ , վասն զի
հովը ներս դարնելով կրնաք զիշերը պաղ առ-
նուլ » ըսաւ կտարած պատուհանին դառնալով .
որուն առջեւ վարագոյր ալ չկար :

Քիչ մը խորհելէ ետեւ , աթոռին վրայէն իր
եղջերուի մորթէ մուշտակն առաւ , պատուհանին
երկաթէն վար կախեց , եւ քղանցքովը կտարած
ապակիներուն ծակերը թխելով հնար եղածին
չափ դոցեց :

« Շնորհակալ ենք , Տակօպէս , նրչտի բա-
րեակրտ ես . այս իրիկուն սովորականէդ աւելի
դուրսը կենալուդ համար սիրտերնիս անհանդիստ
ըլլալ սկսեր էր » ըսին աղջիկները . եւ այն ատեն
միայն անանելով անոր դէմքին այլայլութիւնն ու
երեսին դժդունութիւնը , վասն զի դեռ Մօսօքի
հետ ունեցած վէճին տպաւորութիւնը չէր ան-
ցած , Ռօղ հարցուց . « բայց ի՞նչ սենիս , Տակօ-
պէս , ինչո՞ւ այդպէս դեղներ ես . . . — Բան մը
չունիմ , որդեակներա . . . — Այո , բան մը կայ ,
Ռօղին ըսածն իրաւ է , դէմքդ բոլորովին վախ-
ւած է : — Ստոյգ կըսեմ թէ բան մը չունիմ , պա-

տասխանեց զօրականը քիչ մը շիտթելով, վասն
զի սուտ խօսելու վարժուած չէր : Յետոյ լաւ
պատճառ մը դանկտով յաւելցուց . — Աթէ դէմ-
քիս վրայ այլայլութիւն մը կայ՝ պատճառը ձեր
այն ստախճան սարսափած ըլլալն էր որ զիս քիչ մը
շիտթեց . վասն զի յանցանքն իմս էր . . . — Յան-
ցանքը՝ քննելի էր մի : — Այո՛, եթէ կերակուրս
չուտով կերած ըլլայի, ապակիներուն կոտորած
ժամանակը հոս կը դանուէի, եւ դուք ալ չէիք
այնպէս վախնար : — Ահա հոս ես, ալ վախու-
բան մը չմհաց, բոլորովին անցաւ : — Բայց ին-
չո՛ւ չես նստիր : — Այո՛, որդեակներս, պիտի նըս-
տիմ, վասն զի խօսելիք ալ ունինք, ըսաւ Տակօ-
պէն, եւ աթոռ մ'առնելով՝ դնաց որբերուն ան-
կողմին դիտուն կողմը նստաւ : — Բայց տեսնեմ
թէ արթնն էք, յաւելցուց ժպտելով՝ որպէս զի
սիրտերնին բոլորովին հանդարտի . նայիմ աչ-
քերնիդ աղէկ մը բանց են : — Ահա, տես, ըսին
աղջիկները ծիծաղելով եւ կապուտագեղ աչ-
քերնին ամենայն զօրութեամբ բանալով . . .
— Վաւ, լաւ, ըսաւ Տակօպէն, դեռ ժամանակ
ունին գոցուելու, մանաւանդ որ ժամն ալ դեռ
ինն է : — Մեք ալ բան մ'ունինք քեզ ըսելիք,
Տակօպէն, ըսաւ Աօղ քրոջն երեսը նայելով որ-
պէս թէ անոր ալ հաւանութիւնն առնելու հա-
մար : — Իրան : — Մեծ գաղտնիք մ'ունինք քեզ
յայտնելիք : — Գաղտնի՛ք մի : — Այո՛ : — Խիստ
կարեւոր գաղտնիք մը . . . յաւելցուց Աօղ
ըջութեամբ : — Գաղտնիք մը՝ որ երկուքիս լա

կը վերաբերի, յարեց Ռօզ :

— Ատոր տարակոյս չունիմ, ըսաւ Տակօ-
 սէն, ինչ որ մէկիդ կը վերաբերի, միւսիդ ալ կը
 վերաբերի : Միթէ դուք երկուքդ՝ ինչպէս կը-
 տեն՝ մէկ գլխարկի մէջ երկու գլուխ չէք : — Հար-
 կաւ անանկ պէտք է ըլլայ երբոր երկուքիս ալ
 ալ գլուխը մուշտակիդ կնգուղին մէջ կանցու-
 նես, ըսաւ Ռօզ ծիծաղելով : — Կը տեսնես այս
 ծաղրաբանները, երբէք խօսքի տակ չեն մնար :
 Պատմեցէք նայիմ ՚նչ է եղեր ձեր ունեցած գաղտ-
 նիքը : — Պատմէ Պաննչ, ըսաւ Ռօզ : — Ո՛հ, օ-
 րիորդ, քեզի կը վայլէ պատմել, այսօր անդ-
 րանկու թեան կարգը քուկդ է, եւ այսպիսի կա-
 րեւոր գաղտնիք մ'ալ իրաւամբ անդրանկին կիյ-
 նայ . . . — Օ՛ն, սկսեցէք նայիմ, ըսաւ դօրա-
 կանը միշտ ժպտել կեղծելով, որպէս զի Մօսօքի
 անպատիժ նախապիտանքներէն զգացած զայրուցը
 ծածկէ որբերէն :

Ռօզ իր քրոջը կողմէն սկսաւ պատմել :

ԳԼՈՒԽ Զ .

ԳԱՂՏՆԻՔ

Մեր գաղտնիքը քեզ յայտնելէ առաջ, աղ-
 նիւ Տակօսէն, պէտք է խօսք առա թէ՛ չպիտի
 յանդիմանես մեզ, ըսաւ Ռօզ շնորհալի քծնու-
 թեամբ : — Այնպէս չէ՛, Տակօսէն, քու դա-

ւակներդ չպիտի յանդիմանես , յաւելցուց Պլանչ
 ոչինչ նուազ քծնութեամբ : — Շատ աղէկ , պատասխանեց
 Տակօպէս ծանրութեամբ , որովհետեւ յանդիմանելու
 կերպն ալ չեմ գիտեր . . . :
 Բայց ի՞նչ բանի համար ձեզ պիտի յանդիմանեմ :
 — Անոր համար որ հիմա պատմելի քնիս թերեւս
 աւելի առաջ քեզ պատմելու պարտաւոր էինք : »
 Տակօպէս այս խղճմտական խնդրոյն վրայ զայր-
 կեանս մը խորհելէ ետեւ՝ մտաբար պատասխա-
 նեց . « Որդեակք , երկուքէն մէկն է , կամ իրա-
 ւունք ունէիք այն դադանիքն ինձմէ պահելու ,
 կամ չունէիք : Եթէ ունէիք , աղէկ . իսկ եթէ
 չունէիք , եղածը եղած է . ասոր խօսքը չընենք :
 Ակսեցէք հայիմ , ականջս բռնորովին ձեզ է : »

Այս լուսաւոր մտէն Ռօզ կատարելապէս
 քաջալերուելով , քրոջը հետ ժպիտ մը փոխա-
 նակելէ ետեւ՝ սկսաւ .

« Երկու գիշեր է որ մէկը այցելութեան կու-
 գայ մեզ : — Այցելութեան մի , ըսաւ դինուորն ա-
 թոռին վրայ սնկուելով : — Այո , սիրուն այցելու-
 թիւն մը . . . վասն զի խարտեաց է : — Ի՞նչ , խարտե-
 աչ է մի , դռնեց Տակօպէս վեր ցատկելով :
 — Այո , խարտեաց եւ կապուտ աչուի . . . յա-
 ւելցուց Պլանչ : Զօրականը նորէն ցատկեց աթո-
 ռին վրայ : — Այո , կապուտ աչուի , անա այս
 երկայնութեամբ , ըսաւ Ռօզ , աջ ցուցամատին
 ծայրը ձախ ցուցամատին կէսին վրայ դնելով :
 — Թէպէտ եւ այսչափ ալ ըլլան , ըսաւ Տակօ-
 պէս բազկին երկայնութիւնը ցուցընելով , խըն-

դիրը շափին վրայ չէ . . . խարանայ եւ հա-
պուտ աչուի . . . ի՞նչ կը նշանակէ այդ , աղ-
ջիկներս :

Այս անգամ Տակօպէս ոտքի վրայ ելաւ խո-
ժոռ եւ անհանդիստ գէմքով :

« Տեսնո՞ւք , Տակօպէս , չուտ մը մեզ յանդիսա-
նել սկսար : — Եւ դեռ պատմութեան սկիզբն
ենք , յաւելցուց Պլանչ . — Դեռ սկիզբն էք մի .
ուրեմն շարունակութիւն եւ վերջ ալ կայ , հար-
ցուց դօրականն առաւել եւս անհանդստու-
թեամբ : — Վերջ , կը յուսանք որ չունենար , ը-
սաւ Ռօդ խենդի պէս խնդալով : — Մեր ջերմ փա-
փաքն այս է որ միշտ շարունակէ , յաւելցուց Պը-
լանչ՝ քրօջը պէս ծիծաղելով :

Տակօպէս վերջին ծայր լրջութեամբ երկու
աղջկանց մէկին ու միւսին երեսը կը դիտէր որ-
պէս զի դուշակէ այս առեղծուածը . բայց տես-
նելով անոնց սիրուն գէմքը՝ որ անկեղծ եւ միա-
միտ ծիծաղով մ'առաւել եւս կը գեղեցկանար ,
մաածեց որ եթէ յանցանք մը դորձած ըլլային՝
այս աստիճան դուարճութիւն չէին կրնար ունե-
նալ , սւասի սկսաւ ինքն ալ ուրախ ըլլալ որքե-
րուն հետ , որք իրենց դժբաղդ զիճակին մէջ այն-
շափի դուարթ կերեւէին :

« Խնդացէք , խնդացէք , որդեակներս , ը-
սաւ . ես կուզեմ որ միշտ այդպէս ուրախ դուարթ
ըլլաք : » Բայց ետքը խորհելով որ աղջիկներուն
ըրած տարօրինակ խոստովանութեանն այս կերպով
պատասխան տալ չէր վայլեր , յաւելցուց ծանրու-

թեամբ . & Այն, որախ կըլլամ ձեր խնդարը տես-
 նելով, բայց խարտեաց ու կապուտ աչուի այցե-
 լութիւններ ընդունելից չեմ ուղեր . պատմեցէք
 աղջիկներս, կուղեմ անպատճառ իմանալ ի՞նչ է
 այդ, կատակ է, վրաս ծիծաղի՞լ կուղէք . . .
 — Ահ, Տակօպէս, ճշմարտ է ըսածնիս . . .
 — Իսկ զիտես սրմեք սուտ չենք խօսիր, յաւել-
 ցուց Ռօզ, — Իրաւունք ունիք, սուտ չէք խօ-
 սիր, ըսաւ զօրականը, նորէն կասկածի մէջ իյ-
 նալով . բայց ի՞նչպէս կարելի է այդ պիտի այցե-
 լութիւն մը, Ես գրանն առջեւ կը պառկիմ, Ռա-
 պա-Ժօա ալ պատուհանին տակը, ուստի աշխար-
 հիս բոլոր խարտեացներն ու կապուտ աչուիները
 կամ դռնէն կամ պատուհանէն կրնան մտնել, եւ
 եթէ այնպիսի փորձ մ'ընող ըլլայ, ես եւ Ռապա-
 -Ժօա որ բաւական սուր ականջ ունինք՝ գիտենք
 ինչ կերպով կ'ընդունինք . . . , Բայց կաղաչեմ,
 արդեակներս, առանց կատակի խօսինք, եւ հաս-
 կրնանք ըսածնիդ : »

Երկու քոյրերը Տակօպէսին դէմքէն հաս-
 կընալով որ ստուգիւ մտատանջութիւն մը կըզ-
 գար, չուղեցին անոր բարեմտութիւնն աւելի
 ասոնապեցընել : Իրարու երես նայեցան, եւ
 Ռօզ Տակօպէսի կարծի եւ լայն ձեռքերն իր փոք-
 րիկ ձեռացը մէջ առնելով ըսաւ . & Սիրտդ մի
 հասցըներ, մտիկ ըրէ որ պատմեմ մեր սիրելի
 Գաբրիէլին այցելութիւնները . . . — Նորէն
 կ'սկսիք . . . անուն ալ ունի եղեր : — Անշուշտ
 ունի եւ Գաբրիէլ է . . . ինչ գեղեցիկ անուն :

այնպէս չէ՞, Տակօպէս, Ո՛հ, եթէ դու ալ դինքը տեսնես, դու՛ ալ մեզի պէս կը սիրես մեր գեղեցիկ Գարրիէլը: — Պիտի սիրեմ ձեր գեղեցիկ Գարրիէլը, ըսաւ ծերունի զօրականը գլուխն երերցընելով, բայց ինչպէս սիրելիքս հիմա դեռ յայտնի չէ, վասն զի նախ պէտք է գիտնամ . . . : Յետոյ ինք իր խօսքը կտրելով. — Զարմանալի՛ բան . . . այդ անունը միտքս բան մը կը ձգէ . . . : — Ի՞նչ, Տակօպէս: — Ասկէց տասնուհինգ տարի առաջ ձեր հայրը Գաղղիայէն ետ դառնալուն՝ համակ մը բերաւ ինձ, որուն մէջ կինս կըսէր թէ իր աղքատութեանը հնայելով, եւ Ակրիքօլ որդիս ալ դեռ իր գիրկն ըլլալով, անտերունչ ձգուած աղայ մը դտեր, քովն առերէ, հրեշտակի պէս գեղեցիկ աղայ մը, եւ անունն ալ Գարրիէլ է եղեր: Գեռ շատ ժամանակ չկայ, հորէն լուրեր առի անոր վրայ: — Ո՛ւրկէ: — Հիմա պիտի պատմեմ: — Տեսնո՞ր, դուն ալ Գարրիէլ մ'ունիս եղեր, ուրեմն պէտք է որ մեր Գարրիէլն ալ սիրես: — Զերըն ալ . . . ձերն ալ . . . տեսնենք ձերը . . . կրակէ՛ կայծակներ կը դիզուին վրաս . . . — Գիտես, Տակօպէս, ըսաւ Ռօզ, որ ես ու Պլանշիրարու ձեռք բռնելով կը քնանանք: — Այո՛, գիտեմ, ձեր օրորոցին մէջ ալ շատ անգամ ձեզ այնպէս տեսած եմ: Ո՛րչափ սիրուն ու գեղեցիկ էիք. երեսնից նայելէ չէի կշտանար: — Արկու գիշեր կայ, նոր քնացեր էինք, տեսանք որ . . . — Արեմն երազնուդ մէջ էր, գոչեց Տակօպէս, որովհետեւ քնացած էիք: — Այո՛, երազնու

մէջ , հապառներ կուղէիր որ ըլլար . . . թ ող տուր
որ քոյրս պատմէ : Ս , օ , ահա հիմա հասկըցայ
ինչ ըլլալը , ըսաւ զօրականը դոհու թեամբ , շատ
ուրախ եմ . . . թէպէտ եւ ամեն կողմէ սիրտս
ապահով էր ձեր վրայ . . . վասն զի . . . բայց
վերջապէս դոհ եմ . . . տեսածնիդ երազ է եղեր
. . . շարունակէ նայիմ փոքրիկ Ռօղս : — Բու-
ներնիս տանելուն պէս , երկուքս ալ մի եւ նոյն
երազը տեսանք : — Մի եւ նոյն : — Այո , Տակօ-
պէս , վասն զի հետեւեալ առտուն երբոր իրա-
րու պատմեցինք , նայեցանք որ երկուքիս ալ
տեսածը նոյն եւ նման էր . . . — Չարմանալի
բան . ի՞նչ էր տեսածնիդ : — Պլանչ եւ ես քովէ
քով նստեր էինք , դեղեցիկ հրեշտակ մը ներս
մտաւ , ճերմակ ու երկայն պատմուճանով ,
խարտեաչ մազերով եւ կապոյտ աչքերով , մյն-
չափ շնորհադէմ , որ դմայլելով ձեռքերնիս իրար
կցեցինք որ աղօթք ընենք . . . : Այն ժամա-
նակ անուշ ձայնով մ'ըսաւ մեզ թէ իր անունը
Գաբրիէլ էր , թէ մայրերնիս զինքը Ղրկեր էր որ
մեր պահապան հրեշտակն ըլլայ , եւ մեզ բնաւ
չթողու : Յետոյ , յաւելցուց Պլանչ , երկուքիս
ալ մէկ մէկ ձեռքէն բռնելով եւ իր դեղեցիկ ե-
րեսը դէպ 'ի մեզ ծռելով , երկար ժամանակ մեզ
նայեցաւ այնպիսի քաղցրու թեամբ մը՝ որ չէինք
կրնար մեր աչքերն անոր աչքերէն զատել :
— Այո , այո , այնպէս կը թուէր մեզ թէ՛ նայ-
ւածքը մեզ իրեն կը քաշէր եւ մեր սրտին մէջ
կը թափանցէր , յարեց Ռօղ , Բայց ետքը հեռա-

ցաւ մեր քովէն՝ խօսք տալով որ հետեւեալ գիշերը նորէն պիտի երևնար մեզ։ — Նրեւցաւ։ — Այո՛, բայց կրնաս դատել թէ որչափ անհամբերութեամբ մեր ննջելու ժամանակին կ'սպասէինք, որպէս զի հասկընայինք թէ մեր բարեկամը նորէն պիտի գտնուի մեզ տեսնելու։ — Արեւմն անոր համար էր որ երէկուան առջի իրիկունն անդադար աչքերնիդ կը շփէիք, ըսաւ Տակօպէտ ճակատը քերելով, եւ «քուն ունինք» կըսէիք որպէս զի ճանրէք զիս ձեր քովէն, եւ ժամ առաջ ձեր երազին վազէք։ — Այո՛, Տակօպէտ, այնպէս է։ — Որովհետեւ չէիք կրնար ինձ ալ «Գնա՛, պատուէ՛» ըսել, ինչպէս որ Ռապա-Ժօային կըսէք։ Գաբրիէլ բարեկամնիդ նորէն եկաւ։ — Անշուշտ, բայց այս անգամ աւելի երկար խօսեցաւ հետերնիս, եւ այնպիսի որտաշարժ ու ազնիւ խորամանկ ատաւ մօրերնուս կողմէն, որ հետեւեալ օրը՝ Ռօզ եւ ես՝ բոլոր ժամանակնիս մեր պահապան հրեշտակին ըսած խօսքերը, դէմքն ու նայուածքը միտքերնիս բերելու աշխատութեամբ անդուցինք։ — Այո՛, միտքս կուգայ որ երէկ ալ ճանրան չարունակ կը վախայիք իրարու հետ, եւ երբոր ես ձեզ ճերմակ կըսէի, դուք սեւ կը պատասխանէիք։ — Այո՛, Տակօպէտ, խելքերնիս մտքերնիս Գաբրիէլին զրայ էր, եւ այն ժամանակէն ՚ի վեր է որ ինք մեզ որչափ կը սիրէ, մեք երկուքս ալ զինք այնչափ կը սիրենք։ — Բայց ան մինակ է ձեր երկուքին համար։ — Այո՛, միթէ մայրերնիս ալ մինակ չէր երկու-

քիս համար : — Իրաւ է . . . բայց դիտէ՞ք որ ես
ալ վերջապէս նախանձիլ սլիտի սկսիմ ձեր այդ
Գաբրիէլին վրայ . . . : — Դուն մեր ցերեկուան
բարեկամն ես , ա՛ն ալ գիշերուան : — Աղէկ ,
բայց թէ որ ցերեկներն անոր վրայ խօսելով եւ
գիշերներն ալ երազնուդ մէջ տեսնելով անցու-
նէք , ի՞նչ կը մնայ ինձ : — Քեզի կը մնայ . . . եր-
կու որբերդ , զորս այնչափ կը սիրեա , ըսաւ Ռօզ :
— Եւ որք աշխարհիս վրայ քեզնէ զատ մէկը չու-
նին , յաւելցուց Պլանչ գողարիկ կերպով մը : — Հա՛,
հա՛ , չողումեցէք դիս նայիմ . . . ըսաւ դօրակա-
նը քաղցրութեամբ , ես իմ բաժինէս դո՛հ եմ ,
որդեակներս , ձեր Գաբրիէլը ձեզ թող ըլլայ . ես
աարակոյս չունէի որ ես եւ Ռապա-Ժօա կրնա-
յինք հանդարտ եւ անհող ննջել : Տեսած երազ-
նիդ ալ դարմանալի բան մը չէ . առաջին անգա-
մուն մեծ սպաւորութիւն մ'ըրեր է ձեր մտայ
վրայ , եւ խօսելով խօսելով նորէն տեսեր էք .
եթէ երրորդ անգամ մ'ալ տեսնէք այդ գիշերա-
յին գեղեցիկ թռչունը , դարձեալ չսլիտի դարմա-
նամ : — Ա՛հ , Տակօպէռ , մեր երազները մի ծաղ-
րեր , վասն զի մեզ կը թուի թէ մայրերնիս կը
դրկէ մեզ զանոնք : Միթէ չէր ըսեր մեզ թէ որբ
աղջիկները պահապան հրեշտակներ կունենան .
Գաբրիէլն ալ մեր պահապան հրեշտակն է . . .
մեզ ալ քեզ ալ կը պաշտպանէ : — Գո՛հ եմ որ
ձեր Գաբրիէլը դիս ալ կը հողայ . բայց դիտեցած
եղիք , սիրելի որդեակք , որ ձեզ պաշտպանե-
լու համար աւելի կը սիրեմ օժանդակ ունենալ

ինձ Ռապա-Ժօան , որ թէ եւ ձեր Գարբիէլին
չափ խարտեաց չէ , բայց առաւել ուժով ահռա-
ներ ունի , եւ իր օգնութիւնն ալ ապահով է :
— Այդ կատակներդ մեր համբերութիւնը կը հատ-
ցընեն , Տակօպէն , վասն զի ամեն բանի վրայ կը
ծիծաղիս : — Այո՛ , ես ալ կը դարմանամ թէ ին-
չո՛ւ այսչափ ուրախ եմ . . . եւ մեր ծերուկ Ժօ-
վիալին պէ՛ս՝ առանց ահռաներս բանալու կը խըն-
դամ : Օ՛ն , որդեակներս , զիս այդ պէ՛ս մի յանդի-
մանէ ք . արդարեւ իրաւունք չունիմ ձեր երազը
կատակի նիւթ ընելու՝ քանի որ ձեր մօրը յիշա-
տակը կայ անոր մէջ , եւ աղէկ կընէք որ լրջու-
թեամբ կը խօսիք անոր վրայ : Ասկէց զատ եր-
բեմն երազներուն մէջ ճշմարիտ բաներ ալ կը
դանուին . . . Սպանիա եղած ժամանակնիս ,
կայսրու հւոյն Ալեքս ըսուած ձիաւորներէն երկու-
քը՝ որ իմ ընկերներս էին , իրենց մեռներէն օր մը
առաջ երազնուն մէջ տեսեր էին թէ կրօնաւոր-
ները գիրենք պիտի թունաւորեն . . . եւ ստու-
գիւ ալ թունաւորուեցան : Ձեր ալ այդ գեղեցիկ
Գարբիէլ հրեշտակն երազնուդ մէջ յաճախ տես-
ներուն պատճառն այն է որ . . . այն է որ . . .
ձեզ կը դուարճացընէ . . . Յերեկներն դրօսանք
մը չունիք , գոնէ գիշերները դուարճալի քուն
մ՛ ունեցէք : Հիմա , որդեակներս , ես ալ բաներ
ունիմ ձեզ ըսելիք . ձեր մօրը վրայ պիտի խօսիմ .
բայց խօսք տուէք ինձ որ չպիտի արամիք : — Ան-
հոգ եղիր , մեք մօրերնուս վրայ խորհած ժամա-
նակնիս չենք արամիր , ալ ինքզինքնիս կամփո-

փենք : — Շատ աղէկ , ես մինչեւ հիմա վախնա-
լով որ սրտերնիդ կը տխրի , օրէ օր կը ձգէի , եւ
չէի ըսեր ձեզ ինչ որ մայրերնիդ անշուշտ ձեզ
պիտի պատմէր երբոր քիչ մը մեծնայիք . բայց
խեղճն այնչափ շուտ մեռաւ որ ժամանակ չունե-
ցաւ : Ասկէց զատ՝ ձեզ պատմելիք բաներն իր
սիրտը կը կտրտէին , ինչպէս իմս ալ . այս պատ-
ճառաւ ես ալ կուշացընէի , եւ մանաւանդ կուզէի
որ հօրերնուդ դերի ինկած պատերազմի դաշտէն
անցնելնէս առաջ ձեզ բան մը չիմացընեմ . ասան-
կով ժամանակ կը վաստըկէի . բայց հիմա պատ-
ճառ չմնաց , եւ չեմ կրնար այլ եւս ծածկել , —
Ուրեմն պատմէ Տակօպէս , ըսին աղջիկներն ու-
շաղիբ եւ ծանր դէմքով :

Մերունի զօրականը վայրկեան մը խորհելէ
ետեւ ըսաւ . « Ձեր հայրը՝ Միսօն զօրապետը՝
գործաւորի մ'որդի էր , եւ հայրը միշտ գործաւոր
մնաց : Թէպէտ հայրերնիդ ամեն ջանք ըրաւ որ
անոր փրճակը փոխել տայ , բայց չկրցաւ կամակո-
րութեանը յաղթել : Ան ալ որդւոյն պէս երկաթէ
գլուխ եւ ոսկիէ սիրտ ունէր : Գիւրաւ կրնաք հաս-
կընալ , որդեակներս , թէ ձեր հայրը հասարակ
զինուոր գրուելով՝ նրչափ նեղութիւն կրեց եւ
փառք վաստըկեցաւ մինչեւ որ զօրապետ եւ կայ-
սերութեան կոմս եղաւ : — Աայսերութեան կոմ-
սըն ի՞նչ է , Տակօպէս : — Չնչին պատիւ մը . . .
տիտղոս մը՝ որ Աայսըրը մէկուն աստիճան տուած
ժամանակ իբրեւ յաւելուած ձրիաբար կը շնոր-
հէր , որպէս թէ ըսել ուզելով իր սիրելի ժողո-

վրրդին՝ որուն մէջէն ելած էր ինքն ալ . « Տղանքս,
կուզէք հին ազնուականաց պէս ազնուական ըլ-
լալ, ահա ձեզ ազնուականութիւն, թագաւոր
ըլլալ կուզէք, ահա ձեզ թագաւորութիւն . . .
ամենուն ալ համը նայեցէք, ինչ մեծ եւ դերա-
դանց բան որ կայ՝ ամենն ալ տամ ձեզ, վայելե-
ցէք : » — Թագաւոր մի, ըսին աղջիկները ձեռ-
քերնին իրար կցելով հիացմամբ : — Ս,յո՛, թա-
գաւոր, կըսեմ, կայսրը թագ բաժնելու մասին
կծծի չէր . ես ընկեր մ'ունէի, քաջ զինուոր մը,
որ թագաւոր եղաւ . ասկէց մեծ հաճոյք եւ փառք
կ'ըզայինք, փասն զի եթէ մէկը չըլլար, միւսը
կըլլար . այսպէս ձեր հայրն ալ կոմս եղաւ . բայց
կոմս ըլլար չըլլար՝ բանակին ամենէն դեղեցիկ եւ
քաջ զօրապետն էր : — Գեղեցիկ էր, Տակօպէն,
այնպէս չէ, մայրերնիս ալ միշտ կըսէր : — Ա՛հ,
այո՛, բայց ձեր պահասպան հրեշտակին պէս խարտ-
եաշ չէր, այլ սեւ աչուի եւ թուխ մազերով աղ-
ւոր կտրիճ մ'էր, զոր դուք ալ եթէ փառա-
ւոր համազգեստը հագած տեսնէիք, կըզմայ-
լէիք եւ սրտերնուդ մէջ կրակ կը բորբոքէր :
Երբոր ան մեր գլուխը կը կենար, գիմացնիս ով
որ ալ ըլլար՝ վրան կըյարձակէինք : — Քաջու-
թեանը չափ բարեսիրտ ալ էր հայրերնիս, այն-
պէս չէ, Տակօպէն : — Բարե՛սի՛րտ մի, անշուշտ :
Ս,յնչափ ալ ուժով էր, որ ինչպէս դուք թուղթը
կը ճմլէք, այն ալ ձիու պայտ մը կրնար ձեռքովը
ճմլել : Գերի բռնուած օրը՝ մինչեւ բրուսիացւոց
թնդանօթներուն վրայ յարձակելով՝ թնդանօթա-

ձիգ զինուորները ջարդ ու բուրդ ըրեր էր : Ի՞նչ
պէս կուղէք որ այնչափ ուժով եւ արի մարդը
բարեսիրտ ալ չըլլայ : Արդ՝ տասնեւհինգ տարիի
չափ կայ , որ այս գեղէն քիչ մը հեռու , ձեզ
ցուցըցած տեղս , հայրերնիդ ծանր վէրք մ'առ-
նելով ձիէն ինկաւ . . . ես ալ իրրեւ հրամանա-
կատար զինուոր ետեւէն կերթայի . իսկոյն վա-
ղեցի քովը դայի որ օգնեմ իրեն . բայց հինգ բո-
պէ չանցած՝ երկուքս ալ դերի բռնուեցանք , եւ
որմէ . . . գաղղիացիէ մը : — Գաղղիացիէ մը :
— Այո՛ Գաղղիայէն փախած մարքիղէ մը , որ
Ռուսաց բանակին մէջ գնդապետ եղեր էր , ըսաւ
Տակօպէս դառնութեամբ : Արբոր այն հայրե-
նատեաց մարքիղը հօրերնուդ մօտենալով ըսաւ .
« Պարոն , անձնատուր եղիք հայրենակիցի մը . . . »
— Գաղղիոյ դէմ պատերազմող գաղղիացի մ'իմ
հայրենակիցս չկրնար ըլլալ , պոռաց հայրերնիդ ,
անիկա մատնիչ մ'է , եւ ես մատնիչի մ'անձնա-
տուր չեմ ըլլար » : Եւ առանց իր վէրքին ծան-
րութեանը նայելու , գեանին վրայ քսուելով
ամբաձիգ ուս զինուորի մը քով գնաց եւ սուրն
անոր յանձնեց ըսելով . « Քաջ զինուոր , քեզ
անձնատուր կըլլամ » : Մարքիղը կատաղութե-
նէն դեղնեցաւ մնաց : »

Արբերը պանծանօք իրարու երես նայեցան ,
երեսնին կարմրեցաւ , եւ երկուքը մէկէն գոչե-
ցին . « Ո՛վ քաջ հայր , քան ի հայր . . . » — Աղ-
նի՛ւ տղայք , ըսաւ Տակօպէս՝ հպարտութեամբ
իր ընչացքը շոյելով , յայտնի կը տեսնուի որ ե-

բակներնուն մէջ զօրականի արիւն կայ : « Յետոյ
յարեց . . . »

« Զօրապետին ձին զարնուեր մեռեր էր :
Երբոր դերի բռնուելով ճանրայ ելնել հարկ ե-
ղաւ , զօրապետը Ժօվիալին վրայ հեծաւ , որ այն
օրը չէր վիրաւորուած , եւ վարչաւիա հասանք
չոն մայրերնիդ առաջին անգամ տեսնելով հետը
բարեկամացաւ : Մօրերնուդ ինչպէս կին մ'ըլլա-
լը հասկըցընելու համար բաւական է ըսել թէ
« վարչաւիոյ մարդարիտ » մականունը կօւտային
իրեն : Զօրապետը՝ որ միշտ բարին ու դեղեցիկը
կը սիրէր , իսկոյն սիրահարեցաւ անոր . նմանա-
պէս մայրերնիդ ալ զօրապետին սիրահարեցաւ ,
բայց ծնողքն ուրիշի մը խոստացած էին դինքը .
եւ այն ուրիշն ալ . . . դարձեալ . . . » Տակօ-
պէս չկրցաւ շարունակել , վասն զի Ռօդ սուր-
ձայն մ'արձակեց սարսափամբ սպառուհանը ցու-
ցընելով :

ԳԼՈՒԹ Է .

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԸ

Աղջկան աղաղակէն Տակօպէս ցատկեց սա-
քի վրայ ելաւ :

« Ի՞նչ եղար , Ռօ՛ղ : — չոն , հոն . . . ըսաւ
աղջիկը սպառուհանը ցուցընելով . աչքիս ձեռք
մ'երեւցաւ որ մուշտակը կը շարժէր . »

Այս խօսքը դեռ Ռօղին բերանն էր՝ Տակօ-
պէս պատուհանին քով վազեց, եւ կախուած
մուշտակը վար առնելով ուժգնութեամբ պա-
տուհանը բացաւ։ Գիշերը դարձեալ խիստ մթին
էր եւ սաստիկ հով կար . . . : Զօրականն ականջ
դրաւ, բայց բան մը չլսեց։ Եկաւ սեղանին վրա-
յէն ճրագն առաւ, եւ ձեռքը լոյսին առջեւ բռն-
նելով որպէս զի չմարի, պատուհանէն դուրս հա-
նեց, բայց բան մը չտեսաւ։ Մտածեց որ հովին
ուժգնութենէն մուշտակը շարժելով՝ Ռօղ վախէն
խարուեր էր, պատուհանը գոցեց, եւ դարձաւ
աղջիկներուն . « Մի վախնաք, որդեակներս,
բան չկայ . . . հովը սաստիկ փչելով մուշտակին
ծայրը շարժեր է։ — Բայց կը թուէր ինձ թէ մար-
դու մը մատուրներ տեսայ որ կը շարժէին դայն,
ըսաւ Ռօղ տակաւին դողալով։ — Ես Տակօպէ-
սին երեսը նայելուս համար՝ բան մը չտեսայ, ը-
սաւ Պլանչ։ — Տեսնելու բան չկար որ տեսնէիր,
պատասխանեց Տակօպէս . պատուհանն ուժ տա-
նաչափէն աւելի բարձր է գետնէն, մինչեւ հոս
ձեռք հասցընելու համար պէտք է որ հսկայ մէ-
կըն ըլլայ կամ սանդուղ դնելով վեր ելնէ։ Ս-
թէ սանդուղ դրուած ըլլար, անհնար էր որ այն-
չափ շուտով վերնար ու աներեւոյթ ըլլար, վա-
սըն զի Ռօղին պոռալը լսելուս պէս պատուհանը
բացի, լոյսը դուրս հանեցի՝ եւ բան մը չտեսայ։
— Արեւն խարուած ըլլալու եմ, ըսաւ Ռօղ։ —
Անշուշտ հովն է, քնքր իմ, յաւելցուց Պլանչ։ —
Արեւն ներում, կը խնդրեմ, աղնիւ Տակօպէս՝

քեզ անհանգիստ ընելուս համար : — Հող չէ, ըսաւ զօրականը մտածելով, բայց կը ցաւիմ որ Ռապա-Ժօա դեռ ներս չեկաւ, վասն զի պատուհանին քով կը հսկէր, եւ դուք ալ անկասկած կը լլայիք. կերեւի որ Ժովիային ախոռին քովէն անցած ժամանակ՝ անոր հօտն առնելով ներս մտեր է գիշեր բարի ըսելու . . . միտքէս կանցնի որ երթամ կանչեմ : — Ա՛չ, Տակօպէս, մեզ մինակ մի թողուր, կը վախնանք, պոռպցին աղջիկները : — Արդարեւ տարակոյս չունիմ որ Ռապա-Ժօա ալ հիմա ուր որ է՝ կուգայ եւ դուռը կը ճանկրտտէ . . . ուստի շարունակենք մեր պատմութիւնը, ըսաւ Տակօպէս, եւ այս անգամ աղջիկներուն անկողնին դիտուն՝ կողմը նստաւ երեսը պատուհանին դարձունելով :

« Ինչպէս որ ըսի, զօրապետը գերի իյնալով վարչաւիա տարուելէ ետեւ՝ ձեր մօրը սիրահարեր էր, զոր ծնողքն ուրիշի մը տալ կուզէին : 1814 ին խմացանք որ պատերազմը վերջացեր, կայսրն էլ պա կղզին աքօորուեր եւ Պուրպոնները Գաղղիա դարձեր էին Բրուսիացւոց եւ Ռուսաց ձեռօք : Մայրերնիդ այս լսելուն պէս՝ ըսաւ զօրապետին . « Պատերազմը լմնցաւ, ալ աղաւ ես . « կայսրը հիմա դժբաղդ վիճակի մէջ է, պէտք է « որ քովն երթաս . վասն զի ամեն բան անոր պար- « տական ես . չեմ գիտեր թէ մէկ մ'ալ երբ կը « տեսնենք իրար, բայց ես քեզնէ դատ ուրիշի « հետ չեմ կարգուիր, եւ մինչեւ 'ի մահ կրնաս « դիս դանել . . . » Զօրապետը ճանբայելնե-

չէն առաջ զիս քովը կանչեց . & Տակօպէս , դուն
& հոս կեցիր , ըսաւ . թերեւս օրիորդ Նւա քու
& օգնութեանդ պէտք կունենայ՝ եթէ իր ընտան
& եաց ձեռքէն չափազանց նեղուելով փախչի
& ուզէ : Մեր թղթակցութիւններն ալ քու ձեռ
& քէդ պիտի անցնին : Երբոր Փարիզ հասնիմ ,
& կինդ եւ որդիդ կը աւանդեմ եւ իմ բարեկամս
& ըլլալդ հասկըցընելով կը քաջալերեմ » : —
Միշտ բարեկամ , ըսաւ Ռօզ խանդաղատանօք
Տակօպէսի երևար նայելով : — Ինչպէս հօրս մօրս՝
նոյնպէս անոնց զաւակացը , յարեց Պլանչ : — Մէկը
օրիքելը միւսներն ալ օրիել է , պատասխանեց զօ-
րականը : Արդ , զօրասպետն էլ պա կողին գնաց
Կայսեր քով , ես ալ Վարչաւիա մնացի , եւ ձեր
մօրը տանը մօտ տեղ մը պահուրտելով՝ ձեր հօրը
նամակները կ'ատանայի եւ դադանաբար մօրեր-
նուդ կը տանէի . . . Պարծանօք կըսեմ , որդեակ-
ներս , թէ նամակներուն մէկուն մէջ զօրասպետը
կիմացընէր թէ կայսրը զիս յիշեր է : — Քեզ կը ճան-
չէր : — Քիչ մը . երբոր հայրերնիդ իմ վրաս խօսք
բացեր եւ անունս տուեր է , — Տակօպէսը , ըսեր
է կայսրը , իմ հին պահապան գնդիս ձիաւոր
ումբաձիգը . Նգիպտոսի եւ Նտալիոյ պատերազմ-
ներուն մէջ անթիւ լէրք առած է , եւ Վակրամի
պատերազմին մէջ ալ ձեռքովս պատուանշան
տուած եմ անոր . . . ես մոռցած չեմ դայն : »
— Հաւատացէք , որդեակներս , որ մայրերնիդ
այս խօսքերը կարդացած ժամանակ . . . անբա-
նի մը պէս լացի , — Ինչ գեղեցիկ գէմք մ'ունէր

Կայսրը քու արծաթեայ կարմիր ժապաւէնով
պատուանշանիդ վրայ՝ զոր խելօք կեցած ժամա-
նակնիս կը ցուցընէիր մեզ : — Այն պատուանշ-
անը մասունքի պէս անդին է ինձ համար , եւ
հոս պայուսակիս մէջ պահած եմ իմ ամենէն
թանկագին բաներուս՝ այսինքն մեր քիչ մ'ստա-
կին եւ քանի մը թուղթերուն հետ . . . Մայրեր-
նիդ մեծ մխիթարութիւն կ'զգար երբոր զօրա-
պետին նամակներն իրեն կը տանէի եւ հեանս ա-
նոր վրայ կը խօսէի , վասն զի խեղճը շատ նե-
ղութիւն կը քաշէր . ծնողքն ընդունայն զինքը
կը չարչարէին ստիպելով որ ուրիշի հետ կարգեն .
« Ես Սիմօն զօրապետէն զատ ուրիշի հետ չեմ
կարգուիր » կը պատասխանէր միշտ : Տեսնելու էր
ի՛նչ բարեսիրտ , համբերող եւ արի կին մ'էր . . .
Օր մը զօրապետէն նամակ մը կ'ստանայ , որ կի-
մացընէր թէ Կայսեր հետ Էլպա կղզիէն մեկնե-
րն : Եւ ահա պատերազմը նորէն կ'սկսի , կար-
ճատեւ՝ բայց դիւցազնական եւ վեհ պատերազմ
գաղղիական զօրաց սքանչելի անճնանութե-
թեամբը : Չեր հայրն եւ իր զօրաբանակն առիւ-
ծի պէս կը պատերազմին՝ կատաղութեամբ քան
թէ քաջութեամբ : »

Այս պատմութիւնն ըրած ժամանակ զօրա-
կանին երեսները կը կարմրէին , եւ իր երիտասար-
գութեան ժամանակի դիւցազնական աշխոյժը
նորէն կ'զգար՝ միտքը բերելով Գաղղիոյ հասարա-
կապետութեան պատերազմներուն վսեմ շահա-
տակութիւնները , կայսերութեան յաղթութիւն

ները եւ իր զինուորական կենաց առաջին եւ վերջին օրերը .

Երկու որբերն անգամ՝ որք կարին զօրակապի մ'եւ քաջասիրտ մօր մը զաւկընեք էին , շարժեցան զօրականին աղդու խօսքերէն , եւ փոխանակ վախնալու՝ սիրտերնին առաւել ուժով կը բարախէր եւ երեսնին կը կարմրէր :

« Ի՞նչ մեծ բարեբաղդութիւն է մեզ այդպիսի քաջ հօր մը զաւակ ըլլալնիս , դոչեց Պլանչ : — Ի՞նչ բարեբաղդութիւն եւ ի՞նչ պատիւ , որդեակներս , պատասխանեց Տակօպէս , վասն զի Ղինեիի պատերազմին իրիկունը , Աայսրը ձեր հայրը Ղինեիի դաշտին վրայ յուրախութիւն բոլոր բանակին : — Աայսրութեան մարաշնապատ , ըսաւ Ռօզ զարմացմամբ , առանց այս բառերուն զօրութիւնը հասկընալու : — Եւ Ղինեիի դնւքս , յարեց Պլանչ նոյնպէս զարմացմամբ : — Այո՛ , Աեարոս Սիմօն , դորժաւորի մը որդին , որմէն իմ հարազատն եղաւ . ասկէց աւելի պատիւ ունենալու համար պէտք է մարդ թագաւոր ըլլայ , պատասխանեց Տակօպէս պանծալով . ահա այսպէս կը վարուէր Աայսրը ժողովրդեան զաւակներուն հետ . ասոր համար էր որ ժողովուրդն ալ հոգի կուտար վրան : 'Ն դուր կըսէին անոնց . « նայեցէք ձեր սիրած կայսրը ձեզ թնդանօթի ճարակ կընէ : — Հոգ չէ կը պատասխանէր ժողովուրդը՝ որ էշ չէ . ուրիշն ալ մեզ թշուառութեան ճարակ կընէ . աւելի կը սիրենք թնդանօթ .

Թը, եւ հաղարապետ, դնդապետ, մարաջախտ,
 թագաւոր կամ խեղանդամ դինուոր ըլլալու հա-
 շանականութիւնը, քան թէ անօթ ու թեկնէ,
 ցարտէ, ծերութեանէ ձեղնայարկի մը մէջ յարդի
 վրայ սատկիլ՝ քառուն տարի ուրիշներուն հա-
 մար աշխատելէ ետեւ : » — Աւրեմն Գաղղիոյ մէջ
 ալ, Փարիզի պէս գեղեցիկ քաղաքի մը մէջ ալ
 աղքատութեան ու անօթ ու թեկնէ մեռնող թշուառ-
 ներ կան, Տակօպէս : » — Այն, որդեակներս,
 անոր համար կըսեմ թէ թնդ անօթն աւելի աղէկ
 է, ըստ որում անով մարդ մը կրնայ ձեր հօրը պէս
 դուքս եւ մարաջախտ ըլլալ. ետքի խօսքս բա-
 ցատրութեան կարօտ է, վասն զի ձեր հօրը թըշ-
 նամիները ետքը չուղեցին անոր այս տխարան ու
 աստիճանը ճանչել, որովհետեւ Վինսիի պատե-
 րադմէն ետեւ սդոյ օր մ' ունեցանք, մեծ սդոյ օր
 մը, ուր ինձ պէս ձեր դօրականները լացին, ըսաւ
 ինձ դօրապետը. այն, լացին այն դժբաղդ պատե-
 րադմէն իրիկունը, որ Վաթէրլօ կոչուեցաւ : »

Տակօպէս այն աստիճան տխրութեամբ ար-
 ատասանեց այս խօսքերը, որ խեղճ որբերը դողա-
 ցին :

« Աւերջապէս, յարեց դօրականը հառաչե-
 լով, ահա այսպիսի անիժեալ օրեր կան . . . :
 Այն օրը, Վաթէրլօի դաշտին վրայ, ձեր հայրը՝
 կայսերական պահապան դօրաց մէկ բաժնին գը-
 լուխը կեցած մինչեւ վերջը պատերազմեցաւ,
 եւ բոլոր մարմինը վերքով ծածկուած ինկաւ :
 Երկար ժամանակ դարմանուելէ ետեւ՝ երբոր ա-

ապշաղաղաւ, ուղեց Ս. Հեղինէ երթալ, որ աշխարհիս մէկ ծայրը կղզի մ'է, ուր անգղիացիք կայսրըն աքսորած էին ուղածնունս պէս չարչարելու ճամար. վասն զի կայսրը սրճափ որ առաջ երջանիկ էր, այնչափ կաքը դժբաղդ եղաւ ու շատ աստապանք կրեց: Ս — Ս. յդ ի՞նչ ատուր լուր է որ կուտաս, Տալուպէն, հիմա մեզ պիտի լացընես: — Արդ արեւ լալու արժանի է . . . կայսրն այնչափ վիշտ կրեց, այնչափ վիշտ . . . ս'ն, ի՞նչ վիճակի մէջ էր արդեօք սիրտը . . . : Գժբաղդաբար դօրապետը հետը չէր Ս. Հեղինէ կղզին, որ պէս զի միտարուծ իւնս ատուղներուն մէկն ալ ան ըլլար, բայց թշնամիները շուղեցին: Զօրապետն ալ ուրիշ շատերուն պէս Պուրպօններուն գէժ կրակ կարելով դաւադրութիւն մը կազմեց որպէս զի կայսեր որդին Գաղղիա կանչէ: Ս. յս նպատակաւ Քիքարտիայի մէջ քաղաք մը դնաց, ուր հին դօրականներու գունդ մը պահապան դրուած էր, եւ ուղեց զանոնք իրեն հետ միաբանեցընել, բայց դաւադրութիւնն արդէն յայտնուած ըլլալով, հոն հասնելուն պէս զինքը բռնեցին դնդապետին առջեւ տարին . . . Ս. յս այն դնդապետն էր որ . . . ըսաւ դօրականը քիչ մը լաելէ ետեւ . . . բայց հիմա երկար կըլլայ ձեզ հասկըցընել եւ սիրտերնիդ աւելի կը կոտորի . . . : Վերջապէս այնպիսի մարդ մ'էր զոր ձեր հայրը երկար ժամանակէ 'ի վեր իրաւամբ կատէր: Երբոր դէմ առ դէմ եկան, & Յժէ դատ չես, ըսաւ անոր, մէկ ժամ աղաատութիւնս առաքինիս, եւ հե-

տրդ մենամարտիմ, վասն զի ես քեզ այս եւ այն
պատճառներով կարհամարհեմ: Ս Գնդապետն
ընդունեց ձեր հօրն առաջարկութիւնը եւ մինչեւ
հետեւեալ օրը զայն ազատ թողուց: Հետեւեալ
օրը կատաղի մենակուիւ մ'ըրին եւ գնդապետը
զարնուելով մեռաւ: — Ո՛հ, Աստուած իմ, այս
ի՛նչ բան է, գոչեցին աղջիկները: — Զօրապետն
իր սուրը սրբելու վրայ էր, անձնուէր բարեկամ
մը կուգայ կըսէ իրեն թէ հազիւ վախճելու ժա-
մանակ ունի: Հայրերնիդ բարեբաղդաբար մտիկ
ընելով, յաջողեցաւ Քաղղիայէն դուրս ելնելու.
այն, բարեբաղդաբար, վասն զի տասնեւհինգ
օր ետքը մահուան դատապարտուեցաւ իբրեւ
գաւաղիր: — Ա՛հ, տէր Աստուած, ի՛նչ աղե-
տալի իրողութիւններ են ասոնք: — Այս աղե-
տալի իրողութեանց մէջ ալ երջանկութիւն մը
կար . . .: Ձեր մայրն արիաբար իր խոստմունքը
բռնելով ձեր հօրը կ'սպասէր: Գիր գրեր էր անոր
թէ պէտք էր նախ կայսրը հողար, եւ ապա զին-
քը: — Հայրերնիդ ալ չ'լրնալով՝ ոչ կայսեր եւ ոչ
որդւոյն համար բան մ'ընել, Քաղղիայէն տարա-
գըրեալ Վարչաւիա գնաց եւ ձեր մօրը հետ ա-
մուսնացաւ, վասն զի ծնողքն արդէն մեռած ըլ-
լալով արգելք դնող չկար իրենց միութեանը.
եւ ալ անոնց ամուսնութեան վկայներէն մէկն ե-
ղայ: — Իրաւունք ունիա, Տակօպէս, արդարեւ
մեծ երջանկութիւն մ'էր այդ այնպիսի ծանր
դժբաղդութեանց մէջ: — Ահա այսպէս երկուքն
ալ երջանիկ եղան. բայց բարեօրոտ մարդիկ ո՛ր-

չափ երջանիկ ըլլան, այնչափ ուրիշներուն դժ-
բաղդութեանը վրայ ցաւ կ'զգան, եւ իրօք ալ
ցաւակրութեան արժանի բաներ կային Վարչա-
ւիոյ մէջ: Ռուսերը նորէն գերիներու պէս չար-
չարել սկսեր էին Ղեհերը. ձեր աղնուասիրտ մայ-
րըն ալ թէ եւ ազգաւ գաղղիացի էր, բայց սրտով
եւ հոգւով լեհ էր. աներկիւղ համարձակութեամբ
յայտնապէս կրսէր ու կը խօսէր ինչ որ ուրիշները
ծածկաբար իսկ ըսելու կը վախնային: Այս պատ-
ճառաւ թշուառները զինքը բոլոր հետեւի կը կոչէ-
ին: Ասկէց աւելի բան պէտք չէր Վարչաւիոյ կա-
ռավարչին ու շաղրութ իւնն արթնցընելու համար:
Օրին մէկը՝ զօրապետին մէկ բարեկամը, քաջ եւ
աղնիւ անձ մը, որ ժամանակաւ նիզակաւոր հե-
ծելոց գնդապետ էր, ուսաց դէմ նիւթ ուած դա-
ւաղրութեան մը մէջ մատ ունենալու պատճա-
ռաւ Սիպերիա աքսորուելու կը դատապարտուի,
եւ ձեր հօրը տունը կը փախչի. հայրերնիդ ալ
մեղքնալով զայն կը պահէ, բայց կիմացուի: Հե-
տեւեալ գիշերը Ռուս պաշտօնակալ մը՝ խուճք մը
խաղախններով եւ հետն ալ սուրհանդակի կառք
մը մեր դրան առջեւ եկան, եւ զօրապետը քունին
մէջ գտնելով վերուցին տարին: — Աստուած իմ,
ի՞նչ պիտի ընէին իրեն: — Ռուսիոյ հողէն դուրս
պիտի հանէին՝ սպառնալով որ եթէ անգամ մ'ալ
հոն ստք կոխէ, մշտնջենաւոր բանտարկութեան
պիտի դատապարտուի: Մեզնէ բաժնուած ժա-
մանակ իր վերջին խօսքն այս եղաւ. Տակաւ, +եղ
իւ յանձնէ՛մ պէս ուր զտասին. վասն զի մայրերնիդ քանի

մ'ամսէն ձեզ պիտի ծնանէր : Սակայն ուռւերն
անոր այս ծանր վիճակին հնայելով Սիպիր արք-
տարեցին : Աւերը յիշուած դէպքը պատեն առիթ
մ'էր ձեր մայրը Աարչաւիայէն հեռացընելու ,
ուր շատ բարերարութիւն ընելով ամենուէն սէրն
ու համարումը գրաւած էր , եւ այս ալ ուռւաց
բանին չէր դար : Աքտրելը բաւական համարե-
լով բոլոր ստացուածքն ալ գրաւեցին : Տէրու-
թենէն ստացած միակ շնորհն այս եղաւ , որ ինձ
թողառութիւն եղաւ հետն ընկերանալու : Աթէ
Ժովիալը հըլլար , դոր հայրերնիդ պահել տուեր
էր ինձ , խեղճ մայրերնիդ պիտի ստիպուէր քա-
լելով մինչեւ Սիպիրիա երթալ : Աւերչապէս ան
ձիով , ես ալ առջեւն ինկած , ինչպէս որ հիմա
ձեզ կառաջնորդեմ , թշուառ դեզ մը հասանք ,
ուր երեք ամիս ետքը դուք ծնաք : — Հայրեր-
նիս ի՞նչ եղաւ : — Չէինք գիտեր , վասն զի ան-
հրնար էր իրեն անգամ մ'ալ Ռուսաստան մտնել ,
անհնար էր իրեն նամակ գրել ձեր մօրը , որովհե-
տեւ ուր ըլլալը չէր գիտեր . մայրերնիդ ալ չէր
կրնար երկու զաւակովը փախչիլ : — Ըսել է որ այ-
նուհետեւ բնաւ լուր հասիք իրմէ : — Այո , որդ-
եակներս , մէկ անգամ միայն : — Որո՞ւ ձեռօք :

Տակօպէս վայրկեան մը լռելէ ետեւ նորէն
պատմութիւնը շարունակել սկսաւ տարօրինակ
դէմքով մը :

« Այնպիսի մէկու մը ձեռօք որ ուրիշ մար-
դոց համանիր . . . այո . . . եւ այս խօսքս հաս-
կընալու համար՝ պէտք է որ համառօտիւ կարգէ

գուրս դէպք մը պատմեմ, որ Աթէրլօի պա-
 տերազմին ժամանակ ձեր հօրը պաաահած է :
 Աայսրը հրաման դրկեր էր իրեն՝ թշնամեաց մէկ
 մարտկոցն առնելու, որ մեծ վնաս կուտար մեր
 քանակին : Զօրապետը քանի մ'անյաջող փոր-
 ձերէ ետեւ՝ դրահաւոր հեծելադօրաց գունդի մը
 գլուխը կանցնի, մարտկոցին վրայ կը յարձակի,
 եւ իր սովորու թեանը համեմատ յառաջ կը քալէ
 մինչեւ թնդանօթներուն քով գտնուողները ջար-
 դակոտոր ընելու : Այս կերպով թնդանօթի մը
 բերնին առջեւ կը գտնուի, որուն ծառայող բո-
 լոր դօրականները քիչ մ'առաջ ջարդուած կամ
 վիրաւորուած էին . բայց մէջերնէն մէկը՝ վրան
 մնացած բոլոր ուժն ամփոփելով մէկ ծունկին
 վրայ կելնէ, թնդանօթին կը մօտենայ, եւ ձեռքի
 վառած պատրոյգը վառողին ծակին կը մօտեցընէ
 այն միջոցին՝ որ դօրապետը աասն ոտք հեռու
 թնդանօթին բերնին դիմացը կեցեր էր իր ձեռ-
 վը : »

— Ո՛հ, Ատուանձ իմ, ի՞նչ սարսափելի վը-
 տանգի մէջ է եղեր հայրերնիս : — Երբէք այսպի-
 օի մեծ վտանգ մը կրած չէի, ըսաւ ինձ : Աասն
 գի թնդանօթին կրակ տրուելը տեսնելուն չմնաց
 պարսպուեցաւ . բայց նոյն վայրկենին՝ գեղացիի
 կերպարանքով յաղթահասակ մարդ մը՝ դոր մին-
 չեւ այն ժամանակ հայրերնիդ չէր նշմարած,
 թնդանօթին առջեւը նետուեցաւ . . . »

— Եղնէ խեղճին . . . ի՞նչ սոսկալի մահ :
 — Այո՛, շարունակեց Տակօսէս խոկուն դէմքով

մը , հանդար կտոր պիտի ըլլար . բայց բան մը չեղաւ : — Ի՞նչ կըսես : — Ինչ որ զօրապետն ինձ ըսաւ : « Երբոր թնդանօթ ը պարպուեցաւ , կըսէր ինձ շատ անգամ , սոսկումս չկրնալով զսպել՝ աչքըս գոցեցի որ իմ տեղս զո՛հ եղող խեղճին ջարդուբուրդ ըլլալը չտեսնեմ . . . բայց երբ աչքըս բացի , մուխին մէջ տեսայ որ մարդն այն տեղը հանդարտ կեցած՝ տխուր բայց քաղցր աչօք թնդանօթ աճիգ զինուորին կը նայէր . ան ալ մէկ ծուռկը գետնին վրայ եւ մարմինը դէպ 'ի կրնակին վրայ ինկած՝ սատանան տեսածի պէս զարհուրելով անոր կը նայէր . սակայն պատերազմը շարունակելով՝ անհնար եղաւ ինձ մէկ մ'ալ այն մարդը գտնել » կըսէր հայրերնիդ :

— Բայց , Տակօպէ՛ռ , ի՞նչպէս կրնայ ըլլալ որ այդ մարդը ողջ մնայ : — Ես ալ այդ հարցումըն ըրի զօրապետին , եւ պատասխան տուաւ ինձ թէ ինք ալ չէր կրցեր երբէք մեկնել այս անհաւատալի՛ բայց ստոյգ դէպքը . . . : Կերելի որ մարդուն դէմքն աղէկ տպաւորուած էր ձեր հօրը մտքին մէջ , վասն զի կըսէր թէ երսուն տարեկանի չափ կար , եւ նշմարեր էր որ յօնքերը սեւ ու իրար կցեալ էին , այնպէս որ կարծես թէ մէկ քունքէն միւսը ճակտին վրայ սեւ գիծ մը կը ձեւացընէին : — Այս ըսածս աղէկ մտքերնիդ պահեցէք , որդեակներս , եւ պատճառը հիմակ պիտի ըսեմ ձեզ : — Շատ աղէկ , Տակօպէ՛ռ , չենք մոռնար , ըսին որբերը , որոց զարմանքն երթալով կուեղնար : — Ի՞նչ տարօրինակ շան է եղեր

այդ ճակատը սեւ դժուլ մարդը : — Սակեց աւելին
կայ, մտիկ ըրէք . . . Ինչպէս որ արդէն ըսի, զօ-
րապետը Վաթէրլօի դաշտին վրայ վիրաւորուե-
լով ինկեր՝ եւ մեռեալ կարծուելով հոն թողուեր
էր : Քիչերը պատերազմի դաշտին վրայ պառկած
տեղը, վէրքերուն ցաւէն վրան տենդ գալով, իրեն
այնպէս երեւցեր էր լուսնի լուսով թէ նոյն մար-
դը՝ իր վրայ ծռած՝ քաղցր տխրութեամբ վէրքե-
րուն արիւնը կը ջնջէր եւ զինքը ոգեւորել կը
ջանար . եւ երբ հայրերնիդ՝ ցաւերէն խելքը կո-
րուած՝ անոր խնամքը կը մերժէր ըսելով թէ
այնպիսի պարտութենէ մ'ետեւ ալ չէր կրնար
ապրիլ, այնպէս թուեր է իրեն թէ մարդը կըսէր .
« Պէտք է որ Յասյէն համար ապրես . . . : Եւան ձեր մօրը
անուենն է, զոր հայրերնիդ Վարշաւիա թողուցեր
էր կայսեր քով գացած ժամանակ : — Ի՞նչ դար-
ձանալի բան է այդ, Տակօպէն . . . անկէ ետեւ
հայրերնիս այն մարդը նորէն տեսա՞ւ : — Այո, վասն
դի ան էր որ ձեր խեղճ մօրը լուր բերաւ զօրապե-
տէն : — Ե՞րբ եղեր է այդ . մեք չեմք լսած երբէք
այդ պիսի բան մը : — Ար յիշէք որ՝ ձեր մօրը մեռած
օրուան առտուն պառաւ Ֆէտօրային հետ սօսիի
անտառը գացած էիք : — Այո, պատասխանեց
Ռօզ տրտմութեամբ, ձիակորեակ քաղելու գո-
ցեր էինք, զոր մայրերնիս շատ կը սիրէր : — Խեղճ
մայրիկ, այնչափ քաջառողջ էր, որ բնաւ չէինք
կրնար կարծել թէ, ո՞հ, իրիկուան այնպիսի աղէտ
մը պիտի դար գլուխնուս, յարեց Պլանչ : — Յի-
րաւի որդեակներս, ես ալ այն առտուն պարտի-

գին մէջ աշխատած ժամանակս կերդէի, վասն զի
ձեզի պէս ես ալ տրտում ըլլալու պատճառ մը
չունէի: Երբոր այնպէս երդելով կաշխատէի, ճայն
մը լսեցի որ գաղղիերէն լեզուաւ կը հարցընէր ինձ
թէ Միլոսք ըսուածը զիւզը հոն է: — Ետեւ
դարձայ եւ առջեւ օտարական մարդ մը տեսայ
. . . փոխանակ պատասխան տալու՝ ուշադրու-
թեամբ երեսը նայեցայ, եւ հիացմամբ ետ ետ
քաշուեցայ: — Ինչո՞ւ համար: — Վասն զի բարձ-
րահասակ, դեղնած դէմքով, լայն ճակատով եւ
սեւ գծի պէս իրար կցեալ յօն քերով մարդ մ'էր:
— Սրդեօք երկու անգամ պատերազմներու մէջ
հօրերնու քով գտնուող մարդն էր: — Այո՛, ան
էր: — Բայց, Տակօպէր, ըսաւ Ռօզ մտածելով, այդ
պատերազմներէն 'ի վեր որչափ ժամանակ անցած
է: — Տանեւիկ տարիի չափ: — Այդ ծանօթ
կարծած օտարականդ քանի՞ տարու կար: — Հա-
զիւ երսուն տարեկան: — Ուրեմն ի՞նչպէս կըր-
նաս ըսել թէ տանեւիկ տարի առաջ հօրերնու
հետ պատերազմին մէջ գտնուող անձն էր: — Ի-
րաւունք ունիք, ըսաւ Տակօպէր վայրկեան մը
լռելէ եւ ուսերը վեր վերցընելէ ետեւ, անտարա-
կոյս նմանութենէն խաբուած ըլլալու եմ . . . եւ
սակայն . . . բայց մի եւ նոյն անձն ըլլալու հա-
մար պէտք էր որ ծերանար: — Չհարցուցի՞ր իրեն
թէ ժամանակաւ մեր հօրն օգնութիւն ընողն ի՞նչ
էր: — Այն աստիճան շիտթեցայ որ այդ միտքս չե-
կաւ . . . ասկէց դատ սոյնչափ քիչ ժամանակ կեցաւ
մօտա՛ որ չկրցայ տեղեկութիւն մ'առնուլ: Նորէն

հարցուց ինձ Միլտոք գեղը , եւ ես ալ պատաս-
խանեցի թէ գտնուած տեղը Միլտոք գեղն էր ,
« Բայց , պարոն , ինչէն գիտէք թէ գաղղիացի
եմ , հարցուցի ես ալ անոր : — Պահ մ'առաջ ան-
ցած ժամանակս երդ մը կերդէիք , անկէ հասկը-
ցայ , պատասխանեց . կրնա՞ք ըսել ինձ , ո՞ւր է
Սիմօն զօրապետին կնոջ բնակարանը : — Հոս է ,
պարոն , ըսի » :

Տեսնելով որ իր այցելու թիւնն ինձ զարմանք
կը պատճառէր , քանի մը վայրկեան լռութեամբ
երեսս նայեցաւ . յետոյ ձեռքն ինձ երկնցընելով
ըսաւ .

« Սիմօն զօրապետին մտերիմ բարեկամը
դուք էք : — (Երեւակայեցէք զարմանքս , որդ-
եակք իմ) « Բայց ուրկէ գիտէք , պարոն . . . »
— Շատ անգամ ձեր խօսքն ըրած է ինձ շնորհա-
կալութեամբ : — Ուրեմն զօրապետը տեսած էք :
— Այո , Հնդկաստանի մէջ տեսայ անցեալները :
Ես ալ անոր բարեկամն եմ եւ լուրեր կը բերեմ
կնոջը , որուն համար գիտէի թէ Սիպիր աքսոր-
ւած էր , բայց Թօսոլսք քաղաքը հասնելուս՝ ի-
մանալով որ այս գեղը կը բնակի՝ անկէց ուղղակի
հոս եկայ , եւ կուղեմ հիմա զինքը տեսնել :

— Ա՛հ , բարի ճանապարհորդը մեր հօրը բա-
րեկամն է եղեր , ըսաւ Ռօզ . . . արդէն կը սի-
րեմ զինքը :

— Մտածելով որ մայրերնիդ յանկարծ զինքը
տեսնելով՝ սիրտը կրնար թռնալ ելնել , աղաչեցի
որ քիչ մ'սպասէ , գացի մօրերնուդ իմացուցի ,

եւ հինգ բոպէ ետքը մարդն իրեն ներկայացուցի :
— Ի՞նչպէս մարդ էր այդ ճանապարհորդը ,
Տակօպէս : — Յաղթահասակ , մոյզ դունով մուշ-
տակ մը հագած , դլուխը մուշտակէ խոյր մը դը-
րած , սեւ ու երկայն մազերով մարդ մ'էր : — Գէմ-
քըն ի՞նչպէս էր , գեղեցի՞կ էր : — Այո՛ , որդեակ-
ներս , շատ գեղեցիկ . . . բայց այնչափ տխուր
եւ քաղցր որ սիրտս ճակեցաւ : — Խեղճ մարդ ,
թերեւս մեծ կսկիծ մ'ունէր : — Մայրերնիդ քանի
մը վայրկեան անոր հետ առանձին խօսակցելէ ե-
տեւ՝ դիս կանչեց ու ըսաւ թէ բարի լուրեր առեր
էր զօրապետէն : Տեսայ որ առջեւը թուղթերու
ծրար մը կար , եւ ինքն ալ արտասուք կը թափէր :
Թուղթերը տեսակ մ'օրագրութիւն էին , որ ձեր
հայրն ամեն իրիկուն կը դրէ եղեր ինքզինք միտի-
թարելու համար . վասն զի մօրերնուդ հետ բեր-
նով չկրնալ խօսելուն , անոր ըսելիքը թուղթին
կաւանդէ եղեր : — Այն թուղթերն ո՛ւր են , Տա-
կօպէս : — Հոս պայուսակիս մէջ են իմ պատ-
ւանշանիս եւ մեր քսակին հետ . ծր մը զանոնք
ձեզ պիտի տամ . բայց մէկ քանին մէջէն հանած
ու վրաս առած եմ որ հիմա կարդանք , եւ այս ալ
առանց պատճառի չէ : — Շատ ժամանակ կայ որ
հայրերնիս Հնդկաստան էր : — Ձեր մօրը խօսքէն
այսչափ միայն իմացած եմ որ հայրերնիդ՝ Յու-
նաստան երթալէ եւ թուրքաց դէմ պատերազ-
մելէ ետեւ , վասն զի հզօրներուն դէմ տկարնե-
րը պաշտպանել շատ կը սիրէ , Հնդկաստան դա-
ցեր է . հոն ալ ամենայն զօրութեամբ անդդիա՞

ցւոց ետեւէն ինկեր է՝ մեր գերի բռնուած հայ-
րենակիցները նաւերուն մէջ անխնայ ջարդել-
նուն եւ Ս. Հեղինէ կղզւոյն մէջ ալ կայսրը շար-
ջարելնուն վրէժն առնելու համար : Այս պա-
տերազմը կրկնապէս բարի էր , վասն զի անգ-
ղիացւոց վնաս տալը՝ իրաւունք մը պաշտպա-
նել էր : — Որո՞նք իրաւունքը կը պաշտպանէր
հայրերնիս Հնդկաստանի մէջ : — Հնդկաց խեղճ
իշխաններէն մէկուն , որոց երկիրը կը մտնեն
անգղիացիք եւ վերջապէս նենգութեամբ ու ա-
նիրաւութեամբ կը յափշտակեն : Ար տեսնէք ,
որդեակներս , որ այս ալ տկարին կողմը բռնելով
հզօրին դէմ կռուելու համար էր : Քանի մ'ամսը-
ւան մէջ այնպէս լաւ կրթեց եւ պատերազմի
վարժեցուց այն իշխանին տասներկու կամ տասն
եւհինգ հազար զօրքերը , որ երկու անգամ սաս-
տիկ ջարդ տուին անգղիացւոց , որք չէին յուսար
թէ ձեր հօրը պէս քաջ մարդ մը կար դէմերնին :
Բայց կեցիք , անոր օրագրութենէն քանի մը
թուղթ տամ ձեզ , կարդացէք , եւ իմ պատմա-
ծէս շատ աւելի եւ շատ աղէկ կիմանաք : Ասկէց
զատ՝ այն թուղթերուն մէջ անուն մը պիտի կար-
դաք , զոր միշտ պէտք է յիշէք : — Ո՛հ , այս ի՞նչ
երջանկութիւն է որ մեր հօրը ձեռօք գրուած
թուղթեր պիտի կարդանք , ըսաւ Ռօզ . կարծես
թէ ինք պիտի խօսի եւ մեք պիտի լսենք : — Քո-
վերնիս նստածի պէս պիտի ըլլայ » յաւելցուց
Պլանչ , եւ երկուքը մէկէն ձեռքերնին երկըն-
ցուցին որ Տակօպէտի գրպանէն հանած թուղթե-

բն առնուն , եւ միահաղոյն շարժմամբ երկու քն
ալ իրենց հօրը դիրը համբուրեցին շնորհալի խան-
դադատանօք :

Այդ նամակին վերջը պիտի տեսնէք , որդ-
եակներս , թէ ինչու համար կը դարմանայի ձեր
պահապան հրեշտակին Քարրիէլ կոչուելուն վը-
րայ , ինչպէս որ կըսէք : Կարդացէք , կարդացէք ,
չարեց զօրականը որբերուն հիացեալ դէմքը
տեսնելով . միայն թէ պէտք է գիտնաք որ հայ-
բերնիդ այդ թուղթերը կըրած ժամանակ՝ ա-
տոնք բերող ճանապարհորդը դեռ տեսած չէր :

Ռօզ՝ անկողնին մէջ նստած՝ քաղցր ու սըր-
տաշարժ ձայնիւ թուղթերը կարդալ սկսաւ :

Պլանչ ալ գլուխը քրոջն ուսին վրայ դրած՝
մտադրութեամբ մտիկ կընէր , եւ շրթունքին
թեթեւ շարժումէն կը տեսնուէր թէ ան ալ մը-
տքը կը կարդար :

ԳԼՈՒԽ Ը .

ՄԻՍՕՆ ԶՕՐԱՊԵՏԻՆ ՕՐԱԳՐՈՒԹԵՆԷՆ

ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

Քանակետղ Ավայի լերանց 20 փետր .
1830 .

Թափառայած ու տարադիր կեան-
քըս դիս հիմա Հնդկաստանի խորերը ձգած , ամեն
տնդամ որ թերթ մը կաւելցընեմ օրադրութեանս

Տրայ , դոր թերեւս , ան , յաւիտեան չպիտի կար-
գաս , ամենասիրելի Նւաս , քաղցր եւ միանգա-
մայն դառն պղպոճմ մը կը կրեմ . վասն զի այս
կերպով քեզի հետ խօսած ժամանակս թէպէտ
կը մխիթարուիմ , բայց սրտիս կակիծն աւելի կը
դառնանայ երբոր հետդ կը խօսիմ ու քեզ չեմ
տեսներ :

« Աերջապէս , եթէ այս թերթերն օր մը
ձեռքդ հասնին , քու ազնիւ սիրտդ պիտի բա-
քախէ երբոր կարդաս այն արի երիտասարդին ա-
նուը՝ որուն պարտական եմ այսօր իմ կեանքս ,
եւ դուցէ օր մը քեզ ու զաւակս տեսնելու եր-
ջանկութիւնս ալ անոր պարտական պիտի ըլլամ .
Չաւակնիս ողջ է , այնպէս չէ՝ պէտք է որ այն-
պէս հաւատամ . ապա թէ ոչ , քու վիճակդ նը-
չափի դառն պիտի ըլլար արդեօք այդ դժնդակ
աքսորիդ մէջ . . . Սիրուն հրեշտակս հիմա
տասնեւչորս տարեկան ըլլալու է : Ի՞նչպէս է .
քեզ կը նմանի՞ . քեզի պէս մեծ եւ գեղեցիկ կա-
պոյտ աչքեր ունի՞ , բայց ի՞նչ անխելքութիւն է
ըրածս : Քանի՞ անգամ է որ այս երկար օրագ-
րութեանս մէջ ակամայ այս խենդ հարցմունքը
քեզ կընեմ , որուն չպիտի պատասխանես : Արդ-
եօք տակաւին նըչափ անգամ պիտի ընեմ : Սի-
մոնար մեր զաւակին սովրեցընելու իմ ազատչիս
ձալմայի անուը՝ որպէս զի սիրէ , թէ եւ քիչ մը
բարբարոսական թուի այդ անուը :

« Ձալմա , ըսաւ Ռօզ աչքերը լցուած , իր
ընթերցումն ընդմիջելով : — Ձալմա , կրկնեց

Յլանչ նոյնպէս յուզեալ սրտիւ . ոհ , երբէք Հպի-
տի մոռնանք այդ անուներ : — Եւ իրաւունք ու-
նիք , որդեակներս , վասն զի կերեւի որ դեռա-
հասակ բայց քաջ զօրականի մ'անուն է : Շա-
րունակեցէք , սիրուն Ռօղս : »

« Ասկէ առջի թերթերուս մէջ պատմեցի
քեզ , սիրելի Եւաս , շարունակեց Ռօղ , թէ եր-
կու յաջող պատերազմներ ունեցանք : Մերու-
նի բարեկամիս՝ Հնդիկ իշխանին զօրքերն օր
քան զօր եւրոպական կրթութեամբ մարդուե-
լով՝ սքանչելի կերպիւ գործ տեսան : Անգղիա-
ցւոց լաւ ջարդ մը տալով ստիպեցինք այս դժ-
բաղդ երկրին մէկ մասէն քաշուելու , ուր յար-
ձակեր էին ամեն իրաւունք եւ արդարութիւն
ոտքի տակ առնելով , եւ ուր հիմա ալ տակաւին
անխնայ կը յարձակին եւ աւերմունք կը սփռեն .
վասն զի հոս անգղիացիք ուրիշ կերպով չեն
պատերազմիր , այլ նենգութեամբ , աւարառու-
թեամբ եւ կոտորածով : Այս առաւօտ ապառա-
ժուտ լերանց մէջէ մեծ նեղութեամբ բաւական
ճանքայ քալելէ ետեւ՝ իմացանք մեր յառաջա-
պահներէն թէ անգղիացւոց նոր օգնութիւն ե-
կած ըլլալով՝ մեր վրայ յարձակելու կը պատ-
րաստուին . եւ որովհետեւ քանի մը մղոն միայն
մեզնէ հեռու էին , պատերազմ չընել անհնար էր .
զիս ազատող բարեկամիս հայրը՝ ծերունի Հնդիկ
իշխանը՝ անհամբեր կռուիլ կուզէր : Ժամը երե-
քին մօտ պատերազմն սկսաւ խիօտ կատաղի եւ
արիւնոռուշտ կերպով : Անգղիացիք մեզնէ բազ-

մաթիւ էին , եւ իրենց օգնութեան եկած գումարներն ալ դեռ պատերազմի մտած ու յողնած չէին . այս պատճառաւ մեր զօրքերը վայրկեան մը երկմտիլ ու տկարանալ սկսան . այս տեսնելով մեր պահեաթի հեծելազօրաց խումբին գլուխն անցաց եւ թշնամւոյն վրայ քալեցի : Յերոսնի իշխանը ճակատին կեդրոնն էր , եւ առիւծաբար կը կռուէր : Որդին՝ Ճալմա՝ որ տասնեւութ տարեկան եւ հօրը պէս քաջ էր , քովէս չէր դաուլեր , կռուին ամենէն սաստիկ ժամանակը ճիւղարնուեցաւ , եւ խոռոչի մ'եղերքը գանուելով երկուքս մէկէն անոր մէջ գլորեցանք , եւ այնպէս ճախողաբար ճիւղն ներքեւ մնացի , որ պահ մը կարծեցի թէ ազդրս կոտրեցաւ : »

« Ա՛հ , հայր իմ , ըսաւ Պլանչ , — Բարեբաղդաբար այս անգամ ալ մեծ վնաս մը չպիտի ըլլացիրեն , վասն զի Ճալմա քովն է , յարեց Ռօղ : Կը տեսնես , Տակօպէն , անուընը միաքս պահեր եմ : » Եւ շարունակեց ընթերցումը :

« Անգղիացիք կը կարծէին թէ զիս մեռցնուելնէն ետեւ (կարծիք մը որ զիս կը շողոքօրթէ) Հնդկաց իշխանին բանակը դիւրաւ կրնային ցրուցան ընել : Ասոր համար անգղիական զօրաց պաշտօնակալ մ'եւ հինգ վեց անկանոն զօրականներ՝ վատ եւ արիւնկղակ մարդիկ՝ խոռոչին մէջ գլորիլս տեսնելնուն պէս՝ վազեցին վրաս եկան որ զիս լմնցընեն : Մեր լեռնականները կռուին սաստիկութենէն յափշտակուած , եւ կրակէն ու մուխէն ալ չըջատատեալ ըլլալով՝ ինալս չէին

տեսած : Բայց ճշման մասն դանդաղով տեսաւ ,
 ինձ օգնութեան հասնելու համար խոռոչը նեւա-
 ւեցաւ եւ իր պաղարիւն անվեհերութեամբը
 կեանքս աղատեց : Երկհարուածեան կարճ հրա-
 ցանք լեցուն ըլլալով , մէկը պարպածին պէտ-
 պաշտօնակալը գետինը փռեց , միւսովն ալ ան-
 կանոն զօրականներէն մէկուն թեւը ջախջախեց ,
 որ արդէն տուինի հարուածով մը ձախ ձեռքա-
 ծակեր էր . բայց մի վախնար , սիրելի Սւաս , այս-
 պիսի վէրք մ'ինձ համար բան մ'ըսել չէ , ճան-
 կըռտուք մ'է . . . »

« Ստուանձ իմ , դարձեալ վիրաւորուած . . .
 գոչեց Պլանչ ձեռքերն իրար կցելով եւ քրոջն
 ընթերցումը կտրելով : — Մի վախնաք , ըսաւ
 Տակօպէռ , բան մը չէ , զօրապետին ըսածին պէտ-
 ճանկըռտուք մ'է , վասն զի ժամանակաւ ինքք
 հերձի քրէ կը կոչէր այն վէրքերը՝ որք պատերազ-
 մը շարունակելէ չէին արդելուր զինքը : Սյսպիսի
 բառեր դանելն իրեն միայն յատուկ է : »

Ռօզ աչքը սրբելով նորէն շարունակեց ըն-
 թերցումը :

« Ճշման տեսնելով վիրաւորուած ըլլալս , իր
 ծանր հրացանը լախտի տեղ սկսաւ դործածել եւ
 վրաս յարձակող զօրականները ետ մղեց . բայց
 նոյն միջոցին ուրիշ թշնամի զինուոր մը տեսայ ,
 որ խոռոչին վերի կողմը գտնուած եղեգնե-
 րուն ետեւ պահուրտած՝ իր երկայն հրացանը
 կամաց կամաց խոնարհեցուց , երկու ճիւղի մէջ
 տեղը դրաւ , պատրոյսը փչեց եւ ճշմանի նշանօ

առաւ . պոռալուս չմնաց որ զգուշանայ , արի
 պատանին զարնուեցաւ կուրծքէն եւ երկու քայլ
 ետ երթալով մէկ ծուկին վրայ ինկաւ , բայց
 ինքզինք ամուր բռնելով ջանաց իր մարմնովը
 զիս պատսպարել . . . : Արնաս երեւակայել իմ
 կատաղութիւնս ու յուսահատութիւնս . դժբաղ-
 դաբար՝ ինքզինքս ձիուն տակէն հանելու հա-
 մար ըրած բոլոր ճիգս ՚ի դերեւ կեղնէր զիստիս
 անտանելի ցաւէն . ուստի անզօր եւ անզէն քանի
 մը վայրկեան ներկայ գտնուեցայ այս անհաւասար
 կռուին :

« Ճարմա շատ արիւն կորսնցընելով բազու-
 կը տկարանալ կ'սկսէր : Արդէն անկանոն դօրա-
 կաններէն մէկը՝ ձայնովը միւսները դրդուելով ,
 դօտիէն մեծ եւ ծանր հօտոց մը կը հանէր՝ որ մէկ
 հարուածով գլուխ կը կտրէ , բայց նոյն միջոցին
 մեր լեռնականներէն տասներկու հոգի զիպուա-
 ծով վրայ հասան եւ ճարման ու զիս աղատեցին :
 Քառորդ մ'ետքը կրցայ նորէն ձի նստիլ : Այսօր
 ալ յաղթութիւնը մեզ մնաց , թէ եւ շատ մարդ
 կորսնցուցինք : Աաղը վերջնական կռիւ մ'ու-
 նինք , վասն զի անգղիացիք ետ չքաշուեցան ,
 եւ իրենց բանակին խարոյկներն հոսկէ կը տես-
 նուին . . . : Ահա , սիրելի Սեան , ինչպէս իմ
 կեանքս այս կտրիճ տղուն պարտական եմ , որուն
 վէրքը երջանկաբար վտանգաւոր չէ , վասն զի
 հրացանին գնտակը շեղելով կողերուն քովէն սը-
 կըրդեր անցեր է : »

« Այս քաջ պատանին ալ դօրապետին պէս

իր վերքը ճերմակ կոչած պիտի ըլլայ, ըսաւ Տա-
կօպէս : »

« Հիմա պէտք է որ, սիրելի Յւսա, դննէ
այս պատմութիւնս կարդալով ճանչես այս կրտ-
սիճ ճալման : Մէկ խօսքով կրնամ նկարագրել
այս աղնիւ եւ արի երիտասարդը, որ հազիւ տա-
ւընեւութ տարու կայ : Իր երկրին մէջ սովորու-
թիւն կայ որ երբեմն մականուն կը դնեն : այս
տղան ալ տասնեւհինգ տարու եղած ժամանակ
դինքը Վեհանքն անուանեցին, արդարեւ վեհանքն
սրտով եւ հոգւով : Տարօրինակ բայց սրտաշարժ
սովորութեամբ մ'այս մականունը մինչեւ իր հօրը
կը հասնի, ուստի իր հայրն ալ Վեհանքն հօրը կը
կոչեն, որ աւելի իրաւամբ Սեդե կոչուելու ար-
ժանի է : վասն զի այս ծերունի հնգիկ իշխա-
նը հազուագիւտ տիպար մ'է ասպետական ար-
դարախոհութեան եւ խրոխտ անկախութեան :
Կրնար երկրին ուրիշ խեղճ իշխաններուն պէս
նուաստարար դլուխ ծուլ անդդիացւոց բըռ-
նական լուծին, վաճառել իր տէրութիւնը եւ
սքլիլ զօրութեան առջեւ, բայց յանձն չառաւ :
« Կամ ամբողջ իրաւունքս, կամ ծնած լեռներուս
մէջ փոս մը » այս է իր նշանարանը : Ասիկա ճա-
մարտակութիւնն է, այլ իրաւանց եւ արդարու-
թեան գիտակցութիւն : « Բայց կռուին մէջ պի-
տի ընկճիս, ըսի իրեն : — Բարեկամ, պատաս-
խանեց, եթէ մէկը ամօթալի դորժ մ'ընելու քեզ
ստիպէ մահ սպառնալով, ի՞նչպէս կընես : Այն
օրէն հասկցայ ինչ մարդ ըլլալը, եւ հոգւով մարմ-

նով ինքդինքս նուիրեցի այս նուիրական դատին,
որ է տկարին իրաւունքը պաշտպանել հզօրին
դէմ: Ար տեսնես, սիրելի Նւաս, որ ճարմա ալ
այսպիսի հօր մ'արժանի որդին է. այնպիսի դիւ-
ցազնական քաջութիւն մ'ունի, որ Վէոնիդասի
ժամանակին յոյն երիտասարդաց պէս կուրծքը
բաց կը պատերազմի, մինչդեռ իր հայրենակից
դօրականները՝ որք ուրիշ ժամանակ ուսերնին
թեւերնին եւ կուրծքերնին բաց կը պահեն, պա-
տերազմի ժամանակ հաստ բաճկոն մը կը հագ-
նին: Այս երիտասարդին անխոհեմ դիմադրաւու-
թիւնը Նարոլիի թագաւորը միտքս ձգեց, որուն
վրայ յաճախ խօսեր եմ քեզ, եւ զոր հարիւր ան-
գամ մեր դլուխը տեսած եմ ամենէն վտանգաւոր
յարձակումներու մէջ՝ ձեռքը խարաղանէ մը
դատ ուրիշ դէնք չունենալով . . . : Ծ

« Այս ալ այն մարդոցմէն մէկն է՝ որոց հա-
մար ձեզ խօսած եմ, եւ զորս կայսրը թագաւոր
ընելով կ'զրօսնուր, ըսաւ Տալիօպէս: Բրուսիացի
պաշտօնակալ մը դերի բռնուելով, տեսայ որ
Նարոլիի թագաւորէն կերած խարաղանի հար-
ւածը տակաւին մ'նացեր էր երեսին վրայ կապոյտ
եւ կարմիր: Բրուսիացին հայհոյելով կըսէր թէ
անտանելի նախատինք մ'էր այս իրեն, եւ թէ ա-
ռաւել կը սիրէր սուրի հարուածով մեռնիլ՝ քան թէ
խարաղանին նշանը երեսին վրայ կրել . . . Նրա-
ւունք ունէր մարդը: Այս Նարոլիի թագաւորը
թնդանօթի դէմ քալելէ ուրիշ բան չէր գիտեր.
ուր որ թնդանօթի ձայն լսուէր, կարծես թէ

զինքը յատկապէս հոն կը կանչէին . խակոյն կը
գաղէր կերթար « հոս եմ » ըսելով : Նաբօլիի թա-
ղաւորին վրայ այսչափ խօսք ընելուն պատճառն
այն է որ , սիրելի որդեակներս , անիկա շատ ան-
գամ կըքէր թէ « Ս, յն քառակուսի դունդը՝ որ
Սիմօն դօրապետը կամ ես չկրնանք ցրուել , ան-
հրնար է որ ուրիշը ցրուէ : »

Ռօղ նորէն ընթերցումը շարունակել սկսաւ :

— Յաւօք սրաի դիտեցի որ ճալմա՝ իր պա-
տանեկան հասակին հակառակ՝ շատ անգամ խո-
րունկ սեւամաղձութեան մէջ կիյնար : Քանի
մ'անգամ ալ նշմարեցի որ հայրն ու որդին դար-
մանալի նայուածք մը կուղղէին իրարու : Թէպէտ
երկուքին հետ ալ սերտ մտերմութիւն ունիմ ,
բայց եւ այնպէս իրենց բերնէն անդգուշու-
թեամբ փախած քանի մը բառերու նայելով՝ կը
կարծեմ թէ ընտանեկան ախուր գաղանիք մը կը
պահեն ինձմէ : Տարօրինակ դէպք մը պատահած
է , որուն՝ իրենց բնականապէս աշխոյժ եւ խո-
կուն երեւակայութիւնը գերբնական յատկու-
թիւն մը տուեր է :

« Մնաց որ , սիրելիս , դու գիտես որ այլոց
գիւրահաւանութեանը վրայ ծիծաղելու իրաւուն-
քը կորուսած ենք ես՝ Գաղղիոյ պատե-
րագմէն 'ի վեր , ուր այն կարգէ դուրս դէպքը
պատահեցաւ ինձ , զոր մինչեւ այսօր չեմ կրցած
մեկնել (« Թնդանօթին առջեւը նետուող
մարդուն համար է » ըսաւ Տակօպէտ) , դուն ալ
այն ծաղկահասակ եւ գեղեցիկ կնոջ այցելութե-

նէն 'ի վեր' զոր մայրդ քառսուն տարի առաջ իր
ճօրը առնը տեսած է եղեր, կըսէր: »

Արբերը զարմանալով Տակօպէսին երեսը նա-
յեցան:

» Արդեակներս, ըսաւ ծերունի զօրականը,
ոչ ձեր մայրը, ոչ ալ զօրապետն այդ զարմանալի
այցելութեան խօսքն ըրած չեն ինձ:

Ռօզնորէն սկսաւ ընթերցումը շարունակել
սրտին շարժումն ու հետաքրքրութիւնը հետըզ-
հետէ աւելնալով:

« — Շատ անգամ, սիրելի Յւսա, խիտա կար-
գէ դուրս երեւցած բաները՝ դիտուած, նմանու-
թիւն կամ բնութեան մէկ խաղն են: Հրաշալին
շատ անգամ տեսութեան ցնորք կամ արդէն յա-
փըշտակեալ երեւակայութեան մ'արդասիք ըլ-
լալով, ժամանակ կուգայ որ դերմարդկային կամ
դերբնական երեւցած բանի մը խիտա բնական եւ
մարդկային ըլլալը կը հասկցուի: ասոր համար
չեմ տարակուսիր թէ մեր հրաշք կոչածները վաղ
կամ անագան երկրաւոր լուծում մը պիտի ունե-
նան: »

« Արնայի՞ք, որդեակներս, ըսաւ Տակօպէս,
այն բանը որ առջի բերան հրաշալի կերելի մեզ,
երբոր խորը քննենք, կը տեսնենք որ պարզ
բան մ'է, թէ եւ երկար ժամանակ անհասկա-
նալի կը մնայ: . . . — Արովհեաեւ հայրերն իս-
է ըսողը, պէտք է որ առանց զարմանալու հա-
ւատանք, այնպէս չէ, քոյր իմ: — Ա՛չ, որով-
հետեւ որ մը պիտի հասկցուի: » Տակօպէս վայր-

կեանք մը խորհելէ ետեւ ըսաւ . « Ահա ձեզ կե-
թադրութիւն մը . դուք այնչափ իրարու կը նը-
մանիք , որ եթէ մէկն ամեն օր ձեզ տեսնելու
վարժուած չըլլայ , դիւրաւ իրարու հետ կը շը-
փոթէ , եւ եթէ ձեր երկւորեակ ըլլալն ալ չզիտ-
նայ , մտածեցէ՛ք ինչ աստիճան զարմանքի մէջ
կիցնայ . . . եւ ձեզի պէս անմեղ հրեշտակներ
բու պատճառաւ կերթայ սատանային կը հաւա-
տայ : — Իրաւունք ունիս , Տակօպէ՛ս , ահա այս-
պէս շատ քաներ կը մեկնուին , ինչպէ՛ս որ հայ-
րերնիս ալ կըսէ : »

Ռօզ դարձեալ ընթերցումը շարունակեց .

« Մնաց որ դորովասիրտ Յւսս , պարճանօք
կը մտածեմ թէ ճալմա գաղղիացիի արիւն ունի
երակներուն մէջ . հայրը շատ տարիներ առաջ
աղջիկ մը կնութեան առած էր , որուն ծնողքը
երկար ժամանակէ 'ի վեր ճալա կղզւոյն մէջ Պա-
թալիա քաղաքը բնակեալ գաղղիացի ընտանի-
քէ մը սերեալ է : Ծերունի բարեկամիս այս վի-
ճակն իմ վիճակիս յարմար ըլլալով համակրու-
թիւնս աւելի մեծցաւ վրան , վասն զի քու ըն-
տանիքդ ալ , սիրելի Յւսս , երկար ժամանակէ
'ի վեր օտար երկիր բնակող գաղղիացի ընտանիք
մ'է : Գժբաղդաբար խեղճ իշխանն ասկէց քանի
մը տարի առաջ կորուսեր է իր սիրելի կլնը :

« Այս խօսքերը դրած ժամանակս , ամենա-
սիրելի Յւսս , ձեռքս կը դողայ , վրաս մարելիք
կուգայ , կը խենդենամ . . . սէ , Սասունած իմ ,
սիրաս կը ճմլի ու կը կտրաի . եթէ իմ ալ դը .

չուխս աշտախի աղետ մը դայ այն առեւն
 զաւակս ալ ի՛նչ կըլլայ այդ բարբարոս երկրին
 մէջ՝ առանց քեզի, առանց ինձի . . . : Բայց ոչ,
 ոչ, այս վախս խենդութիւն է սէն, ի՛նչ սոս-
 կալի շարշարանք է եղեր անստուգութիւնը . . .
 ուր ես, ի՛նչ կընես, ի՛նչ կըլլաս ներէ, սի-
 բեյիս, այս սեւ մաածութիւնները՝ որք յաճախ կը
 տիրեն վրաս չարաշուք եւ դժնդակ վայրկեան-
 ներ իսկ երբ այս ախուր մաածութիւնները
 կանցնին, այն ժամանակկըսեմ ինքնիրենս . այն,
 տարագիրութիւն չուառ եմ, բայց գո՛նէ աշխարհիս
 միւս ծայրն երկու սրտեր կան որ ինձ համար կը
 բարախեն, այն է քու սիրտդ, սիրելի Յւառ, եւ
 մեր զաւակինը : Աօղ հաղիւ կրցաւ այս վերջին
 խօսքն աւարտել . քանի մը վայրկենէ՛ ի վեր հեծ-
 կըլաալէն ձայնը կընդհատէր, վասն զի դժբաղ-
 դաբար զօրապետին՝ երկիւղն իրականութիւն գը-
 տած էր . ասկէց դատ ո՞ր սիրտ չէր կրնար շարժիլ
 այսպիսի գորովայնից թղթակցութենէ մը՝ որ ըն-
 տանիքէն բաժնուած զօրական մը պատերազմի
 մ'իրիկուն բանակի խարոյկին լուսովը կը գրէր ի՞նչ
 բաժանման կսկիծը մեղմելու համար, եւ չէր գի-
 տեր թէ յաւիտենական էր այն բաժանումը :

Տարաբանդ զօրապետ դեռ չգիտեր
 դիտուուս եկածը, ըսաւ Տակօպէս վայրկեան մը
 լուռ կենալէ ետեւ . բայց չգիտեր նաեւ որ մէկի
 տեղ երկու զաւակ ունի գո՛նէ այս մխիթա-
 րութիւն մը սխալի ըլլայ իրեն բայց, Ալանչ,
 գունձառ ու շարունակէ ընթերցումը, վասն թրոջդ

սիրտն ելած ըլլալով՝ կը վախճանամ որ շատ կը յող-
նի . . . Սակէց՝ դատ , արդարութիւնը կը պա-
հանջէ որ այս ընթերցման թէ բերկրութիւնն եւ
թէ տրամութիւնը մէջերնիդ բաժնէք : »

Պահչ նամակն սուտ , եւ Ռօզ՝ իր արտաա-
ւաթուրմ աչքը սրբելով իր գեղեցիկ դուխր քը-
րոջն ուսին վրայ դրաւ . ահա ալ այսպէս շարունակ-
կել սկսաւ ընթերցումը :

« Հիմա սուտ ել հանդարտ եմ , սիրելի՛ Յւառ -
պահ մը դրիչը ձեռքէս վար դրի եւ միտքս պա-
տող սեւ գաղտնիարները վանեցի . շարունակենք
մեր խօսակցութիւնը :

« Հնդկաստանի վրայ այսչափ երկարօրէն հե-
տըդ խօսելէ ետեւ՝ քիչ մ'ալ Յերոպիոյ վրայ
խօսիմ : Նրէկ իրիկուն , մեր հաւատարիմ մար-
դոցմէն մէկը՝ մինչեւ մեր յառաջապահ դօրա-
խուսմբերուն մօտ երթալով Գաղղիայէն Աալկա-
թա հասած նամակ մը բերաւ ինձ . վերջապէս
հօրմէս լուր առի եւ սիրտս հանդարտեցաւ : Նա-
մակն անցեալ տարուան օգոստոսին դրուած է .
այարունակութիւնը կարդալով հասկըցայ որ ու-
րիչ քանի մը նամակներ ալ շղրկեր է ինձ , բայց
կամ ձանքան մ'նալով կամ կորսուելով ձեռքս չեն
հասած . վասն զի երկու տարիի մօտ կայ որ գիր
առած հունիմ եւ այս պատճառաւ սաստիկ սրտա-
տանջութեան մէջ ինկած էի : Պատուական հայրս
միշտ մի եւ նոյնն է , տարիքները դիմքը չեն աը-
կարացուցած , բնութիւնն առջի պէս աշխոյժ ,
առողջութիւնն ալ կորովի է , կըսէ ինձ . միշտ

գործաւոր, եւ գործաւորութիւնն իրեն պար-
 ծանք կը համարի. միշտ հաւատարիմ իր հասա-
 րակապետական պարզ եւ անկեղծ գաղափարնե-
 րուն, եւ միշտ յուսալից . . . վասէ զի, կըսէ
 նամակին մէջ, ժամանակը մերձեւ է, եւ այս խօսքին
 ասկը դիժ կը քաշէ . . . Մեր հին բարեկամ Տա-
 կօպէսին ընտանեաց վրայ ալ բարի լուրեր կու-
 տայ ինձ . . . Ճշմարիտ կըսեմ, սիրելի Նւաս,
 ախրութիւնս քիչ մը կը թեթեւնայ երբոր կը մը-
 տածեմ թէ այս առաքինի մարդը քովդ է. վա-
 որն զի լաւ կը ճանչեմ զինքը. դօրականի կարծր
 կեղեւին ներքեւ ոսկիէ սիրտ ունի. անշուշտ քու
 հետդ է աքսորիդ մէջ . . . արդեօք նրչափ կը
 սիրէ մեր դաւակը . . . »

Տակօպէս այս գովեստը լսելուն՝ երկու ե-
 րեք անգամ հաղաց, եւ ծռեցաւ որպէս թէ իր
 թաշկինակն առնելու համար, որ կարծիր ու կա-
 պոյտ քառակուսի գոյներով կտաւ մ'էր եւ ծռն-
 կին վրայ դրեր էր: Քանի մը վայրկեան ծռած մը-
 նալէ ետեւ՝ գլուխը վեր առաւ եւ ընչացքը սըր-
 բեց:

« Նայէ, ի՞նչպէս լաւ կը ճանչէ քեզ հայ-
 րերնիս . . . ի՞նչպէս լաւ գուշակեր է որ մեզ
 շատ կը սիրես, ըսին աղջիկները. — Շատ լաւ,
 որդեակներօ, անոյ՛իր այդ կտորը, եւ նայինք ինչ
 կըսէ դօրապետը իմ Սկոթիքօյ որդեկիս եւ կնոջս
 որդեղիը եղող Վարրիէլին վրայ . . . խեղճ կին,
 երբոր կը մտածեմ թէ ասկէց երէք ամսէն թե-
 քեւս . . . բայց կարդացէք որդեակներս, կար-

դացէք ըսաւ զօրականը սրտին յուղմունքը
զսպել ուղելով :

— Սիրելի Եւսա, կը յուսամ միշտ ակամաց
որ այս թերթերն օր մը ձեռքդ պիտի հասնին, աս-
տոր համար կուղեմ որ Տակօպէսի վերաբերեալ լու-
րերն ալ զանց չընեմ, որպէս զի իւր ընտանեաց
վրայ տեղեկութիւն առնելով մխիթարուի: Հայրս
բարեսիրտ Պ. Հարտիի գործարանին գլուխ ըլ-
լալով կիմացընէ ինձ թէ մեր ծերունի Տակօպէ-
սին որդին Ակսիքօն ալ իր քով առեր է Պ. Հար-
տի, եւ հիմա հօրս կառավարած գործարանին
մէջ կը բանի, եւ ինքը շատ գոհ է անկէ. մեծ եւ
կորովի երիտասարդ մ'է, կըսէ, որ երկաթագոր-
ծի ծանր ուռը գրիչի պէս կը շարժէ ձեռքին մէջ.
հանճարեղ, աշխատասէր եւ դուարթ է, վերջա-
պէս գործարանին ամենէն ընտիր աշխատաւորն
է: Ասոր հետ մէկտեղ, երբոր ցերեկուան ծանր
աշխատանքը լմացընելէ ետեւ իրիկուան տուն
կերթայ իր սիրելի մօրը քով, հայրենասիրական
գեղեցիկ ոտանաւորներ ու երգեր կը շինէ: Եր
բանաստեղծութիւնները վտեմ իմաստներով լի եւ
ազդու են, ամենէն պաղարիւն եւ վախկոտ սիր-
տերը կը վառեն. ուստի գործարանին մէջ բերիչ
երգ չեն երգեր: »

«Մըչափ ուրախ կըլլաս ու կը վառաւորուիս
արդեօք որդւոյդ վրայ, Տակօպէս, ըսաւ Ռօզ
զմայլելով: — Արդարեւ ուրախ եմ որ երգեր կը
չինէ եղեր, բայց զիս առաւել ուրախ ընողը մօրք
վրայ սէր եւ խնամք ունենայն եւ դարբնական

ուսը վարպետութեամբ եւ ուժով դորձածն է :
 Իսկ երգերուն դալով , Ռեւել 7- Բեօֆի եւ Մ-ր-
 Եյեէլի պէս երգեր շինելէ առաջ արդեօք նրչափ
 երկաթ ծեծած է . բայց ուր սովոր է Վարդեօք
 մեր սատանայ Ակոփ քօլն այս երգահանութիւնը .
 անուշա Գարրիէլին հետ դպրոց դացած ժամա-
 նակը , ինչպէս որ հիմա պիտի տեսնէք : »

Երբոր աղջիկները Գարրիէլին անուշը լսե-
 ցին , որ իրենց երեւակայած եւ պահապան հը-
 բեշտակ կոչած մոացածին էակը կը յիշեցընէր ,
 հետաքրքրութիւննին առաւել շարժեցաւ , եւ
 Պլանշ կրկնապատիկ ուշադրութեամբ ընթեր-
 ցումը շարունակեց այսպէս .

« Ակոփ քօլի եղբայրագիրը , որ ինչպէս ըսի՝
 երեսի վրայ ձգուած աղայ մ'էր եւ մեր բարի
 Տակօպէսին կիներ վեհանձնարար քոլն առած էր ,
 թէ եւ Ակոփ քօլին պէս ասնուասիրտ է , կըսէ
 հայրս , բայց բնաւ որութեան կողմանէ բոլորո-
 վին անոր հակառակն է : Արչափի Ակոփ քօլ աշ-
 խոյժ , դուարթ եւ դորձունեայ է , այնչափ Գար-
 րիէլ մեղամաղձոտ եւ խոկուն է . եւ այս հակա-
 բարոյութիւնն իրենց դէմքէն ալ յայտնի է . Ակ-
 ոփ քօլ սեւուկ , մեծ , ուժեղ , դուարթ աղէմ եւ
 աջասիրտ է . Գարրիէլ՝ ընդհակառակն՝ նիհար ,
 խաբատեաշ , աղջկան մը պէս երկչոտ եւ հրեշտակի
 նման քաղցրաղէմ պատանի մ'է . . . »

Որքերը զարման քով իրարու երես նայեցան .
 յետոյ իրենց անմեղ երեսը Տակօպէսին դարձը-
 նելով . « Նսեցի՞ր , Տակօպէս , ըսաւ Ռօզ , հայ-

րերնիս կրսէ թէ քու Գաբրիէլդ խարտեաց է, եւ
հրեշտակի գէմք ունի . . . մերն ալ ճշդիւ այն-
պէս է . . . — Այո՛, այո՛, լսեցի . ասոր համար
էր որ ձեր երազը զիս կը դարմացընէր : — Առեղէի
հասկընալ թէ աչքն ալ կապոյտ է, ըսաւ Ռօղ :
— Այդ մասին, որդեակներս, թէ եւ դօրապետը
բան մ'ըսած չէ, ես կրնամ պատասխանել խարտե-
եացներն ընդհանրապէս կապուտ աչուի կըլլան .
բայց կապուտ կամ սեւ, որն որ ըլլայ, մեր
Գաբրիէլը շատ չափաի համարձակի անոնցմով
գեղեցիկ ազջկանց երեսը նայելու . շարունակե-
ցէք եւ հիմա կը տեսնէք պատճառը : »

Պլանչ նորէն սկսաւ ընթերցումը շարունակա-
կել :

« — Գաբրիէլի գէմքը հրեշտակային քաղց-
րու թիւն մ'ունի . երբոր Ակօի քօլին եւ այն թա-
ղի ուրիշ աղայոց հետ կրօնաւորաց գալրոցը կեր-
թար, անոնցմէ մէկը Գաբրիէլի խելքին եւ բա-
րու թեւերը գմայլելով՝ բարձրատախճան անձի մ'ա-
ղաչեց որ դայն իր պաշտպանութեան ներքեւ
առնելով կը երանոց մը դրաւ : Հիմա երկու տարի
է որ Գաբրիէլ քահանայ եղած է, եւ օտար երկիր
քարոզչութեան երթալու պատրաստուելով՝ քիչ
օրէն Ամերիկա պիտի երթայ . . . »

— Քու Գաբրիէլդ քահանայ է եղեր . . .
ըսաւ Ռօղ Տակօպէոի նայելով : — Մերն ալ հրեշ-
տակ մ'է, յաւելցուց Պլանչ : — Ըսել է թէ ձերի-
նը աստիճան մ'աւելի ունի մերինէն, պատաս-
խանեց Տակօպէո : Հոգ չէ, ամեն մարդու ախոր-

Տակը մէկ չըլլար, եւ ամեն տեղ ամեն փիճակի մէջ բարի մարդիկ կրնան գտնուիլ. բայց աւելի շաւ է եղեր որ սեւ վերարկուն ընտրողը Գաբրիէն է եղեր, վասն զի ես կուզեմ որ Ակռիքօլա թեւերը բայց, ձեռքն ուռ մը եւ մէջքն ալ կաշիէ գողնոց մը կապած տեսնեմ ձեր պապուն նէս, որ Աինեիի գուքս Սիմօն մարաջախաին հայրն է: Այո, Սիմօն զօրապետը կայսեր շնորհիւ գուքս եւ մարաջախա է: Հիմա շարունակեցէք ձեր ընթերցումը: — Շարունակենք, ըսաւ Պլանշ, բայց ախանս որ քանի մը տող միայն մնացած է եւ սկսաւ կարդալ:

« Այսպէս ուրեմն, սիրելի եւ գողարիկ Նւաս, եթէ այս օրագրութիւնս ձեռքդ հասնի, ապահովցու Տակօպէն իր կնոջն եւ սրդւոյն վըրայ՝ որոցմէ բաժնուած է մեր սիրոյն համար: Այսպիսի անձնութիւնս մ'ի՛նչ հատուցում պիտի կրնանք ընել. բայց ես ապահով եմ որ քու բարի եւ ազնիւ սիրտդ անշուշտ կըրցած է դայն մխիթարել . . . »

« Մնաս բարով . . . ահա այսօր ալ անցաւ, ամենասիրելի Նւաս, ուրեմն այսօրուան համար ալ մնաս բարով. վայրկեան մ'ընդ հասնեցի օրագրութիւնս եւ ճարմայի վրանը գացի. տեսայ որ հանդարտ կը քնանայ, հայրն ալ քովը կը հսկէ. նշանացի հասկըցուց ինձ թէ աղէկ է. արի պատանին վտանգն անցուցած է: Նրանի՛ թէ վաղուան կուէն ալ անվնաս դուրս ելնէր . . . Մնաս բարով, գորովասիրտ Նւաս, ահա դիշերը ւը-

ոին եւ հանդարտ է . բանակին խարոյկները քիչ
քիչ մարիլ կ'սկսին . մեր խեղճ լեռնականները ջե-
րեկուան արիւնալից կռուէն յոգնած՝ հիմա կը
հանդատանան , եւ ժամէ ժամ մեր հեռաւոր պահ-
նորդներուն ձայնը կը լսեմ . . . : Ասոնց անսո-
վոր ձայներն ալ զիս կը տխրեցընեն , վասն զի նո-
րէն միտքս կը ձգեն այն բանը՝ որ քեզ նամակ
գրած ժամանակս քիչ մը կը մոռնամ , այսինքն
թէ աշխարհի միւս ծայրն եմ , քեզմէ եւ դաւակէս
բաժնուած : Խեղճ սիրելի էակներ , ի՞նչ է . . .
ի՞նչ պիտի ըլլայ վիճակնիդ . . . : Ա՛հ , դժնէ
կարող ըլլայի ժամանակին ձեռքերնիդ հասցը-
նելու այս միտասլը՝ որ չարաշուք զիպուածով մը
Վարչաւիայէն ելած ժամանակս հետս առած եմ :
Թերեւս կրնաս թոյլտուութիւն ստանալ Գաղղիա
երթալու , կամ դժնէ դաւակդ Տակօպէռին հետ
հոն զրկելու . վասն զի գիտես ինչ ամենակարե-
ւոր բայց ի՞նչ պէտք է այս կսկիծն ալ
միւսներուն վրայ աւելցընել . . . : Գժբաղդա-
բար տարիները կանցնին , պայմանեալ օրը պիտի
գայ , եւ այս վերջին յոյսս ալ՝ որ քեզ համար կը
տածեմ , պիտի կորսուի : Բայց չեմ ուզեր այսօր-
ւան նամակս ալ տխուր մտածութիւններով ա-
ւարտել : Մնաս բարով , ամենասիրելի Նւաս ,
դաւակնիս սրտիդ վրայ սխմէ , եւ աքսորիս խորէն
երկուքիդ ալ զրկած բոլոր համբոյրներովս դայն
ծածկէ :

« Վաղր , պատերազմէն ետեւ : »

Ս, յս սրտաշարժ ընթերցումէն ետեւ բաւա-

կան երկար լռութիւն մը տիրեց : Ռօզին եւ Պր-
լանչին արտառքը կամայ կամայ կը թորէր : Տա-
կօպէս ճակատը ձեռքին կրթնցուցած՝ նոյնպէս
տխրութեամբ գրաւեալ մնացեր էր :

Գուրան ալ հովը կը սաստկանար , անձրեւը
պատուհանին ապակիները կը բաղխէր , եւ պան-
դոկին մէջ խոր լռութիւն մը կը տիրէր

.

Մինչդեռ Միսօն զօրապետին ազջիկներն այն-
պէս սրտառուչ խանդաղատանօք իրենց հօրն օ-
րագրութեան հատուածները կը կարգային ,
գաղանի եւ տարօրինակ տեսարան մը կը տեսնը-
ւէր Մօսօքի փակարանին մէջ :

Գ. ԼՈՒԽ Թ .

Վ Ա Ն Դ Ա Կ Ն Ե Ր Ը

Մօսօք բալատաղիներ էր . այժեամբ մօրթ է
բաճկոնին վրայէն իր գրահը հագներ էր , որ պող-
պատի թելերով հիւսուած էր , կտաւի պէս դիւ-
րաթեք եւ անդամանդի պէս կարծր : Ասկէ դատ-
թեւերը բաղպաններ , սրունքը սոնապաններ եւ
տաքը երկաթ է կոշիկներ անցուցած էր , եւ այս
պաշտպանողական հանդերձանքը ծածկելու հա-
մար վրայէն լայն տափատ մ'եւ լաւ կոճկուած
մեծ մուշտակ մը հագած էր : Չեռքն ալ փայտէ
էրափակալով երկաթ է երկայն ցուպ մ'առած էր :

դոր ճերմկելու աստիճան ասքցուցեր էր : Թէ-
պէտ Մօռօքին ճարպիկու թեամբն ու խատու-
թեամբն իր Ասյէն անուն վաղրը , Յուդա անուն
առիւծը եւ Ման կոչուած յովաղը երկար ժամա-
նակէ 'ի վեր զսպուած էին , սակայն եւ այնպէս
քանի մ'անդամ կատաղու թեամբ ասպատակելով
իրենց ակռաներն ու ճիրաններն անոր վրայ փոր-
ձել ուղեր էին . բայց մուշտակին ներքեւ ծած-
կուած զրահին դէմ ճիրաններնին բժացեր եւ
ակռաներնին ալ երկաթէ բազայաններուն ու սրա-
նապաններուն վրայ վոշրեր էին , մինչդեռ Մօռօ-
քի ատրաշէկ զաւազանին մէկ թեթեւ հարուածն
իրենց մորթը շարաշար կը խանձէր կը դալարէր ,
եւ այրեցածի խորին աղօս մը կը թողուր հոն :
Ուստի գազանները՝ որք լաւ յիշողութիւն ու-
նին , հասկընալով որ իրենց ճիրաններն ու կը-
ղակները 'ի դուր կը փորձէին անխոցելի էակի մը
դէմ , եւ իրենց խածուած քն ալ անօդուտ էր , այն-
չափ վախցան եւ հնազանդութիւննին աւելցու-
ցին , որ հասարակութեան առջեւ ըրած կրթ ու-
թեանց մէջ՝ երբոր Մօռօք ձեռքը փոքրիկ ու
վրան կրակի գունով թուղթ փաթթած ցուպ
մ'առնուր եւ քիչ մը շարժէր , իսկոյն սարսափե-
լով կը սողային ու սաքին տակը կը պատկէին :

Մարդարէն լաւ մը զրահաւորուելէ ետեւ՝ հը-
րաշէկ ցուպը ձեռքն առած ձեզնայարկին դեա-
նադոնէն վար իջեր եւ կառքերուն կայարանը
մտեր էր , ուր դրուած էին իր գազաններուն վան-
դակները : Աայարանը տախտակորմով մը բաժ-

նուած էր ախոռէն , ուր իր ձիերը կեցած էին :

Յովացուցիչ լապտեր մը պայծառ լոյս մը կարծակէր չորս վանդակներուն վրայ , որոց երկու քովը միայն երկաթէ վանդակասիւններ կային իրարմէ բաւական հեռու , եւ մէկ կողմը գրան պէս ծղխնիներու վրայ դառնալով կը բացուէր կը գոցուէր դադաններն հանել գնելու համար Աանդակներուն յատակն ալ չորս երկաթէ փոքրիկ անիւներով երկու առանցքի վրայ առնուած էր , որով ճանապարհորդութեան մասանակ վանդակները գիւրութեամբ կրնային մեծ եւ վրան գոց սայլին քով տարուիլ ու մէջը դրուիլ : Աանդակներէն մէկը դատարկ էր , իսկ միւս երեքին մէջ՝ ինչպէս որ յայտնի է , յովազ մը , վազըր մ'եւ առիւծ մը կային :

Յովազը՝ որ ճավայէն բերուած էր , ստուգիւ Մահ կոչուելու արժանի էր իր ահուելի երեւոյթովը : Գոյնը բոլորովին սեւ էր , եւ ինքը վանդակին մէկ անկիւնը քաշուած կձկտած , եւ մորթին գոյնը մութին հետ խառնուած ըլլալով՝ մարմինը չէր տեսնուեր . այլ միայն երկու անշարժ լոյսեր կերեւէին մութին մէջ , այն էր դադանին երկու փոսիորային դեղին աչքերը , որք գիշերները կը վառէին . որովհետեւ կատուի տեսակէն եզոզ կենդանիները մութին մէջ աւելի յստակ տեսութիւն կուեննան :

Մարդարէն լոխկ մնչիկ ախոռին մէջ մտեր էր : Իր երկայն մուշտակին սեւորակ կարմիր գոյնը՝ իր հաստ դեղին մազերուն եւ երկայն մորու-

քին հետ հակադասակեր մը կը ձեւացընէր • լայ-
տերը բաւական բարձր տեղ մը դրուած ըլլալով
կատարելապէս կը լուսաւորէր այս մարդը, եւ լու-
սոյն պայծառութիւնը՝ ստուերներուն թանձրու-
թեան դէմ ճաճանչելով անոր ոսկրոտ դէմքին
առաւել վայրադ երեւոյթ մը կուտար : Մօռօք
կամացուկ մը վանդակին մօտեցաւ • իր շէկ բրին
բոլորի ճերմակ շրջանակը կարծես թէ լայննա-
լով իր փայլուն ու անթարթ աչքը դադանին
հրացայտ եւ անշարժ աչաց հետ կը մրցէր :

Յովազը միշտ վանդակին ներսի դին կձկտած
կեցեր էր • շատ չանցաւ՝ տիրոջը կախարդիչ նայ-
ւած քն ազդել սկսաւ անոր վրայ : Երկու երեք
անգամ արտեւանունքն ուժնութեամբ գոցեց
եւ բարկութենէն խռնչեց : Բայց շուտ մը նորէն
եւ դրեթէ ակամայ աչքերը բացուելով Մարգա-
րէին աչացը դէմ տնկուած մնացին : Այն ժամա-
նակ դադանին կը որ ականջները՝ իժի գլխու նման
տափակ դանկին փական : Ճակտին մօրթը ցնցը-
ւելով կնճռեցաւ • երկայն մազերով ցռուկը կը ծ-
կեցաւ, եւ երկու անգամ որկորը լռութեամբ
բանալով ահագին ժանիքը ցոյց տուաւ :

Նոյն վայրկենէն կարծես թէ մադնիսական
յարաբերութիւն մը հաստատուեցաւ մարդուն
եւ դադանին աչացը մէջ : Մարգարէն ձեռքի հը-
րաշէկ ցուպը դէպ 'ի վանդակն երկնցընելով
կարճ եւ հրամայական ճայնիւ ըսաւ • «Մահ, հոս
եկո՛ւ »

Յովազը ոտքի վրայ ելաւ, բայց այնպէս ցած .

նալով, որ փորն ու արմուկները դեանին կը քրտ-
ւէին: Արեք ոտք բարձրութիւն եւ գրեթէ հինգ
ոտք երկայնութիւն ունէր այս գաղանը. մէջքը
առածիդ եւ մտտէր, ծունդերուն ետեւի կողմը
կարճ եւ վազող ձիու պէս լայն, լանջքը խորին,
ուսերը խոշոր եւ դուրս ցցուած, թաթերը ջղոտ
եւ հաստ, վերջապէս իր ամեն անդամներէն
կը հասկցուէր թէ այս դարհուրելի գաղանը վեր-
ջին աստիճան ուժեղ դիւրաշարժ եւ ճարպիկ էր:

Մտօք, երկաթէ ցուպը միշտ դէպ'ի վան-
դակն երկնցուցած, քայլ մ'առաջ դնաց եւ յո-
վաղին մօտեցաւ. գաղանն ալ քայլ մ'առաջ ե-
կաւ: Մարդարէն կանդ առաւ: Մահն ալ կանդ
առաւ:

Այս միջոցին Յուդա՝ այն է վազը՝ որուն
Մտօք կրնակը դարձուցած էր, կատաղի կեր-
պով ցատկեց իր վանդակին մէջ՝ կարծես թէ նա-
խանձելով որ իր տէրը յովազին միայն ուշադրու-
թիւն կընէր. խեղդուկ մունչիւն մ'արձակեց, եւ
դլուխը վերցընելով՝ իր ահեղ եռանկիւնի կզակն
ու կորովի լանջքը ցուցուց, ճերմակ բայց աղ-
տոտ, ուր իր շէկ եւ սեւանիշ մորթին պղնձի գոյ-
ները կուգային անյայտ կըլլային. պոչը՝ որ սեւ
օղերով կարմրագոյն մեծ օձի մը կը նմանէր,
մերթ կուշտին կը փակչէր, մերթ ծանր ու ան-
ընդհատ շարժմամբ մը դայն կը բաղխէր. իր
թափանցիկ կանանչ եւ փայլուն աչքերն ալ Մար-
դարէին վրայ անկուած էին:

Այս մարդուն ազդեցութիւնն այնչափ մեծ

էր դադաններուն վրայ, որ Յուդա խկոյն մտն-
ջիւնը դադրեցուց՝ կարծեա թէ ինքն ալ դարհու-
քելով իր յանգդնութենէն: Բայց իր բարձր եւ
խոնչոտ շնչաութիւնը չկրցաւ դապել:

Մօռօք անոր դառնալով քանի մը վայրկեան
ուշադրութեամբ նկատեց: Յովազն իր անբաշխ
նայուած քին ազդեցութենէն ազատելով՝ դար-
ձաւ նորէն մութ ին մէջ կծկանցաւ: Յանկարծ
անիւծ ի վանդակին մէջ ուժգին եւ անախորժ շա-
ռաչիւն մը լսուեցաւ որ մեծ կենդանեաց կարծր
մարմին մը կրծելու ձայնին կը նմանէր: Մօռօք
ուշադրութիւնն այն կողմը դարձունելով վազրը
թողուց եւ քայլ մ'առաջ դնաց դէպ'ի Աայէ'ի
վանդակը: Բայց հոն անիւծ ին անհետեւ թեթեւ դեղ-
նագոյն գաւակը միայն կը տեսնուէր. սրունքնե-
րը տակն առած էր, գլուխը թաւախիտ բաշին
մէջ ծածկուած էր, եւ երկկամանց մկաններուն
ձգտելէն ու ցնցուելէն եւ ողերուն ալ ցցուելէն
դիւրաւ կը դուշակուէր որ բերնովն ու առջեւ ի
թաթերովը բուռն ճիղ մը կը թափէր:

Մարգարէն անհանգստութեամբ վանդակին
մօտեցաւ կասկածելով որ թերեւս Գողթաթ իր
պատուէրին հակառակ ոսկր մը տուեր էր անիւ-
ծին որ կրծէ. այս տարակոյսը լուծելու համար
կարճ եւ ամուր ձայնով մը ըսաւ. «Աայէն, հոս ե-
կո» . բայց անիւծը տեղէն չշարժեցաւ:

«Հոս եկո՛ւ, Աայէն» ըսաւ նորէն Մօռօք ա-
ւելի բարձր ձայնիւ: Անիւծը դարձեալ տեղէն չի
շարժեցաւ եւ ձարձատումը կը շարունակէր:

Այն ժամանակ Մարգարէն ձեռքի տաք ցու-
պը առիւծին յաղղրին դպցընելով « Այսէն , հոս
եկո՞՞ ըսաւ երրորդ անգամ : Հաղիւ թէ առիւծին
դեղին մազերը խանձելով թեթեւ մութս մ'ելաւ ,
կենդանին անհաւատալի ճարպիկութեամբ աւ-
դին դառնալն ու վանդակասիւններուն վրայ
նետուիլը մէկ ըրաւ , ոչ թէ սողալով այլ խրոխ-
տաբար ոտքի վրայ կանգնած՝ ահեղ եւ դայրագին :

Մարգարէն վանդակին անկիւնը կեցած ըլ-
լալով , առիւծն անոր հետ դէմ առ դէմ դալու
համար քովընտի կանգներէր , իր լայն կուշտը
վանդակին երկաթներուն տալով , եւ իր յաղթ
թեւը ծակէն դուրս հանելով մինչեւ արմուկը ,
որուն մկանները Գողիաթին սրունքին մկաննե-
րէն հաստ էին :

« Աար իջիր Այսէն , ըսաւ Մարգարէն բար-
կութեամբ անոր մօտենալով :

Առիւծը չէր ուզեր հնազանդիլ . . . շըր-
թունքը բարկութենէն դուրս դարձած , վարագի
վրիժակներուն պէս լայն երկայն եւ սուր ժանիքը
կը տեսնուէր :

Մոռօք ձեռքի ջերաջերմ ցուպին ծայրը դա-
ղանին շրթանցը քսեց :

Առիւծը՝ կիզման դժնդակ կսկիծին հետ՝ մի-
անգամայն տիրոջմէն անակնկալ սաստմը լսելով
չհամարձակեցաւ գոչել , այլ խոր մռունչ մ'ար-
ձակելով իր յաղթ անդամ մարմնովը վար ինկաւ
եւ ահաբեկ հլութեամբ մը կծկեցաւ :

Մարգարէն լապտերը կախուած տեղէն վար

առնելով ուզեց հասկընալ թէ Վայէնի կրծածն
ինչ էր, եւ տեսաւ որ վանդակին յատակին տախ-
տակն էր, զոր անօթ ութ ենէն բրցուցեր՝ ակռա-
ներովը կը փշրէր :

Քիչ մը ժամանակ խոր լռութիւն տիրեց փա-
կարանին մէջ : Մարդարէն ձեռքերն ետին կցած՝
մէկ վանդակէն միւսը կերթար, անհանգիստ եւ
վարպետ դէմքով մը դադանները կը գիտէր, եւ
կարծես թէ կարեւոր եւ դժուարին դործի մը հա-
մար անոնցմէ որն ընտրելուն վրայ կը վարանէր :
Նրբեմն ալ կառարանին մեծ դրանը քով երթալով
տկանջ կը դնէր, եւ պանդոկին բակին մէջ եղած
անցածը մտիկ կընէր : Յանկարծ այն դուռը բաց-
ւեցաւ եւ Գողիաթ ներս մտաւ ջրաթաթախ :

« Ի՞նչ ըրիր նայինք . . . հարցուց Մարդա-
րէն : — Ըրի, բայց բաւական դժուարութեամբ,
պատասխանեց Գողիաթ . բարեբաղդարաբ դիշե-
րը խիստ մթին է, հովը սաստիկ եւ անձրեւն ա-
ռատ : — Վասկածի դացող եղան : — Ամենեւին
տէր իմ, տուած տեղեկութիւններդ աղէկ էին .
մառանին դուռը դաշտին վրայ կը բացուի ճիշդ
աղջիկներուն պատուհանին տակը : Նրբոր դուք
սուլելով ինձ իմացուցիք թէ ժամանակն է, դուրս
ելայ, հետս տարած յենարանս պատին կրթնցուցի,
եւ վրան ելայ երեք ոտնաչափ բարձրութեամբ .
իմ հասակս ալ վեց ոտնաչափ ըլլալով ինն ոտնա-
չափ բարձրութեան հասայ, արժուկներս պատու-
հանին վրայ կրթնցուցի, մէկ ձեռքովս վանդակա-
փեղկը բռնեցի, միւսով ալ դանակս, եւ պատու-

հանին Երկու ապակիները կտարելու պէս՝ վանդակափեղկն ամենայն դօրու թեամբ հրեցի : — Մի թէ կարծեցին թէ հովն էր ընողը : — Ս.յո՛, այնպէս կարծեցին : Ահա կը տեսնէք որ ձեր կարծածին չափ անբան չեմ եղեր : Գործն այսպէս կատարելէ ետեւ՝ իսկոյն վար իջայ ու յենարանս առնելով մտռանը մտայ : Քիչ մ'ետքը ծերունիին ճայնը լսեցի , եւ աղէկ որ շուտով փախեր էի : — Ս.յո՛, երբոր ես սուլեցի , ծերը նոր մտեր էր ճաշարանը , ուր կը կարծէի թէ երկար պիտի մընար : — Ս.յն մարդը չկրնար երկար ճաշ ընել , ըսաւ հսկան արհամարհուս կերպով : Ապակիները կտարտելէս քանի մը վայրկեան ետքը՝ ծերը պատուհանը բացաւ , եւ իր շունը կանչելով վար ցատկել տուաւ : Ես ալ իսկոյն մտռանին միւս ծայրը փախայ . ապա թէ ոչ՝ այն նշոված կենդանին զիս կը պատառէր դրանն ետեւը : — Ս.յն շունը հիմա ախոռին մէջ փակուած է ծերունիին ճիւղուն հետ . շարունակէ պատմութիւնդ : — Երբոր վանդակափեղկին ու պատուհանին գոցուիլը լըսեցի , նորէն դուրս ելայ մտռանէն եւ յենարանը դնելով դարձեալ վեր ելայ , վանդակափեղկին փակը կամացուկ մը քաշեցի բացի , բայց երկու կտորած ապակիներուն ծակը մուշտակի մը քրդանցներովը գոցուած ըլլալով ներսի խօսակցութիւնը միայն կը լսէի , եւ բան մը չէի տեսներ : Առաջի մուշտակը մէկ կողմ հրեցի եւ տեսայ որ աղջիկներն իրենց անկողնին մէջ նստած էին՝ երեսնին իմ կողմս դարձուցած . ծերն ալ անոնց գլխուն

վերելքնատած եւ կրնակն ինձ դարձուցած էր :
— Մախաղն ուր դրուած էր , տեսար . ինձ պէտք
եղածն ան է : — Այո , պատուհանին մօտ սեղանի
մը վրայ դրուած էր կանգեղին քով , եւ ձեռքս
երկնցընելով կրնայի առնուլ : — Ի՞նչ լսեցիր :
— Որովհետեւ պատուիրեր էիր ինձ որ մախաղէն
դատ ուրիշ բանի ետեւէ չըլլամ , ես ալ միայն
մախաղին վերաբերեալ խօսքերը միտքս պահե-
ցի : Մերն ըսաւ թէ իր թուղթերը , պատուանշա-
նը , ստակն եւ դօրապետի մը նամակները կան ա-
նոր մէջ : — Լաւ . . . յետոյ : — Որովհետեւ դրժ-
ւարին էր ինձ մուշտակը պատուհանին ծակէն
հեռու բռնել , ձեռքէս փախաւ . . . ուղեցի նո-
րէն բռնել . . . բայց ձեռքս աւելի երկնցընել-
ով կերեւի թէ աղջիկներէն մէկը նշմարեց , փա-
սըն դի պատուհանը ցուցընելով պոռաց : — Այ ,
թշուառական , բոլոր աշխատութիւննիս փուճ
ելաւ , գոչեց Մարգարէն՝ բարկութենէն երեսին
գոյնը նետելով : — Համբերեցէք քիչ մը . . .
աշխատութիւննիս փուճ չելաւ : Աղջկան աղա-
ղակը լսելուս պէս՝ յենարանէն վար ցատկեցի եւ
նորէն մառանը փախայ . եւ որովհետեւ շունը հոն
չէր , մառանին դուռը կիսաբաց թողուցի , եւ
տեսայ որ ծերը պատուհանը բանալով կանգեղը
դուրս երկնցուց , չորս կողմը դիտեց , նայեցաւ որ
սանդուղ չկար , եւ պատուհանն ալ շատ բարձր
ըլլալուն՝ հասարակ մարդու մը հասակը չէր կըր-
նար հոն հասնիլ . . . : — Աւրեմն առաջին ան-
գամունս պէս կարծեց թէ հովն էր ընողը . . .

ստուգիւ կարծածիս չափ անյաջողակ չես եղեր :
— Քիչ մ'առաջ դուք ըսիք թէ դայն աղուէս ե-
ղաւ : Երբոր մախաղին , ստրկին եւ թուղթ երուն
ուր ըլլալն իմացայ , մտածեցի որ առ այժմ աւելի
բան մը չէի կրնար ընել . ուստի ետ դարձայ ե-
կայ : — Ա եր ել , եւ նիղականերուս ամենէն երկայ-
նըն ինձ բեր : — Շատ աղէկ , տէր իմ : — Կար-
միր չուխայէ ծածկոցն ալ բեր : — Այո , տէր իմ :
— Գնա : »

Գողիաթ սանդուղէն վեր ելաւ , եւ կէս ճան-
քան հասնելուն՝ կանգ առնելով հարցուց .

« Տէր իմ , չէք ուզեր որ հետս կտոր մ'ալ
միս բերեմ Մահին տալու համար : Գիտցած եղիք ,
որ պատճառը զիս կարծելով ռիս պիտի պահէ ինձ
դէմ . վասն զի բան չմտնար . . . եւ առիթ գըտ-
նելուն պէս . . . — Նիղակն եւ ծածկոցը բեր
ըսի քեզ » կրկնեց Մարգարէն հրամայական ձայ-
նիւ :

Գողիաթ քթին տակէն հայհոյելով այն հրա-
մանը կատարած ժամանակ , Մոռօք գնաց կառա-
րանին մեծ դուռը կէս մը բացաւ , եւ բակին մէջ
նայելով նորէն մտիկ ըրաւ :

« Ահաւասիկ նիղակն ու ծածկոցը , ըսաւ
հսկան սանդուղէն վար իջնելով եւ դանոնք ձեռ-
քը բռնած . ի՞նչ պիտի ընենք հիմա : — Գարձիր
մառանը դնա , պատուհանին քով ել , եւ երբոր
ձերը շտապաւ սենեակէն դուրս ելնէ . . . — Ո՞վ
պիտի դուրս հանէ : — Քու ինչո՞ւ պէտք է , դուրս
պիտի ելնէ : — Ետքը՞ : — Ըսիր թէ կանդեղը

սլատուհանին մօտն էր : — Շատ մօտ . . . սե-
ղանին վրայ մախաղին քովը : — Յերը սենեակէն
դուրս ելնելուն պէս , սլատուհանը հրէ , կանդե-
ղը վար ձգէ , եւ եթէ կարենաս շուտով եւ ճար-
պիկութեամբ մ'նացեալը կառարել , տասն ֆիօ-
րինը քուկդ է . . . Ըսածներս մի'տքդ են . . .
— Այո՛ , այո՛ : — Աղջիկներն այնչափ պիտի դար-
հուրին աղմուկէն ու մութէն , որ վախերնէն ձայն
չպիտի կրնան հանել : — Անհոգ եղիք , դայլն
աղուէս եղաւ , հիմա ալ օձ պիտի ըլլայ : — Բայց
աս ամենը բաւական չէ : — Տակաւին ի՞նչ կայ :
— Այս կառարանին յարկը բարձր չէ . ձեզնայար-
կին լուսամուտը դիւրամատչելի է . . . դիշերն ալ
մթին է . . . փոխանակ դռնէն մտնելու կրնաս . . .
— Լուսամուտէն մտնեմ , այնպէս չէ . . . — Ա-
ռանց ձայնի . . . — Օձի պէս : » Այս ըսելով
հսկան դուրս ելաւ :

Մարդարէն երկար լռութենէ մ'ետեւ , « այո՛
այո՛ , խորհած միջոցներս ապահով են , ըսաւ ինք-
նիրեն . . . պէտք չէր որ վարանէի . . . կոյր եւ
նուսատ գործիք մ'ըլլալով՝ չեմ գիտեր ինձ տըր-
ւած հրամաններուն շարժառիթը . բայց անոնց
հետ զրկուած յանձնարարականներուն եւ հրամա-
յողին բարձր վիճակին նայելով՝ տարակոյս չմ'նար
որ այս բանիս մէջ մեծ շահեր կան . . . այնպիսի
շահեր , որք աշխարհիս ամենէն մեծ եւ բարձր
բաներուն հետ վերաբերութիւն ունեցած ըլլա-
լու են . . . : Բայց այս երկու աղջիկները՝ որք
գրեթէ մութացիկ վիճակի մէջ են , եւ այս խեղճ

զինուորն ի նշապէս կրնան այնպիսի շահեր ներկայացընել . . . : Բայց ի նշ փոյթ է ինձ , յաւելցուց ամենախոնարհ կերպով, ես հրամանակատար ըստուկ մ'եմ . խորհող եւ հրամայող դիւտուն կիցնայ իր ըրածներուն պատասխանը տալ . . . : »

Քիչ մ'ետքը Մարգարէն դուրս ելաւ կառարանէն՝ կարմիր ծածկոցն հետն առնելով , եւ դէս ՚ի Ժօվիալին կեցած փոքրիկ ախոռը դնաց, որուն խարխուլ դուռն հազիւ փակով մը գոցուած էր :

Ռասպա-Ժօա՝ այս օտար մարդը տեսնելուն պէս՝ վրան յարձակեցաւ, բայց իր ակռաները Մարգարէին երկաթէ սոնապաններուն պատահելով շկրցաւ բան մ'ընել . ուստի Մարգարէն՝ շանը խածուածքը բանի տեղ չդնելով՝ Ժօվիալը պախուրցէն բռնեց, բերած կարմիր ծածկոցը դուրսը փաթթեց որպէս զի չկրնայ բան մը տեսնել կամ զգալ , ախոռէն դուրս հանեց եւ իր փակարանէն ներս խօթելով՝ դուռը վրայէն գոցեց :

ՔԼՈՒԹ Ժ .

ԱՆԱԿՆԿԱԼ ԴԵՊԵ

Որբերն իրենց հօրն օրագրութիւնը կարդալէ ետեւ , պահ մը լուռ կենալով երկար ժամանակ անցնելէն՝ դեղնած թերթերը կը նկատէին ախոռի եւ մտայոյզ :

Տակօպէս ալ նոյնպէս մտադրազ՝ իր որդւոյն

եւ կնոջը վրայ կը խորհէր , զորս երկարժամա-
նակեաց բաժանու մէ՛կ տեւել քիչ օրէն տեսնել կը
յուսար :

— Այսպէս քանի մը վայրկեան անցնելէ ե-
տեւ , վերջապէս Տակօպէս լռութիւնը խզելով
թերթերը Պլանչին ձեռքէն առաւ , խնամով ծալ-
լեց դրպանը դրաւ , եւ որբերուն դառնալով . « ձեզ
տեսնեմ որդեակներս , սիրտ առէք , ըսաւ . նա-
յեցէք ի՞նչ քաջ հայր մ'ունիք . այսուհետեւ
զայն ողջագուրելու բերկրանքէն զատ ուրիշ բան
մի խորհիք , եւ միշտ յիշեցէք այն առաքինի
երիտասարդին անունը՝ որուն պարտական էք
այդ բերկրութիւնը . վասն զի , եթէ ան չըլլար ,
ձեր հայրն շնդկաստանի մէջ սպաննուած էր :
— Այն երիտասարդին անունը ճալմա է , յաւիտե-
եան մոռնալիք հունինք , ըսաւ Ռօզ : — Եւ եթէ
մեր պահապան հրեշտակ Գաբրիէլը նորէն գայ »
յաւելցուց Պլանչ , կը խնդրենք իրմէ որ ինչպէս
մեր վրայ՝ նոյնպէս ալ ճալմայի վրայ հսկէ : »
— Շատ աղէկ , զաւկըներս , ըսաւ զօրականը ,
որտի զգացմանց մասին վստահ եմ որ բան մը չէք
մոռնար : Գանք հիմա այն ճանապարհորդին , որ
ձեր դժբաղդ մայրը գտնելու եկեր էր Սիպերիա :
Քիչ մ'առաջ կարդացուած դէպքերէն ամիս մը
ետքը ձեր հայրը տեսեր էր , եւ որովհետեւ նո-
րէն անգղիացւոց դէմ պատերազմի երթալու կը
պատրաստուէր , իր թուղթերն ու միտալն ասոր
յանձներ էր : — Բայց այդ միտալն ի՞նչ բանի
համար պէտք պիտի ըլլայ մեզ , Տակօպէս , եւ

վրան գրոշմուած խօսքերն ի՞նչ նշանակութիւն
ունին, ըսաւ Ռօզ ծոցէն միտալը հանելով: — Կը
նշանակեն թէ 1832 փետրվարի 12ին Փարիզ Սէն
-Պրանսօս փողոցը թիւ 3 տունը պիտի գտնուինք:
— Ի՞նչ քանի համար: — Խեղճ մայրերնիդ այն-
չափ յանկարծ բռնուեցաւ հիւանդութենէն որ
ժամանակ չունեցաւ ինձ ըսելու. այսչափ միայն
գիտեմ որ այս միտալն իր ծնողքէն մնացած է,
եւ հարիւր այսչափ տարիներէ՛ ի վեր մասունքի
պէս կը պահուէր իր ընտանեաց մէջ: — Հօրերնուս
ձեռքն ի՞նչպէս անցեր է: — Աւարչաւիայէն բրո-
նի քշուած ժամանակ շտապով կառքը գրուած
բաներուն հետ ձեր մօրը մէկ փոքրիկ անտուկն
ալ գրուեր է, եւ այս միտալն ալ անոր մէջն է ե-
ղեր: Այն ժամանակէն՝ ի վեր հայրերնիդ մեր ուր
ըլլալը չգիտնալով եւ հաղորդակցութեան միջոց-
ներ չունենալով՝ չէր կրցեր զայն ետ դրկել: — Ը-
տել է որ այս միտալը մեծ կարեւորութիւն ունի
մեզ համար: — Անշուշտ. վասն զի երբոր ճանա-
պարհորդը բերաւ զայն մօրերնուդ տուաւ, մայ-
րերնիդ այն աստիճան ուրախացաւ, որ տասն եւ
հինգ տարիէ՛ ի վեր այն օրուան չափ գոհ եւ ու-
րախ չէի տեսած զինքը: «Ահա հիմա զաւկըներուս
« թշուառ վիճակը թերեւս երջանկութեան պի-
« տի փոխուի » կըսէր ինձ ճանապարհորդին առ-
ջեւ՝ ուրախութենէն աչքը լցուած, եւ կա-
ւելցընէր. « Սիպերիոյ կառավարչէն հրաման
« պիտի խնդրեմ, որ զաւկըներս առնում Վաղղիա
« երթամ . . . » Թերեւս տասնեւ հինգ տարուան

« աքսորն ու ստացուածոցս դրաւումը բաւական
« պատիժ մը համարելով զիս թող կուտան . . . :
« Իսկ եթէ խնդիրս մերժուի, ես հոս կը կենամ,
« եւ դո՛ւնէ աղջիկներս Վաղղիա կը դրկեմ, որուն
« չեմ կարծեր որ արդելք ըլլան : Տակօպէ՛ն, աղ-
« ջիկներս դու կառնուա Փարիզ կը տանիս՝ ան-
« յապաղ ճամբայ ելնելով, վասն զի դժբաղդա-
« քար արդէն շատ ժամանակ կորուսած ենք .
« եւ եթէ յառաջիկայ փետրվարի ԱՅին Փարիզ
« հասած չըլլաս, մեր դատն՝ բաժանումն եւ այդ
« տարժանելի ճանապարհորդութիւնն՝ ՚ի դերեւ
« կելնեն : » — Ի՞նչ կըսես, Տակօպէ՛ն, եթէ որ մը
միայն ուշ մնանք . . . : — Այո, եթէ փոխանակ
ԱՅին հասնելու ԱԿին հասնինք, ամեն բան եղած
լմնցած պիտի գտնենք, կըսէր ձեր մայրը : Մի-
անգամայն Վաղղիա երթալիք մեծ նամակ մը ար-
ւաւ ինձ պատուիրելով որ մեր ճանքուն վրայ ա-
ռաջին քաղաքին թղթատունը ձգեմ, եւ ես ալ
այնպէս ըրի : — Ար յուսամ որ ժամանակին Փա-
րիզ պիտի հասնինք : — Ար յուսամ . բայց թէ որ
առաւել ուժ ունենայիք, իջեւաններէն մէկ քանին
երկու քը մէկ կընէինք . վասն զի եթէ հիմակուան
պէս օրը հինգ փարսախս ճանքայ ընենք, եւ ար-
կած մ'ալ չհանդիպի, շատ շատ փետրվարին ըս-
կիղքները պիտի հասնինք Փարիզ, ուստի լաւ կըլ-
լայ որ աւելի կանուխ հասնելու ջանանք : — Բայց
երբ եւ ո՛ւր պիտի տեսնենք մեր հայրը՝ որ Հընդ-
կաստան կը գտնուի եւ մահուան դատապարտ-
եալ ըլլալով չկրնար Վաղղիա ոտք կոխել :

— Խեղճ տղայք, ըսածնիդ ճշմարիտ է, բայց սրչափ
բաներ կան որ դուք չէք գիտեր: Արքոր ճանա-
պարհորդը Հնդկաստանէն մեկներ էր, զօրապետը
չէր կրնար Գաղղիա դառնալ, բայց հիմա կրնայ:
— Ինչո՞ւ համար կրնայ: — Անոր համար որ զին-
քը աքսորող Պուրպոններն անցեալ տարի վաճառ-
ւեցան Գաղղիայէն. այս լուրը հիմա հասած է
Հնդկաստան, եւ անտարակոյս հայրերնիդ ալ
պիտի գայ ձեզ փարիզ սպասէ, յուսալով որ դուք
եւ մայրերնիդ յառաջիկայ փետրվար 13 ին հոն
պիտի գանուիք: — Ա՛հ, հիմա հասկըցայ, ուրեմն
կրնանք յուսալ որ զինքը պիտի տեսնենք, ըսաւ
Ռօզ հառաչելով: — Գիտես արդեօք, Տակօպէս,
ի՞նչ էր այն ճանապարհորդին անունը: — Ոչ, դա-
ւակներս, բայց կուզէ Պետրոս ըլլայ, կուզէ Յա-
կոբ, ազնուասիրտ մարդ մ'էր: Մեկնելու ժամա-
նակը՝ մայրերնիդ արտասուելից աչօքիք շնորհա-
կալու թիւնը յայանեց անոր, որ այնչափ անձնուի-
րու թիւն ու մարդասիրու թիւն ցոյց տուեր էր զօ-
րապետին, իրեն եւ դաւակաց: Այն ժամանակ
ճանապարհորդը ձեր մօրը ձեռքն իր ձեռքին
մէջ սեղմելով ըսաւ այնպիսի քաղցր ձայնով մը՝
որ խմ սիրտս անգամ չարժեց. « Ինչո՞ւ համար ինձ-
մէջ շնորհակալ կըլլաս. մի՞թէ չըսաւ Սերեյե՛ + Ղի՛-
եան: » — Ա՞յ ըսեր է այդ խօսքը, Տակօպէս, եւ
որո՞ւ համար ըսել կուզէր ճանապարհորդը: — Չեմ
գիտեր. բայց այնպիսի կերպով մ'ըսաւ Սերեյե՛ +
Ղի՛եան խօսքը որ սրտիս դպաւ: — Սերեյե՛ + Ղի՛եան
կրկնեց Ռօզ խորհելով: — Ի՞նչ աղւոր խօսք է,

յաւելցուց Պլանչ : Ո՞ւր կերթար այդ ճանապարհորդը : — Հեռուն , խիստ հեռու , դէպ'ի Հիւսիս , ըսաւ ձեր մօրը : Մայրերնիդ անոր հեռանալը տեսնելով . « Տակօպէն , կըսէր ինձ , այս մարդուն անուշ եւ արտում խօսուած քն այնչափ սիրտըս շարժեց որ արտում քս չկրցի բռնել : Հետս խօսած ժամանակ առաւել բարութիւն մը կըզայտարարեմ քեզ , էրկանս ու դաւակայս վրայ աւելիս սէր կ'ամանայի , եւ սակայն անոր դէմ քը նկատողը կըսէր թէ երբեք չիմուած է երբեք լոյս չիտ :

« Երբոր ճանապարհորդը դնաց , մայրերնիդ ու ես դրան արջեւը կանդնած ետեւէն նայեցանք մինչեւ որ բոլորովին աներևոյթ եղաւ : Գլուխը կախած կերթար՝ ծանր հանդարտ եւ անյողողող քալուած քով . կարծես թէ իր քայլերը կը համբէր . ասկէց դատ կոխած տեղերն ալ բան մը նշմարեցի : — Ի՞նչ նշմարեցի , Տակօպէն : — Գիտէ՞ք որ մեր տանը ճանրան միշտ խոնաւ էր փոքրիկ աղբիւրին յորդելուն պատճառաւ : — Այո՛ , դիտենք : — Ճանապարհորդին օտքին նըշանները ցեխին վրայ մնացեր էր , եւ տեսայ որ կոշիկին տակը խաչածեւ շարուած բեւեռներ կային : — Ի՞նչպէս խաչածեւ : — Կեցիք հասկըցընեմ ձեզ , ըսաւ Տակօպէն ետեւէն անդամ իր մատն անկողնին ծածկոցին վրայ դնելով . ահա այսպէս շարուած էին բեւեռներն անոր կոշիկին տակը , եւ ասոր խաչածեւ կըսեն :



— Ի՞նչ կրնայ նշանակել այդ , Տակօպէն :

— Գիպուած է թերեւս . . . այն . . . գիպուած . . .
եւ սակայն որչափ որ չեմ ուզեր հաւատալ, ճա-
նապարհորդին այն խաչածեւ հեաքը տխուր ազ-
դեցութիւն մ'ըրաւ վրաս. վասն զի հազիւ մար-
դը գացեր էր, աղետ աղետի վրայ հասան զլուխ-
նուս : — Սւնդ, մայրերնիս մեռաւ, այնպէս չէ :
— Ս. յն, բայց անկէց առաջ ուրիշ վիշտ մը պա-
տահեցաւ . . . : Գուք զեռ չէիք եկած, մայ-
րերնիդ աղերսագիր մը կը դրէր Սիպերիոյ կառա-
վարչին որ հրաման տայ իրեն Գաղղիա երթալու.
կամ ձեզ հոն դրկելու. յանկարծ ձեռ մը տանա-
ձայն կը լսեմ, եւ կը նայիմ որ Սիպերիոյ կառա-
վարչին սուրհանդակն էր : Հրաման կը բերէր մեզ
որ տեղերնիս փոխենք : Նրեք օրէն ճանրայ պի-
տի ելնէինք ուրիշ դատապարտեալներու հետ եւ
չորս հարիւր փարօախ հեռու անդ մը պիտի եր-
թայինք գէպ 'ի հիւսիս : Ահա այսպէս տասնեւ
հինգ տարի աքսորէ ետեւ՝ անդ թութիւնն ու
հալածանքը կը սաստկանար ձեր մօրը գէմ . . . :
— Նւ ինչո՞ւ այդպէս կը շարչարէին զինքը :
— Աարծես թէ շար ոգի մ'անօր ետեւէն ինկեր էր,
վասն զի քանի մ'օր ետքը ճանապարհորդը չպի-
տի կրնար մեզ Սիլոսք դանել, կամ եթէ դանել
լու ըլլար, այնչափ հեռու էր, որ բերած միտայն
ու թութերն անօգուտ պիտի ըլլային, որովհե-
տեւ անմիջապէս ճանրայ ելնելով հազիւ թէ ժա-
մանակին պիտի կրնանք Փարիզ հասնիլ : « Եթէ
« մէկը յատուկ շահ մ'ունենար զիս կամ դաւակ-
« ներս Գաղղիա երթալէ արդիւելու, ուրիշ մի-

« Չոց չէր դորձածեր, կըսէր մայրերնիդ, վասն
« զի մեզ հիմա չորս հարիւր փարօսախ աւելի հե-
« առ վտարելը՝ Քաղղիա երթալնիս անհնար ընել
« է, որուն ժամանակը որոշուած է: » Այս մը-
տածութիւնը զինքը կը յուսահատեցընէր — Թե-
րեւս այդ անակնկալ վիշտը պատճառ եղաւ իր
յանկարծական հիւանդութեանը: — Աւանդ, նչ,
որդեակներս, զինքը մեռցընողն այն դժոխային
քօլէռան էր, որուն ուրկէ գալը մարդ չգիտեր,
վասն զի ան ալ ճանապարհորդութիւն կընէ, եւ
կայծակի պէս մարդը կը զարնէ: Ճանապար-
հորդին երթալէն երեք ժամ ետքը, երբոր
դուք ուրախ դուարթ անտառէն դարձաք եկաք՝
ձաղկանց խոշոր փունջեր բերելով ձեր մօրը, նա
արդէն հոգիի վրայ էր, բոլորովին այլակերպալու-
Քօլէռան երեւան ելեր էր գեղին մէջ, եւ մինչեւ
իրիկուն հինգ հոգի մեռեր էին: Մայրերնիդ հա-
զիւ ժամանակ ունեցաւ միտալը պարանոցդ ան-
ցունելու, սիրելի Ռօզս, ձեզ երկուքդ ինձ յանձ-
նելու, եւ աղաչելու որ շուտով ճանբայլելնենք:
Մայրերնիդ մեռնելէն ետեւ անոր աքսորին հրա-
մանը չէր կրնար ձեզ դպչիլ. ուստի կառավարիչը
թոյլ տուաւ ինձ որ ձեր մօրը վերջին կամաց հա-
մեմատ ձեզ առնուի՝ Քաղղիա տանիմ . . . »

Զօրականը չկրցաւ խօսքը լսնցընել, եւ ձեռ-
քը աչքերուն վրայ դրաւ. որքերն ալ հեծելով ի-
րարու փաթթուեցան:

Պահ մը կսկծալից լռութիւնէ ետեւ, Տակօպէռ
նորէն խօսքը շարունակել սկսաւ: « Ռ՛հ, ըսաւ

պարծանօք , այն ժամանակ դուք ալ դօրապի-
տին քաջազուն որդիքն ըլլալնիդ ցոյց տուիք . . .
Առանց վտանգէն վախնալու՝ մինչեւ վերջը մօ-
րերնուդ քով կեցաք , եւ անհնար եղաւ ձեզ
բաժնել անոր անկողնին քովէն : Դուք գոցեցիք
անոր աչքերը , գիշերն 'ի բուն հսկեցիք վրան ,
եւ մինչեւ որ գերեզմանին վրայ վայտէ փոքրիկ
խաչ մը անկուած չտեսաք՝ ճանբայ ելնել չու-
ղեցիք : »

Տակօպէս յանկարծ կտրեց իր խօսքը :

Տարօրինակ խխնջիւն մը լսեց կառաղի մը-
ռընչիւններու հետ . ցատկեց ոտքի վրայ ելաւ
այլայլելով . « Ա՛հ , գոչեց , Ժօվիալին ձայնն է ,
ի՞նչ կընեն արդեօք իմ ձիուս » եւ դուռը բանա-
լով սանդուղէն վար վազեց :

Նրկու քոյրերը սարսափելով իրարու փաթ-
թուեցան , եւ չկրցան տեսնել որ կոտորած ապա-
կիէն ձեռք մը ներս մտաւ , պատուհանին երկա-
թը վեր առաւ , փեղկերն ուժով մը հրեց եւ կան-
դեղը կործանեց , որ դօրականին մախաղին հետ
փոքրիկ սեղանի մը վրայ դրուած էր պատուհա-
նին առջեւ :



ԳԼՈՒԽ ԺԱ.

ԺՕՎԻԱԼ ԵՒ ՄԱՀ

Մտօք՝ ժօլիախն իր փակարանը տանելէ ետեւ՝ ծածկոցը գլխէն հանուց :

Անօթի դաղանները դայն տեսնելուն պէս, իրենց գառադղին վանդակասիւներուն վրայ նետուեցան : Իսկ ձին ապշած, պարանոցը տնկած, աչքերն անշարժ, բոլոր մարմնովը կը դողար : Կարծես թէ կեցած տեղը գամուած մնացեր էր : Յանկարծ պաղ քրտինք մը հոսել, սկսաւ խեղճ կենդանիին կողերէն :

Առիւծն ու վագրը դարհուրելի մռնչմամբ կը ցատկառէին իրենց գառադղերուն մէջ : Յովազը չէր մռնչեր, բայց անոր անձայն կատաղութիւնն առաւել սարսափելի էր : Գառադղին խորէն վանդակասիւներուն վրայ կը նետուէր : յետոյ միշտ լուռ եւ միշտ կատաղի, սողալով գառադղին ծայրը կերթար, եւ նորէն յախուռն եւ կոյր մոլեղնութեամբ վանդակասիւներուն վրայ նետուելով կարծես թէ դանոնք խորտակելու փորձ կը փորձէր՝ առանց իր գլուխը ջախջախելէ վախնալու : Այսպէս երեք անգամ սոսկալի լուրթեամբ ցատկեր էր, երբ ձին վախէն խելքը կորսնցընելով երկար խիսնջիւններ սկսաւ արձակել, եւ շուտաւ թափաքով ի դուռը վազեց՝ ուրկից զինքը ներս խօթեր էին : Բայց դոյզանելով դայն, դլուխը

խոնարհեցուց , ծունդերը քիչ մը ծուց , եւ քի-
թովը գետնին ու դռնափեղկին մէջ տեղը եղած
բաց միջոցը շօշափեց՝ որպէս թէ դուրսի օդը շըն-
չելու համար . յետոյ բալտրովին շուարելով սկը-
տաւ քաւելի ու ժգին խխնջել եւ առջեւի ոտքերը
գետինը զարնել :

Երբ յովազը նորէն ցատկելու կը պատրաս-
տուէր , Մօռօք գառադղին մօտեցաւ , եւ նիզա-
կովը վանդակասիւներուն նիզը հրելով լամբէն
դուրս հանեց , եւ ինքը վազեց իր ձեղնայարկին
աանդուղէն վեր ելաւ մինչեւ կէսը :

Այն ժամանակ վագրին ու առիւծին մօնջիւ-
նը ձիուն վրնջմանը հետ միանալով բոլոր պան-
դոկը թնտացուց : Յովազը նորէն կատաղաբար
նետուեցաւ վանդակասիւներուն վրայ , եւ այս
անգամ նիզը բացուած ըլլալուն՝ վանդակին
դուռը տեղէն ելաւ կառարանին մէջ տեղն ինկաւ :
Լապտերին լոյսը կը շողար գազանին խայտաբը-
ղէտ ու՝ սեւափայլ մորթին վրայ : Պահ մ'անշարժ
կեցաւ կծկած եւ դլուխը գետնին վրայ երկնցու-
ցած՝ որպէս թէ ընելիք սատուին հեռաւորու-
թիւնը հաշուելու համար . յետոյ յանկարծ ձիուն
վրայ յարձակեցաւ : Ժօվիալ գազանին վանդա-
կէն դուրս ելնելը տեսնելուն , ինքզինք գէպ ՚ի
դուռը նետեց որ դուրսէն ներս կը բացուէր , եւ
բոլոր ուժովը զայն հրեց , որպէս զի կործանի :
Երբոր Մահը վրան յարձակեցաւ , Ժօվիալ իր ե-
տեւի երկու ոտքերուն վրայ ելաւ կանգնեցաւ .
բայց գազանը կայծակի արագութեամբ անոր

պարանոցը յափշտակելով կախուեցաւ եւ առջեւ
ւի թաթերուն սուր մագիղներն անոր կուրծքը
խոթեց : Խեղճ ձիուն ունական երակը բացուե-
լով յովաղին ժանիքին տակէն կարմիր արիւնը
ցայտել սկսաւ : Իսկ գազանը ետեւի ոտքերուն
վրայ կրթնելով իր զոհը դրանը մէջ սեղմեց եւ իր
սուր ճիրաններովն անոր կողը ճղքեց բացաւ :
Ողորմելի կենդանիին ողջ միտը կը դողդողար ,
եւ իր հեղձամղձուկ խխնջիւնը սուկում կը պատ-
ճառէր :

Յանկարծ հետեւեալ խօսքերը լսուեցան :

« Ժօվիան , մի վախնար , ահա եկայ , սիրտ
ան :

Այս խօսքերն ըսողը Տակօպէս էր , որ յու-
սահատ ճգամբ կաշխատէր դուռը բանալու , ո-
րուն ետեւ այս արիւնոռնչտ անցքը կանցնէր :

« Ժօվիան , մի վախնար , ես հոս եմ » կրկնեց
զօրականը եւ օգնութեան կանչեց . . . : Դժբաղդ
կենդանին այս բարեկամական եւ ծանօթ ձայնը
լսելուն , թէպէտ իր վերջին կէտը հասած էր ,
բայց եւ այնպէս ջանաց գլուխն այն կողմը դար-
ձունել՝ ուրկից տիրոջը ձայնը կուգար , ողբադին
խխնջմամբ մը պատասխանեց , եւ յովաղին ուժին
ներքեւ ընկճելով ինկաւ նախ ծունկին եւ յետոյ
կողին վրայ , այնպէս որ ուսն ու քամակը դրան
առջեւը դալով բացուելուն արդելք կը Աային :

Այն ժամանակ ամեն բան լմնցաւ :

Գազանը ձիուն վրայ նստաւ , առջեւի ու ե-
տեւի թաթերովը սեղմեց եւ իր արիւնաթաթաւ

ցւուկն անոր կողին մէջ խոթեց՝ առանց ուշ դը-
նելու քանի մը տկար կիցերու՝ դոր խեղճ կեն-
դանին վերջին շուշը փշած ժամանակ արձա-
կեց :

« Օղնութեան հասէք . . . օղնութեան հա-
սէք ձիուս » կը պոռար Տակօպէս 'ի դուր դրան
կղպանքը կոտրելու աշխատելով . յետոյ կատա-
ղարար աւելցուց . *ան , զէնք մ'ալ չկայ . . .*
— Զգոյշ կեցիր , պոռաց Մօսօք ձեզնայարկին
լուսամուտէն՝ որ բակին վրայ կը նայէր . մի աշ-
խատիր ներս մտնելու , կեանքդ վտանգի մէջ կը
ձգես , վասն զի յովաղս կատղեր է . . . — Բայց
իմ ձիւս , իմ ձիւս , գոչեց Տակօպէս կակժագին
ձայնիւ . — Քու ձիդ գիշերանց ախոռէն դուրս
ելեր ու կառարանին դուռը հրելով ներս մտեր է .
յովաղս ալ դայն տեսնելով՝ իր վանդակը խորտա-
կեր ու վրան յարձակեր է . . . եթէ աղետ մը
պատահի , պատասխանատուն դու ես , յարեց
Մօսօք սպառնալից դէմքով , վասն զի դադանը
վերստին իր վանդակը դնելու համար մեծ վտան-
գի մէջ պիտի ձգեմ ինքզինքս : — Բայց իմ ձիւս
. . . աղատեցէք իմ ձիւս , կաղաչեմ , գոչեց Տա-
կօպէս յուսահատեալ :

Մարգարէն լուսամուտէն ներս քաշուելով
աներեւոյթ եղաւ :

Գաղանաց գոչիւնէն եւ Տակօպէսի աղաղա-
կէն Յօքօն-Սլանի պանդոկին մէջ դանուած բո-
լոր մարդիկն արթնցան , եւ առդիէն անդիէն պա-
տուհանները բացուելով ճրագներ դուրս հան-

ւեցան : Շատ չանցաւ պանդոկին սպասաւորները
ալ բակը դիմեցին լապտերներով , Տակօպէտը
չըջապատեցին եւ եղելութիւնը իմանալ ուղեցին :

« Իմ ձիս հոս ներսն է , եւ այս թշուառակա-
նին դադաններէն մէկը վանդակէն փախեր հոս
եկեր է , պօռաց զօրականը՝ դուռը կտարելու միշտ
աշխատելով :

Պանդոկին մարդիկը՝ որ արդէն զարհուրե-
րէին դադանաց մռնչիւնէն , այս լսելնուն պէս՝
ձգեցին փախան եւ պանդոկապետին իմաց տա-
լու վաղեցին :

Գիւրին է երեւակայել զօրականին տազնա-
պը , որ անհամբերութեամբ դրանը բացուելուն
կ'սպասէր : Երեսին դոյնը նետած , հեւալով , ա-
կանջը դրան փականքին դրած մտիկ կընէր . . . »

Քիչ քիչ դադանաց դռնչիւնները դադրեցան ,
եւ միայն բարակ մռնչիւն մը կը լսուէր Մարդա-
րէին հետեւեալ խիստ եւ հակիրճ խօսքերուն
հետ . « Հոս , եկո , Մահ , հոս : »

Գիշերը վերջին աստիճան մութ ըլլալով ,
Տակօպէտ չկրցաւ տեսնել Գողիաթը , որ կղմըն-
տըրով ծած կեալ յարկին վրայէն զդուշութեամբ
սողալով ձեղնայարկին լուսամուտէն ներս կը
մտնէր :

Քիչ մ'ետքը բակին դուռը նորէն բացուե-
ցաւ , եւ պանդոկապետը ձեռքը կարճ հրացան
մ'առած՝ զդուշութեամբ դէպ 'ի կառարանին
դուռը կուգար քանի մը մարդոց հետ՝ որք երեք-
ժանիներով ու ցուպերով զինեալ էին :

« Ի՞նչ կայ, ըսաւ Տակօպէսի մօտենալով, այս ի՞նչ աղմուկ է պանդոկիս մէջ. սատանան տանի գաղան պահողներն ալ քեզի պէս անհողներն ալ՝ որ ձիու մը պախուրցը մտուրին կապել չեն գիտեր . . . : Եթէ անասունդ վիրաւորեալ է, յանցանքը քուկդ է, թող աւելի ուշադրութեամբ հող տանէիր : »

Զօրականը փոխանակ այս յանդիմանութեան պատասխանելու՝ կառարանին մէջ անցածը մտիկ կընէր միշտ, եւ ձեռքովը նշան ըրաւ որ լռեն :

Յանկարծ կատաղի մօնչիւն մ'ալ լսուեցաւ, եւ ետեւէն Մարգարէին գոչիւնը՝ յովազին ոռնալուն հետ :

Պանդոկապետը զարհուրելով « անտարակոյս մեծ աղետի մը պատճառ եղար, ըսաւ զօրականին . լսեցի՞ր . ի՞նչ ձայն էր այն . . . կերելի թէ Մարգարէն չարաչար վիրաւորուեցաւ : »

Տակօպէս պանդոկապետին պատասխան տալու վրայ էր, դուռը բացուեցաւ, եւ Գողիաթ սեմին վրայ երեւնալով ըսաւ . « Արնաք ներս մտնել, վախնալու բան չմ'նայ : »

Փակարանին ներսը սոսկալի տեսարան մը կը ներկայացընէր :

Մարգարէն՝ դեղնած, հազիւ կրնալով սրբտին յուղմունքը ծածկել երեսանց ցոյց տուած հանդարտութեամբ, յովազին դառապղէն քանի մը քայլաչափ հեռու ծունդի վրայ եկեր էր մտածական գիրքի մէջ, եւ շրթանցը երերալէն կը գուշակուէր որ աղօթք կընէր : Երբոր պան-

դոկայեան ու անոր մարդիկը տեսաւ, ոտքի վը-
րայ ելաւ եւ բարձր ձայնիւ ըսաւ. « Գոհանամ
դքէն, Աստուած իմ, որ ինձ տուած զօրու-
թեամբդ այս անգամ ալ կրցայ յաղթել: » Յետոյ
թեւերը խաչածեւ կուրծքին վրայ դնելով, կու-
կոզավիզ խրոխտութեամբ մը կարծես թէ կը
զուարճանար յովազին դէմ ըրած յաղթութեանը
վրայ, որն որ իր գառադղին մէկ անկիւնը տա-
րածուած տակաւին կոռնար ողբադին ձայնիւ:

Այս տեսարանին ներկայ գտնուողները չգիտ-
նալով որ Մոռօք կատարեալ զրահ մ'ունէր իր
մուշտակին ներքեւ, եւ յովազին հեծութիւննե-
րն անկէ վախնալուն տալով՝ ապշեցան ու սքան-
չացան այս մարդուն աներկիւղութեանն ու գրե-
թէ գերբնական զօրութեանը վրայ:

Մոռօքին ետեւը՝ քանի մը քայլ հեռու Գո-
ղիաթ ոտքի վրայ կեցեր էր՝ հացիէ նիզակին
կրթնած: Աերջապէս գառադղէն քիչ մը հեռու
արեան լճի մը մէջ Ժօվիալի գիակը փռուեր էր:
Տակօպէռ իր սիրելի ձիուն արիւնասթաթաւ եւ
փեռեկեալ մարմինը տեսնելուն՝ ոտքը ձեռքը
պաղեցաւ անշարժ մնաց վշտահար դէմքով. յե-
տոյ ծունդի վրայ գալով Ժօվիալին գլուխը վեր
վերցուց, եւ անոր նուազեալ դեղնած եւ կէս
դոցուած աչքերը տեսնելով, որք երբեմն այն-
չափ զուարթ եւ ուշիմ էին երբոր իր սիրելի տիրո-
ջը կը նայէր, կսկծագին հառաչանք մ'արձակեց:

Տակօպէռ մոռցեր էր իր բարկութիւնը, մոռ-
ցեր էր նաեւ այս դէպքին չար հետեւանքը որ

խիստ վնասարեր էր երկու աղջկանց շահուն , որովհետեւ չպիտի կրնային իրենց ճանքան շարունակել . այլ միայն խեղճ ճիտն մահուանը վրայ կը խորհէր , այն հաւատարիմ կենդանիին՝ որ իր յոգնու թեան եւ սպասերազմի հին ընկերն էր , որ երկու անգամ իրեն պէս վիրաւորուեր էր եւ որ այնչափ տարիներէ 'ի վեր իրմէ չէր դատուած : Այս աղեկէզ կսկիծն այնչափ դառն եւ սրտաշարժ կերպիւ նկարուած էր զօրականին երեսին վրայ , որ պանդոկապետն ու իր մարդիկը վայրկեան մ'ի գուժ շարժեցան տեսնելով այն մեծ ծերունին՝ մեռեալ ճիտն առջեւ ծունկի վրայ եկած :

Բայց երբոր Տակօպէտ՝ իր կսկծանաց սրտաճառները յիշելով մտածեց որ Ժօվիալ իր աքսորանաց ալ ընկերն էր , եւ որբերուն մայրը ժամանակաւ իր աղջիկներուն պէս դժուար ճանապարհորդութիւն մ'ըրեր էր այս դժբաղդ կենդանիին հետ , մանաւանդ երբոր ըրած կորուստին աղետալի հետեւան քըյանկարծ մտքին առջեւ ներկայացաւ , իր գուժը կատաղութեան փոխուելով , ոտքի վրայ ելաւ , բարկացայտ աչօք եւ դայրագին Մօռօքի վրայ յարձակեցաւ , մէկ ձեռքով ըն անոր պարանոցէն բռնեց եւ միւսովը կուրծքին հինգ վեց զինուորական հարուած տուաւ . բայց կռուիները Մօռօքի գրահին զարնուելով չկրցան վնաս մ'ընել :

« Զարագործ . . . ճիտն մահուանը դուն ես պատասխանատու , կընէր դարկած ժամանակ :

Մօռօք թէպէտ եւ ճապուկ ու շղոտ էր ,
բայց եւ այնպէս չէր կրնար յաջողութեամբ կրո-
ուիչ Տակօպէսի հետ , որ իր բարձր հասակին հետ
միանգամայն կարգէ դուրս ուժ մ'ունէր : Աեր-
ջապէս Գողիաթն ու պանդոկապետը մէջ մանև-
լով Մարգարէն Տակօպէսի ձեռքէն աղատեցին
եւ երկուքն իրարմէ բաժնեցին : Մօռօք կատա-
ղութենէն այլագուներ էր , եւ հարկ եղաւ նորէն
մէջ մանել ու թող չտալ որ նիզակն առնու եւ Տա-
կօպէսի դարնէ :

« Բայց քու ըրածդ ալ անտանելի բան է ,
դոչեց պանդոկապետը զօրականին դառնալով ,
որ յուսահատութեամբ իր դոց ձեռքերը ճաղատ
ճակտին վրայ դրեր էր : Այս յարգելի մարդն իր
զազաններուն ճարակ ըլլալու վտանգին մէջ ձը-
գեցիր , այն հերիք չէր , կուզես որ ծեծելով մեռ-
ցընես ալ . . . : Քեզի պէս մօրուքը ճերմկած
մարդու մը կը վայլէ ըրածդ , կուզես որ ստի-
կանութեան ղինուորներ կանչենք : Առջի իրի-
կունը խոհեմ մարդ մը կերեւայիր :

Այս խօսքերէն զօրականը խելաբերելով
դղջաց իր այնպէս կրքով վարուելուն վրայ , վասն
դի ինքը օտարական մ'ըլլալով իր վիճակին դըժ-
ւարութիւնն եւս առաւել կրնար ծանրանալ : Ի-
րեն համար ամենէն աւելի պէտք եղածը ձիուն
փոխարէն ստակի հատուցում մը ձեռք բերել էր ,
որպէս զի ճանրէն ետ չմնար եւ որքերուն ապա-
գան վտանգի մէջ չձգէր : Ուստի ինքզինք բըռ-
նադատելով դապեց :

— Իրաւունք ունիք . . . բարկութիւնս չը
կրցի բռնել , ըսաւ պանդոկապետին՝ իր խռովեալ
ձայնը հանդարտեցընելու ջանալով . առջի իրիկ-
ւան համբերութիւնս չունեցայ . բայց վերջապէս
այս մարդը պատասխանատու չպիտի՞ ըլլայ ձիու-
մահուանը համար , ձեզ կը թողում դատել .
— Արովհետեւ զիս դատաւոր բռնեցիր , ես ալ
կըսեմ թէ քու կարծիքէդ չեմ . ձիուդ մահուանը
պատճառը դուն ես , վասն զի դայն աղէկ չեա
կապեր եւ ան ալ կառարանին դուռը կիսաբաց
դանելով հոն մտեր է , ըսաւ պանդոկապետը
յայտնապէս Մոռօքի կողմը բռնելով : — Ճշմարիտ
է , ըսաւ Գողիաթ , միտքս կուգայ որ դիչերը կա-
ռարանին դուռը կիսաբաց թողուցի որպէս զի քիչ
մ'օդ բանի ներսը . բայց դառագիղները լաւ դոց-
ւած էին եւ ամենեւին վտանգ չկար : — Իրաւացի
է ըսածը , ըսաւ ներկայ դժնուողներէն մէկը .
— Յովազը կատղեցընելու եւ վաճագակը կոտրել
տալու համար պէտք էր որ ձին անոր աչքին առ-
ջեւ դանուէր , ըսաւ ուրիշ մ'ալ : — Այս բանիս
համար առաւել Մարգարէին կիյնայ դանդառիլ ,
յարեց երրորդ մ'ալ : — Այդ դանազան կարծիք-
ներն իմ ահանջս չեն մտներ , ըսաւ Տակօպէս՝
համբերութիւնը հատնիլ սկսելով . ես կըսեմ որ
այս վայրկենիս մէջ կամ դրամ կամ ձի մը պէտք է
ինձ , վասն զի այս ձախորդ պանդոկին մէջ կենալ
չեմ ուզեր : — Ես ալ կըսեմ որ ինձ եղած վնասը
դու պիտի հատուցանես , պօռայ Մոռօք , որ ան-
շուշտ այս վնասը ետքի պահեր էր , եւ իր ա-

րիւնաշաղախ ձախ ձեռքը մաշտակին ներքեւէն
հանեց ցուցուց : « Նայեցէք, ինչպէս չարաչար
վիրաւորեց զիս Յովաղը . թերեւս մինչեւ ցմահ
ձեռնատ պիտի մնամ, ըսաւ : »

Վերքը թէ եւ Մոռօքի ըսածին չափ վտան-
գաւոր չէր, բայց բաւական խորին էր . ասով
բոլոր ներկայ գանուողներուն կարեկցութիւնը
չարժեց իր վրայ եւ անոնց համակրութիւնը դը-
րաւեց : Պանդոկապետն այս դէպքը յարմար առիթ
մը համարելով գործն 'ի նպաստ Մոռօքի վերջա-
ցընելու՝ որուն կողմնակից էր, ըսաւ իր ախտա-
պան ծառային. « Ս, յս վէճը լմնցընելու միակ միջոց
մը կայ, այն է երթալ շուտով գեղապետն արթըն-
ցընել եւ աղաչել որ հիմա հոս դայ եւ այս դա-
տաստանը տեսնէ : — Ես ալ այդ պիտի առաջար-
կէի ձեզ, ըսաւ Տակօպէտ, որովհետեւ իմ դատս ես
չեմ կրնար կտրել : — Ծրի՛ձ, վաղէ գիւղապետին
տունը եւ հոս հրաւիրէ, ըսաւ պանդոկապետը :

Ծառան վաղելով գնաց . իսկ տէրը վախնա-
լով որ իրեն ալ պատասխանատուութիւն մը կել-
նէ զօրականին հարցաքննութենէն, վասն զի առ-
ջի իրիկունը անհողութիւն ընելով անցագիրը չէր
հարցուցեր, ըսաւ անոր . « Գիւղապետն այս ժա-
մանակ անհանդիստ ըլլալուն վրայ շատ պիտի նե-
ղանայ, եւ ես ալ չեմ ուզեր յանդիմանութիւն
լսել . ուստի գնա անցագիրդ բեր որպէս զի տես-
նեմ թէ կանոնաւոր է . կը ցաւ իմ որ երէկ իրի-
կուն հոս հասած ժամանակդ չուզեցի : — Քուղ-
թերս վերք մախաղիս մէջ են, հիմա կերթամ կը

բերեմ » պատասխանեց զօրականը :

Յետոյ գլուխն անդին դարձընելով եւ ձեռքերն աչքին վրայ դնելով ծովիալի գիակին առջեւէն անցաւ , կառարանէն գուրս ելաւ եւ երկու քոյրերը գտնելու գնաց :

Մտօք յազթական աչօք Տակօպէտի ետեւէն նայելով ըսաւ . « Ահա հիմա առանց ձիու , առանց ստակի եւ առանց թուղթերու մնաց . . . ասկէ աւելի չէի կրնար ընել . . . որովհետեւ ընելու հրաման չկար . . . եւ այս ըրածիս մէջ ալ հնար եղածին չափ լարայետութիւն պէտք էր բանեցընէի որպէս զի կասկածի առիթ չտայի : Հիմա ամեն մարդ յանցանքը զօրականին վրայ պիտի դնէ , եւ ես ալ կրնամ դոնէ վատահու թեամբ պատասխանել որ քանի մ'օր չպիտի կրնայ ճանրան շարունակել , որովհետեւ կերելի թէ մեծ շահուց խնդիրներ կախեալ են այս զօրականին եւ երկու աղջիկներուն արգիլուելէն : »

Այս խորհրդածութենէն քառորդ մ'եաքը , Գողթաթին ընկերը՝ Քարլ՝ պահուրտած տեղէն գուրս ելաւ եւ Մտօքին արտորնօք դրած մէկ նամակն առնելով ճանրայ ելաւ Արբիսքա երթալու եւ հոն հասնելուն պէս թղթատունը ձգելու համար :

Նամակին հասցէն այս էր :

Ա. Պարոն

Պարոն Ռօրէն

Մեւեո-րէզ-ի-րոնն Կոստանթնուպոլիս 11 'է Փրէզ

Գուրտ

ՊԻԵՂԱՊԵՏԸ

Տակօպէտի սրտատանջութիւնն երթալով
 կաւելնար . եւ որովհետեւ անտարակոյս էր որ իր
 ձին ինքնիրեն կառարանը չէր կրնար դադար
 ըլլալ , ուստի այս դժբաղդ գէպքը Մօռօքի չա-
 բութեանը կուտար . բայց չէր կրնար մեկնել թէ
 ինչ պատճառաւ այսպիսի թշնամութիւն մը պի-
 տի ընէր իրեն այն թշուառականը : Ասկէ դատ
 կը մտած էր որ իր դատը՝ որչափ եւ արդար ալ
 ըլլար՝ քունէն բռնի հանուած դատաւորի մը բա-
 քի կամ գէշ տրամադրութենէն կախեալ էր , որ
 կրնար՝ առանց երկար բարակ քննութեան խա-
 բուսիկ երեւոյթներու նայելով զինքը դատա-
 պարտել :

Միտքը դրաւ որ այս նոր փորձութիւնը հը-
 նար եղածին չափ ծածկէ որբերէն : Ա եր ելաւ եւ
 երբոր սենեակին դուռը կը բանար , ոտքը Ռա-
 պա-Ժօայի դարնուեցաւ : Հաւատարիմ կենդա-
 նին Մօռօքի հետ 'ի դուր մաքառելէ ետեւ՝ որ
 Ժօվիայը ախտէն չհանէ չտանի , վաղեր իր տեղը
 եկեր էր : « Բարեբաղդաբար շունը ետ դարձեր
 եկեր՝ աղջիկներուն պահպանութիւն կրնէ » ը-
 սաւ զօրականը դուռը բանալով . բայց մեծ դար-
 մանքի մէջ ինկաւ երբոր տեսաւ որ սենեակը
 խոր մթութեան մէջ էր :

« Աղջիկներս , ինչո՞ւ առանց ճրագի մութը նստեր էք , պռռաց : Բայց պատասխան տուող չեղաւ : Սարսափելով կռչր զկուրայն անկողնին քով վազեց , եւ երկու քոյրերէն մէկուն ձեռքը բռնելով տեսաւ որ սառ կարած էր :

« Ռօ՛ղ . . . որդեակներս , պռռաց , Ալանչ . . . պատասխան տուէք նայիմ . . . զիս դող մի հանէք . . . »

Գարձեալ լռութիւն , եւ բռնած ձեռքը մեքենապէս կը շարժէր՝ պաղ եւ անդդայ :

Այս միջոցին լուսինը սեւ ամպերուն մէջէն ելնելով քաւական պայծառ լոյս մ'արձակեց իր քրիկ սենեակին մէջ եւ աղջկանց անկողնին վրայ որ պատուհանին դէմն էր , եւ դօրականը կրցաւ տեսնել որ երկուքն ալ մարած էին . լուսնին կապուտակ լոյսն եւս առաւել դալկացուցեր էր անոնց դեղնութիւնը : Խեղճերը կէս մ'իրարու փաթթուած էին , եւ Ռօղ՝ գլուխը Ալանչին կուրծքին մէջ ծածկեր էր :

« Վախերնէն մարած ըլլալու են , գոչեց ճակօպէս իր դդումէ սրուակին քով վազելով . խեղճերն երէկուքնէ 'ի վեր այնչափ սրտագող քաշեցին որ այս վիճակին մէջ իյնալնին դարձանալի բան մը չէ : » Այս ըսելով թաշկինակին ծայրը քանի մը կաթիլ օղիի մէջ թաթխեց , անկողնին քով ծունդի վրայ եկաւ , աղջիկներուն քունքերը մեղմով շփեց , յետոյ օղիով թաթխած թաշկինակն անոնց վարդագոյն ոնդացը տակէն անցուց :

Այսպէս ծունկի վրայ , սիրտը դողի մէջ , իր

օնւորակ երեսը որբերուն վրայ ծռած՝ քանի մը վայրկեան սպասեց, որպէս զի եթէ չարթնան, իր ձեռքը եղած միակ դեղը վերստին փորձէ :

Ռօզի մէկ թեթեւ շարժումը քիչ մը յոյս տրւաւ զօրականին. աղջիկը հառաչելով գլուխը բարձին վրայ դարձուց. յետոյ ցնցուելով երկկողալից աչքերը բացաւ. բայց մէկէն՝ ի մէկ Տակօպէսը չճանչելով, « Քնյր իմ » պոռաց եւ Պլանշի թեւերուն մէջ ինկաւ :

Արդէն Պլանշ ալ զօրականին խնամոց ազդեցութիւնն զգալով, Ռօզին ձայնէն բոլորովին արթնցաւ, եւ առանց պատճառն հասկընալու՝ ինք ալ քրօջը պէս վախնալով՝ անոր փաթթուեցաւ.

« Ահա ուշաբերեցան, ամենէն կարեւորն այս էր, ըսաւ Տակօպէս. հիմա իրենց խենդ վախը մնաց, ան ալ շուտով կանցնի : » Յետոյ ձայնը քաղցրացընելով աւելցուց. « Օ՛ն, որդեակներս, մի վախնաք, բան չկայ . . . քովերնիդ եղողը Տակօպէսն է . . . ես եմ . . . » Որբերը ցնցուելով՝ իրենց սիրուն բայց վրդովեալ երեսը զօրականին դարձուցին, եւ շնորհալից կերպիւմ՝ երկուքն ալ թեւերնին անոր երկնցընելով դռնէն . « Դո՛ւն ես, Տակօպէս, ուրեմն ազատեցանք . . . : — Այո՛, որդեակներս, ես եմ, ըսաւ ծերունի զօրականն անոնց ձեռքն իրենին մէջ առնելով եւ դոհութեամբ սեղմելով. կերեւի որ բացակայութեանս միջոցին շատ վախցեր էք : — Ա՛հ, վախերնէս մահուան դուռը հասանք . . . եթէ գիտնայիր գլխուսուս եկածը . . . եթէ գիտ-

հայիր . . . — Բայց կանգեղն ինչո՞ւ մարեր է :
— Մեք չմարեցինք . . . — Օ՛ն, հանդար-
տեցէք, ալ մի վախնաք եւ պատմեցէք հայիմ,
ի՞նչ եղաւ . . . այս պանդոկն ապահով տեղ մը
չերեւիր ինձ . բայց հոգ չէ, լուսնալուսն պէս կը
մեկնինք ասկէ . անիծեալ բաղդ՝ որ մեզ հոս բե-
րաւ ձգեց . բայց ի՞նչ կրնայինք ընել, այս գեղին
մէջ ուրիշ պանդոկ չկար : Պատմեցէք հայիմ,
ի՞նչ պատահեցաւ : — Հաղիւ թէ դուն ասկէ
դուրս ելեր էիր, պատուհանն ուժգնութեամբ
բացուեցաւ, կանգեղը սեղանին հետ մէկ տեղ
դարձուրելի գլորդմամբ կործանեցաւ . . . մեք
ալ սարսափելով իրարու փաթթուեցանք ու պո-
ռացինք, վասն զի մեզ անանկ թուեցաւ որ սեն-
եակին մէջ մէկը կը քալէր . այնուհետեւ չենք
գիտեր ինչ եղաւ . . . »

Տակօպէս դժբաղդարար համոզուած ըլլա-
լով որ արդէն պատուհանին բացուիլն եւ ապա-
կիներուն կոտորալը հովին ուժգնութենէն էր,
կարծեց թէ պատուհանին երկաթը լաւ գոցած
չըլլալուն համար այս երկրորդ դէպքը պատահեր
էր, եւ որքերն ալ վախերնէն շփոթելով ուրիշ
կարծիքներու մէջ ինկեր էին :

« Աերջապէս եղածը եղած է, ալ խօսքը
չընենք եւ միամիտ եղիք, ըսաւ աղջիկներուն :
— Բայց դուն ինչո՞ւ համար շուտ մը մեր քովէն
ելար դացիր, Տակօպէս . . . այն, հիմա միտքս
կուգայ, այնպէս չէ, քոյր իմ, մեծ ձայն մը լսե-
ցինք, եւ Տակօպէս դէպ ՚ի սանդուղը վաղեց

« Չի՛ւ . . . ի՞նչ կընեն իմ ձիուս » պոռալով :
Այն խխնջման ձայնն ստուգիւ ճօղիալի՞նն էր ,
Տակօպէս :

Այս հարցումները զօրականին կակի՞ծն ու
զայրուցը կը նորոգէին , զորս ծածկել կը ջանար .
ուստի շփոթեալ դէմքով պատասխանեց . « Այո՛ ,
ճօղիալ կը խխնջէր . . . բայց բան չկայ . . . Հիմա
այս խօսքերը մէկդի , լոյս պէտք է մեզ . դիտէ՛ք
նւր դրի իրիկունն իմ կայծահանս : բայց խելքս
նայեցէք , գրպանս է եղեր ու մոռցիր եմ . բարե-
բաղդ արար մեք հոս մոմ մ' ունինք , վառեմ ու մա-
խաղիս մէջ պէտք եղած թուղթերը փնտռեմ : »

Տակօպէս կայծահանը դարնելով ճրագ վա-
ռեց եւ տեսաւ որ պատուհանը կէս մը բացուած
էր , սեղանը կործանած եւ կանգեղն ալ իր մա-
խաղին քով ինկած : Պատուհանը դոցեց , սեղանը
կանգնեց , մախաղը վրան դրաւ եւ անոր փոկե-
րը քակեց որպէս զի թղթապանակը մէջէն հա-
նէ , որ իր խաչանշանին ու քսակին հետ մա-
խաղին երեսին ու աստառին մէջ տեղը դանուած
գրպանի մը մէջն էր , եւ փոկերն այնչափ խնա-
մով տեղն 'ի տեղը անցած էին , որ բնաւ չէր յու-
սացուեր թէ մէկը խառներ էր դայն :

Զօրականը ձեռքն այն գրպանին մէջ խո-
թեց , բայց բան մը չգտաւ հոն . կարծես թէ կայ-
ծակէ դարնուեցաւ խեղճը . երեսին դոյնը նե-
տեց եւ քայլ մ' ետ երթալով պոռաց . « Ի՞նչ . . .
բան մը չկայ մէջը »

— Ի՞նչ եղար , Տակօպէս , ըսաւ Պլանչ : Զօ-

ցաւեանը չպատասխանեց : Անշարժ, սեղանին վրայ
 ծռած կեցեր էր ձեռքը մախաղին գրպանին մէջ
 . . . : Քիչ մ'ետքը տարտամ յուսով մը քաջա-
 լերեալ, վասն զի այն աստիճան դժնդակ իրողու-
 թիւն մ'իրեն հնարաւոր չէր թուեր, անմիջապէս
 սեղանին վրայ պարպեց մախաղին մէջ գտնուածը,
 որ կիտամաշ լաթեր էին եւ կայսերական ուրաճիւղ
 հեծելաղօրներու հին համազգեստը՝ դոր մասուն-
 քի պէս կը պահէր : Բայց Տակօպէտ դուր տեղը
 բացաւ նայեցաւ ամեն մէկ լաթերը, ոչ իր քսակը
 գտաւ եւ ոչ թղթապանակը՝ որուն մէջ էին իր
 թուղթերը, խաչանշանը եւ Սիմօն զօրապետին
 նամակները : 'Ն դուր' տղայական յամառութեամբ
 մը՝ որ անյոյս խուզարկութեանց մէջ միշտ կը
 տեսնուի, զօրականը մախաղին երկու ծայրէն բռա-
 նեց եւ ուժով մը թռթռեց :

Արբերը տարակուսեալ իրարու երես կը նա-
 յէին, եւ բան մը չէին հասկընար Տակօպէտի լը-
 օռութենէն ու ըրածէն, վասն զի կրնակն անոնց
 դարձուցած էր :

Պլանշ համարձակեցաւ երկշոտ ձայնիւ մը
 հարցընել . « Ի՞նչ ունիս . . . մեղ պատասխան
 չես տար . . . ի՞նչ կը փնտռես մախաղիդ մէջ » :

Տակօպէտ միշտ համր՝ իր վրան դլուխը նայե-
 ցաւ, բոլոր գրպանները դուրս դարձուց, բայց
 դարձեալ բան մը չկրցաւ գտնել : Իր կենաց մէջ
 թերեւս այս առաջին անգամն էր որ իր երկու
 զաւակաց՝ ինչպէս ինք կը կոչէր՝ հարցումն ան-
 պատասխանի կը թողուր : Այս պատճառաւ եր-

կու որբերուն աչքերն արտասուօք լցուելցան եւ
զօրականը սրդողած կարծելով՝ ալ չհամարձա-
կեցան անոր բան մ'ըսել :

« Ո՛չ . . . ո՛չ . . . անկարելի է կըսէր ծե-
րունի զօրականը ձեռքը ճակատին դնելով եւ իր
յիշողութեան մէջ փնտռելով թէ ո՛ւր դրած կըր-
նար ըլլալ արդեօք այն հազուադիւս բաները ,
վասն զի դեռ չէր ուզեր հաւատալ անոնց կորսը-
ւելուն . . . Յանկարծ ուրախութեան փայլակ
մը ծագեցաւ աչացը մէջ . . . վազեց աթոռի մը
վրայէն որբերուն պայուսակն առաւ , որուն մէջ
կար քանի մը ճերմակեղէն , երկու սեւ շրջա-
զգեստ եւ փայտէ տուփ մը՝ որուն մէջ ալ իրենց
մօրը մետաքսէ թաշկինակը երկու դանդուր մա-
ղերը եւ պարանոցին սեւ ժապաւէնը պահուած
էին , վասն զի մօրերնուն քիչ մ'ունեցածն ալ
Ռուսիոյ տէրութիւնը դրաւեր էր : Տակօպէս ա-
նոնց մէջ ալ կրկին կրկին փնտռեց , պայուսակին
ամեն խորշերը խուզեց , բայց դարձեալ բան մը
չգտաւ :

Ս. յն ժամանակ՝ բոլորովին ինքզինք կորսըն-
ցընելով սեղանին կրթնեցաւ , եւ այն ուժեղ ու
կորովի մարդը տկարութիւն զգալ սկսաւ . . . :
Նրեսէն կրակ կելնէր եւ միանգամայն պաղ քըլ-
տինք մը կը վաղէր . . . ծունդերը կը դողային :

Կըսուի ռամկօրէն թէ ծովն ինկողը յարդի
շիւղին կը փաթթուի , յուսահատութիւնն ալ այն-
պէս է , չուզեր բոլորովին մհատիլ : Տակօպէս՝
անտեղի յիմարական եւ անհնարին յոյս մ'ալ ան-

ցուց մաքէն • յանկարծ երկու սրբերուն դառնալով, առանց իր դէմքին ու ձայնին այլայլութիւնը մտածելու՝ հարցուց անոնց • « Չեղ չտուի՞ որ պահէք . . . ըսէք նայիմ : »

Աղջիկներն անոր դէմքին այլայլութենէն ու երեսին դեղնութենէն զարհուրելով, փոխանակ պատասխան տալու պոռայցին • « Աստուած իմ, Աստուած իմ . . . ի՞նչ ունիս, Տակօպէս, ըսու Ռօղ կամացուկ մը : — Քովերնի՞դ է, այն կամ ո՛չ, ըսէք նայիմ, գոչեց դժբաղդ զօրականը որոտալից ձայնիւ, սրտին կակիծէն ու դողէն ինքզինք կորանցընելով • ապա թէ ոչ՝ դանակ մը կառնում փորս կը խօթեմ : — Ա՛հ, Տակօպէս, դու բարեսիրտ ես . . . ներէ մեզ եթէ քեզ վշտացուցինք . . . դու մեզ այնչափ կը սիրես . . . մեզ դէշութիւն ընել չես ուզեր . . . » Եւ ազաշաւօր ձեռքերնին դէպ ՚ի զօրականը երկընցընելով լալ սկսան :

Իսկ Տակօպէս՝ մտնեղնեալ աչօք անոնց կը նայէր՝ առանց դանոնք տեսնելու • սակայն քիչ քիչ խելայեղութիւնը փարատելով՝ երբոր եղելութիւնն իր ամեն սոսկալի հեռուանօքը մաքին առջեւ ներկայացաւ, ողորմելի զօրականը ձեռքերն իրար կցեց, ծունկի վրայ եկաւ սրբերուն անկողնին առջեւ, ճակատն անոր կրթնցուց, եւ այն երկաթի պէս մարդուն սրտակէզ հեծութեանց մէջէն այս կցկատուր խօսքերը կը լսուէին • « Ներեցէք . . . մեղայ . . . չեմ գիտեր . . . ո՛հ այս ինչ դժբաղդութիւն է . . . ներեցէք : »

Երկու որբերը ծերունի զօրականին այս դա-
ռն կակիծը տեսնելով, որուն պատճառը չէին
հասկընար, սիրտերնին կտրտեցաւ, եւ տարա-
կուսեալ ու շուարած՝ անոր սպիտակաճեր գլու-
խը թեւերնուն մէջ առին եւ լալով գոչեցին. «Բայց
երեսնիս նայէ անդամ մը, եւ ըսէ մեզ ի՞նչ է
այդ վշտակը թեանդ պատճառը . . . արդեօք
մեք ենք . . . »

Այս միջոցին ոտքի ձայն մը լսուեցաւ սան-
դուղին վրայ, եւ Ռապա-Ժօա՝ որ դրանը դուրսը
կ'սպասէր, հաչել սկսաւ: Քանի որ ոանաձայնը
կը մօտենար՝ շունին ալ հաչիւնը կը սաստկանար,
եւ կերեւէր թէ հաւատարիմ կենդանին հաչելը
բաւական չսեպելով՝ թշնամական ցոյցեր ալ կը-
նէր, վասն զի պանդոկասկեստին ձայնը լսուեցաւ
որ բարկութեամբ կը գոչէր. « Է՛, քեզ կըսեմ,
կամ շունդ կանչէ, կամ անոր խօսք հասկըցուր »
Պ. գիւղապետն է եկողը . . . — Կը լսես, Տա-
կօպէն, գիւղապետն է եղեր եկողը, ըսաւ Ռօզ:
— Ահա վեր կելնեն » յարեց Պլանչ:

Տակօպէն՝ գիւղապետին անունը լսելուն
պէս՝ ամեն բան միտքն եկաւ եւ իր սարսափելի
վիճակին պատկերն ամբողջացուց: Իր ձին մե-
ռած, թուղթերն ու ստակը կտրուած, եւ եթէ
ճանքէն կտ մ'նալով օր մը միայն ուչ հասնէին Փա-
րիզ, երկու որբերուն վերջին յոյսն ալ պիտի փը-
ճանար եւ այս երկար ու տաժանադին ճանա-
պարհորդութիւննին ապարդիւն պիտի ելնէր:

Տակօպէսի պէս արի եւ աննկուն սիրտ ու-

Նեցող մարդիկ՝ աւելի լաւ կը համարին մեծ վը-
տանդներն եւ ակներեւ տեսնուած սպառնալից
վիճակները՝ քան թէ այն տարտամ սրտատան-
ջութիւնը՝ որ իսկական աղետի մը նախագուշակ
նշանն է : Տակօպէս իր ուշիմ դատողութեամբն
ու զարմանալի անձնութիւնութեամբը հասկըցաւ
որ գիւղապետին արդարութեանն ուրիշ սպաւէն
չկար իրեն , եւ պէտք էր որ ամեն ջանք 'ի գործ
դնէր զայն իր կողմը շահելու : Ուստի անկողնին
սաւանովն աչքը սրբեց , ելաւ կանդնեցաւ , եւ
հանդարտ ու վստահ գէմքով մ'ըսաւ որբերուն .
« Մի վախնաք որդեակներս , եկողը մեր փրկիչը
պէտք է ըլլայ : — Ե՛, շուտ պիտի կանչես » պո-
ռացնորէն պանդոկապետը , որ սանդուղին վրայ
արդիւուքեր մ'նացեր էր . վստահ Ռապա-Ժօա՝
հրբեւ աչալուրջ պահապան՝ թող չէր ասի որ վեր
ելնէր . « Աստղած է , ի՞նչ է այս կենդանին , ինչո՞ւ
չես կապեր . միթէ բաւական չեղաւ արդէն տանս
մէջ պատճառած մնասներդ . . . կը լսես , ահա
պարտն գիւղապետը եկաւ քեզ հարցաքննելու ,
ինչպէս որ Մոսօքին ըրաւ : »

Տակօպէս իր մաղերն ու բնչացքը շակեց ,
վերարկունն օձիքը կոճկեց , թեւերն իր ձեռքո-
վըն աւելց որպէս զի հնար եղածին չափ վայն-
լուչ կերպարանքով մ'ելնէ դասաւորին տաջեւ ,
որուն հետ խօսակցելէն կախնալ էր որբերուն
բաղդը : Դուռը բանալու ժամանակ՝ նորէն քա-
ջալերեց սարսափահար աղջիկները եւ սխառուի-
րեց որ կրցածնուն չափ անկողնին մէջ ծածկունն .

« Մի վախճաք, որդեակներս, ես չեմ թողուք որ
գիւղապետէն դատուրիչ մարդ ներս մանէ : »

Այս խօսքերն ըրած ժամանակ Տակօպէտի
սիրան ուժգին կը բարախէր. վերջապէս դուռը
բացաւ, սանդուղին գլուխը գնաց եւ ըսաւ.
Ռապա-Ժօն, հանդարտէ, եւ հոն եկո : »

Շուրջ հնազանդեցաւ բայց դժկամակելով,
որովհետեւ իր աէրը երկու անգամ հրամայելու
հարկադրեցաւ որ պանդոկապետին դէմ հաչելէ
եւ սպառնալէ դադրի : Իսկ պանդոկապետը մէկ
ձեռքով լապտեր մը՝ եւ միւսովն իր գլխարկը
բռնած՝ ակնածութեամբ կառաջնորդէր գիւղա-
պետին, որուն երեսը սանդուղին ստուերէն լաւ
չէր տեսնուեր :

Դատաւորին հետեւը եւ քանի մը ոտք վայր՝
պանդոկին մարդոց հետաքրքիր դէմքերը կը
նշմարուէր ուրիշ լապտերի մ'աղօտ լուսով :

Տակօպէտ՝ շուրջ ներս առնելէ ետեւ, սեն-
եակին դուռը գոցեց եւ երկու քայլ առաջ գնաց
դէպ'ի սանդուղին գլուխը, ուր քանի մը հոգի
կրնային սղմիլ եւ մէկ քովն ալ փայտէ նստարան
մը կար յենարանով :

Գիւղապետը սանդուղին գլուխը հասած ժա-
մանակ զարմացաւ որ Տակօպէտ սենեակին դու-
ռը կը գոցէր իր առջեւ, եւ կարծես թէ չէր ու-
ղեր թոյլ տալ որ ներս մանէ :

« Ինչո՞ւ կը գոցէք այդ դուռը հարցուց խըս-
տութեամբ :

— Նախ անոր համար, որ ինձ չանձնուած

երկու աղջիկ տղայք հոս պատկած են . եւ երկ-
րորդ՝ ձեր ինձ ընելիք հարցաքննութիւնը լսելով
դող չեղնեն , պատասխանեց Տակօպէն . ուստի
կը խնդրեմ , Պարոն գիւղապետ , որ այս նստա-
րանին վրայ նստելով հարցաքննէք զիս , վասն զի
կը կարծեմ որ թէ սենեակին մէջ եւ թէ հոս՝ մի
եւ նոյն բան է ձեզ համար : — Ի՞նչ իրաւամբ
հարցաքննութիւն ընելու տեղս դուք կորոչէք ,
հարցուց դատաւորը դժգոհ դէմքով : — Ոչ , Պա-
րոն գիւղապետ , որոշելու իրաւունք ունենալուս
համար չէ , ըսաւ իսկոյն Տակօպէն՝ վախնալով որ
դատաւորը մէկէն՝ ի մէկ իրեն դէմ կը սրգողի .
միայն թէ աղջիկները պատկած եւ արդէն ալ շատ
վախոյած ըլլալնուն՝ մեծ մարդասիրութիւն մ'ը-
րած կըլլաք եթէ զիս հոս հարցաքննէք : — Հը՛ ,
հոս , ըսաւ դատաւորը նեղանալով , յիրաւի շատ
հաճոյ աշխատութիւն , կէս գիշերին անկողնէս
եղնելու հոս դալ . . . բայց ինչ եւ իցէ , այնպէս
թող ըլլայ , հոս հարցաքննեմ ձեզ . . . » Յե-
տոյ պանդոկապետին դառնալով . « Նապտերնիդ
նստարանին վրայ դրէք եւ հեռացէք » ըսաւ :

Պանդոկապետն հնազանդելով՝ վար իջաւ իր
տանը մարդոց հետ՝ դժգոհ ըլլալով որ չպիտի
կրնային հարցաքննութեան ներկայ գտնուիլ :

Տակօպէն մինակ մնաց դատաւորին հետ :



ԳԼՈՒԽ ԺԳ .

ԴԱՏԱՍՏԱՆ

Մօքէրնի արժանընտիր դիւղապետը՝ որ հու-
 խայէ գլխարկ մը դրած եւ վերարկուի մը մէջ
 փաթթուած էր՝ ծանրութեամբ բազմեցաւ նրա-
 տարանին վրայ : Աստուծոյ տարեկանի մօտ գէր-
 մարդ մ'էր , սէգ եւ դաժանդէմքով . իր կարմիր
 եւ յոյր ձեռօքն ստէպ աչքերը կը շփէր , որ քու-
 նէն տարածամ արթննալուն պատճառաւ ուռե-
 ցեր էին :

Տակօպէս , գլուխը բաց , իր հին սատիկանի
 գլխարկը երկու ձեռացը մէջ բռնած , խոնարհ եւ
 ակնածու դէմքով մ'ոտքի վրայ կանգնէր , իր
 գատաւորին խոժոռ երեսը կը դիտէր գուշակե-
 լու համար թէ պիտի կրնար արդեօք անոր կա-
 րեկցութիւնը շարժել որբերուն վիճակին վրայ :
 Այս տաղնապալից վայրկենին մէջ ծերունի զօ-
 րականն իր բոլոր պաղարիւնութիւնը , բոլոր խել-
 քը , բոլոր ճարտարիտութիւնն ու բոլոր արի-
 ութիւնն իրեն օգնութեան կը կոչէր . այն մար-
 դը՝ որ քան անգամ մահուան դիմադրաւեր էր
 արհամարհանօք , այն մարդը որ միշտ հանդարտ
 եւ աներկեւան , փան դի անկեղծ եւ փորձեալ
 էր , իր աչքը երբէք չէր խոնարհեցուցեր իր դիւ-
 ցազունին՝ կայսեր՝ արծուենաման սուր եւ ահեղ
 նայուած քին առջիւ , շուարած կը դողար աննշան

գեղի մը ձառադէմ կառավարչին առջեւ, ինչ-
պէս որ քանի մը ժամ առաջ Մարգարէին յանդու-
գըն թշնամանայը համբերեր էր, որպէս զի մօր մը
վերջին վայրկենին մէջ իրեն յանձնած նուիրա-
կան պաշտօնը վտանգի մէջ չձգէ, ասով ցոյց
կուտար թէ առաքինի եւ պարզ սիրտ մ'ի՛նչ առ-
տիճան գիւլաղնական անձնուրացու թեան կրնայ
հասնիլ :

— Ի՞նչ պիտի ըսես ինքզինքդ արդարացը-
նելու համար, շուտ ըրէ նայինք, հարցուց դա-
տաւորը բիրտ կերպով մ' եւ անհամբերութենէն
յօրանջելով : — Ինքզինքս արդարացընելու գործ
մը չունիմ, այլ դանդառ ունիմ, պարոն գիւղա-
պետ, պատասխանեց Տաղօպէս համարձակ ձայ-
նիւ : — Միթէ հարցմունք ընելու ճանքան ինձ
օտրեցընել կուզես, պոռաց դատաւորն այնպէս
դաժան կերպով մը, որ դօրականն ինքզինք մե-
ղադրեց թէ ինչու այսպէս գէշ սկսաւ խօսակ-
ցութիւնը : Ուստի դատաւորը մեղմացընելու հա-
մար իակոյն պատասխանեց խոնարհութեամբ .
& Ներեցէք, պարոն գիւղապետ, կերեւի որ միտ-
քըս չկրցայ լաւ հասկըցընել, ըսել կուզէի թէ
այս գործին մէջ ես յանցանք մը չունիմ : — Մար-
գարէն ատուք հակառակը կըսէ : — Մարգարէն
. . . . պատասխանեց դօրականը տարակուսեալ
դէմքով : — Մարգարէն բարեպաշտ եւ պար-
կեշտ մարդ մ'է որ բնաւ սուտ չխօսիր, յարեց
դատաւորը : — Այդ մասին բան մը չեմ կրնար
ըսել, բայց դուք, պարոն գիւղապետ, արդա-

բասէր եւ բարեսիրտ էք, զիս առանց լսելու չէք
դատապարտեր: Չեզի պէս անաչառ մարդն անսի-
րաւութիւն չկրնար ընել. ոչ, ոչ, ձեր երեսէն
իսկ յայտնի է: »

Տակօպէս այսպէս ակամայ շողումարարի դե-
րը յանձն առնլով հնար եղածին չափ իր հաստ
ձայնը կը մեղմացընէր, եւ իր խիտա դէմքն ալ
դուարթ քաղցր եւ ողորջիչ ցուցընել կը ջանար:

« Չեզի պէս մարդ մը, յաւելցուց զօրականը
կրկնապատկելով քաղաքավարութիւնը, ձեզի
պէս պատկառելի դատաւոր մը մէկ ականջով
միայն մտիկ չընէր: — Ականջով մտիկ ընելիք
բան մը չկայ հոս, պատասխանեց գիւղապետը,
տեսնելը բաւական է, թէպէտ աչքերս այնչափ
սաստիկ կայրին որ կարծես թէ եղիճով շփեր եմ
. . . բայց եւ այնպէս տեսայ որ Մոռօքին ձեռ-
քը սոսկալի կերպով վիրաւորուած է: — Այո,
պարոն գիւղապետ, ճշմարիտ է, բայց նկատեցէք
որ եթէ իր դուռն ու վանդակներն աղէկ գոցած
ըլլար, ասոնց մէկն ալ չէր պատահեր. . . — Կը
սխալիս . . . յանցանքը քուկդ է, պէտք էր որ
ձիդ աղէկ կապէիր մտուրին: — Արդարեւ իրա-
ւունք ունիք, պարոն գիւղապետ, ըսաւ զօրա-
կանն առաւել եւս ողորջանօք, ինձ պէս խեղճ
մարդ մը չկրնար ձեր ըսածին հակառակ խօսիլ,
սակայն եթէ չարամտութեամբ իմ ձիս արձակե-
լով գաղաններուն փակարանը տարած ըլլան,
այն ատեն կը խոստովանի՞ք որ յանցանքն իմս չի
կրնար ըլլալ, այսինքն եթէ ձեզ հաճոյ թուի

խառնութանսի , վրայ բերաւ զօրականը , վասն զի
եւ չեմ կրնար հրամայական խօսք ըսել ձեզ .
— Ի՞նչ պատճառաւ այդպիսի չարութիւն մ'ը-
նել պիտի ուզէին : — Չեմ գիտեր , պարոն գիւ-
ղապետ , բայց . . . — Չես մի գիտեր , ուրեմն
եւ ալ չեմ գիտեր , ըսաւ դատաւորն անհամբե-
րութեամբ . օ՛հ , որչափ անպիտան խօսք սատ-
կած ձիւլ մը կմախքին համար : »

Յանկարծ զօրականին դէմքն իր ակամայ
քաղցրութիւնը կորսնցընելով խոժոռեցաւ , եւ
ժանր ու խռովեալ ձայնով մ'ըսաւ : « Այո , ձիւ մե-
ռած ու կմախք եղած է , բայց որչափ եւ ծեր ալ
էր , տակաւին մէկ ժամ առաջ քաջառողջ եւ ու-
ժեղ էր , ձայնա՛ռածին պէս ուրախութեամբ
կը վրնջէր , եւ երկու խեղճ որբերս բոլոր օրը
նուսին վրայ կրելէ ետեւ , ինչպէս որ ժամանա-
կաւ մայրերնին ալ կրեր էր , իրիկունը ձեռքեր-
նին կը լղէր . . . հիմա մարդ կրելիք չունի . իր
դիակն աղբանոցը պիտի նետեն . շուները դայն
պիտի ուտեն եւ ամեն բան պիտի լմննայ . . . ին-
չո՞ւ այդպէս խատութեամբ երեսիս կուտաք իմ
կսկիծս , պարոն գիւղապետ , եւ շատ կը սիրէի
այն ձիւ : »

Տակօպէս այս խօսքերն այնպիսի ծանր եւ
սրտաշարժ պարզութեամբ մ'ըսաւ , որ գիւղա-
պետին դուժը շարժելով՝ ըրած խիստ խօսքերուն
վրայ զղջաց :

« Կը հասկընամ որ ձիդ կը կսկծաս , ըսաւ
հանդարտ ձայնով մը , բայց ի՞նչ պիտի ընես ,

դժբաղդութիւն մ'է, — Այս, դժբաղդութիւն
մ'է, պարոն գիւղապետ, մեծ դժբաղդութիւն
մը: Հետս գտնուող մանկամարդ աղջիկները
խիստ տկար ըլլալով չեն կրնար ոտքով երկար
ճանրայ քայլել. կառքով երթալու ալ կարողու-
թիւննին հներեր: Յւսակայն հարկ է որ փետրո-
ուարէն առաջ Փարիզ հասնինք . . . Մայրեր-
նին մեռած ժամանակը խօսք տուի իրեն որ զաւ-
կրները Գաղղիա տանիմ, վասն զի խեղճ աղայքն
ինձմէ դատ մէկը չունին: — Ըսել է որ դու ա-
նոնց . . . — Հաւատարիմ ծառան եմ, պարոն
գիւղապետ, եւ հիմա որ ձիս սպաննուեցաւ,
ի՞նչպէս պիտի ընեմ: Գուք բարեսիրտ մարդ մ'է քո
թերեւս դաւակներ ալ ունիք. եթէ, Աստուած
մի արասցէ, որ Վի՛տն երկու որբերուս վիճա-
կին մէջ գտնուէին, որոց աշխարհի վրայ ունե-
ցած բոլոր դոյքնու բոլոր ապաւէնը ծերունի դո-
րական մ'է որ հայրաբար զիրենք կը խնամէ, եւ
ծեր ձի մը որ զիրենք կը կրէ . . . եթէ ի-
րենց ծննդեան օրէն ի վեր թշուառ ըլլալէ ե-
տեւ իրենց երջանկութիւնն այս ճանապարհոր-
թենէն կախեալ ըլլայ, եւ ձիուն մեռնելովը ճան-
քէն ետ մ'նան, ըսէք ինձ, կաղաչեմ, պարոն գիւ-
ղապետ, արտերնիդ չը՞ մորմոքիր. միթէ դուք
ալ ինձպէս չէք մտածեր թէ ձիուս կորուստն
անդարմանելի է: — Անշուշտ, պատասխանեց
գիւղապետը, որ վերջապէս շարսիրտ մարդ մը
չէր եւ տկամայ կարեկցութիւն կ'զգար Տակօպէ-
սի վրայ. հիմա կը հասկընամ ձեր ըրած կորուս-

տին ծանրութիւնը . ասկէց դատ այդ աղջիկներն
ալ կը մեղքնամ . քանի՞ տարեկան են : — Տասն
եւ հինգ տարեկան եւ երկու ամսու երկնորեակ-
ներ են : — Տասնեւհինգ տարեկան եւ երկու ամ-
սու . . . ըսել է իմ Յրէտէրիկայիս չափ : — Այս
հասակաւ աղջիկ դաւանկ ունիք , ըսաւ Տա-
կօպէտ քիչ մը յոյս տունելով . ուրեմն , պարոն
դիւղապետ , ալ հոգ չեմ ըներ որբերուս վիճա-
կին վրայ , վատահ ըլլալով որ մեր դատն ալ ար-
գարութեամբ պիտի տեսնէք . . . — Արդա-
րութեամբ դատատան տեսնելն իմ պարտակա-
նութիւնս է . . . Հիմա , այս ձեր գործին մէջ
արդարը խօսելով երկուքդ ալ յանցաւոր էք ,
դու ձիգ աղէկ չկապելուդ , եւ գաղան դսպողն
ալ իր դուռը բաց թողուցած ըլլալուն համար :
Ան ինքզինք արդարացրնելու համար & ձեռքս
վիրաւորեցաւ » կըսէ . դու ալ & ձիս սպաննուե-
ցաւ » կը պատասխանես եւ հաղարաւոր պատ-
ճառներով կը հաստատես թէ ձիուդ կորուստն
անդարմանելի է : — Պարոն դիւղապետ , այնպէս
լաւ կը բացատրէք իմ իրաւունքս որ ես բնաւ չի
պիտի կրնայի ընել , ըսաւ դօրականը շողոքորթա-
կան ժպիտով մը , իմ ըսելիքս ալ այդ մտօք պի-
տի ըլլար . վասն զի , ինչպէս որ դուք ալ կը մա-
կաբերէք , այն ձին իմ բոլոր հարստութիւնս էր ,
ուստի արդարութիւնը կը սլահանջէ որ . . .
Անշուշտ , յարեց դիւղապետը դօրականին խօս-
քը կարելով , քու ցուցըցած պատճառներդ խիստ
իրաւացի են . . . Մարդարէն թէպէտ պարկեշտ

եւ աւերք մարդ մ'է, իրաւունքը վաստակելու
համար խիտա վարպետ կերպով ներկայացուց ինձ
եղելու թիւնը Ասկէ դատ, ան իմ վաղեմի ծանօթս
է, եւ պէտք է գիտնաս որ հոս գրեթէ ամենքս
այ ջերմեռանդ կաթոլիկ ենք. մեր կանանց հո-
գեշահ գրքոյկներ վարդարաններ եւ գեղեցիկ
Գառն-Ատուծոյներ կը զաճառէ արժէքէն շատ
վար գնով . . . գուցէ պիտի ըսես որ ասոնք
ներկայ անցքին հետ յարաբերութիւն չունին. ի-
րաւունք ունիս, սակայն շիտակն ըսելով, երբոր
հոս եկայ, գիտաւորութիւնս . . . — Զիս յանցաւոր
հանել էր, այնպէս չէ, պարոն գիւղապետ, յարեց
Տակօպէտ առաւել եւս քաջալերուած. բայց ա-
տոր պատճառը ձեր աղէկ մ'արթնցած չըլլալն էր,
որով ձեր արդարութեան ալ մէկ աչքը միայն բաց
էր. — Յիրաւի, պարոն դօրական, շատ հաւանա-
կան է ըսածդ, պատասխանեց դատաւորը միամը-
տութեամբ, վասն զի Մարգարէն մտիկ ըրած
ժամանակա ըսի անոր թէ իրաւունքն իրեն պիտի
տամ. Այն ժամանակ Մարգարէն վեհանձնաբար
ըսաւ. « Որովհետեւ իմ հակառակորդս պիտի
դատապարտես, չեմ ուզեր որ անոր վիճակն ա-
ռաւել եւս ծանրացընեմ այնպիսի բաներ յայտ-
նելով . . . — Ինձի՞ դէմ . . . — Այո՛, քե-
զի՞ դէմ, բայց՝ իբրեւ վեհանձն թշնամի՛ լը-
ռութեան քողով ծածկեց երբոր իմացուցի անոր
թէ ըստ երեւոյթին առ այժմ ծանր տուգանքի
պիտի դատապարտէի քեզ. որովհետեւ, ինչպէս
արդէն ըսի, քու պատճառներդ լսելէս առաջ

միտքս դրեր էի որ Մարգարէին վերքին համար
քեզնէ տուգանք մը պահանջեմ եւ անոր տամ :
— Կը տեսնէ՞ք , պարոն , դիւղապետ , ինչպէս աս-
մենէն արդարասէր եւ խնայտուն մարդիկն ան-
դամ կը խաբուին , ըսաւ Տակօպէտ դարձեալ շո-
ղոքորթութիւնը ձեռք առնելով , եւ աւելցուց
խորամանկ դէմքով մը . « Բայց ճշմարտութիւնը
կը ճանչեն եւ մոխիր չեն կլներ , թէ եւ իրենց
դիմացինը մարգարէ եղած ըլլայ :

Գիւղապետը մէկէն 'ի մէկ չհասկըցաւ այս
դուարձաբանութիւնը , բայց երբոր Տակօպէտի
գոհ դէմքն եւ հարցական նայուած քը տեսաւ , որ
կարծեա թէ ըսել կուզէր . « Ինչպէս էր այս հան-
ճարաբանութիւնս . սքանչելի չէր , ես անդամ
զմայլեցայ . » դատաւորն հայրական դէմքով մը
ժպտիլ սկսաւ եւ գլուխն երեւցընելով ինք ալ
հանճարաբանութեամբ մը պատասխանեց . « Հա ,
հա , հա , իրաւունք ունիս , Մարգարէն սխալ
մարգարէացած պիտի ըլլայ . . . դու բնաւ բան
մը չպիտի հատուցանես անոր . վասն զի երկու-
քիդ ալ յանցանքը հաւասար կը գտնեմ , կրած վը-
նանսիդ ալ իրար կը փոխարինեն . Անոր ձեռքը
վիրաւորուեր է , քու ալ ձիդ սպաննուեր է . հե-
տեւաբար մէկ մէկու ըսելիքնիդ չէ մնացած :
— Արեւմն ո՞րչափ կը կարծէք թէ պիտի վճարէ
ինձ , հարցուց զօրականը տարօրինակ պարզմը-
տութեամբ մը : — Ի՞նչ ըսիք : — Ըսի , պարոն ,
դիւղապետ . . . թէ ո՞րչափ ստակ պիտի վճարէ ինձ :
— Ստակ մի պիտի վճարէ , — Այո , բայց դու մա-

քը որոշելէ առաջ պէտք է բան մը խնայքնեմ ձեզ
պարոն գիւղապետ , կարծեմ թէ իրաւունք ու-
նիս ըսելու թէ առնելիք ստակովս ձի մը միայն
գնելու պարտական չեմ Ղասն դի տարա-
կոյս չունիս որ Վիշափքայի շրջականներն ածան
ձի մը կրնամ գտնել գեղացիներուն քով . մինչեւ
անգամ, խօսքը մէջերնիս մ'նայ , եթէ լաւ է ձ
գտնեմ՝ անով ալ կը բաւականանամ . . . մա-
նաւանդ թէ առաւել գոհ կըլլամ , ինչու որ խեղճ
Ժովիայս կորսնցընելէս ետեւ՝ ուրիշ ձեռ մ'ըն-
կերակցութիւնը ծանր պիտի գայ ինձ
Ասոր համար պէտք է . . . — Ի՞նչ կըսես ,
գոչեց գիւղապետը Տակօպէռի խօսքը կըրա-
րելով , ի՞նչ ստակ , ի՞նչ էշ եւ ի՞նչ ուրիշ ձի է
այդ ըսածդ . . . Միթէ չհասկըցուցի՞ քեզ որ
ոչ գու Մարգարէին բան մը պիտի վճարես , ոչ ալ
ան քեզ . — Ոչ ալ ան ի՞նձ , — Ա՛յ . . . ի՞նչ կար-
ծըր գլուխ ունիս եղեր . . . նորէն կըսեմ քեզ որ
եթէ Մարգարէին գաղանները քու ձիդ սպաննե-
րն , Մարգարէն ալ չարաչար վիրաւորուեր է ,
ասով երկու քիդ ալ վնասը փոխարինուեր է , այս-
ինքն ոչ գու անոր հատուցում ընելու պարտա-
կան ես , ոչ ալ ան քեզ կրցի՞ վերջապէս
հասկըցընել , » Տակօպէռ ապշեցաւ մ'նայ , եւ
նորէն իր յոյսերը ոչնչացած տեսնելով , քանի մը
վայրկեան գիւղապետին երեսը նայելէ ետեւ ,
յաւզեալ ձայնով մ'ըսաւ . « Բայց , պարոն գիւղա-
պետ , ձեր արդարասիրտ թեամբը կրնաք նկա-
տել որ գաղան դստղին վերջն արդիւք չըլլար

Տրեմն իր արհեստը շարունակելու . իսկ իմ ձիուս
մեռնելովը եւ ճանքէս ետ կը մնամ . ուրեմն
պէտք է որ ան հատուցու՛մ ընէ ինձ :

Դատարարը կը կարծէր թէ արդէն Տակօպէ-
սինն մեծ աղէկու թիւնն ըրեր էր՝ Մարդ արէին վի-
րաւորուելուն պատասխանատու չբռնելով զին-
քը . վասն զի , ինչպէս որ ըսինք , Մոռօք մեծ
աղղկացու թիւնն ունէր երկրին կաթ ու իկներուն ,
մանաւանդ կանանց վրայ , վերայիչեալ Չերմեռան-
դական նիւթերն աժան աժան անոնց ծախելովը .
ասկէ զատ ամեն մարդ գիտէր որ քանի մը բարձ-
րաստիճան անձինք պաշտպանութիւն կընէին
անոր : Տակօպէսին այսչափ իր պահանջմանը վը-
րայ պնդելէն դատարարը նեղանալով՝ վերատին
դէմքը խոժոռացուց ու խստութեամբ պատաս-
խանեց .

« Դու զիս պիտի զղջացընես ցուցըցած ան-
կողմնապահութեանս վրայ . այդ ի՞նչ է , փոխա-
նակ շնորհակալ ըլլալու՝ տակաւին կը պահան-
ջես որ . . . — Բայց , պարոն գիւղապետ , ու-
ղածս արդար է . եւ աւելի լաւ կը համարէի Մար-
դ արէին պէս վիրաւորուիլ եւ ճանքէս ետ չմնալ .
— Ինձ փոյթ չէ հասկընալ քու լաւ կամ գէշ հա-
մարածդ . . . եւ վճիռը տուի եւ ամեն քան լը-
մընցաւ : — Բայց . . . — Բայց մայց մտիկ չեմ
կրնար ընել , հերիք է . . . ուրիշ խնդրոյ մ'անց-
նինք . . . թուղթերդ մեր են : — Այո՛ , պատ-
րաստ եմ թուղթերուս վրայ ալ խօսելու . . .
բայց կաղաչեմ , պարոն գիւղապետ , զթացէք

ներսը պառկող երկու խեղճ որբերուն վրայ . . .
այնպէս բան մ'ըրէք որ կարող ըլլանք ճանա-
նիս շարունակելու . . . — Ինչ որ ձեռքէս կու-
գար՝ ըրի . . . Թերեւս պարտականութենէս ալ
աւելի . . . դարձեալ կըսեմ, թուղթերդ ուր
են . . . կուղեն որ քեզ իբրեւ դատարկաշրջիկ
բանտարկեմ : — Զի՞ս բանտարկէք . . . — Ըսե՛լ
կուղեմ որ եթէ թուղթերդ ինձ ներկայացընել
չուղես, ես այնպէս պիտի կարծեմ թէ չունիս
. . . եւ թուղթ չունեցող մարդիկն այ բանտը
կը դրուին մինչեւ որ իշխանութիւնն անոնց ու՛
եւ ինչպէս անձինք ըլլալն հասկընայ եւ արժանը
տնօրինէ . . . ուրեմն շուտ ըրէ, բեր թուղ-
թերդ, որպէս զի դորժ վերջացընելով ժամ ա-
ռաջ տունս դառնամ : »

Տակօպէտի կացութիւնը քիչ մ'առաջ ունե-
ցած քաջալերական յուսոյն հակառակ առաւել
եւս ծանրացաւ : Դատաւորին այս հարցումը վեր-
ջին հարուած մը տուաւ ծերունի զօրականին
մորմոքեալ սրտին . եւ արդարեւ դառն եւ վը-
տանդաւոր փորձութիւն մ'էր այս՝ այնպիսի մար-
դու մը համար՝ որ կամակոր էր բնութեամբ, բայց
ուղղասէր . խիստ եւ բացարձակ էր վարուք, բայց
անկեղծ . այնպիսի մարդու մը համար վերջապէս,
որ երկար ժամանակ զինուոր, մանաւանդ յաղ-
թող զինուոր մ'ըլլալով, քաղաքացիներու դէմ
ակամայ բռնաւորական կերպեր դորժածելու
վարժուած էր :

« Թուղթերդ ուր են » հարցումին վրայ Տակօ-

պէս ին երեսին գոյնը նեւեց, բայց խեղճն իր տաղ-
նապը ծածկել ջանաց աներկեւան երեւոյթ մը
տալով ինքզինքին, որով կը կարծէր թէ իր վրայ
լաւ դադափար մը կրնար տալ դատաւորին :

« Պարոն գիւղապետ, երկու խօսքով հաս-
կըցընեմ ձեզ եղելու թիւնը . . . խիտ պարզ
բան մ'է . . . ամեն մարդու կրնայ պատահիլ . . .
ես մտերացկանի կամ դատարկաշրջիկի դէմք
չունիմ, այնպէս չէ. ասկէ դատ . . . վերջա-
պէս . . . կը հասկընաք որ երկու մանկամարդ
աղջկանց հետ ճանապարհորդող պարկեշտ մարդ
մը . . . — Ա՛րչափ խօսքեր են ատոնք. թուղթե-
րըդ ուր են, թուղթերդ, շուտ ըրէ, բեր նայիմ. »

Այս միջոցին՝ անյուսալի բարեբաղդութեամբ
մը՝ երկու մեծ օժանդակներ օգնութեան հասան
խեղճ դօրականին :

Աղջիկները, Տակօպէսին այսպէս դուրսը
տանդուղին գլուխը կանգնած խօսակցելէն սիր-
տերնին անհանգիստ ըլլալով՝ ելեր հագուեր էին,
եւ երբոր դատաւորը Ա՛րչափ Խօսքեր էն արմտ, Բաղ-
Բերտ — է կըսէր խատու թեամբ, Աօղ եւ Պլանչ
ձեռք ձեռքի տուած սենեակէն դուրս ելան :

Գիւղապետն երբոր տեսաւ այն երկու հրա-
շագեղ դէմքերը, որք աղքատիկ սուգի զգեստ-
ներով առաւել եւս սիրտ կը գրաւէին, դմայլե-
լով ոտքի վրայ ելաւ : Աղջիկներն ինքնայօժար
չարժամամբ Տակօպէսի ձեռքերուն փաթ թուելով
երկչատ ու միամիտ դէմքով մը դատաւորին երե-
ար նայեցան : Այնչափ սրտաչարժ էր այս պատ-

կերբ , որով կարծես թէ ձերունի դօրականն այս
 երկու շնորհալի անմեղ եւ դեղեցիկ ազջիկներն
 իր դատաւորին կը ներկայացընէր , գիւղապետը
 չկրցաւ անկարեկիր մ'նալ , եւ նորէն դժու թեան
 զգացումներով սիրտը շարժեցաւ : Տակօպէտնը շ-
 մարեց գիւղապետին այս վիճակը եւ որբերուն
 ձեռքը թող շտապով՝ ողոք ձայնիւ մ'ըսաւ անոր .

« Ահաւասիկ , պարոն գիւղապետ , դժբաղդ
 օրբերա . ասոնցմէ լաւագոյն անցագիր մը կրնամ
 ձեզ ցուցընել : » Այս խօսքն ըսած ժամանակ ,
 Տակօպէտ , սրտին մէջ զսպած դատն եւ գահավէժ
 զգացումներէն յաղթուելով աչքն արտառքով
 լցուեցաւ :

Գիւղապետը թէ եւ բնութեամբ ներշնչու
 մարդ մ'էր եւ քնհատութեան պատճառաւ եւ ո
 առաւել դաժանցած էր , բայց բոլորովին անզգայ
 եւ անմիտ չէր . ուստի հասկըցաւ որ այսպիսի բն-
 կերներու հետ գտնուող մարդ մը դժուարաւ կրբ-
 նար կասկածելի ըլլալ :

« Ի՞նչն սիրուն զաւակներ . . . ըսաւ անոնց
 երեսը նայելով , այսպիսի տղայ հասակի մէջ որբ
 մ'նացեր են , եւ ո՞վ գիտէ որչափ հեռու անդէ
 կուգան . . . — Սրպերիոյ խորերէն , ուր մայ-
 բերնին աքտորուած էր ասոնք ծնանելէ առաջ . . .
 Հինգ ամիսէն աւելի է որ իջեւանէ իջեւան կը
 ճանապարհորդենք . . . արդէն բաւական ասո-
 ռապանք մը չէ այս հասակի տղայոց համար . . .
 Ասոնց համար է որ ձեզնէ շնորհ եւ պաշտպանու-
 թիւն կը խնդրեմ . . . ասոնց համար՝ որ ամեն

կողմանէ կը ճնշուին այսօր . վասն զի քիչ մ'ա-
ռաջ թուղթերս մախաղիս մէջ փնտռելու դա-
լով թղթապանակս շկրցի գտնել , որուն մէջ
պահուած էին քսակիս եւ խաչանշանիս հետ . . .
ներեցէք , պարոն գիւղապետ , եթէ այս ալ ըսեմ
ձեզ . . . ոչ թէ պարծելու համար . . . խա-
չանշանս կայսրն իր ձեռք տուած էր ինձ , եւ
մարդ մը որ կայսեր ձեռքէն պատուանշան կըս-
տանայ , գէշ մարդ չկրնար ըլլալ , թէ եւ իր
թուղթերն ու քսակը դժբաղդաբար կորուսած
ըլլայ . . . Ահա այս դառն վիճակին մէջ կը գտնու-
ւինք հիմա , պարոն գիւղապետ , եւ այս պատճա-
ռաւ էր որ ձիուս սպանմանը համար դրամական
հատուցում կը պահանջէի ստիպմամբ : — Ի՞նչ-
պէս եւ ո՞ւր կորուսիր զանոնք . . . — Չեմ գի-
տեր , պարոն գիւղապետ . երէկունս առջի իրի-
կունը քսակէս քիչ մ'ստակ հանեցի եւ թղթա-
պանակս կեցած էր . երէկ՝ ստակս բաւելով՝ մա-
խաղս չքակեցի . . . — Երէկ եւ այսօր մախաղդ
ո՞ւր էր . . . — Աղջկանց սենեակը . բայց այս
գիշեր . . . »

Տակօպէս ի խօսքն ընդ միջեցաւ սանդուղէն
վեր ելնող մարդու մը ռանաձայնովը . վեր ելնողը
Մարգարէն էր , որ սանդուղին ստորոտը մուժին
մէջ պահոււրտելով՝ ասոնց խօսակցութիւնը լսեր
էր , եւ կը վախնար որ գիւղապետին տկարամը-
տութիւնն իր արդէն այս աստիճան յառաջ տա-
րած խորհրդոց կատարեալ յաջողութեանը վնաս
մը կուտայ :

Մօռօք իր ձախ թեւը պարանոցէն կախած վարչամակի մը մէջ առած էր . սանդուղէն վեր ելնելէն ետեւ յարդանօք ողջունեց գիւղապետը . Ռօզ եւ Պլանչ՝ դազան զսպողին շարագոյժ դէմքը տեսնելնուհն պէս՝ վախցան , եւ քայլ մը ետ քաշուելով առաւել եւս մօտեցան զօրականին : Տակօպէտի ճակատն ալ տիրեցաւ , եւ բարկութիւնը նորէն եռալ սկսաւ Մօռօքի դէմ՝ որ իր կրած դժնգակ նեղութեանց միակ պատճառն էր . (սակայն չէր գիտեր որ Գողիաթ՝ Մօռօքի թելադրութեամբ իր թղթապանակը գողցեր էր) :

« Ի՞նչ կուղէք , Մօռօ՛ք , հարցուց գիւղապետը՝ կէս մը բարեկամական եւ կէս մը դժգոհ դէմքով . ես հոս մինակ ըլլալ կուղէի , ինչպէս որ պանդոկապետին ալ պատուիրեր էի : — Հոս գալուս նպատակը ձեզ ծառայութիւն մ'ընել է , պարոն գիւղապետ : — Ծառայութիւն մը : — Մեծ ծառայութիւն մը . ապա թէ ոչ՝ չէի համարձակեր հոս գալու . եւ ձեզ ձանձրոյթ պատճառելու : Խղճմտանքս զիս դրդեց : — Խղճմտանքնիդ ձեզ դրդեց մի : — Այո՛ , պարոն գիւղապետ , խիղճեղաւ ինձ որ այս մարդուն (Տակօպէտի) վրայ գիտցածս ձեզ չըսի՝ սխալ կարեկցութենէ մը շարժեալ : — Ըսէք նայիմ , ի՞նչ է : »

Մօռօք դատաւորին մօտեցաւ եւ կամացուկ մը խօսակցեցաւ անոր հետ բաւական երկար ժա-

մանակ : Քիւղապետը նախ դարմացաւ , յետոյ
կամաց կամաց խորին ուշադրութիւն եւ հոգ ցու-
ցընել սկսաւ : Ժամանակ ժամանակ դարմացման
եւ սարակուսի ձայներ կը հանէր՝ քովընտի ակ-
նարկ մը ձգելով Տակօպէսին եւ երկու աղջիկնե-
րուն վրայ : Գասաւորին նայուած քէն՝ որ հետըզ-
հետէ անհանգիստ կասկածոտ եւ խիստ երեւոյթ
մը կառնուր , դիւրաւ կը հասկցուէր որ Մարգա-
րէին գաղտնի խօսքերէն՝ անոր քիչ մ'առաջ որ-
բերուն եւ դօրականին վրայ դպացած կարեկցու-
թիւնը կասկածի եւ թշնամութեան կը փոխուէր :

Տակօպէս նշմարեց այս փոփոխութիւնը , եւ
իր սրտին անհանգստութիւնները՝ որ պահ մը հան-
դարտեր էին , նորէն զինքը տազնապեցընել ըս-
կըսան : Իսկ աղջիկներն ապշեր մնացեր էին , եւ
բան մը չհասկընալով այս մ'նջկատակէն՝ Տակօ-
պէսին երեսը կը նայէին երկիւղալից տատամսու-
թեամբ :

« Չոր սատանայ . . . ըսաւ դիւղապետն
յանկարծ ոտքի վրայ ելնելով . խելքս ուր էր . ա-
տոնց ոչ մէկն ալ չկրցի մտածել : Բայց , զիս մի
մեղադրէք , Մօռօ՛ք , երբոր կուգան կէս դիշե-
րին մարդը քունէն կարթնցընեն , մտքին աղա-
տութիւնն ամփոփի կը մ'նայ վրան . արդարեւ մեծ
ծառայութիւն մ'է այս ըրածնիդ , ինչպէս որ
կըսէիք : — Սակայն ըսածներս չեմ հաստա-
տեր . . . — Հոգ չէ , մէկի դէմ հաղար դրաւ կը
դնեմ որ իրաւունք ունիք : — Իմ ըսածս լոկ կաս-
կած մ'է՛ քանի մը պարագաներու վրայ հիմնեալ :

— Բայց կասկածը շատ անգամ ճշմարտութեան ճանքուն մէջ կը դնէ մեզ . . . Նայեցէք անգամ մը, ինչպէս անմիտ թռչունի մը պէս ծուղակը պիտի իյնայի . . . նորէն կըսեմ, խելքս ուր էր . . . — Շատ անգամ մարդ արտաքին երեւոյթէ կը խաբուի : — Ա՛հ, սիրելի Մօսօք, որո՞ւ կըսէք այդ, որո՞ւ կըսէք : »

Այս ծածուկ խօսակցութեան ժամանակ Տակօպէս մեծ տագնապի մէջ էր . կ'ըզար որ բուն փոթորիկ մը պիտի ելնէր, բայց իր բարկութիւնն այս անգամ ալ զսպել կը մտածէր :

Մօսօք դատաւորին մօտեցաւ, եւ աչքովն աղջիկները ցուցնելով՝ նորէն խօսիլ սկսաւ ցած ձայնով :

« Ա՛, գոչեց գիւղապետը բարկութեամբ, ի՛նչ կըսես, այդ մը կայ : — Չեմ պնդեր, ըսաւ խկոյն Մօսօք, պարզ կարծիք մ'է այս հիմնեալ . . . » Եւ նորէն շրթունքը դատաւորին ականջին մօտեցուց :

« Բայց ինչո՞ւ չէ, ըսաւ դատաւորը ձեռքերը վեր ամբառնալով, այս տեսակ մարդոցմէ ամեն բան կը յուսացուի . . . ինքը կըսէ թէ Սիպերիայէն կուգայ անոնց հետ . . . ո՞վ կրնայ ապացուցանել որ անամօթ ստութիւն մը չէ այս : Բայց մէկ մարդ մը երկու անգամ քիթէն չբռնուիր, գոչեց գիւղապետը ցասմամբ, որ՝ ինչպէս ամեն յեղյեղուկ եւ սկարամիտ անձանց բնութիւնն է, կրակ կտրեր էր Տակօպէսին եւ երկու խեղճ որբերուն գէմ, հաւատալով որ զինքը խաբեր էին :

Ե Բայց այդպէս շուտով մի վճռէք, տէր իմ,
եւ մանաւանդ իմ խօսքերուս արժան եղած էն ա-
ւելի ծանրութիւն մի տաք, ըսաւ Մոսօք փարի-
սեցական խոնարհութեամբ մ'եւ որպէս թէ զըզ-
ջալով այնչափն ալ իմացընելուն վրայ. այս մար-
դուն նկատմամբ (Տակօպէռը ակնարկելով) դժ-
բաղդ արար այնպիսի կացութեան մը մէջ կը գըրտ-
նուիմ, որ կրնայ կարծուիլ թէ ինձ ըրած մնասին
դէմ ռիսակալութիւն կընեմ իրեն, կամ թերեւս
ակամայ եւ առանց իսկ գիտնալու այնպէս կը
վարուիմ, մինչդեռ ընդհակառակն կը կարծեմ
թէ արդարութիւնը սիրելուս, աստիճանութիւնը
ատելուս եւ մեր սուրբ կրօնքը յարգելուս հա-
մար այսչափը ձեզ իմացընել պարտք համարե-
ցայ . . . վերջապէս . . . ապրողը կը տեսնէ . . .
եթէ կը սխալիմ՝ Աստուած ներում չնորհէ ինձ .
բայց ինչ որ ալ եղած ըլլայ, դատաստանական
քննութիւնը կրնայ որոշել, եւ եթէ անմեղ են՝
մէկ կամ երկու ամսէն թող արուիլ: — Ահա այդ
պատճառաւ պէտք չէ որ վարանինք, մեր ընե-
լիքը պարզ խոհեմութեան գործ մ'է. բանտը
գրուելով չեն մեռնիր. վասն զի քանի որ ձեր
ըսածներուն վրայ կը խորհիմ՝ այնքան ճշմարիտ
կերելին ինձ. այն, այս մարդը կամ լրտես կամ
դադդիացի խռովարար մը պիտի ըլլայ, մանա-
ւանդ երբոր այս կասկածներս ՅրանքՓօրթի
ուսանողաց յեղափոխական ցոյցերուն հետ բաղ-
դատեմ . . . — Այսպիսի պարադաներու մէջ
դեռահասակ խենդերուն դիտիւր բոլորքելու ա-

մենէն յարմար միջոց մ'են այս երկու . . . » Եւ
արագ նայուածքով մը Մօռօք աղջիկները ցու-
ցընելով վայրկենի մը չափ նշանակութեան ար-
ժանի լռութիւն մը պահելէ ետեւ՝ աւելցուց հա-
ռաչելով . « Սատանային համար ամեն միջոց լաւ
է , — Այո՛ , նողկալի բան է , բայց խիստ վար-
պետ հնարք մ'է , — Ղերջապէս , պարոն գիւղա-
ղապետ , ուշադրութեամբ զննեցէք այս մարդը
եւ կը տեսնէք որ վստահաւոր դէմք մ'ունի .
նայեցէք : »

Մօռօք կամաց ձայնով մ'այս խօսքն ըսելով
անշուշտ Տաղօպէսը կակնարկէր :

Տաղօպէս որչափ որ իր անձին վրայ կիշխէր ,
եւ որչափ որ այս անիծեալ պանդոկը գտէն 'ի
վերին քղինք զսպեր էր , Մօռօքին ու գիւղա-
պետին մէջ եղած այս խօսակցութեան վրայ չկըր-
ցաւ այլ եւս համբերել , վասն զի յայտնի կը տես-
նէր որ դատաւորին կարեկցութիւնը գրաւելու
համար ամեն ջանքն 'ի դերեւելաւ դադան զըս-
պողին աղետաբեր աղդեցութեամբը . ուստի
թեւերը խաչածեւ կուրծքին վրայ դնելով՝ Մօ-
ռօքի քով դնաց եւ մեղմութեամբ հարցուց .
« Ինձ համար կը խօսէիք պարոն գիւղապետին »
— Այո՛ , պատասխանեց Մօռօք անշարժ աչօք
անոր երեսը նայելով : — Ինչո՞ւ բարձրաձայն չի
խօսեցաք :

Տաղօպէսի հաստ ընչացքին դողդողալէն եւ
ծուռ ծուռ Մօռօքի երեսը նայելէն կը հասկցուէր
որ սրտին մէջ բուռն կռիւ մը կար : Տեսնելով որ

իր հակառակորդն հեղնական ժպխտով մը լուռ կը
կենար, ձայնը բարձրացուց . « Ար հարցընեմ ձեզ
թէ ինչո՞ւ ինձ համար ծածուկ կը խօսի՞ք պա-
րոն գիւղապետին հետ : — Վասն զի այնպիսի ա-
մօթալի բաներ կան՝ որ մարդ կամաչէ բարձր
ձայնիւ խօսիլ » պատասխանեց Մօսօք լրբու-
թեամբ :

Տակօպէս՝ որ մինչեւ այն ժամանակ թեւերը
խաչածեւ բռնած կեցեր էր, շանկարծ կռուփները
սեղմելով երկնցուց՝ այնպէս ցամառայից շարժ-
մամբ՝ որ երկու քոյրերը դարհուրելով պոռացին
եւ անոր մօտեցան : « Պարոն գիւղապետ , թող
այս մարդը կորսուի երթայ ասկէ , ըսաւ դօրա-
կանը բարկու թենէն ակռաները սեղմելով . ապա
թէ ոչ՝ ինքզինքս չպիտի կրնամ դատել : — Ի՞նչ,
ըսաւ գիւղապետն իշխանական խրոխտութեամբ,
ինձ հրաման տալու կը համարձակիս . . . — Աը-
սեմ ձեզ որ այս մարդը վար վռնտէք , ըսաւ նօ-
րէն Տակօպէս կրակ կտրած , ապա թէ ոչ՝ աղէտ
մը պիտի պատահի : — Ա՛հ , Տակօպէս , հանդար-
տէ , պոռացին աղջիկներն անոր ձեռքը բռնե-
լով : — Ո՞վ կըլլաս դու , թշուառ դատարկա-
շըրջիկ , որ հոս ինձ հրաման ընելու կելնես , ը-
սաւ դարձեալ գիւղապետը բողբոլովին կատղած .
կը կարծես ուրեմն որ զիս խաբելու համար բա-
ւական է ըսել թէ թուշթերդ կորուսեր ես . 'ի
դուր հետդ կը ստըտողնես այս երկու աղջիկնե-
րը , որք իրենց անմեղ երեւոյթին հակառակ թե-
րեւս . . . — Անդամ , գոչեց Տակօպէս գիւղա-

պետիսն խօսքը կարելով այնպէս սարսափելի շարժմամբ մը, որ դատաւորը չհամարձակեցաւ աւարտել :

Տակօպէս աղջիկներուն թեւէն բռնեց, եւ առանց ժամանակ թողլու օր բան մ'ըսեն, ակընթարթի մէջ աննեակէն ներս մտցուց, դուռը կըղպեց եւ բանալին գրպանը դնելով դարձաւ վազեց գիւղապետին քով, որ ծերունի զօրականին քարկացայտ դէմքէն ու շարժումէն դարհուրելով ետ ետ դնաց եւ մէկ ձեռքովը սանդուղին վանդակասիւնը բռնեց :

« Լաւ մտիկ ըրէք զիս հիմա, ըսաւ Տակօպէս դատաւորին թեւէն բռնելով, քիչ մ'առաջ այս թշուառականը (Մօռօքը ցուցընելով) զիս նախատեց եւ համբերեցի, վասն զի խօսքն իմ վըրտա էր . հիմա ալ երկայնամտութեամբ ձեր ոչնչաբանութիւնները մտիկ ըրի տեսնելով որ այս դըժբաղդ որբերուն կարեկցելու միտում մը ցոյց կուտայիք . բայց որովհետեւ դուք ոչ սիրտ ունիք, ոչ գութ եւ ոչ արդարութիւն . . . կիմացընեմ թէ որչափ եւ գիւղապետ մ'էք, ձեզ ալ այս շունին պէս (Մօռօքը ցուցընելով) կը կռփեմ եթէ այս երկու աղջկանց վրայ այն կերպով չխօսիք՝ ինչպէս որ ձեր բուն դաւակաց վրայ կը խօսիք . կը հասկընամք ըսածս : — Ի՛նչ, դոչեց գիւղապետը բարկութենէն կակաղելով, կը համարձակի՛ս ըսել որ ես այդ երկու բաղդախնդիրներուն վրայ . . . — Գլխարկդ վար առ . . . եւ այնպէս մտրաջախտ Վինեիի դուքսին աղջկանց վրայ խօ-

անլու համարձակէ, գոչեց զօրականը գիւղապե-
տին գլխարկը քաշելով եւ ոտքին տակը նետելով:

Այս բռնական գործին վրայ Մօռօք ցնծալ
սկսաւ:

Եւ արդարեւ Տակօպէռ ամեն յոյս կորուսած
եւ բարկութենէն կրակ կտրած ըլլալով չկրցաւ
այլ եւս ինքզինք բռնել:

Երբոր գիւղապետն իր գլխարկը ոտքին առ-
ջեւ տեսաւ, ապշութեամբ Մօռօքի նայեցաւ՝
որպէս թէ հաւատալ չուզելով այսպիսի անլուր
յանդդնութեան մը:

Տակօպէռ ալ զղջաց ըրածին վրայ, բայց
գիտնալով որ ալ անուշ տեղը կապելու յոյս չկար,
չուտ մ'աչքը չորս դին պտտցուց, եւ քանի մը
քայլ ետ երթալով սանդուղին առաջին աստի-
ճաններուն վրայ հասաւ: Գիւղապետը սանդու-
ղին գլխուն մէկ խորշը կանգնած էր նստարանին
քով: Մօռօք ալ անոր մօտը կեցեր էր՝ թեւը պա-
րանոցէն կախած՝ որպէս զի վէրքին ծանրութիւ-
նը ցուցընէ: Գիւղապետը Տակօպէռի ետ ետ եր-
թալէն խաբուելով, « Ա՛հ, թշուառական ծե-
րունի, պոռաց, ինձ ձեռք վերցընելէդ ետեւ կը
կարծես որ պիտի կրնաս փախչիլ: — Ներում չը-
նորհեցէք ինձ, պարոն գիւղապետ . . . բար-
կութիւնս չկրցի զսպել: Կը զղջամ ըրած բռնու-
թեանս վրայ, ըսաւ Տակօպէռ ապաշաւող ձայնով
մ'եւ գլուխը խոնարհութեամբ ծռելով: — Գը-
թութիւն չկայ քեզի պէս անզգամին. կուզես
որ քու կեղծաւոր դէմքովդ զիս նորէն 'ի գութ

շարժեա. բայց ես քու գաղտնի դիտումներդ հաս-
կըցայ . . . դուն երեւցածիդ պէս մարդ մը չես ,
կարելի է որ այս ամենուն ներքեւ տէրութեան
վերաբերեալ գործ մը կայ , աւելցուց դատաւա-
րը քաղաքագիտական ձայնով . Յերոպան տակն
'ի վերայ ընել ուղող մարդոց համար ամեն միջոց
լաւ է : — Ես խեղճ մարդ մ'եմ , պարոն գիւղա-
պետ . ձեր բարեսրտութիւնը պէտք չէ որ այս-
չափ անդութ ըլլայ մեր վրայ . . . — Ա՛հ , գար-
շելի , գլխարկս գլխէս կը յափշտակես : » Այն
ժամանակ Տակօպէտ Մօռօքին դառնալով չսաւ .
« Գոնէ գուք , որ այս ամենուն պատճառ եղաք ,
գթացէք . . . վրաս . . . յիս մի պահէք . . .
դուք որ սուրբ մարդ մ'էք , բարեխօսութիւն
ըրէք ինձ համար պարոն գիւղապետին : — Ես
պէտք եղածն արդէն ըսի , պատասխանեց Մօ-
ռօք հեղնութեամբ : — Ա՛հ , ան , հիմա այդպէս
ամօթահար կապաշաւես ըրածիդ վրայ , հին
դատարկաշրջիկ . . . կը կարծէիր որ դիս պի-
տի կրնայիր խաբել քու երեմիականներովդ , կըրկ-
նեց գիւղապետը յառաջ քալելով գէպի Տակօ-
պէտ , բայց գոհութիւն Աստուծոյ, մը չեմ խաբ-
ուիր . . . պիտի տեսնես որ Վիքսի քայի մէջ լաւ
բանտեր կան խռովարար դաղղիացւոց եւ բաղ-
դախնդիր կանանց համար , վասն զի այդ օրի-
որդներդ ալ քեզնէ վար չեն մ'նար . . . Բալէ
նայինք , առջեւ ինկիր , յաւելցուց այտերն ու-
ռեցընելով , Իսկ դուն , Մօռօ՛ք , գնա . . . »
Գիւղապետը չկրցաւ խօսքն աւարտել , Տա-

կօպէն քանի մը վայրկենէ 'ի վեր ուրիշ բան չէր
խորհիր՝ բայց եթէ ժամանակ վատարկիլ : Սան-
դուղին գլուխը՝ աղջկանց սենեկին դիմացը՝ կի-
սարաց դուռ մը կար , այն կը դնէր աչքին ծայ-
րովը : Տեսնելով որ յարմար ժամանակ էր , կայ-
ծակի արագութեամբ գիւղապետին վրայ ցատ-
կեց , եւ պարանոցէն բռնելով այնպէս ուժգնու-
թեամբ այն կիսարաց դռնէն ներս հրեց , որ դա-
տաւորը դարհուրելով եւ ձայն հանելու անգամ
ժամանակ հունենալով՝ գլորեցաւ գնաց մութ սեն-
եակին մէջ ինկաւ : Այս առաջին գործն 'ի քրթ-
թել ական կատարելէ ետեւ՝ Տակօպէն դար-
ձաւ Մոռօքի վրայ , որ սանդուղն ազատ դանե-
լով՝ արտօրնօք վար կիջնէր որ փախչի : Զօրա-
կանն անոր երկայն մազերէն բռնելով քաշեց ,
իր կորովի բազկին փաթթեց , եւ մէկ ձեռքն ալ
անոր բերնին վրայ դնելով որ չկրնայ պոռալ , յու-
սահաս ընդդիմդէ թեանը հակառակ՝ քաշեց թը-
խեց մութ սենեակէն ներս , ուր գիւղապետն
ապշած ու շուարած փռուեր մնացեր էր :

Տակօպէն սենեակին դուռը փակեց , բանա-
լին երկու անգամ դարձունելով հանեց ծոցը դը-
րաւ , երկու քայլ ցատկելով սանդուղէն վար ի-
ջաւ , որուն ստորոտը նեղ անցք մը կար մինչեւ
բակը , բայց պանդոկին դուռը գոց ըլլալով այն
կողմէն դուրս ելնել անհնարին էր :

Անձրեւն հեղեղի պէս կիջնէր . զօրականը
ցած սրահի մը ապակիներուն ետեւէն տեսաւ որ
պանդոկապետն ու իր մարդիկը կրակին լուսովը

հոն նստած՝ գիւղապետին լծառոյն կ'սպասէին :

Անիջապէս նեղ անցքին դուռը կղպելով ըսկին հետ հաղորդակցութիւնն արգիլեց , եւ սանդուղէն վեր վազելով որբերուն քով եկաւ :

Մտօք , ինքզինքը դանելով , բոլոր ուժովն օգնութիւն կը պոռար մութ սենեակին մէջ . բայց բակէն բաւական հեռու ըլլալով եւ իր ձայնը հովին մոնչիւնէն եւ անձրեւին շառաչիւնէն ալ խափանուելով անհնար էր որ լսուէր : Ուստի Տակօպէտ մէկ ժամու շափ միջոց ունէր փախչելու , որովհետեւ նախ բաւական երկար ժամանակ պէտք էր անցնիլ՝ մինչեւ որ վարի ցած սրահին մէջ սպասողները դատաւորին շափէ դուրս ուշանալուն վրայ կասկածէին , ետքն ալ երկու դուռ կտարել հարկ էր , մէկը սանդուղին անցքին եւ միւսը մութ սենեակին դուռը :

Տակօպէտ շտապաւ աղջկանց սենեակը մըտնելով & որդեակներս , ժամանակն է ցուցընելու որ երակներնուդ մէջ զօրականի արիւն ունիք , ըսաւ անոնց : Խեղճ որբերը դուրսի աղմուկը լըսելով սարսափեր էին : — Ի՞նչ կայ Տակօպէտ , գոչեց Պլանշ : — Ի՞նչ կուզես որ ընենք , յարեց Ռօզ :

Զօրականն առանց պատասխանելու՝ անկողնին քով վազեց , սաւանները քաշեց հանեց , իրարու կապեց , մէկ ծայրն ալ մեծ հանգոյց մը շինելով պատուհանին ձախ փեղկին վրայ անցուց եւ միւս ծայրը դուրս թող տուաւ : Յետոյ իր մախաղը , աղջկանց պայուսակն եւ եղջերուի մօր-

Թէ մուշտակը պատուհանէն վար նետուելով, Ռա-
պա-Ժօային աչք ըրաւ որ ցատկէ վար ու անոնց
պահպանութիւն ընէ : Եունն առանց վարանելու
մէկ ցատկելուն պատուհանէն վար նետուեցաւ :

Ռօղ եւ Պլանշ ապշած՝ Տակօպէտի կը նայէին
առանց խօսք մ'արտասանելու :

« Հիմա, որդեակներս, ըսաւ անոնց, պան-
դակին դուռները գոց են . . . մի վախնաք . . . »
եւ պատուհանը ցուցընելով. « Պէտք է որ ասկէ
վար իջնէք, ապա թէ ոչ՝ պիտի բռնուինք ու
բանտը դրուինք, դուք մէկ կողմ, ես ալ ուրիշ
կողմ, եւ մեր ճանապարհորդութիւնը պարաս
պիտի ելնէ :

— Պիտի բռնուինք ու բանտը դրուինք,
գոչեց Ռօղ : — Եւ քեզնէ ալ պիտի դատուինք,
գոչեց Պլանշ : — Այո, խեղճ որդեակներս : Ժօ-
վիայն սպաննեցին . . . պէտք է որ քաշելով
փախչինք ու ինքզինքնիս Վիրսիքանեանք . . .
Երբոր յողնիք, ձեզ կարգաւ կը շալկեմ, եւ եթէ
ճանրան մուրալ ալ հարկ ըլլայ՝ աչքս առեր եմ
պէտք է որ հասնինք . . . բայց շուտ ըրէք, քա-
ռորդ մ'ետքը մեր ամեն ջանքն 'ի դերեւ կել-
նէ . . . Օն, որդեակներս, վատահեղիք իմ վը-
րայ . . . ցուցըցէք որ Սխօն զօրապետին աղ-
ջիկները վախկոտ չեն . . . տակաւին յոյս կը
մ'նայ մեզ : »

Երկու քոյրերն համակրական շարժմամբ
մ'իրարու ձեռքէ բռնեցին որպէս թէ վտանգին
դէմ իրարու հետ միանալու համար, եւ իրենց

սիրուն երեսաց վրայ՝ որ այսչափ սրտադողերէ
դեղներէր, միամիտ քաջասրտութիւն մը փայլիլ
ակտաւ, որուն պատճառը դօրականին անձնութի-
րութեանը վրայ ունեցած կոյր փտահաւթիւն-
նին էր :

« Անհող եղիր, Տակօպէս . . . մեք չենք
վախնար, ըսաւ Ռօզ անվեհեր ձայնով մը : — Եւ
ինչ որ պէտք է ընել՝ կընենք, յաւելցուց Պլանշ
ալ՝ սոյնպէս փտահաւթեամբ : — Ես արդէն ան-
տարակոյս էի ձեր վրայ . . . քաջի արիւնջ սուտ
չելներ . . . քալեցէք նայիմ, դուք փետուրի
չափ ծանրութիւն չունիք . սաւանն ամուր է .
պատուհանէն մինչեւ դետինը հաղիւ ութ ոտք
բարձրութիւն կայ . . . եւ Ռապա-ժօան վարը
ձեզ կ'սպասէ : — Առաջ ես պէտք է վար իջնեմ
վասն զի անդ բանկութեան կարգն այսօր իմս է,
ըսաւ Ռօզ խանդաղատանօք իր քոյրը համբու-
րելով, եւ վազեց դնաց պատուհանին քով, որ
պէս զի եթէ առաջ իջնելէն վտանգ մը կար՝ ի-
րեն պատահէր եւ ոչ քրոջը :

Տակօպէս դուշակելով Ռօզին արտորալուն
պատճառը . « Սիրելի զաւկըներս, ըսաւ, կը
հասկընամ ձեր մտքէն անցածը, բայց մի վախ-
նաք իրարու համար . ամենեւին վտանգ չկայ .
սաւանը ես ձեռքովս կապած ու ամուր մը պա-
տուհանին անցուցած եմ . . . օ՛ն, շուտ ըրէ՛ .
սիրուն Ռօզս : » Իսկոյն աղջիկը թռչնոյ թևի-
ւութեամբ պատուհանին մէջ ելաւ, Տակօպէսին
օգնութեամբ սաւանը բռնեց եւ կամաց կամաց

ասհելով վար իջաւ զօրականին պատուէրին հա-
մեմատ , որ մինչեւ կէս մէջքը պատուհանէն
դուրս ծռելով քաջալերութիւն կուտար անոր :

Երբոր Աօղ ստքը գետինը դրաւ , « մի վախ-
նար քոյր իմ , ըսաւ վարէն կամացուկ մը , խիստ
գիւրին է եղեր այսպէս վար իջնելը . Ռապա-Ժօա
հոս է , եւ ձեռքերս կը լիզէ . . . »

Պլանչ ալ՝ քրոջը պէս քաջասիրտ՝ անմի-
ջնապէս վար իջաւ նոյն յաջողութեամբ :

« Խեղճ սիրուն աղայք , ի՞նչ յանցանք ու-
նէին որ այսպէս դժբաղդ եղան . . . արդեօք
այս գերդաստանին ճակատագիրն անիծեալ է ,
զոչեց Տակօպէռ սրտին կրակէն հայհոյելով , եր-
բոր Պլանչին գեղնած եւ անուշ գէմքն աներե-
ւոյթ եղաւ գիշերուան մութին մէջ՝ զոր բռնա-
չունչ հոփն եւ հեղեղային անձրեւն առաւել եւս
զարհուրելի կընէին :

« Եւա ըրէ վար իջիր , քեզ կ'սպասենք , ը-
սին որբերը դած ձայնիւ՝ պատուհանին տակը
կանդնած : »

Զօրականն իր բարձր հասակին օգնութեամբ
դրեթէ վար ցատկեց պատուհանէն՝ առանց սա-
ւանը բռնելու :

Տակօպէռ եւ երկու աղջիկներն հաղիւ քա-
ռորդէ մ'ի վեր վախեր հեռացիր էին Ծօքօն-Պը-
լանի պանդոկէն , եւ ահա ուժգին ճարճատիւն
մը լսուեցաւ տանը մէջ , Գիւղապետն եւ Մօռօք
մութ սենեկին դուռը բանալու աշխատելէ ե-
տեւ , մերջապէս ծանր սեղան մը լծակի տեղ դոր-

ծածկելով կոտորեցին բացին, եւ ճրագին լուսովն
ազջկանց սենեակը վազելով նայեցան որ մարդ
չկար:

Մտօք սաւաններն իրարու կապուած եւ
պատուհանէն դուրս կախուած տեսնելով գոչեց-
« Պարոն գիւղապետ, ահա պատուհանէն վա-
խեր են. բայց ձի չունին, ոտքով դացած են,
ուստի այս մութ ու փութորկալից գիշերին մէջ
չատ հեռացած չեն կրնար ըլլալ: — Անշուշտ չեն
կրնար մեր ձեռքէն ազատիլ, ըսաւ գիւղապետը,
ա՛հ թշուառական բաղդախնդիրներ, վրէժս պի-
տի առնում ձեզնէ . . . վաղէ Մտօք, շուտ ը-
րէ . . . երկուքիս ալ պատիւը վտանգի մէջ է: »
— Ես պատիւէս աւելի մեծ բան կը կորսնցընեմ,
պարոն գիւղապետ, եթէ չկրնանք դասոնք բըռ-
նել, պատասխանեց Մտօք դայրագին, եւ ար-
տորնօք սանդուղէն վար իջնելով բակին դուռը
բացաւ եւ բարձրաձայն գոչեց. « Գողիւնթ, շու-
ներն արձրկէ . . . եւ դուք, պանդոկապետ,
լապտերներ վառեցէք, ձողեր բերէք, ձեր մար-
դիկը զինուորեցէք, դուռները բացէք, վազենք
փախստականներուն ետեւէն . . . չեն կրնար
մեր ձեռքէն ազատիլ . . . պէտք է որ անպատ-
ճառ բռնենք . . . որչ կամ մեռեալ: »



ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Մ Ի Լ Ի Է Օ Տ Է Չ Ի Ի Ր Ս Է Ն Փ Ո Ղ Ո Յ Ը

Գ.Լ.ՈՒԽ Ա.Ռ.Ա.ՋԻՆ

Թ.Ղ.Թ.Ա.ԿՅՈՒԹԻԻՆՔ.

Մօռօք տեսնելով որ Տակօպէս առանց ձի-
ու թուղթերու եւ ստակի մ'նաց, եւ նկատելով
որ այս վիճակին մէջ չէր կրնար ճանրան շարու-
նակել, գիւղապետը դեռ սղանդոկը չեկած՝ նա-
մակ մը գրեր ու Քարլին տուեր էր որպէս զի ան-
միջապէս Նիքսիքա տանի ու թղթատարութեան
յանձնէ: Նամակին հասցէն այս էր.

Ա. Պ. Ռ. Ո. Ռ. Ռ.

Մէլէեօ Տեղ Ի. Ռ. Ռ. Ռ. Ռ.

Ի Փ. Ռ. Ռ.

Այս անբնակ եւ բաւական անձանօթ փողո-
ցին մէջ, որ Սէն Լանտրի փողոցէն քիչ մը հեռու
Նարթօլէոնի գետեղրը կելնէ, փոքրիկ շէնքով մը
փողոցէն դատուած նեղ ու մուլթի զաւթի մը ներ-
սի կողմն անշուք երեւոյթով տուն մը կար:
Փողոցին վրայի փոքրիկ շէնքը կամարակապ դուռ

մ'եւ երկաթեայ հաստ վանդակասիււներով երկու պատուհան ունէր :

Այն լոխն բնակարանին մէջ վերջին աստիճանի պարզութիւն կը տիրէր , ինչպէս որ գետնի վրայի մեծ դահլիճէն ալ յայտնի էր , որուն որմերը հին եւ մոխրագոյն տախտակներով պատեալ էին , գետինը կարմրաներկ եւ մօմազօծ քառակուսի աղիւսներով յատակեալ , եւ պատուհանները ճերմակ քալիքօթէ պատառով վարագուրեալ :

Մենեակին միւս ծայրը՝ վառարանին դիմացը միակտուր կաղնեայ պատուանդանի մը վրայ չորս սանաչափ տրամագիծով երկրագունտ մը կար , որուն վրայ շատ մը կարմիր խաչ նշաններ կը տեսնուէին աշխարհի ամեն մասերուն մէջ ցրուեալ : Հիւսիսէն հարաւ , արեւելքէն արեւմուտք , ամենէն բարբարոս երկիրներէն ու հեռաւոր կղզիներէն մինչեւ ամենէն քաղաքակիրթ երկիրներու եւ մինչեւ իսկ Պաղղիոյ մէջ բազմաթիւ քաղաքներ այն կարմիր խաչանշանով որոշուած էին , հասկցուելու համար անշուշտ թէ այն նշանակեալ տեղերը ճիղվիթներուն համար կարեւոր գործեր կամ որջեր կային :

Վառարանին մօտ պատին կրթնած սեւ փայտէ սեղան մը կար վրան թուղթերով լեցուն , եւ տռջեւն ալ դատարկ աստ մը : Քիչ մը հեռուն , երկու պատուհաններուն մէջ տեղը՝ ընկուզենիէ շինուած մեծ գրասեղան մը կար՝ վրան դարակներով , որք թուղթէ քսակներով լցուած էին :

1831 հոկտեմբեր ամսոյն վերջը՝ առաւօտեան ժամը ութին միջոցները՝ գրասեղանին առջև մարդ մը նստած գիր կը գրէր։ Այս մարդը Մոսքի թղթակից Պ. Ռօտէնն էր։ Յիսուս սարուկար, ձիթագոյն մաշած զգեստ մը հագած էր ճենճոտ օձիքով, փողպատի տեղ ընչախոտի թաշկինակ մը կապեր էր վիզը, սեւ չուխայէ բաճկոն մ'եւ նոյն գուճով տախտակ մը հագեր էր վերջին աստիճան հին։ Ոտքերը խոշոր ու խղաներկ կոշիկներ անցուցեր եւ կարմրափայլ աղիւսեայ սաւլայատակին վրայ փռուած քառակուսի փոքրիկ օթոցի մը վրայ գրեր էր։ Մոխրագոյն մազերը քունքերուն վրայ տափկըցած եւ ճաղատ ճակտին վրայ պսակ մը ձեւացուցած էին։ յօնքերը հազիւ կերեւէին։ Վերին արտեւանունքը՝ զեռնոց աչքին վրայի մաշկին պէս թոյլ եւ կախ ըլլալով իր կրակոտ ու սեւ փոքրիկ աչքերը կիսով չափ կը ծածկէին։ իր բարակ եւ դժգոյն շրթունքը՝ երեսին գեղնութեանը հետ խառնուած էին։ Քիթը կզակին պէս սրածայր էր։ Այս դալկահար եւ անշուրթն դէմքն իր գերեզմանական անշարժ ութեամբ առաւել տարօրինակ երեւոյթ մ'ունէր։ Աթէ մատներուն արագ շարժումը չըլլար, որով Պ. Ռօտէն՝ գրասեղանին վրայ ծռած գրիչը կը ճարճատեցընէր, զինքը տեանողը գիակ մը կը կարծէր։

Երկար թուղթ մը կօրինակէր՝ առջևը դրուած գաղանի այբուբենի մ'օգնութեամբ, որուն բանալին շունեցողը չէր կրնար բան մը հասկընալ։

Այս խոր լռութեան մէջ, անպամած օղի մը
ժամանակ՝ որ առաւել տխուր երեւոյթ մը կու-
տար ընդարձակ ցուրտ ու մերկ սրահին, այս սառ-
նադէմ մարդուն այսպէս դազանի տառերով գիր
գրելը չարաչուք տպաւորութիւն մը կընէր տես-
նողին վրայ :

Ժամը ութ զարկաւ :

Փողոցին փոքր դուռը կամացուկ մը զար-
նուեցաւ, յետոյ զանգակ մը երկու անգամ հըն-
չեց, քանի մը դուռներ բացուեցան ու գոցուե-
ցան, եւ նոր մարդ մը սրահէն ներս մտաւ :

Պ. Ռօտէն զայն տեսնելուն պէս ռաքի վրայ
ելաւ, գրիչը մատներուն մէջ դրաւ, խորին ակ-
նածութեամբ մ'ողջունեց, եւ առանց բռն մ'ար-
տասանելու՝ վերստին նստաւ իր դործը շարու-
նակեց :

Այս երկու մարդիկը զարմանալի հակապատ-
կեր մը կընծայէին :

Նոր եկողը՝ որ երեւցածէն աւելի տարւօք
էր, առ առաւելն երսուենեւից կամ երսուենեւութ
տարեկան կը թուէր. բարձր եւ վայելուչ հասակ
մ'ունէր. իր խաժ եւ պողպատի պէս փայլուն
խոշոր աչքերէն կարծես թէ կրակ կելնէր. քի-
թը՝ ճակտին մօտ լայն՝ եւ վարի կողմը քառա-
կուսի հաստ ձեւ մ'ունէր, ծնօտները լայն եւ բռ-
լորովին դերձեալ, որոց կապուտակ գոյնը շր-
թունքներուն կարմրութեանն ու գեղեցիկ ատա-
մունքներուն սպիտակութեանը քով աչքի կը
զարնէր : Նրբոր գլխարկը վար առաւ, որպէս զի

փոքր անդանին վրայէն սեւ թաւիչէ գոգակ մ'տա-
նու գլուխը դնէ , շագանակագոյն մազերը տեա-
նուեցան , որք տակաւին ճերմկնալ չէին ակաած և
Երկար վերարկու մը հագած էր՝ զինուորականի
պէս մինչեւ պարանոցը կոճկած : Այս մարդն իր
խորաղնին նայուած քէն եւ լայն ճակատէն մեծ
հանճարի աէր կերեւէր . կուրծ քին եւ ուսերուն
լայնութենէն ալ կը հասկցուէր թէ խիտ կորովի
կազմուածք մ'ունէր . վերջապէս իր կերպարա-
նաց նշանաւորութիւնը , ձեռնոցներուն ու կո-
շիկներուն մաքրութիւնն ու վայելչութիւնը ,
մազերէն ու անձէն բուրած թեթեւ անուշահո-
տութիւնը եւ իր ամենափոքր շարժմանց շնորհքն
ու դիւրութիւնը կը ցուցընէին որ աշխարհի մարդ
մ'էր եւ կրնար ամեն տեսակ յաջողութեանց հե-
տամուտ ըլլալ՝ ամենէն սնտախներէն մինչեւ ամե-
նէն կարեւորներուն : Այս հազուադէպ համե-
մատութենէն , այնէ դորաւոր միտք , քաջառողջ
մարմին եւ վերջին աստիճանի բարեձեւութիւն ,
այնպիսի նշանաւոր ամբողջ մը ձեւացեր էր , որ
այս աղգու դէմքին իշխանական երեւոյթը կեր-
պով մը մեղմացած ու բարեխառնած էր յարա-
տեւ՝ բայց ոչ միօրինակ ժպիտով մը . վասն զի
այն ժպիտը՝ ըստ պարագային սիրալիր կամ խորա-
մանգ , մտերմական կամ զուարթ , քաղաքավա-
րական կամ հաճոյական՝ եւ եւս կաւելցընէր այս
մարդուն հրապուրիչ դորութիւնը . զոր անգամ
մը տեսնողը երբէք չէր մոռնար :

Սակայն , թէ եւ այսչափ մարմնոյ եւ մտաց

ձիրքեր միացեալ էին իր վրայ, եւ զինքը տեսնողը միշտ անդխմադքելի հրասլոյրի մը ազդեցութեան ներքեւ կը մնար, բայց անոր հետ միանգամայն տարտամ կասկած մ'ալ կ'զգար մաքին մէջ, որպէս թէ իր շնորհալի եւ ազնուական կերպերը, խօսքերուն սրտադրաւ դօրութիւնը, փափուկ շողումութիւններն եւ փառաքուշ ժպտը՝ նենգածէտ որոգայթ մը ծածկած ըլլային: Աերջապէս զինքը տեսնողը՝ որչափ եւ սկամայ համակրութիւն մ'զգար, կը հարցընէր ինքնիրեն թէ զինքը քաշողը բարի՞ն էր թէ չարը

Պ. Ռօտէն՝ որ նոր եկողին քարտուղարն էր, դրութիւնը կը շարունակէր:

« Տիւնքէրքէն զիր կայ, Ռօտէն, հարցուց մեծաւորը: — Թղթաբերը դեռ չեկաւ: — Թէ եւ մօրս առողջութեան վիճակին վրայ այնչափ վախնալու բան չկայ, վասն զի արդէն ապաքինիլ սկսած է, ըսաւ նորէն մեծաւորը, բայց սիրտըս բոլորովին ապահովելու համար հարկ է որ իմ ազնիւ բարեկամէս . . . Սէն-Տիդիէի իշխանուհիէն նամակ մ'ընդունիմ . . . վերջապէս կը յուսամ որ այս առաւօտ բարի լուրեր կուեննամ: — Փափաքելի է, ըսաւ քարտուղարը խոնարհ եւ հլու դէմքով, բայց լակոնական եւ անկարեկիր ոճով մը: — Այո, փափաքելի է, կրկնեց մեծաւորը, վասն զի կենացս լաւագոյն օրերէն մէկն եղաւ այն օրը, ուր Սէն-Տիդիէի իշխանուհին իմացուց ինձ թէ մայրս յանկարծական եւ վտանգաւոր հիւանդութենէ մ'ազատեր էր իր խնամոց

չնորհիւ . ապա թէ ոչ՝ անմիջապէս իշխանութեան
 երկիրը պիտի երթայի՝ թէ եւ իմ հոս գտնուելս
 խիտտ հարկաւոր ըլլար: Յետոյ, Քարտուղարին գը-
 րասեղանին մօտենալով՝ աւելցուց . « Օտար եր-
 կիրներէ եկած նամակները կարդացի՞ր : — Սհա-
 շախիկ անոնց բովանդակութիւնը . . . — Նա-
 մակները միշտ պատեանի մէջ ծրարուած կը հաս-
 նի՞ն նշանակած տուներս . . . եւ իմ հրամանիս
 համեմատ հոս կը բերուի՞ն : — Ս, յո՛ւ , միշտ :
 — Արդան նայիմ վերջին նամակներուն բովան-
 դակութիւնը . եթէ անոնց մէջ իմ կողմանէ ուղ-
 դակի պատասխան գրուելիք նամակներ գտնը-
 ւին՝ կիմացընեմ քեզ : »

Ռօտէնի մեծաւորը ձեռքերն ետին կապած
 պտըտիլ սկսաւ սենեակին մէջ եւ դիտողութիւն-
 ներ ընել կամ հրահանգներ տալ , զորս մեծ ու-
 շադրութեամբ կը նշանակէր Ռօտէն :

Քարտուղարը թուղթերու ծրար մը ձեռքն
 առած սկսաւ կարդալ այսպէս . « Տոն-Ռամօն Թ-
 լիքարէզ կը գրէ Քատիսէն թէ ԷԾ թիւ նամակն
 ստացած է , եւ անոր մէջ տրուած պատուէրին
 համեմատ պիտի ուրանայ առեւանգութեան մաս-
 նակցութիւնը . . . — Ղիտողութեան արժանի
 բան մը չկայ ատոր վրայ , անցիր : — Տիկայի Ռո-
 մանօֆ կոմսը ներդութեան մէջ կը գտնուի . . .
 — Գրուի Տիւրլէսիին որ յիտուն սակի օգնութիւն
 դրկէ անոր . ես ժամանակաւ կոմսին գունդին
 մէջ հարիւրապետութիւն ըրած եմ , եւ միշտ
 պատուական լուրեր ու տեղեկութիւններ կու-

տայ մեզ : — Տիւստէլֆիայէն կը գրեն թէ բարե-
պաշտներուն համար ռեֆորմէն տպուած եւ վեր-
ջին անգամ դրկուած Գաղղիոյ պատմութիւննե-
րը վաճառուեր լմնցեր են, եւ նորէն կը խնդրեն :
— Նշանակէ որ գրուի Տիւբլէսիին . . : Շարու-
նակէ : — Պ . Արտուէլի վրայ ուղուած գաղտնի
տեղեկութիւնները Պ . Սբինտլէր կը դրկէ Նամուր
քաղաքէն : — Անոնց իմաստն ալ պէտք է հա-
մառօտել : — Նոյն քաղաքէն Պ . Արտուէլ ալ Պ .
Սբինտլէրի վրայ ուղուած գաղտնի տեղեկու-
թիւնները կը դրկէ : — Այն ալ պէտք է համա-
ռօտել : — Վան-Օսթատ բժիշկն ալ նոյն քաղա-
քէն խորհրդաբար գաղտնի տեղեկագիր մը կը
դրկէ Պ . Սբինտլէրի եւ Պ . Արտուէլի վրայ :
— Միւսներուն հետ բաղդատուի . . : Շարու-
նակէ : — Թուրինէն Մալբիէրի կոմսը կը գրէ թէ
300,000 Ֆրանքի հրիտակն ստորագրուեր է :
— Տիւբլէսիին իմացընելու է . . : Ետքը՞ : — Տոն
Սթանիսլաս Պատէնի ջուրերէն մեկներ է Մարի
Էրնէսթին թագուհւոյն հետ : Աիմացընէ թէ Ն .
Վեհափառութիւնը շնորհակալութեամբ պիտի
ընդունի մեր ընկերութեան կողմանէ իրեն գրը-
ռելիքները, եւ իր ձեռօքը պատասխան պիտի
գրէ : — Նշանակէ . . . ես ինքս պիտի գրեմ
թագուհւոյն : »

Մինչդեռ Ռօտէն ձեռքը բռնած թուղթին
լուսանցքին վրայ ծանօթութիւններ գրելու ըզ-
բաղած էր, իր մեծաւորը սենեակին երկայնքին
ու լայնքին մէջ նեմելը շարունակելով երբոր

աշխարհացոյց գուշտին առջեւ գնաց, որուն վը-
րայ բազմաթիւ մանր կարմիր խաչ նշաններ կա-
յին, կանգ առաւ եւ խոկուն դէմքով վայրկեան
մը գայն նկատեց:

Ռօտէն դարձեալ շարունակեց.

« Հայր Օրօնի Միլանէն կը գրէ թէ Իտա-
լիոյ քանի մը կողմերուն մտաւորական վիճակին
նայելով՝ ուր քանի մը յեղափոխական քաջքեր-
նին դէպ 'ի Գաղղիա դարձուցած են, խիստ լաւ
կըլլայ փոքրիկ գիրք մը տպել, որուն մէջ մեր
ազգակից գաղղիացիք իբրեւ ամբարիշտ, ցոփ,
աւարառու եւ արիւնկղակ ցոյց տրուին, եւ այն
գիրքն առատութեամբ տարածել Իտալիոյ մէջ:

— Խիստ լաւ գաղափար մ'է: Գաղղիոյ հասարա-
կապետութեան պատերազմներուն ժամանակ
մերիններուն Իտալիոյ մէջ գործած քանի մը չա-
փազանցութիւնները վարպետ կերպով յիշատա-
կել եւ միտքերը գրգռել. . . Այդպիսի գրքոյկի
մը շարագրութիւնը Քաթ-Տիւմուլէնին պէտք է
յանձնել, որ մաղձով լեղիով եւ թունով շաղեալ
մարդ մ'է. ես ալ քանի մը տեղեկութիւններ
կուտամ սնոր, եւ դրքոյկը սարսափելի բան մը
կըլլայ: Բայց Տիւմուլէնին ստակ տալու չէ մին-
չեւ որ ձեռագիրն առնուի իրմէ. . . — Հարկաւ
այդպէս պիտի ըլլայ. . . եթէ ստակը կանխիկ
վճարուի, դէշ տեղ մը կերթայ եւ ութ օր շարա-
չար կը գինովնայ: Անցեալները Մարթէն վարժա-
պետին փիլիսոփայութեան համաստուածեան մի-
տումներուն դէմ գրած կրակուբոց տեսրակին:

վարձը երկու անգամ վճարելու հարկադրեցանք .
— Նշանակէ . . . եւ շարունակէ : — Ամառ-
նու կլիմայընէ թէ քորձակն ընդամասը դատաւո-
րին պիտի ներկայացընէ , որպէս զի իւր հաշիւ-
ները տայ : »

Ռօտէն նօսր գրով բառերը մասնաւոր կեր-
պիւ շեշտեց , եւ յետոյ հարցուց իր մեծաւորին .
& կը հասկընա՞ք . . . — Ատարելապէս . . .
ըսաւ մեծաւորն ուրախալի շարժմամբ մը . այդ
բառերը մեր մէջ կանխաւ որոշուած յատուկ նը-
շանակութիւններ ունին Յարը՞ : — Բայց
քորձակն իւր խղճին մէջ վերջին տարակոյս մ'ու-
նի : » Մեծաւորը խոժոռեցաւ եւ վայրկեան մը
լուռ կենալէ ետեւ ըսաւ . քորձակն նախ առանձ-
նութեան ու լուսեան մէջ պահելով ներդոր-
ծել անոր մտայը վրայ , եւ յետոյ վերստին կար-
գացընել իրեն խղճի այն պարագաներուն ցանկը
որոց մէջ արքայասպանութիւնն հրամայուած ու
ներուած է Շարունակէ : — Միտնէյ անուն
կլինը կը գրէ Տրէզտէն թէ մեր հրահանգներուն
կ'սպասէ : Իր պատճառաւ նախանձութեան կը-
ռիւնները նորէն սկսեր են հօրն եւ որդւոյն մէջ ,
բայց Միտնէյ՝ ոչ անոնց փոխադարձ ասելութեան
զեղումներուն եւ ոչ իրարու նկատմամբ մէկէն
կամ միւսէն ստացած դաղանի յայտարարութիւն-
ներուն մէջ մեր իրմէ խնդրած տեղեկութիւննե-
րուն վերաբերեալ բան մը չէ գտեր : Մինչեւ հի-
մա կրցեր է երկու քէն ուրն ընտրելը յայանելէ ըզ-
գուշանալ , բայց կը վախնայ որ եթէ այս անու-

բոշ վիճակը երկար տեւէ՝ երկու քն ալ կասկած թ
կերթան : Ո՞րը պէտք է առաւել սիրէ , հանրը
թէ որդին : — Որդին նախանձութեան ու
խնն առաւել սաստիկ եւ անդուժ կըլլայ հօրը
արտին մէջ , եւ թերեւս իր սիրելոյն նախամեծար
համարուելուն վրայ կատաղելով կը յայանէ այն
կարեւոր դադանիքը , զոր ինք ալ որդւոյն պէտ
պահելու պարտաւոր է . . . : Շարունակէ : — Ամբ
բոսիոսին երկու անգլիկ ծառայները՝ զորս Վալէի
լեւներուն մէջ վտարիկ թեմի մը մէջ դրած էինք ,
երեք տարիէ ՚ի վեր անյայտ եղան , եւ ինչ ըլլալ
նին մարդ չգիտեր : Այս օրերս երրորդն ալ ան-
հետ եղեր է . . . : Նրկրին բողոքականներն ի-
րար անցեր՝ ազանութեան եւ սարսափելի պա-
րագաներու խօսքեր կընեն . . . : — Մինչեւ որ
եղելութիւնը յայանի եւ կատարեալ ասպարոյցնե-
րով հաստատուի , Ամբրոսիոս պէտք է պաշտ-
պանուի բողոքականաց անարժան ամբաստանու-
թիւններուն դէմ , որք բնաւ ետ չեն կենար մե-
զի դէմ այլանդակ սուտեր հնարելէ . . . : Շա-
րունակէ : — Թոմբասն Ախիքբուլէն կը գրէ թէ
վերջապէս յաջողեր է Ժիւսթէնը լորտ Սթիւար-
թի քով դնելու իբրեւ հաւատարիմ գործակա-
տար : Լորտ Սթիւարթ Նրլանտացի հարուստ կա-
թոլիկ մ'է , եւ օրէ օր խելքը ակարանալու վրայ
է : — Նթէ Թոմբասնի դրածն ստուգուի՝ յիտուն ոս-
կի պարգև տրուի իրեն : Նշանակէ որ Տիւբլէ-
սին գրես . . . : Շարունակէ : — Մրանք — Տի-
քէսթէն Ալիէնայէն կիմացընէ թէ իր հայրը քօ-

լէռայէն մեռեր է քաղաքէն քանի մը ժամ հեռու
գիւղի մը մէջ . վասն զի այս համաճարակ հիւան-
դութիւնը հիւսիսային Ռուսաստանէն կամաց կա-
մաց յառաջ կուգայ Ղևհաստանի ճանքով . . .
— Յշմարտ է , ըսաւ Ռօտէնի մեծաւորն անոր
խօսքը կարելով , երանի թէ այս սոսկալի հար-
ւածն իր ահադին ընթացքը դադրեցընէր եւ
Գաղղիա ալ չհասնէր . . . Ծրանք-Տիքէսթէյն,
կրկնեց Ռօտէն , կը ծանուցանէ թէ իր երկու
եղբայրները մտքերնին դրեր են որ հօրերնուն
մեր ընկերութեան համար ըրած հրիտակին դէմ
դատ բանան . բայց ինք անոնց համամիտ չէ . . .
— Մեր երկու օրէնսգէտներուն կարծիքը հար-
ցուի : Ծարուհակէ : — Սմալֆիի իշխան կարդի-
նալը մեր դրկած յիշատակադրին առաջին ելեք
կէտերը կընդունի եւ ըստ այնմ պիտի վարուի .
բայց չորրորդ կէտին վրայ աղատութիւն պահել
կուղէ : — Աղատութիւն չկայ , պէտք է որ բա-
ցարձակապէս եւ ամբողջ ընդունի , ապա թէ ոչ
պատերազմ . կը լսես , լաւ նշանակէ , սաստիկ
եւ անխնայ պատերազմ թէ իրեն եւ թէ իր մար-
դոցը դէմ . . . Ծարուհակէ : — Ծրա-Բաօլօ կը
դրէ թէ զօրաւոր գաղանի ընկերութեան մը գը-
լուխ Պօքքարի անուն հայրենասէրը՝ տեսնելով
որ իր բարեկամները կը կասկածին իր վրայ եւ
զինքը մատնիչի տեղ կը դնեն , յուսահատութե-
նէն ինքզինք սպաններ է : Ծրա-Բաօլօ վարպե-
տութեամբ յաջողեր է վերջապէս կասկած ձգել
Պօքքարի բարեկամներուն մտացը մէջ . — Պօք-

քարի ինքզինք ապաննէ . . . կարելի՞ բան է . . .
հայրենասէր Պօքքարին . . . մեր վտանգաւոր
թշնամի՛ն , դոչեց Ռօտէնի մեծաւորը : — Այո՛ ,
հայրենասէր Պօքքարին , կրկնեց Ռօտէն պաղ-
արիւնութեամբ : — Գրէ Տիւբլէսիին որ քան-
եւհինգ ոսկի զրկէ Յրա-Բաօլօի : Շարունակէ .
— Հօսման կը ծանուցանէ թէ Ալպէրթին Տիւ-
քօրնէ անուն դաղղիացի կաքաւիչը՝ թագաւորող
իշխանին սիրուհին է , եւ լիազօր ազդեցութիւն
մ'ունի անոր վրայ . ուստի անոր ձեռքով կրնանք
աւելի ապահովութեամբ հասնիլ մեր նպատակին .
բայց Ալպէրթին իր միւս տարիաւորին բերանը
կը նայի , որ Գաղղիոյ մէջ իբրեւ խարդախ դա-
տապարտութիւն կրած է , եւ առանց անոր հար-
ցընելու բան մը չընենք . . . — Հրաման գրել
Հօսմանին որ երթայ այն մարդուն հետ տեսնուի ,
եւ եթէ ուղածը չափաւոր բան մ'է՛ կատարելու
խօսք տայ . յետոյ հասկընայ անկէ թէ այդ օրի-
որդը Փարիզի մէջ ազգական ունի՞ : — Օրպանօի
գուքսը կը ծանուցանէ թէ թագաւորը հրաման
պիտի տայ որ առաջարկեալ տունը կանխաւ ծա-
նուցուած պայմաններուն համեմատ շինուի .
— Պայման չընդունուիր , պէտք է որ կամ պար-
զապէս հաւանութիւն տայ՝ կամ բացարձակապէս
մերժէ . այս կերպով մարդ իր բարեկամն ու թըշ-
նամին կը ճանչէ . . . որչափ պարագայներն ան-
յաջող ըլլան , այնչափ առաւել հաստատամտու-
թիւն եւ անյողդողդ կամք պէտք է ցուցընել ,
եւ յանձնապատանութեամբ դիմացինին աչքը

վախցընել : — Նոյն անձը կը ծանուցանէ թէ բո-
 լոր դեսպանները կը պաշտպանեն այն բողոքա-
 կան օրիորդին հօրը պահանջումը՝ որ իր աղջիկը
 քաշել առնուլ կուզէ վանքէն , ուր ապաստան
 եւ պաշտպանութիւն գտած է , բայց աղջիկն այս
 պայմանաւ միայն յանձն կառնու : վանքէն ելնել ,
 որ հօրը կամացը հակառակ ամուսնանայ իր տար-
 փաւորին հետ : — Ա՛ . . . ան . . . դեսպանները
 տակաւին հօրը պաշտպանութիւն կընեն : — Ա-
 յո՛ . . . : — Արեւմն դարձեալ պատասխան դըր-
 ուի թէ հոգեւոր իշխանութիւնը մարմնաւորին
 հետ գործ չունի : »

Այս միջոցին դրան զանգակը երկու անգամ
 զարնուեցաւ :

« Ել նայէ՛ ո՛վ է , ընաւ Ռօտէնին մեծաւորը :
 Ռօտէն դուրս ելաւ . իսկ մեծաւորը սենեակին
 մէկ ծայրէն միւսը կերթար կուգար խոկուն դէմ-
 քով . նորէն աշխարհագրական գունտին մօտը
 հասնելով կանգ առաւ . քանի մը վայրկեան խո-
 րին լռութեամբ նկատեց այն անթիւ կարմիր
 խաչ նշանները՝ որք կարծես թէ անհուն ցանցի
 մը պէս աշխարհի բոլոր երկիրներուն վրայ տա-
 րածուած էին : Այս մարդն անտարակոյս իր աշ-
 խարհատարած իշխանութեան աներեւոյթ գորու-
 թեանը վրայ կը խորհէր , վասն զի երեսին գոյնն
 առաւել կենդանութիւն մ'առաւ , իր խաժագոյն
 լայն բիրերը կարծես թէ կրակ ցայտել սկսան ,
 ունեզերն ուռեցան , եւ իր այրական դէմքն ան-
 հաւատալի ազդուութեան յանդգնութեան եւ :

գոռողութեան կերպարանք մ'առաւ : Հպարտ
ճակատով եւ արհամարհոտ շրթունքով երկրա-
գընտին աւելի մօտը գնաց եւ իր ուժեղ ձեռքը
բեւեռին վրայ դրաւ . . .

Ս. Ենպէս զօրաւոր կերպով դայն բռնելը , եւ
իր հրամայական ու տիրողական շարժումը տես-
նողը՝ կըսէր թէ այս մարդն ինքզինք ատէր կը հա-
մարէր երկրագնտին , դոր իր յաղթ հասակին
բարձրութենէն կը նկատէր , եւ որուն վրայ այն-
պէս խրոխտ եւ յանդուգն կերպով ձեռքը կը դը-
նէր : Այլ չէր ժպտեր երեսը . լայն ճակատը ահա-
գին կերպով կնճռեցաւ եւ աչքէն սպառնալիք կը
ցայտէր : Այլ չէ պատկերհան մը հպարտութեան
ու բռնակալութեան սատանան նկարել ուղէր ,
ասկէ առաւել սարսափելի օրինակ մը չէր կրնար
գտնել :

Երբոր Ռօտէն ներս դարձաւ , մեծաւորին
դէմքն իր սովորական կերպարանքն առած էր :

Ռօտէն ձեռքը բռնած նամակները ցուցընե-
լով ըսաւ . « Թղթ արերն է եկողը եւ Տիւնքէր քէն
բան մը չկայ : — Բան մը չկայ մի , դռչեց մեծա-
ւորը , եւ տրտում սրտայուզութիւն մը տեսնուիլ
սկսաւ երեսին վրայ , որ քիչ մ'առաջուան սէգ
եւ անողօք կերպարանքին հետ բաղդատելով
զարմանալի հակասութիւն մը կերեւէր :

« Բան մը չկայ . . . մօրմէս բնաւ լուր մը չկայ
ըսաւ . ուրեմն տակաւին երեսունուվեց ժամ
սրտատանջութիւն պիտի կրեմ . — Ինձ այնպէս կը
թուի որ եթէ իշխանուհին գէշ լուրեր ունենար՝

կը գրէր . ուստի հաւանական է որ մօրերնուց լաւութիւնը կը շարունակէ : — Անշուշտ իրաւունք ունիս , Ռօտէն , բայց ի՞նչ օգուտ . . . սիրտս հանդարտ չէ . . . : Եթէ վաղը վատահասցուցիչ լուրեր շառնում , իշխանուհւոյն երկիրը կերթամ . . . : Ռ՛հ , ի՞նչ պէտք էր մօրս ելնել հոն երթալ աշունն անցունելու . . . կը վախնամ որ Տիւնքէրքի շրջակայներուն օդը չյարմարիր իրեն . . . : »

Պահ մը լռելէ ետեւ՝ աւելցուց դարձեալ ճեմելով . վերջապէս նայէ այդ նամակներն ուստի՞ կուգան . . . : »

Ռօտէն անոնց դրոշմը զննելէ ետեւ պատասխանեց . « Չորս նամակէն երեքը միտայներուն գործին կը վերաբերին . . . — Օրհնեալ է Աստուած . . . երանի թէ լուրերն յաջող ըլլային , դռնէց Ռօտէնին մեծաւորը տատամսութեամբ , որմէ կը հասկցուէր թէ վերջին աստիճանի կարելորութիւն կուտար այն գործին :

« Մէկը Չարլսթօնէն եկած է եւ անշուշտ քարոզչութեան դրկուած Գարրիէլ քահանային կը վերաբերի , պատասխանեց Ռօտէն . միւսը Պաթալիայէն է , այն ալ անտարակոյս Հնդիկ ճալմային վերաբերեալ է : Այս ալ Վիքսիքայէն է , եւ կերելի որ երէկուան նամակը կը հաստատէ , որուն մէջ Մօռօք կիմացընէր թէ ստացած հրամանին համեմատ՝ առանց իր վրայ ամբաստանութիւն մը բերելու՝ յաջողեր է Սիսօն գօրապետին աղջիկներն իրենց ճանապարհորդութե-

նէն արդելու :

Ռօտէնի մեծաւորը Միսօն զօրապետին անուը
լսելուն պէս, երեսին վրայէն սեւ ամպ մ'անցաւ :

ՔԼՈՒԽ Բ .

ՀՐԱՄԱՆՔ

Ռօտէնին մեծաւորը՝ Միսօն զօրապետին ան-
ուը լսելէն զգացած ակամայ սրտայուզութիւ-
նը զսպելով ըսաւ անոր . « Լիրսիքայէն Չարլըս-
թօնէն եւ Պաթալիայէն եկած նամակները դեռ
մի բանար . անոնց մէջ գտնուած տեղեկութիւն-
ներն ինքնին կարգի կը դրուին հիմա , եւ մեք
ալ երկու անգամ ժամանակ չենք կորսնցըներ :

Քարտուղարը մեծաւորին երեսը նայեցաւ
հարցական դէմքով մը : Մեծաւորը յարեց . « Մի-
տալներուն գործին վերաբերեալ ծանօթութիւն-
ները լմնցուցի՞ր : — Ահաւասիկ ծածկագրու-
թեան վերածելու գործն աւարտելու վրայ էի .
— Կարդա՛ տեսնեմ , եւ նոր եկած երեք նամակ-
ներուն պարունակած տեղեկութիւններն ալ ի-
րողութեանց կարգին համեմատ ատոր վրայ յա-
ւելցնու : — Յիրաւի , ըսաւ Ռօտէն այս տեղեկու-
թիւններն ալ այդ կերպով իրենց տեղը կանցնին :
— Կուզեմ տեսնել թէ գրած ծանօթութիւնդ ըստ
բաւականին պարզ եւ բացայայտ է , վասն զի կը
յիշես անշուշտ որ այն անձը՝ որուն պիտի դրկը-
ւի այդ ծանօթութիւնը՝ պէտք չէ որ ամեն բան

խմանայ : — Այժմ , կը յիշեմ , եւ ես ալ այն կերպով շարադրած եմ . . . — Կարդան նայիմ : Ս . Ռօաէն սկսաւ ծանր ծանր կարդալ հետեւեալը .

« Ասկէ հարիւր յիսուէն տարի առաջ , գաղա ղիայի բողոքական ընտանիք մը՝ խմանալով որ « բողոքականաց ազատութեանը համար տրրաւած Նանթի հրովարտակը ետ առնուելով հաւաքածանքը նորէն պիտի սկսէր , կամուրջն ելաւ « Գաղղիայէն օտար երկիր գաղթեց , որպէս ղի « մեր Ս . կրօնին այս անհաշտ թշնամեաց դէմ « տրուած խիստ բայց արդար վճիռներուն ներքեւ չիյնայ :

« Այս ընտանեաց անդամներէն ոմանք նախ « Հոլանտա փախան ապաստանեցան , եւ յետոյ « Հոլանտացւոց գաղթական երկիրները գացին . « ոմանք ալ Ղեհաստան , մէկ քանին ալ Գերմանիա , Սնդղիա եւ Ամերիկա գացին : Հիմա « հասկցուած է որ այն ընտանիքէն եօթն սերունդ միայն մնացած է աշխարհիս վրայ՝ բաղադին տարօրինակ յեղաշրջութիւններէն անցնելով . վասն ղի այսօրուան օրս կենդանի մնացած « յաջորդներուն կամ զաւակներուն մէջ ընկերական ամեն աստիճանի անձինք կը գտնուին , « թագաւորէն սկսեալ մինչեւ արուեստաւոր :

« Ուղղակի կամ անուղղակի սերունդներն են .

« Մայրական սերունդ

« Օրիորդք Ռօզ եւ Պլանչ Սիմօնեան՝ անհափաճաւ : (Սիմօն զօրապետը Վարչաւիոյ մէջ

« սոյն ազգատոհմէն աղջկան մը հետ ամուսնա-
« ցած է) :

« Տրանսօա Հարտի, գործարանատէր Փա-
« րիզի մօտակայ Տլէսի գիւղը :

« Ճարմա իշխանագուն, Մօնտիի Քաճա-Սինկ
« թագաւորին որդին : (Քաճա-Սինկ 1802ին սոյն
« տոհմէն աղջկան մը հետ ամուսնացաւ, որ Հո-
« լանտացւոյ ձեռքն եղած Պաթալիայի Ճալա
« կղզին կը բնակէր) :


« Հոյրտան տրանս

« Ժաք Ռէնրօն արուեստաւոր, մականուան-
« եալ Քուշ-Թու-Նիւ (մերկ պառկող) :


« Սրիորդ Աարիէն Քարաօլիլ, դուստր Ռէն-
« րօն կոմսին (դուքս Քարաօլիլի) :

« Գարրիէլ Ռէնրօն, օտար երկիրներ քա-
« րոզչութիւն ընող քահանայ :

« Այս ընտանեաց ամեն մէկ անդամները պը-
« ղընձէ միտալ մ'ունին կամ պիտի ունենան, ո-
« րուն յիշայ հետեւեալ արձանագրութիւնները
« կը գտնուին :)



==



« Այս խօսքերը եւ այս թուականը կը ցու-
 « ցընեն թէ ամեն մէկ անդամ մեծ շահ ունին
 « 1832 փետրվար 13 ին Փարիզ գտնուելու , ոչ
 « թէ երեսփոխանի կամ փոխանորդի միջոցաւ ,
 « այլ անձամբ , չափահաս կամ տղայ , ամուս-
 « նացեալ կամ ամուրի , ինչ որ ալ ըլլան :

« Բայց միւս կողմանէ ուրիշներ ալ անհուն
 « շահ մ'ունին որ այս ընտանեաց անդամներէն
 « եւ ոչ մէկը փետրվար 13 ին Փարիզ չգտնուի'
 « բաց 'ի Գաբրիէլ Ռէնբօն քահանայէն :

« Ուրեմն հարկ է որ դարուկէս առաջ տրր-
 « ուած ժամադրութեան Գաբրիէլ միայն ներկայ
 « գտնուի . իսկ մնացեալ վեց անձանց նոյն օրը
 « Փարիզ գտնուիլն արգիլուի կամ ներկայու-
 « թիւննին 'ի դերեւ հանուի : Ասոր համար ար-
 « դէն շատ փորձեր եղան , բայց տակաւին ու-
 « ըրիչ շատ բան կայ ընելիք այս գործին ապահո-
 « վապէս յաջողութեանը համար , որ իր հաւա-
 « նական արդեանց պատճառաւ խիստ կարեւոր
 « եւ կենսական համարուած է ներկայ ժամանա-
 « կիս մէջ . . . »

Ըսածդ ճշմարիտ է , ըսաւ Ռօտէնին մեծա-
 « որն անոր ընթերցումն ընդմիջելով եւ մտա-
 « խոհ դիմօք գլուխն երերցընելով . աւելցու նաեւ
 « թէ « այս գործին յաջողութեան հետեւանքն ան-
 « հաշուելի է , իսկ անյաջողութեան հետեւանքը
 « ոչ ոք կը համարձակի նախատեսել . . . : Մէկ
 « խօսքով , մեզ համար գրեթէ կենաց եւ մահու
 « խնդիր մ'է . ուստի պէտք է որ ամեն հնարաւոր

միջոց ՚ի գործ դնենք մեր նպատակը յաջողեցընելու համար, եւ քանի մը հըքաշուինք, բայց միշտ վարպետութեամբ արտաքին երեւոյթը բարեքելով: — Գրեցի, ըսաւ Ռօտէն՝ մեծաւորին այս խօսքերն ալ ծանօթութեանը մէջ աւելցընելով: — Եարունակէ . . . : »

« Այս գործին յաջողութիւնը դիւրացընելու կամ ապահովելու համար՝ հարկ է քանի մը մասնաւոր եւ գաղանի տեղեկութիւններ տալ յիշեալ ընտանիքը ներկայացընող եօթն անձանց վրայ:

« Այս տեղեկութիւններուն ստուգութիւնն աներկբայելի է, եւ եթէ պէտք ըլլայ՝ առաւել մանրամասն կերպիւ կրնան ամբողջանալ. վասն զի հակասական տեղեկութիւններ տեղի ունենալուն պատճառաւ՝ խիստ ընդարձակ գրութիւններ ձեռք բերուած են: Առ այժմ տրուելիք տեղեկութիւններն անձերուն կարգովը պիտի գրուին, եւ մինչեւ այսօր կատարուած իրողութեանց վրայ միայն պիտի կայանան:

(Ծանօթութիւն թիւ 1.)

« Օրիորդք Ռօշ Ե- Պլանչ Սիժօնէան, երկւորեակ քոյրեր, գրեթէ տասնեւհինգ տարեկան, գեղեցկադէմ եւ այնչափ համանման որ երկուքըն իրարմէ դանադանել դժուարին է. բնութեամբ երկչոտ՝ բայց գրգռութեան ընդունակ. կորովամիտ եւ Սատուծմէ դատ ուրիշ քանի չի

հաւատացող մօր մը ձեռք Սիպիրիոյ մէջ մեծ-
ցած , գլխովին անծանօթ մեր սուրբ կրօնին բա-
ներուն :

« Միտն զօրապետն ասոնց ծնանելէն առաջ
իր կնոջմէն հեռացած ըլլալով , դեռ չգիտեր եր-
կու աղջիկ զաւակ ունենալը : Ար կարծուէր թէ
մայրերնին՝ արդէն աքսորուած տեղէն ուրիշ ա-
ւելի հեռաւոր տեղ մը աքսորուելով՝ փետրվար
13ին Փարիզ դանուելէ կարգիլուէր . բայց քօլէ-
ռայէն մեռնելով , Սիպիրիոյ ընդհանուր կառա-
վարիչը՝ որ մեր մտերիմ բարեկամն է՝ ցաւալի
օխալմամբ մը կարծեր է թէ աքսորը միայն մօ-
րերնուն համար էր , ուստի եւ դժբաղդարար թող
տուեր է աղջիկները՝ որ Գաղղիա դառնան վա-
ղեմի զօրականի մ'առաջնորդու թեամբ : Այս փեր-
ջինը անվեհեր , հաւատարիմ եւ քաջ մարդ մ'է ,
եւ իբրեւ Հրանգաւոր նշանակուած է : Միտնեան օ-
րիորդներն անվնաս են , եւ այնպէս կը յուսաց-
ուի թէ այս ժամուս Վիբսիքայի մօտերն արգիլ-
ուած են : »

Ռօտէնին մեծաւորն անոր ընթերցումն ընդ-
միջելով ըսաւ . « Հիմա կարդա Վիբսիքայէն քիչ
մ'առաջ հասած նամակը , որպէս զի այդ ծանօ-
թութիւնը կարենաս ամբողջացընել : »

Ռօտէն նամակը կարդալով . « Սքանչելի
լուր , գոչեց ուրախութեամբ . երկու աղջիկնե-
րն եւ իրենց առաջնորդը գիշերանց փախեր են
Ծօքօն-Պլանի պանդոկէն , բայց Մօքէնէն մէկ
ժամ հեռու երեքն ալ բռնուելով Վիբսիքա տար-

ւեր՝ իբրեւ դատարկաշրջիկ բանտարկուեր են :
Ասկէ զատ՝ աղջիկներուն առաջնորդող զօրակա-
նը՝ իբրեւ ապստամբ , դատաւոր ծեծող եւ զայն
սենեկի մը մէջ փակող ամբաստանուեր եւ յան-
ցանքը վրան հաստատուեր է :

— Ուրեմն գերմանացւոց դատաստաններուն
երկարութեանը նայելով , (եւ մեք ալ պէտք ե-
ղածը կը հողանք որպէս զի երկար տեւէ ,) կըր-
նանք հաւաստի ըլլալ որ աղջիկները չպիտի կըր-
նան փետրվար 12ին հոս գտնուիլ , ըսաւ Ռօտէնին
մեծաւորը : Այս գիտողութիւնն ալ ծանօթու-
թեան հետ կցէ : »

Քարտուղարը հնազանդելով , Մօռօքի նա-
մակին բովանդակութիւնը ծանօթութեան մէջ
աւելցուց եւ ըսաւ . « գրուեցաւ : — Ուրեմն շա-
րունակէ , պատասխանեց մեծաւորը :

Ռօտէն շարունակել սկսաւ ընթերցումը .

(Ման . Թիւ 2 .)

« Պ . Ֆրանսոս Հարտե , գործարանապետ 'է Բլե-է-Վեր՝
'է Փօրել . հաստատամիտ , հարուստ , հանճարեղ ,
գործունեայ , աննենդ եւ կրթեալ մարդ մը . իբր
գործաւորները հողի կուտան վրան , վասն զի
անոնց բարեկեցութեանը համար շատ մը նորա-
ձեւ կարգադրութիւններ ըրած է . մեր սուրբ
կրօնին պարտականութիւնները երբէք չկատա-
րեր , եւ իբրեւ ինք շրանգանք անձ մը նշանակուած
է : Ուրիշ արուեստագէտները կը նախանձին վրան
եւ զինքը կատեն , մանաւանդ Պարոն Թրիբօ՝ իբր

հակամրցողը , ուստի եւ այս նախանձն ու ատե-
լութիւնը կրնանք դիւրութեամբ իրեն դէմ
դարձնել , եւ եթէ ուրիշ միջոցներ ալ հարկ ըլ-
լայ դործածել , իր վրայ դրուած մանրամասն եւ
ընդարձակ տեղեկութիւններն աչքէ անցունե-
լով կրնանք բան մը գտնել : Այս մարդը երկար
ժամանակէ 'ի վեր նշանակուած ըլլալով հակո-
դութեան ներքեւ է :

« Միտալներուն դործին համար այնպիսի
վարպետութեամբ մը դարաններ լարած ենք իր
շուրջը , որ մինչեւ ցարդ խաբուած է եւ անոնց
ինչ աստիճան մեծ շահեր ներկայացընելը չգի-
տեր . ասկէց դատ անդադար լրտեսներէ շրջա-
պատեալ է , որք զինքը կը դիտեն , եւ առանց
գիտնալու անոնց իշխանութեան ներքեւ ինկած
է : Իր մտերիմ բարեկամներէն մէկը զինքը կը
մատնէ , եւ անոր ձեռք իր ամենէն գաղտնի
խորհուրդները գիտենք , »

(Ծան . թիւ 3 .)

« Ճշմարտութեամբ . տասնեւութ տարեկան
երիտասարդ մը , ազդու եւ վեհանձն բնութեամբ ,
սէգ անկախ եւ անմշակ մտք , սիրելի բարեկամ
Սիմօն զօրապետին՝ որ ասոր հօրը (Քաճա-Սինկի)
զօրաց հրամանատարութիւնն առած է՝ անգղիա-
ցւոց հետ ունեցած պատերազմին մէջ : Ճալմայի
վրայ խօսելնիս յիշատակի համար է միայն , վասն
զի մայրը ծաղիկ հասակի մէջ մեռած է՝ ծնողացը
կենդանի եղած ժամանակ , որք Պաթալիա մնա-

ցեր էին : Արքոր անոնք ալ մեռան , ոչ ճալմա եւ
ոչ հայրը չուզեցին փնտռել անոնց չափաւոր հա-
րրատութիւնը որ իրենց կը մնար . այս պատճա-
ռաւ հաւաստի եմք որ երկուքն ալ չին գիտեր
թէ ինչ մեծ շահեր կուեննան երբոր ճալմայի մօ-
րը ժառանգութեան մասն եզոզ միտալը ձեռք
անցունեն : »

Մեծաւորը Ռօտէնի ընթերցումն ընդմիջե-
լով ըսաւ . « Կարդա հիմա Պատթալիայէն եկած
Նամակը , որպէս զի ճալմայի վրայ գրած ծանօ-
թութիւնդ ամբողջացընես : »

— Ահա ուրիշ բարի լուր մ'ալ , ըսաւ Ռօ-
տէն Նամակը կարդալէ ետեւ . Պատթալիոյ մէջ
վաճառական Պ . Ժօզիւէ-Վան-Տաէլ , որ Բօնաի-
շէրի մեր դպրոցին մէջ կրթուած է , Կալկաթայի
մէջ ունեցած թղթակցէն իմացեր է թէ ճալմա-
յին ծերունի հայրը Անգլիացւոյ հետ ըրած վեր-
ջին կռուին մէջ դարնուեր մեռեր է , եւ ճալմա
հայրական ասթոռէն զրկուելով Հնդկաստանի
մէջ դղեակ մը դրուեր է առ այժմ իբրեւ պետա-
կան բանտարկեալ : — Մեք հիմա դեռ հոկտեմ-
բերի վերջերն եմք , ըսաւ Ռօտէնին մեծաւորը .
ենթադրելով որ ճալմա ազատութիւն դանելով
Հնդկաստանէն մեկնի , հազիւ փետրվարի մէջ
կրնայ Փարիզ հասնիլ . . . :

« — Պ . Ժօզիւէ , յարեց Ռօտէն , կը ցաւի
որ այս առթիւ մէջ չէ կրցեր իր առ մեզ ունեցած
անձնուիրութիւնը փորձով ցուցընել . բայց թէ
որ ամեն հաւանականութեանց հակառակ՝ ճալ-

(Ծան . թիւ 4 .)

« Պ . Ժ . Ռեւելյոն , Քաղաքացիական
 Կառավարչութեան Գործարանապետին
 հակառակորդ Պարոն Թրիբոն արուեստարանին
 մէջ գործաւոր մ'է , զինեմոյ , դատարկասէր ,
 ազմկայոյց եւ մոխոզ : Հանձարեղ է , բայց ծու-
 լուծիւնն ու ցոխուծիւնը զինքը բոլորովին գէշ-
 ցուցած են : Մեր վարպետ լրտեսներէն մէկը՝ յա-
 րարերու թիւն կապեց այս գործաւորին Սէֆիզ
 Սոլիֆո անուն սիրուհւոյն հետ՝ որ Վա Ռէն-Պա-
 քանալ ալ կը կոչուի , եւ անոր միջոցաւ Ժաք
 Ռէնըբոնի հետ ալ բարեկամացած է . ուստի հիմա-
 կուց կրնանք զայն բոլորովին օտար համարիլ այն
 շահերէն՝ որոց համար փետրվար 13 ին Փարիզ
 գանուելու կը հարկադրէր . . . »

(Ծան . թիւ 5 .)

« Գրեթէ Ռեւելյոն , բարուիչ քաղաքացիացի .
 Վերոյիշեալին հեռաւոր ազգականն է , բայց
 ոչ կը ճանչէ զայն եւ ոչ այնպիսի ազգական կամ
 ազգականութիւն մ'ունենալը զիտէ : Աքիալ որբ
 մը՝ ճակօպէս անուանեալ զօրականի մը Ծրան-
 սօազ Պօսուէն անուն կնոջմէն ընդունուած եւ
 անոր խնամօք մեծցած :

« Եթէ՛ մեր ակնկալութեան հակառակ՝ զօ-
 րականը Փարիզ դայ , կրնանք կնոջը միջոցաւ
 զօրաւոր ազգեցութիւն մ'ունենալ վրան : Պատ-
 ւական կին մ'է , տգէտ , զիւրահաւան եւ վերջին

աստիճանի ջերմեռանդ , որուն վրայ երկար ժամանակէ 'ի վեր անասանան ազդեցութիւն եւ խշխանութիւն մ'ունինք : Ասոր միջոցաւն է որ Քարբիէլ առանց բնաւ յօժարութիւն ունենայու' կրօնաւորութիւն յանձն առաւ : Քսանուհինգ տարեկան է հիմա Քարբիէլ , հրեշտակային դէմքով ու բարքով , հաղուագիւտ եւ հաստատուն առաքինութիւններով բարեմասնեալ երիտասարդ մը : Գծբաղդարար մանկութեան ատենը Տակօպէտի Ակոխքօլ անուն որդւոյն հետ մեծցած է : Ակոխքօլ հիմա բանաստեղծ եւ գործաւոր է . ընտիր գործաւոր մը Յրանսօա Հարախի քով , բայց միտքը փիլիսոփայական նողկալի գաղափարներով առգորուած . իր մայրը կաթոգին կը սիրէ . աշխատասէր ուղիղ եւ հաւատարիմ է , բայց կրօնական ջերմեռանդութիւն չունի : Այս ալ իբրեւ ինք ~~Լրանգուս~~ նշանակուած է , եւ այս պատճառաւ Քարբիէլի հետ յաճախ տեսնուիլը չէինք ուզեր վախնալով որ դայն կը մոլորեցընէ :

« Քարբիէլ ալ իր ամեն կատարելութեանց հետ տակաւին կասկած կուտայ մեզ : Այս պատճառաւ երկար ժամանակ մեր խորհուրդները բարորակին չյայտնեցինք իրեն , վասն զի թեթեւանդգուշութիւն մը կամ տարածամ փատահութիւն մը կրնայ խիստ ~~Լրանգուս~~ մարդ մ'ընել զայն : Առաջի վերջին աստիճան դգուշութեամբ պէտք է վարուիլ հետը՝ գոնէ մինչեւ փեարփարի ԱՅ , որովհետեւ , գարձեալ կրտմք , նայն միջոցին ասոր Քարիդի մէջ ներկայութեան վրայ անհուն

ցոյսեր եւ ոչինչ պակաս անհուն շահեր հիմնուած են :

« Այս նկատմանց պատճառաւ հարկ եղաւ հաճիլ որ Ամերիկայի կողմերը քարոզութեան երթայ , վասն զի հրեշտակային քաղցրութեան մը հետ՝ նաեւ հանդարտ անվեհերութիւն մ'ունի , յախուռն եւ բաղդախնդիր միտք մը , զոր ուրիշ կերպով չկրցանք գոհ ընել , բայց եթէ թոյլ տալով իրեն որ քարոզութեան վտանգալից ասպարէզին մէջ մտնէ : Բայց երջանկաբար ամենախիստ հրահանգներ գրուեցան Չարլէսթօն գրտնուող իր մեծերուն , որպէս զի այս թանկագին կեանքը երբէք վտանգի մէջ չձգեն , եւ փետրովար ԱՅէն դոնէ մէկ կամ երկու ամիս առաջ Փարիզ զրկեն :

Ռօաէնին մեծ աւորը նորէն անոր ընթերցումըն ընդմիջելով ըսաւ . « Աարդան Չարլէսթօնէն եկած նամակը եւ նայէ թէ ինչ կը գրեն , որպէս զի այդ ծանօթութիւնն ալ ամբողջացընես : »

Ռօաէն նամակը կարդալէ ետեւ ըսաւ . « Գարբիէլ մէկ օրէն միւսը կ'սպասուի եղեր Ռօշէօզի վաներէն , ուր միայնակ քարոզութեան դացեր է՝ առանց իր մեծերը մտիկ ընելու : — Ի՞նչ անխտհեմութիւն : — Բայց վտանգ մը պատահած ըլլալու չէ իրեն , որովհետեւ ինքնին իմաց տուեր է Չարլէսթօն դառնալու վրայ ըլլալը , Հոն հասնելուն պէս , որ ամսոյս կէսէն անդին չկրնար մընալ , շուտով Վաղղիա պիտի զրկեն զինքը : — Այս ալ աւելցու ծանօթութեանդ վրայ , ըսաւ Ռօ-

տէնին մեծաւորը : — Գրուեցաւ » պատասխանեց Ռօտէն քանի մը վայրկեան ետքը : — Ուրեմըն շարունակէ » ըսաւ մեծաւորը :

Ռօտէն շարունակեց :

(Ծան . թիւ 6 .)

Օրէորտ Արեւիկ Ռեւելիոն Գրուեցաւ . առանց դիտնալու ազգական Քուչ-Թու-Նիւ մականուանեալ Ժաք Ռէնըբօնին եւ տարաշխարհաց քարոզիչ Գարրիէլ քահանային : Քիչ ժամանակէն քսանհամէկ տարեկան պիտի ըլլայ : Խարտեաշքայց Հքնաղագեղ եւ վառվռուն աղջիկ մը , նշանաւոր քայց արտառոց խելքով , ամբաւ հարստութեան տէր եւ ամեն զգայական հեշտութեանց հակամէտ : Այս օրիորդին անհաւատալի յանդգնութիւնը ճանչողը կը սարսափի անոր ապագային վրայ : Բարեբաղդաբար իր երկրորդ խնամակալը (Վասի) Պարոն Թրիբօ (վախճանեալ Քարտովիլի դուքս Ռէնըբօն կոմսին վաղեմի գործակատարը որ 1829ին Պարոնի տիտղոս ստացած է) բոլորովին օրիորդ Քարտովիլի հօրաքրոջ շահերուն կապուած է , եւ անոր խօսքէն դուրս չկրնար ելնել : Ուստի մեր յոյսն իրաւամբ այս արժանի եւ մեծարոյ աիկնոջ եւ Պ . Թրիբօի վրայ դրած ենք քաջասիրտ եւ անկախ օրիորդին տարօրինակ ու անյուր դիտաւորութեանց դէմ մաքառելու համար , զորս առանց երկիւղի կը յայտնէ եւ զորս դժբաղդաբար չենք կրնար մեր առաջադրեալ նպատակին շահուն գործածել արդիւնաւոր կեր-

այիւ , ինչու որ . . . »

Ռօտէն չկրցաւ շարունակել . փողոցին դուռը երկու անգամ կամացուկ մը դարնուելով իբրն թ երցումն ընդմիջեց :

Անմիջապէս դուրս ելաւ նայելու թէ ո՞վ էր եկողը , եւ պահ մը դուրսը կենալէ ետեւ՝ ձեռքը երկու նամակ բռնած ներս մտաւ ըսելով .

« Իշխանուհի աիկինը սուրհանդակի մը գալէն օգուտ քաղելով՝ դրկեր է այս . . . »

— Իշխանուհւոյն նամակն ինձ տուր , գոչեց մեծաւորը Ռօտէնին խօսքը բերանը թողլով , ահա վերջապէս լուր կառնում մօրս վրայ :

Հազիւ նամակին քանի մը տողերը կարդաց , երեսին գոյնը նետեց , եւ խորին զարմանք մ'ուտրամուծ իւն մը պատեց զինքը :

« Մայրս , գոչեց , սէ , Աստուած իմ , մայրս :

— Ի՞նչ դժբաղդուծ իւն պատահեր է , հարցուց Ռօտէն տատամուծ եամբ մ'ոտքի վրայ ելնելով : — Մօրս ապաքինուծ իւնը խաբուսիկ է եղեր , պատասխանեց մեծաւորը ախրուծ եամբ , նորէն դրեթէ յուսահատ վիճակի մէջ ինկեր է , բայց եւ այնպէս բժիշկը կը յուսայ եղեր որ իմ ներկայուծ իւնս կրնայ թերեւս զայն աղատել , որովհետեւ անդադար զիս կը կանչէ եղեր , զիս վերջին անգամ մ'ալ տեսնել կուզէ եղեր որպէս զի խաղաղուծ եամբ մեռնի : Սէ , մօրս այս փափաքը նուիրական է , չկատարելը ծնողասպանուծ իւն կը համարուի . Աստուած տար որ կարենայի ժամանակին հասնիլ . . . ասկէ մինչեւ

իշխանութեան երկիրը հազիւ կրնայ մարդ երկու
օրէն հասնիլ՝ գիշեր ցերեկ շարունակ երթալով :
— Ա՛հ , Աստուած իմ , ի՛նչ տարաբաղդութիւն »
ըսաւ Ռօտէն ձեռքերն իրար կցելով եւ աչքը
դէպ երկինք վերցընելով . . . :

Մեծաւորը դանդաղէն ուժով մը դարկաւ եւ
ներս մտնող հասակաւոր ծառայի մ'ըսաւ . « Շու-
տով ճանապարհորդութեանս կառքը պատրաս-
տեցէք եւ ինձ հարկաւոր եղածները կառքին սըն-
տուկը դրէք . դռնապանն ալ երթայ աւերհան-
դակի ձիեր բերէ . . . Պէտք է որ մինչեւ մէկ
ժամ ճանքայ ելնեմ : »

Ծառան արտորնօք դուրս ելաւ :

« Մայրս , հօ , մայրս մէկ մ'ալ չտեսնել . . .
սարսափելի բան է » գոչեց աթոռի մը վրայ իյ-
նալով հեծութեամբ եւ երեսը ձեռքին մէջ ծած-
կելով : Այս դառն կսկիծն անկեղծ էր . այս մար-
դըն իր մայրը շատ կը սիրէր . որդիական սի-
րոյ երկնային զգացումը մինչեւ այն ժամանակ
անարատ եւ անայլայլակ անցեր էր իր կենաց ա-
մեն վիճակներուն մէջէն . . . որք շատ անգամ
մեղապարտ էին . . . :

Քանի մը վայրկենէ ետեւ Ռօտէն համար-
ձակեցաւ երկրորդ նամակը մեծաւորին ցուցընել-
լով ըսելու . « Այս նամակն ալ Պ. Տիւրլէսի կող-
մէն եկած է , եւ խիստ կարեւոր ու ստիպողական
է . . . — Նայէ ինչ է եւ պատասխան դրէ ,
վասն զի գլուխս իմս չէ : — Խորհրդաբար դըր-
ուած նամակ մ'է , ըսաւ Ռօտէն նամակը մեծա-

ւորին ներկայացընելով . ես չեմ կրնար բանալ ,
ինչպէս որ պատեանին վրայի դրոշմէն կը հաս-
կըցուի : »

Երբ որ մեծ աւորը նամակին վրայի դրոշմը տե-
սաւ , անպատմելի ակնածութիւն ու երկիւղ նը-
կարուեցաւ երեսին վրայ , եւ դողդոջուն ձեռք
կնիքը խղեց :

Նամակին մէջ այս միակ խօսքը գրուած էր .
« Ամեն դորձ դադրեցու , եւ առանց վայրկեան
մը կորսնցընելու՝ ճանբայ ել , հոս եկու . . . Պ .
Տիւբլէսի քու տեղդ պիտի անցնի , այսպէս հրա-
ման եղած է իրեն : »

« Աստուած մեծ , դոչեց յուսահատութեամբ ,
եղնել երթալ առանց մայրս տեսնելու . . . բայց
սարսափելի բան է այս . . . անհնարին է . . .
զայն սպաննել է թերեւս . . . այն . . . ծնո-
ղասպանութիւն է : »

Այս խօսքն ըսած ժամանակ աչքը դիպուա-
ծով աշխարհագունտին վրայ կանգ առաւ :

Զայն տեսնելուն պէս յանկարծական յեղա-
փոխութիւն մ'եկաւ իր վրայ . կարծես թէ զըղ-
ջաց իր այն աստիճան սաստիկ վշտակրութեանը
վրայ . քիչ քիչ իր տխուր դէմքը հանդարտ լըր-
ջութիւն մ'ստացաւ . չարաչուք նամակը քար-
տուղարին տուաւ եւ սրտէն բղխած հառաչքը
խեղդելով ըսաւ անոր . « Թուահամարի կարգաւ
պահէ : »

Ռօտէն նամակն առաւ , վրան թուահամար
մը դրեց եւ յատուկ պահարանի մը մէջ դրաւ :

Պահ մը լուռ կենալէ ետեւ՝ մեծաւորը շարունակեց .

« Այսուհետեւ Պ . Տիւբլէսիի հրամանին համեմատ պիտի վարուիս եւ անոր հետ աշխատիս . միտայներուն վերաբերեալ ծանօթութիւնն անոր պիտի յանձնես , ան դիտէ որու պիտի դրկըռի : Պատմավիայի , Վիքսիքայի եւ Չարլէսթօնի նամակներուն պատասխաններն ըսած կերպովս պիտի գրես : Սիւսոն զօրապետին աղջիկները Վիքսիքայի մէջ վար դնելու համար ամեն հնարք 'ի գործ դնել . Գաբրիէլին Փարիզ գալը փութացընել , եւ Պ . Ժօզիւէ Վան-Տաէլի գրել որ եթէ շալմա արքայազունն ամեն հաւանականութեանց հակառակ Պատմավիա երթայ , հոն վար դնելու գործն իր եռանդուն ջանքէն կախեալ է .

Մեծաւորը՝ որ իր մահամերձ մօրը գինքն 'ի զուր իր քով կանչած ժամանակ այս աստիճան պազարիւնութիւն կրնար պահել , դուրս ելաւ իր սենեակը գնաց :

Ռօտէն ալ իրեն հրամայուած պատասխանները ծածկագրութեամբ պատրաստելու դրադեցաւ :

Երեք քառորդ ետքը սուրհանդակի ձիոց բռժոժներուն շառաչիւնը լսուեցաւ . Մերունի ծառան զգուշութեամբ մը դուռը զարնելով ներս մտաւ . « կառքը լծուած է » ըսաւ :

Ռօտէն գլխովը նշան մ'ընելով ծառան դուրս ելաւ . ինքն ալ գնաց մեծաւորին սենեկին դուռը զարկաւ :

Մեծաւորը դուրս ելաւ միշտ ծանր ու պաղ
բայց գծգոյն դէմքով, եւ ձեռքը նամակ մը կար :

« Մօրս պիտի երթայ, ըսաւ Ռօտէնին, հի-
մա սուրհանդակ մը հանէ : — Հիմա » պատաս-
խանեց քարտուղարը : — Վիբսիքա, Պաթալիա
եւ Չարլէսթօն երթալիք երեք նամակներն ալ
այսօր անպատճառ դրկուին սովորական թղթա-
տարով. ինչ աստիճան կարեւոր ըլլալնին դիտես : »

Ասոնք եղան այս մարդուն վերջին խօսքե-
րը : Ա՛հ դու թ հրամաններ անդու թ հնազանդու-
թեամբ կատարելով ճանքայ կենէր առանց մայրը
տեսնելու :

Քարտուղարը խորին յարգանօք անոր հետ
գնաց մինչեւ կառքին քով :

« Ո՞ր կողմ . . . պարոն, հարցուց ձիավա-
րը ետին դառնալով : — Նտալիա » պատասխա-
նեց Ռօտէնի մեծաւորը՝ չկրնալով սրտէն բղխած
հառաչք մը դսպել, որ հեծութեան կը նմանէր :

Երբոր կառքը ձիարշաւ մեկնեցաւ, Ռօտէն
որ խորին ակնածութեամբ իր մեծաւորը ողջու-
նէր էր, արհամարհոտ կերպով մ'ուսերը թօթվեց
եւ դարձաւ այն պաղ ու մերկ մեծ սրահը :

Այս մարդուն նայուածքը, դէմքն ու դիր-
քը մէկէն 'ի մէկ փոխուեցան : Ապրծես թէ յան-
կարծ մեծցեր, քիչ մ'առաջ տեսնուած այն ինք-
նաշարժ մեքենան չէր որ ամենախոնարհ հնա-
զանդութեամբ կը գործէր, անկարեկիր դէմքն
ու քողարկեալ նայուածքն իսկոյն կենդանացան
եւ սատանայական խորամանկութեամբ նկար-

ուեցան , իր բարակ եւ դժգոյն շուրթերը բռնա-
զբօսեալ ժպիտով մը կծկեցան , եւ մեռելատիպ
երեսը չարաշուք գոհութեամբ զուարթացաւ :

Մեծաւորին պէս ինք ալ աշխարհագունտին
առջիւ կանգ առաւ , անոր պէս ինք ալ լռու-
թեամբ զայն նկատեց . . . յետոյ գունտին վը-
րայ ծռելով եւ իր թեւերուն մէջ առնելով քանի
մը վայրկեան իր օձի աչքերովը զայն դիտելէ ե-
տեւ , կոշկռոտ մատը ողորկ աշխարհացոյցին վը-
րայ պտտցուց , եւ տափակ ու աղտոտ եզունգ-
ներովն հետզհետէ զարկաւ կարծիր խաչ նշան-
ներ ունեցող երեք տեղերու , եւ այն իրարմէ
խիստ հեռաւոր քաղաքներուն ամեն մէկն այս
կերպով նշանակած ժամանակ՝ բարձր ձայնիւ ալ
անոնց անունը կուտար դժոխային ժպիտով . Նիբ-
սիքա . . . Չարլէսթօն . . . Պաթալիա . . . :

Յետոյ մտածութեանց մէջ ընկղմելով լռեց :

Այս նկնահասակ , կծծի , դժուծ եւ մեռե-
լադէմ ծերուկը՝ որ այսպէս երկրագնաին վրայ
կը սողար , իր մեծաւորէն աւելի սարսափելի կե-
րեւէր երբոր նա խրոխտաբար ոտքի վրայ կանգ-
նած՝ ձեռքն աշխարհի վրայ կը ձգէր եւ կարծես
թէ գոռոզութեամբ բռնութեամբ եւ յանդգնու-
թեամբ իշխել կուզէր անոր :

Առաջինն արծուոյ կը նմանէր , որ իր սրսին
դիտուն վրայ թեւատարած օղին մէջ կենալով
խիստ բարձրէն սլանալուն համար կրնայ երբեմն
որսը փախցընել :

Ռօտէն , ընդ հակառակն , օձի կը նմանէր , որ

մութին ու լուսեան մէջ իր որսին ետեւէն
տողալով, վերջապէս իր մարդախոշոր ոլորքնե-
րուն մէջ կը ձգէ դայն :

Քանի մը վայրկեան ետքը Ռօտէն ձեռքե-
րը շփելով գրասեղանին քով գնաց, եւ մասնա-
ւոր ծածկագրութեամբ մը՝ որ իր մեծաւորին աչ-
անձանօթ էր, հետեւեալ նամակը գրեց .

« Փարիզ, առաւօտեան ժամը 9Յ/4 .

« Գնաց . . . բայց չարանեցա՛ն :

« Մահամերձ մայրը զինքն իր քով կը կոչէր .
« եւ կը սուէր թէ կրնար թերեւս իր ներկայու-
« թեամբն աղատել դայն . . . այս պատճառաւ
« գոչեց . « Մօրս քով չերթալ . . . ծնողաս-
« պանութի՛ւն է : Եւ սակայն գնաց . . . բայց
« չարանեցա՛ն . . . »

« Ես միշտ կը լրտեսեմ զինքը եւ կը հսկեմ
« վրան . . . »

« Այս տողերս իրեն հետ Հռոմ պիտի հաս-
« նին . . . »

« Յ . Գ . Ըսէք կարդինալ իշխանին թէ
« կրնայ վստահ ըլլալ իմ վրայ, բայց ես ալ կըս-
« պասեմ որ ամենայն փութով ծառայէ ինձ : Ար-
« դէն ձեռք ձգած տասնեւեօթն քուէները կըր-
« նան մէկ վայրկեանէն միւսն օգտակար ըլլալ
« ինձ . . . ուրեմն իր կողմնակիցներուն թիւն
« լեւցընելու թող ջանայ : »

Ռօտէն այս նամակը ծալելէ ու կնքելէ ե-
տեւ գրպանը գրաւ : Եւ որովհետեւ ժամը տասն
կը դարնէր եւ Պ . Ռօտէնի նախաճաշին ժամա-

նակն էր , գրասեղանին վրայի թուղթերը ժող-
վեց , դարակի մը մէջ կղպեց եւ բանալին առաւ .
յետոյ արմուկովն իր ձեռնոտ գլխարկը շփեց ,
կարկտած հովանեակ մը ձեռքն առաւ ու դուրս
ելաւ

Երբոր այս երկու մարդիկն այս աննշան խոր-
շին մէջ նստեր՝ ժամանակաւ տարադրեալ ընտա-
նիքի մը եօթն անդամոց դէմ դարաններ կը լա-
րէին , տարօրինակ եւ ծածուկ պաշտպան մ'ալ
կը խորհէր տէր կենալ այն ընտանեաց՝ որ իր ալ
ընտանիքն էր :

ԳԼՈՒԹ Գ .

ՎԵՐՋԱԲԱՆ

Գեղջկական . . . վայրի գիրք մ'է

Բարձր բլուր մ'է մեծամեծ գերշախայտ ա-
պառաժներով ծածկեալ , որոց մէջէն տեղ տեղ
բարտիներ ու թեղօշներ բարձրացած են՝ աշուէն
դեղնած տերեւներով : Արեւը նոր մարը մտած
ըլլալով , թողուցած բոցագոյն ճառագայթներն
այս մեծ ծառերուն վրայ դարկեր էին , այնպէս որ
տեսնողը հրդեհի մը բոցերուն ցոլացումը կը կար-
ծէր :

Այս բարձր բլրին վրայէն հովանաստուեր եւ
արգաւանդ հովիտ մը կը տեսնուի հեռուն՝ ե-
րեկոյեան մէզին թեթեւ գոլորշիներով կէս մը
ծածկուած Դալարապեղ մարգագետին-

ներ, սաստիսիտ ծառոց թաւուաներ, հասուն հասկերէ մերկացեալ արտեր իրար կը խառնուին միաձեւ լուրթ դունով մը, որ երկնից վճիտ կապուտակութեան հետ հակապատկեր մը կը ներկայացընէ :

Գորշ կամ սեւ քարերէ շինուած դանդակատուներ՝ իրենց սրածայր դադաթները հովաթին խորերէն վեր կարծակէին . . . վասն զի բազմաթիւ գեղեր կան անոր մէջ հիւսիսէն արեւմուտք դացող երկար ճանրուն երկու կողմը ցըրուած :

Հանդ չեղու ժամանակ է . այն ժամն է՝ ուր սովորաբար իւրաքանչիւր հիւղակի ապակափեղկը կը լուսաւորի գեղջկական վառարանին ճարճատուն բոցերովը, եւ ստուերին ու տերեւներուն մէջէն վայլակներ կարծակէ, մինչդեռ ծովսի մրրիկներ ծխնելոյզներէն դուրս ելնելով ծանրը ծանր դէպ երկինք կը բարձրանան :

Եւ սակայն, դարմանալի՛ բան, կարծես թէ այս երկրին բոլոր վառարանները մարած կամ ամայի են :

Առաւել դարմանալի եւ շարագուշակ բան մ'ալ այս է, որ բոլոր դանդակատուները մահագոյժ եղանակներ կը հնչեն . . .

Գործունէութիւնը, շարժումը, կեանքը, կարծես թէ ողբաձայն դանդակահարութեան վերայ կեդրոնացեր է, որ մինչեւ հեռուներն արձագանգ կուտայ :

Բայց յանկարծ, այս քիչ մ'առաջ մթապատ

գեղերուն մէջ լոյսեր ծագիլ կ'սկսին . . . որք
գեղջկական վառարանին պայծառ եւ դուար-
թարար բոցերէն կը դոյանան . . . եւ իրիկուն-
ները մէդին մէջէն տեսնուած դաճադործներու
վառարանին կրակներուն ալէս կարմիր դոյն մ'ու-
նին :

Ասկէց զատ , այս լոյսերն անշարժ չեն մնար ,
այլ կը քալեն . . . ծանր ծանր կը քալեն գէպ'ի
ամեն մէկ եկեղեցեաց գերեզմանատունը :

Այն ժամանակ մահագոյժ զանգակներուն
ձայնը կը բաղմապատկի . օգը կը թնասայ անոնց
գահալէժ բախիւններէն , եւ մերթ ընդ մերթ
հողեհանդստեան երգերու նուազեալ ձայներ
մինչեւ բլուրին դադաթը կը հասնին :

Ի՞նչ է այսչափ յուղարկաւորութեանց պատ-
ճառը :

Ի՞նչ է այս վշտահար հովտին անունը . . .
ուր հանապաղօրեայ տաժանելի աշխատութեանց
յաջորդող հեղիկ նուազներուն տեղ . . . մահ-
ուան եղերերգներ կը լսուին . . . ուր երեկոյ-
եան հանդստութիւնը յաւիտենական հանգըս-
տի փոխուած է :

Ի՞նչ է այս սգազգեաց հովտին անունը , ո-
րուն ամեն մէկ դիւղն այսչափ մեռեալներու վրայ
կողբայ , եւ մի եւ նոյն դիշերուան ու մի եւ նոյն
ժամու մէջ կը թաղէ զանոնք :

Աւանդ , վասն զի մահն այնչափ արադահաս ,
այնչափ անխնայ եւ այնչափ սարսափելի է , որ
հազիւ ողջ մնացողները բաւական կըլլան մեռ-

եալները թաղելու . . . ցերեկները հողային ան-
հրրածեչտ եւ ծանր աշխատութիւններով կը դ-
բաղին , եւ միայն իրիկունները՝ արտերէն դառ-
նալէ ետեւ , խոնջեալ եւ վատակաբեկ , դերեզ-
մանատունը երթալով ուրիշ ակոսներ կը բանան
որպէս զի իրենց եղբարքն արտերու մէջ ցան-
ուած ցորենի հատերու պէս քովէ քով հանգչին :

Եւ այս հովիտը միայն չէ որ այս աշխարհա-
ւէր հարուածը կը կրէ : Եղան այնպիսի անիծ-
եալ տարիներ , որ շատ դեղեր , շատ աւաններ ,
շատ քաղաքներ եւ շատ ընդարձակ երկիրներ
այս հովտին պէս իրենց վառարանները մարած եւ
տուներն ամայացած տեսան . . . :

Այս հովտին պէս իրենց ուրախութիւնը սու-
գի . . . տօնական ցնծութիւնները մեռելական
կոծերու փոխուած տեսան . . . :

Այս հովտին պէս բազմաթիւ մեռեալներ
ողբացին մէկ աւուր մէջ , եւ դիշերը ջահերու
սոսկալի լուսով թաղեցին . . . :

Վասն զի այն անիծեալ տարիներուն մէջ
աարսափելի ճանապարհորդ մը ծանրաքայլ սլը-
տըտեցաւ երկրիս վրայ մէկ բեւեռէն միւս բեւե-
ռը . . . Հնդկաստանի եւ Ասիոյ խորերէն մին-
չեւ Սիպերիոյ սառնամանուաները . . . անկէ ալ
մինչեւ գաղղիական Ռվկիանոսի եղերքը :

Այս մահուան պէս անհասկանալի , յաւիտե-
նականութեան պէս յամրընթաց , ճակատագրի
պէս անողոք , եւ Աստուծոյ ձեռքին պէս դար-
ճուրիւ ճանապարհորդն ուրիշ մէկը չէր . . .

այլ ԲՕԼԷՌԱՆ

Չանդակներուն եւ եղերական երգերուն ար-
ձագանքը կը բարձրանար եւ հովանի խորերէն
մինչեւ բլրին գագաթը կը հասնէր ողբաշունչ
առաջի մը պէս : Թող ինչ ջանքերուն յոյսը միշտ
կը տեսնուէր հեռուէն երեկոյեան մէջին մէջէն :

Արեւուն վերջալոյսը գեռ կը տեսէր : Տարօ-
րինակ մամ , որ ամենէն արոչ ձեւերուն՝ ասոր-
տամ անըմբռնելի եւ այլանդակ երեւոյթ մը կու-
տայ

Բայց իրան քարտա եւ հնչուն դեանին վրայ
ձանր միակերպ եւ ամուր ռանածայն մը հըն-
չեց . . . : Ծառոց սեւ ու խոշոր բուներուն մէ-
ջէն մարդ մ'անցաւ :

Հասակը բարձր էր . գլուխը կուրծքին վրայ
ծռած էր . դէմքն աղնիւ քաղցր ու ախուր էր .
յօնքը մէկ քունքէն միւսը երկնցած եւ իրար
կցուած բլլալով կարծես թէ չարադուշակ նշան
մը գծերէր ճակատին վրայ

Ար թուէր թէ այս մարդը չէր լսեր այնչափ
մեռելագոյժ զանդակահարութեանց հեռաւոր
ձայնը Եւ սակայն երկու օր առաջ անդոր-
րութիւն երջանկութիւն առողջութիւն եւ ու-
րախութիւն կը տիրէր այն դեղերուն մէջ՝ ուրկէ
ինքը ծանր ծանր անցեր էր , եւ հիմա այսպէս
ախուր եւ վշտահար իր ետեւը կը թողուր :

Բայց այս ճանապարհորդն իր ճանքան կը շա-
րունակէր մտածելով :

« Փետրվար 13ը կը մտնե՞նայ , կըսէր ինքն-

« Իրեն . . . կը հասնին այն օրերը , ուր օրեր լի
« քրոջս սերունդները՝ մեր տոհմին վերջին շա-
« սաւիղները՝ Փարիզ պիտի գումարուին . . . »

« Աւանդ , սակէ հարիւր յիսուն տարի առաջ
« հալածանքը երրորդ անգամ աշխարհիս ավեն
« կողմը պրուեց այս ընտանիքը , որուն կանգէն
« կերթամ խանդակաթ դորովով տասնուութ
« դարէ 'ի վեր . . . իր գաղթականութեանց
« մէջ , աքսորներուն մէջ , կրօնի բազմի կուան-
« ուան փոփոխութիւններուն մէջ :

« Ռ'հ , ինձ պէս խեղճ արհեստաւորի մը քը-
« րոջմէն սերեալ այս ընտանեաց զլիտէն նըշափ
« մեծութիւններ , անկուսներ , անշքութիւն-
« ներ , շքեղութիւններ , թշուառութիւններ ու
« փառքեր անցան :

« Ռ'ըշափ ոճիրներով շողախեցաւ
« բայց եւ նըշափ առաքինութիւններով փառա-
« լորեցաւ :

« Այս միակ դերդաստանին պատմութիւնը
« համօրէն մարդկութեան պատմութիւնն է :

« Այնչափ սերունդներու մէջէ , ազգասին
« ու հարուստին , թագաւորին ու աւաղակին ,
« խելացիին ու խենդին , քաջին ու վատին ,
« սուրբին ու անասառածին երակներուն մէջէն
« քրոջս արիւնն անոյնելով մինչև այս օրս հա-
« սաւ :

« Ի՞նչ մնացած է հիմա այս ընտանիքէն ,
« Եօթն շառակիղ ,
« Երկու որբ աղջիկ , մայրերնին ու հայրեր-

- « նին տարագրեալ .
- « Գահազուրկ արքայորդի մը .
- « Խեղճ քարոզիչ քահանայ մը .
- « Միջին վիճակի տէր մարդ մը .
- « Մեծանուն եւ մեծ աւարթամ օրիորդ մը .
- « Վերջապէս արհեստաւոր մը .
- « Ասոնք ամենը մէկէն իրենց վրայ կը բռն-
- « վանդակեն մեր տոհմին առաքինութիւնները,
- « քաջութիւնները , վատթարութիւնները , ճո-
- « խութիւններն ու թշուառութիւնները . . .
- « Սրպերիա . . . Հնդկաստան . . . Ամե-
- « րիկա . . . Գաղղիա . . . ահա այս տեղերը
- « զրուած է զիրենք բաղդը .
- « Երբոր աղգականներէս մէկը վտանգի մէջ
- « է , բնազդու մը կ'իմացընէ ինձ . . . այն ժա-
- « մանակ հիւսիսէն հարաւ արևելքէն արև-
- « մուտք քալելով քալելով անոնց քով կերթամ,
- « երէկ հիւսիսային բուռնին սառնամանեաց մէջ,
- « այսօր բարեխառն դօտիի տակ , վաղը այրեց-
- « եալ դօտիին բոցակէզ տապերուններ քեւ օքայց
- « շատ անդամ, դժբաղդ աբար, երբոր իմ'նկրկա-
- « յութիւնս կրնայ դանոնք վտանգէ ազատել ,
- « անտես ձեռք մը զիս կը մղէ , մըրիկ մը զիս
- « կը յափշտակէ կը տանի , եւ . . .
- « ՔԱԼԷ . . . ՔԱԼԷ . . . կը դռչէ . . .
- Գոնէ թող որ պարտքս կատարեմ . . .
- ՔԱԼԷ . . .
- Գոնէ ժամ մը . . . մէկ ժամ մը միայն
- « հանդիատ թող զիս . . .

— ՔԱԼԷ՛ . . . :

— Ո՛հ , սիրելիներս անդունդին եղերքը կը
« թողում . . . :

— ՔԱԼԷ՛ , ՔԱԼԷ՛ : »

« Ահա այս է պատիժս . . . եթէ մեծ է ,
« յանցանքս աւելի մեծ էր . . . : Ի բնէ աղքատ-
« տու թեան ու նեղութեան դատապարտեալ
« արհեստաւոր մ'էի , թշուառութիւնը զիս հա-
« բասիրտ ըրեր էր . . . :

« Ա՛հ , անիծեալ . . . անիծեալ ըլլայ այն
« օրը՝ ուր արտում քինալից եւ յուսաբեկ սրբ-
« տով կաշխատէի , վասն զի հարազար աշխա-
« թեանս հակառակ՝ ընտանիքս հքաւոր էր միշտ .
« . . . Քրիստոս դրանս առջեւէն անցաւ , հա-
« լածեալ , նախատեալ , դանակոծ , եւ իր ծանր
« խաչը մեծ գծուարութեամբ ուսը բարձած :
« Խնդրեց ինձմէ որ քարէ նստարանիս վրայ վայր-
« կեան մը յողնութիւն առնու . . . : Հակա-
« տէն քրտինքն աղբիւրի պէս կը վազէր , ոտ-
« քերը ճեղքատուեր արիւնլուայ եղեր էին , եւ
« այն աստիճան յողներ ու տկարացեր էր , որ ոտքի
« վրայ կենալու անդամ կարողութիւն չունէր :
« . . . ազեկտուր հեղութեամբ մը կըսէր ինձ .
« խիտ գէշ կը տառապիմ : — Աս ալ գէշ կը տա-
« ռապիմ , պատասխանեցի խատասիրտ բարկու-
« թեամբ մը զայն հրելով . ես ալ կը տառապիմ ,
« բայց ոչ ոք օգնութեան կը հասնի ինձ . . .
« անգթութիւն տեսնողն անգութ կըլլայ . . .
« օն . . . քալէ . . . քալէ . . . »

« Այն ժամանակ Քրիստոս ալ ցաւագին հա-
« ւաչք մ'արձակելով ըսաւ ինձ . « Դուն ալ ան-
« դադար քալէ մինչեւ փրկութեանդ օրը . այս-
« պէս կը կամի Աստուած որ երկինքն է : »

« Եւ այն վայրկենէն պատիժս կրել սկսայ .
« . . . : Անադան ուրեմն աչքս լոյսին բայի .
« . . . անադան զղջայի , ողորմասիրութիւնը
« ճանչեցի եւ վերջապէս հասկըցայ նախատած
« մարդուս այն աստուածային խօսքերը , որք
« համայն մարդկութեան օրէնք պէտք էր ըլ-
« լային .

« ՍԻՐԵՅԷՔ ԶՄԻՄԵՍՆՍ ,

« 'ի զուր դարերէ 'ի վեր ներում գտնելու
« համար այս երկնային խօսքէն ուժ եւ ճարտար-
« խօսութիւն քաղելով՝ շատերու գառնացեալ
« ու նախանձոտ սիրտերը կարեկցութեամբ եւ
« սիրով լցուցի . 'ի զուր շատ սիրտեր սուրբ սոս-
« կումով մը վառեցի հարստահարութեան եւ ա-
« նիրաւութեան դէմ : Ողորմութեան օրը դեռ
« չեկաւ :

« Եւ ինչպէս որ առաջին մարդն իր յանցան-
« քովն իր ապագայ սերունդը թշուառ ըրաւ ,
« կարծես թէ ես արհեստաւորս ալ ապագայ ար-
« հեստաւորաց յաւիտեան տառապելուն պատ-
« ճառ եղայ , եւ իմ մեղացս պատիժն անոնք ալ
« կը կրեն . վասն զի հազար ութ հարիւր տա-
« րիէ 'ի վեր անոնք միայն չկրցան ազատութիւն
« գտնել :

« Հազար ութ հարիւր տարիէ 'ի վեր , հզօր-

« ներն ու երջանիկներն այն խօսքը կըսեն այս
« աշխատաւոր ժողովրդեան՝ ինչ որ ես ըսի Քր-
« րիստոսի՝ երբոր տառապեալ կաղաչէր ինձ .
« ՔԱՒԷ, ՔԱՒԷ . . .

« Եւ ժողովուրդը՝ անոր պէս աշխատութե-
« նէ ընկճեալ, անոր պէս ծանր խաչ մը կրնակը
« բարձած . . . անոր պէս դառն անարութեամբ
« կաղերսէ .

« Ա՛հ, ողորմեցէք . . . քանի մը վայրկեան
« հանդատութիւն առէք մեզ . . . հողինիս բե-
« բանիս եկած է . . . :

— ՔԱՒԷ՛ :

— Բայց թէ որ այս հարահար աշխատութե-
« նէն մեռնինք, ի՞նչ կըլլան մեր մանր դաւակ-
« ներն ու ծեր մայրերը :

— ՔԱՒԷ՛ . . . ՔԱՒԷ՛ . . . :

« Եւ այսչափ դարերէ՛ ի վեր աշխատաւոր
« ժողովուրդն ու ես կը քալենք ու կը տառա-
« պինք, եւ դեռ ողորմած ձայն մը չլսեցինք որ
« ըսէր մեզ . ԲԱՒԱԿԱ՛Ն է :

« Աւանդ, այս է ահա իմ պատիժս . անհուն
« եւ կրկնակի պատիժ . . . վասն զի կը տառա-
« պիմ յանուն մարդկութեան, տեսնելով թըշ-
« ուառ ժողովուրդներ՝ որք դժուակ եւ ապա-
« շընորհ աշխատութիւններու դատապարտ-
« ուած են անդուլ անդադար :

« Կը տառապիմ յանուն ընտանեաց, չկրնա-
« լով ես ինքնս՝ աղքատ եւ թափառայած՝ օգ-
« նութեան հասնիլ իմիններուս, սիրելի քրոջս

« դաւկըններուն :

« Բայց երբոր սրախս կսկիծը կարողութեանէս
 « վեր ըլլայ . . . երբոր կ'զգամ որ խմիններս վը-
 « տանդի մէջ են եւ չեմ կրնար զիրենք ազա-
 « տել, այն ժամանակ միտքս երկիրներէ անց-
 « նելով կերթայ կը դանէ այն կիներ՝ որ ինձ պէս
 « անիծեալ է, այն թագուհւոյն աղջիկը*, որ
 « ինձ պէս կը քալէ ու կը քալէ, եւ մինչեւ իր
 « փրկութեան օրը պիտի քալէ . . . :

« Ինչպէս որ երկու մոլորակներ իրենց դա-
 « րաւոր շրջանը կատարելով իրարու կը մօտե-
 « նան, ես ալ հարիւր տարին անգամ մը կրնամ
 « այն կնոջ հանդիպիլ . . . Քրիստոսի շարժա-
 « րանաց տխուր շարժուն մէջ . եւ սարսափելի
 « յիշատակներով ու ամբաւ ցաւերով լցեալ տե-
 « սակցութիւն մ'ընելէ ետեւ՝ իրարմէ կը դատ-
 « ուինք, եւ յաւիտենականութեան թափառա-
 « կան աստղերուն պէս մեր անհուն ընթացքը
 « կը շարունակենք :

« Այն կիներ՝ որ միայն աշխարհիս վրայ ինձ
 « պէս ամեն մէկ դարերու վերջանալը կը տեսնէ
 « որտե՞ն որտե՞ր մ'աւանդաւ ըսելով . այն կիներ՝ աշխար-
 « հիս մէկ ծայրէն միւսն իմ մտքէս անցածնե-
 « րուն կը պատասխանէ . . . :

* Հնուց մնացած աւանդական պատմու-
 թեան մը նայելով, Հերովդիտոս՝ Յօհաննէս Մը-
 կըրտչին սպաննուիլը ուզելուն համար՝ մինչեւ
 վերջին դատաստանին օրը թափառական պար-
 տելու դատապարտուած է :

« Այն կինը՝ որ միայն աշխարհիս վրայ մաս-
 ւ նակից է իմ սարսափելի վիճակիս, ուղեցնաւ
 « մասնակցիլ այն միակ շահուն՝ որ դարերէ 'ի
 « վեր իմ միտիթարու թիւնս եղած է . . . սիրելի
 « քրոջս սերունդը նա ալ կը սիրէ . . . նա ալ կը
 « պաշտպանէ . նա ալ անոնց համար արեւելքէն
 « արեւմուտք, հիւսիսէն հարաւ կերթայ կը
 « հասնի . . . :

« Բայց ո՞նք, աներեւոյթ ձեռքը դայն ալ կը
 « մղէ . . . մրրիկը դայն ալ կը յափշտակէ կը
 « տանի . եւ . . .

« ՔԱՒԷ՛ . . . կըսէ :

— Գոնէ դործս լմնցընեմ, կըսէ նա ալ :

— ՔԱՒԷ՛ . . .

— Ժամ մը . . . մէկ ժամ մը միայն հան-
 դիտ թող զիս :

— ՔԱՒԷ՛ . . .

— Սիրելիներս վտանգի մէջ են . . .

— ՔԱՒԷ՛ . . . ՔԱՒԷ՛ . . . : »

Երբոր մարդն այսպէս մտածելով կը քա-
 լէր լերան վրայ, երեկոյեան հովը՝ որ մինչեւ
 այն ժամանակ մեղմ կը փչէր, հետզհետէ սաստ-
 կանալով ամպերը փայլատակիլ սկսան, եւ երկար
 ու խորին շչիւններէ կը հասկցուէր որ փոթորիկ
 մը պիտի ելնէր :

Յանկարծ այս անիծահար մարդը՝ որ ոչ կըր-
 նար լալ եւ ոչ ծիծաղիլ, ցնցուեցաւ : Մարմնա-
 կան ցաւերը շէին ազդեր անոր . . . բայց եւ
 այնպէս բան մ'զգալով մէկէն 'ի մէկ ձեռքը սրը-

տին վրայ տարաւ . . .

« Ո՛հ, դռնէն, կրողամ . . . սիրելի քրոջս
 դաւանելէն մէկ քանին այս ժամուս կը տատա-
 պին եւ մեծ փառնոյի մէջ են . . . ոմանք Հրնդ-
 կատանի ներսերը . . . ոմանք Ամերիկայի մէջ . . .
 . . . ոմանք Գերմանիոյ մէջ, Ասիւը հարէն կըս-
 կըսի, հողիայի կիրքեր բարբոքած են . . . ով
 դու, որ կը լսես իմ ձայնս, ինձ հման թ ափառա-
 կանոյ եւ անիծեալդ Հերովդիադա, օգնէ ինձ
 որ պաշտպանենք զանանք . . . թո՛ղ այս ա-
 դաշտնքս հասնի քեզ Ամերիկայի անապատնե-
 րուն մէջ՝ ուր այս ժամուս կը գանուիս . . . եւ
 կրանի՛ թէ կարող ըլլայինք ժամանակին հաս-
 նիլ : »

Այն ժամանակ կարգէ դուրս բան մ'անցաւ :
 Գիշերը կսկսեր էր :

Մարդը շարժուեմ մ'ըրաւ շտապով եւ դառ-
 նալու համար . . . բայց աներեւոյթ զօրութիւն
 մը զինքն արգիլեց եւ դէպ 'ի հակառակ կողմը
 մղեց :

Նոյն միջոցին փոթորիկը բրդաւ իր ախուր
 եւ ա՛նդ փսի մուծեալք : Այն տեսակ փոթորիկ
 մը որ ծառերն արմատախիլ կը է եւ ապառաժ-
 ները տեղերնէն կը խախտէ, կայծալի արագու-
 թեամբ եւ սրտաւրով լերան վրայէն անցաւ :

Այն ժամանակ մրրկին մանչմանոյ եւ փայլա-
 տակմանոյ լոյսին մէջ մարդ մը տեսնուեցաւ լե-
 բան կողին վրայ : Այս մարդը՝ որ սու նշան մ'ու-
 նէր ճակատին վրայ, մեծաքաղ վար կիջնէր լեռ-


նէն , ապառաժներուն եւ ծառերուն մէջէն անց-
նելով , որք մըրկին ու ժգնուիմ ենին կը ծռէին :
Ս, յս մարդուն քաշուած քը ծանր հանդարտ եւ
հասաատուն չէր , այլ անկանան եւ դայթ 'ի դայթ .
կարծես թէ անդ իմաց արձ դորու թիւն մը բանու-
թեամբ կը վարէր , կամ դարհուրելի փոթորիկ
մը յափշտակած կը տանէր դինքը :

'Ի դուր մարդն աղերսաւոր ձեռքերը դէպ
երկինք կը վերցընէր : Շատ հանցաւ աներեւոյթ
եղաւ գիշերուան մութին եւ մըրկին ամպրոպա-
յոյդ ժխտրին մէջ :



ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Խ Ե Ղ Դ Ի Զ Ք



ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱԺՈՒԲԱ

Մինչդեռ Ռօտէն Փարիզի Միլիտօ-տէղ-իւր-
սէն փողոցին խորէն իր աշխարհաքաղաքացի
թղթակցութիւնը ճանաչայ կը հանէր, մինչդեռ
Սիմօն զօրապետին աղջիկները՝ Ֆօքօն-Պլանի
պանդօկէն փախչելէ ետեւ բռնուելով Վիրսիքա-
յի մէջ բանտարկուած կը կենային Տակօպէտի
հետ, նոյն միջոցին աշխարհիս միւս ծայրը, Ասիոյ
խորը, Ճավա կղզւոյն մէջ, Պաթալիայի մօտերը՝
ուր Պ. Ռօտէնի թղթակիցներէն մէկը՝ Պ. Ժօ-
զիւէ Վան Տաէլ կը նստէր, այս զանազան ան-
ձանց շահուն վերաբերեալ ուրիշ կարեւոր անց-
քեր կանցնէին :

Ճավա կղզին գեղեցիկ եւ միանդամայն ա-
ղետալի երկիր մ'է, ուր ամենէն զմայլելի ծաղիկ-
ներն իրենց սերունդներուն տակ ստակալի զեռուն-
ներ կը պահեն, ուր ամենէն ակնապարար պտուղ-
ները մահաբեր թոյներ կը պարունակեն, ուր
այնպիսի գեղաշուք ծառեր կը տեսնուին որոց

հովանին մարդ կը մեռցընէ , ուր յարալէզը , որ
ահադին մեծութեամբ հոլամուկ մ'է , իր որսին
արիւնը կը ծծէ՝ զովարար եւ քաղցրաբոյր օդ
մը ծաւալելով անոր վրայ որպէս զի քունին
թմրութիւնն երկարի : Ամենէն դիւրաշարժ հո-
վահարն այս հրէշին մշկահոտ լայն թեւերուն տ-
րադաշարժութեանը չկրնար հաւասարիլ :

1831 հոկտեմբեր ամսոյ վերջերն ենք :

Կէս օր է , մահաբեր ժամ , ուր մահկանա-
ցու մը չկրնար անվտանգ ներկայանալ արեգա-
կան բոցակէզ ճառագայթներուն , որք մոյզ կա-
պոյտ երկինքի մը վրայ հրեղէն լուսոյ հոսանք կը
ափռեն :

Կանանչ յախճապակի պէս դալարափայլ ծա-
ռերու կապոյտ հովանիին ներքեւ Աժուրա մը կը
տեսնուի , որ հողին մէջ ցոլեալ հաստ պամ-
պուներու (հնդկաց կղէզն) վրայ կնիւնէ փախած-
ներ տարածելով շինուած տեսակ մը տաղաւար
կամ սրահապան է : Շրջակայ ծառերը տարօ-
րինակ ձեւեր ունին . հոս կլոր եւ կամարածեւ ,
հոն բարձր եւ սրածայր , քիչ մ'անդին հովան-
եակածեւ ծաղիկներ տարածած , բայց այնչափ
տերեւալից հոծ եւ իրարու հետ շաղապատ-
եալ , որ անձրեւը չկրնար անոնց մէջ թափանցել :

Գետինը՝ որ օդին դժոխային ջերմութեան
հակառակ միշտ ճախճախուտ է , անտեսանելի
եղած է թաւախիտ բաղեղներու կնիւններու եւ
ձարխոտերու ներքեւ , որք աճեցական արտաքոյ
կարգի դօրութեամբ մ'ուռճացած՝ մինչեւ աժու-

բային բարձրութեանը կը հասնին, եւ բոյնի մը պէս կանանչներուն մէջ զայն կը ծածկեն:

Մարդ կը խեղդուի այս մթնոլորտին մէջ՝ որ տաք ջուրի շոգիի պէս խոնաւ արտաչնչութիւններով ծանրացած եւ բարկ ու կծու հոտերով առողորուած է. վասն զի դարիսենին, կոճապրդ պեղը, ստեփանոտին եւ կարաէնիան՝ մեծամեծ ծառերուն ու բաղեղներուն հետ խառնուելով իրենց սուր հոտը ծուխի պէս կը ծաւալեն:

Սժու բային յարկն աղամաթ ուղի լայն տերեւներով ծածկուած է, եւ մէկ ծայրը քառակուսի ծակ մը կայ պատուհանի տեղ՝ բուսական բարակ թելերով վանդակեալ, որպէս զի դեռուններն ու թունաւոր ճճիները չկրնան աժուբային մէջ մանել:

Չորցած հաստ ծառի մը կանդուն մնացած բայց մէկ կողմ ծռած բունը թուփերուն մէջէն վեր ելած է եւ ծայրն աժուբային յարկին կը հասնի: Սեւ կնճռոտ եւ մամռապատ կեղեւին ամեն մէկ ճեղքերէն տեսակ տեսակ դարմանալի ծաղիկներ դուրս զոտուած են. թիթեռնիկի մը թւերն այնչափ նրբութիւն, այնչափ ծիրանապեղ կարծրութիւն եւ այնչափ վայլուն սեւութիւն չունի. այն անծանօթ թռչունները՝ որ մարդերագին մէջ կերեւակայէ, այնչափ տարօրինակ ձեւեր չունին՝ որչափ այն որքիս ըսուած թւաւոր ծաղիկները՝ որք կարծես թէ իրենց բարակ ու անտերեւ ծղօաներուն վրայէն պիտի թռչին: Երկար կլոր ու դիւրաթեք գակ-

դռաներ՝ դորս տեսնողն օձ կը կարծէ , այն չոր
 ծառաբուռնին փաթթուած՝ իրենց արծաթա-
 փայլ եւ սակնակար խոշոր ծաղիկներով լեցուն
 առերը չորս կողմէն կը կախեն , եւ վանիլիայի
 բարկ հոտ մը կը բուրեն : Չրչի հասառթեամբ
 եւ հինգ վեց մասնաչափ երկայնութեամբ ա-
 զիւսագոյն փոքրիկ օձ մ' այս քաղցրահոտ ծա-
 ղիկներէն մէկուն կողմնին մէջ դաշարած ու կծկը-
 տած՝ իր աափակ գլուխը կէս մը դուրս կերկըն-
 ցընէ :

Աժուբային մէջ՝ երիտասարդ մը փաթաթի
 մը վրայ տարածուած՝ խոր քուն կը ննջէ : Երե-
 սին թափանցիկ եւ սակեդոյն դեղնութիւնը տես-
 նողը կը կարծէ թէ սղնձէ արձան մ' է , եւ արեւ-
 շուն ճառագայթը վրան դարկած է . դիրքը սլարդ
 եւ վայելուչ է . գլուխն աջ թեւին կրթնոցած
 եւ կէս մ'անդին դարձուցած է . ճերմակ մուսլինէ
 լայն սարեղօտին օձիքը բացուած եւ երկայն
 թեւերն ալ վեր ամիսփուած ըլլալով՝ կուրծքն ու
 բազուկը կը տեսնուի , սրոց գեղեցկութիւնն Ան-
 ախնասի* մարմնոյն արժանի է : Մարմարիտնն անոր
 մորթին չափ ողորկ փայլուն եւ պինդ չէ , որուն
 սակերանդ գոյնը հանդերձին սպիտակութեանը
 հետ հակապատկեր մը կը ձեւացընէ : Ղայն եւ

* Բիւթանացի գեղեցիկ պատանի մ' էր Ադ-
 րիանոս կայսեր խիստ սիրելի . Քրիստոսի 132
 թուականին կայսեր հետ Եղիպտոս երթալով
 Նեղոսի մէջ խղդուեցաւ , եւ կայսրն անմխիթար
 առգի մէջ իյնալով մեհեան մը կանգնեց 'ի պա-

ցցուած կուրծ քին վրայ խորունկ սպի մը կը տեսանուի . . . որ Սիմօն զօրասպետին կեանքը պաշտպանելով ստացած հրացանի հարուածին նշանն է : Պարանոցէն երկու որը քոյրերուն միտալին նման փոքրիկ միտալ մը կախուած է : Այս հնդիկ երիտասարդին անունը ճալմա է :

Գէմքը միանգամայն աղնիւ եւ գեղեցիկ է : մաղերը ճակատին վրայ երկու քի բաժնուելով ուսներուն վրայ ինկած են առանց դանդուրի . յօնքը բարակ կամարածեւ եւ քաջաթուխ է իր երկայն արտեւանանցը պէս , որք իր լերկ այտերուն վրայ ստուեր կը ձգեն . բոսորագոյն շրթունքը՝ թեթեւ կերպով կիսաբաց՝ ճնշեալ շունչ մը դուրս կուտան . քունը ծանր է եւ դժուարին , վասն զի ցերեկուան տաքը քանի կերթայ՝ հեղձուցիչ կըլլայ :

Գուրսը խոր լռութիւն կը տիրէ . ամենաթեթեւ հովի շունչ մ'անդամ չկայ : Սակայն քանի մը վայրկեան ետքը դետինը ծածկող կնիւններն ու թուփերը կսկսին աննշմարելի կերպիւ երերալ , եւ կարծես թէ դեանին վրայ ծանր ծանր սողացող մարմին մ'անոնց արմատին դաշխելով կը շարժէր , բայց այս ցնցիւնը երբեմն յանկարծ կը դադար

տիւ անոր , քանի մը քաղաքներ հիմնեց անոր անուամբ , եւ անոր պատկերն ու յիշատակը յաւերժացըմել ուղևոյ բազմաթիւ արձաններով ու միտալներով , որոց մէկ քանին դեռ կը տեսնուին Ներոպայի թանգարանաց մէջ :
 Ծան. Թարգմ.

րէր եւ նորէն ամեն բան անշարժութեան մէջ կը մանէր :

Քանի մ'անգամ այսպէս խորշիւնն ու լռութեանն իրարու յաջորդելէ ետեւ կ'սկսեաներուն մէջն մարդու մը դըռնը կը բերեցաւ, շորոյած ծառաբունէն քիչ հեռու :

Այս մարդը կանանչ պղնձի գունով չարագոյժ դէմք մ'ունէր, երկայն սեւ մազեր գլխուն բոլորովին քիչ հիւսուած էին, աչքերը վայրենական վայլով մը կը վառէին, երեսին դժագրութիւնը նշանաւոր սուր միտք եւ դադանական վայրագութիւն մը կարտայայտէր: Շնչառութիւնը դադրեցընելով՝ պահ մ'անշարժ կեցաւ. յետոյ նորէն շորս ոտքի վրայ յառաջ քաշել սկսաւ. բոյսերուն տերեւներն այնչափ մեղմութեամբ մէկ կամ միւս կողմ քշելով, որ ամենաթեթեւ սուսաւիւն մ'անգամ չէր լսուեր. այսպէս զգուշութեամբ եւ ծանր ծանր հասաւ ծառաբունին քով, որուն վերի ծայրն աժուբային յարկին կը դայչէր :

Այս մարդը՝ ազգաւ Մայիցի եւ խնդդիչներուն ազանդէն էր: Նորէն քիչ մը ժամանակ ապա մը դնելով մտիկ ընելէ ետեւ, թուփերուն մէջն բոլորովին դուրս ելաւ. բայց ի ճերմակ վարտիքէ մը՝ որ երկններանգ դօտիով մը մէջ քին կապած էր, ուրիշ հագուստ չունէր վրան, եւ իր պղնձագոյն ջղատ եւ ճապուղի անդամները թանձրը իւղով մը ծեփած էր :

Գնաց մեղմով տաղաւարին հակառակ կողմէն ծառաբունին վրայ երկնցաւ, որուն հաս-

տութիւնն ու վրան փաթթուած բոյսերը զինքն
անտեսանելի կընէին միւս կողմէն, եւ սկսաւ ըզ-
գուշութեամբ եւ համբերատար լռութեամբ
մաղցելով ու սողալով վեր կենել: Քամակին
ծածանումը, շարժումներուն ղիւրաթեքու-
թիւնը եւ զսպեալ կորովը, որուն արձակումը
սարսափելի ըլլալու էր, կը ցուցընէր որ իր որսը
լրտեսող վագրի մ'անշշունչ ու նկնդաւոր ըն-
թացքն ունէր:

Սյապէս առանց տեսնուելու ծառին կատա-
րը հասաւ որ գրեթէ տաղաւարին յարկին կը
դպչէր, եւ միայն մէկ տանաչափ մ'ուսց փոքրիկ
լուսամուտին հասնելու: Սյն ժամանակ դլուխն
զգուշութեամբ երկնցընելով լուսամուտէն ներս
նայեցաւ ու լաւ մը զննեց որսէս ղի տաղաւա-
րին մէջ մտնելու հնար մը դանէ: Երբոր տեսաւ
որ ճալմա խոր քունի մէջ էր, խեղդիչին վառվը-
ռուն աչքերն առաւել փայլատակիլ սկսան: Զը-
դային կծկում մը կամ մանաւանդ մունջ ու փայ-
րագ ժպիտ մը՝ բերնին երկու ծայրերը դէպ 'ի
այտերը քաշելով՝ սղոյի պէս եռանկիւնաձեւ
խարտուած եւ փայլուն սեւով ներկուած երկու
կարգ ախաներ երեւան հանեց:

Ճալմա անպիտի կերպով մը պատկած եւ տա-
ղաւարին դրանն ալ անչափ մօտ էր (դուռը ներ-
սէն կը բացուէր), որ եթէ մէկը զայն կէս մը բա-
նալու փորձ փորձէր, խեղդն պիտի արթննար:

Խեղդիչը միշտ ծառին ետին պահուրտած,
տաղաւարին ներսի դին ուշադրութեամբ զննել

աւելելով քիչ մ'առաւել ծնեցաւ, եւ կրթնելու
 ակող մը գաննելու համար՝ ձեռքը կամացուկ մը
 լուսամուտին եզերքին վրայ դրաւ. այս շարժու-
 մը գակդոսի մեծ ծաղիկն երերցընելով, մէջը
 կծկտած փոքրիկ օձը դուրս ցատկեց եւ անմի-
 ջապէս խեղդիչին դաստակին փաթթուեցաւ:

Խեղդիչն օձին այս անակնկալ յարձակումէն
 կամ խայթումէն դարմանալով կամցաւ զգալով
 կամաց մը պոռայ եւ անզգոյշ կերպիւ մ'ետ
 քաշուած ժամանակ տեսաւ որ ձալմա շարժե-
 ցաւ: Եւ արդարեւ Հնդիկ երիտասարդն իր ան-
 հող դիրքը պահելով՝ աչքը կէս մը բացաւ, գը-
 լուխը լուսամուտին կողմը դարձուց, եւ խորունկ
 շնչառութիւն մ'ըրաւ, վասն զի այն կանանչ եւ
 խոնաւ յարկին ներքեւ հաւաքուած տաքն ան-
 տանելի էր:

Հաղիւ ձալմա շարժեր էր, ծառին ետեւէն
 դրախտահաւի սուր եւ կարճ կոխք մը լուե-
 ցաւ, որ գրեթէ փասիանի ձայնին կը նմանէր,
 զոր թռած ժամանակ կարձակէ: Քիչ մ'ետքը
 նորէն քանի մ'անդամ կրկնուեցաւ կոխքը՝ բայց
 հետզհետէ ակարանալով, որպէս թէ յիշեալ գե-
 ղեցիկ թռչունը կը հեռանար: ձալմա զինքն ար-
 թնայնող ձայնին ինչ ըլլալը որպէս թէ հասկընա-
 լով գլխուն նեցուկ դրած թեւը քիչ մ'երկնցուց,
 եւ առանց իր դիրքը փոխելու վերստին քնացաւ:

Քանի մը վայրկեան խոր լուութիւն մը նորէն
 տիրեց այս առանձնութեան մէջ, եւ ամեն բան
 անշարժ մ'նաց:

Խեղդիչն իր ձայնը վարպետութեամբ թըռչ-
նայ մը ձայնին նմանցընելով՝ օձին խայթ մանցա-
ւէն անդդուչաբար պոռալուն վտանգը դարմա-
նեց : Երբոր ենթադրեց թէ ճալմա վերապինքը
նացեր էր, գլուխը նորէն երկնցուց եւ տեսաւ որ
ստուգիւ հնդիկ երխտասարդը կը ննջէր : Այն
ժամանակ ծառէն դդուչութեամբ վար իջաւ, թէ
եւ ձախ ձեռքն օձին խածուած քէն բաւական
ուռեցեր էր, եւ կնիւններուն մէջ աներեւոյթ ե-
ղաւ :

Այս միջոցին հեռուէն տխուր եւ միօրինակ
երգի մը ձայն լսուեցաւ :

Խեղդիչն ելաւ կանգնեցաւ, ուշադրու-
թեամբ մտիկ ըրաւ եւ գէմքին վրայ դարմանաց
եւ ցասման նշաններ տեսնուեցան :

Երգին ձայնը քիչ քիչ մօտեցաւ տաղաւա-
րին :

Քանի մը վայրկեան ետքը, հնդիկ մը ան-
տառին բաց կողմէն անցնելով խեղդիչին պահ-
ւրտած կողմն երթալ սկսաւ :

Այն ժամանակ խեղդիչը մէջ քէն բարակ ու
երկայն չուան մը հանեց, որուն մէկ ծայրը կա-
պարեայ դնտակ մը կար հաւկթի ձեւով ու մե-
ծութեամբ, եւ միւս ծայրն աջ ձեռքին դաստա-
կին կապելով նորէն ականջ դրաւ, եւ սողալով
թուփերուն աակէն դնաց գէպ 'ի շնդիկին կող-
մը, որ ծանր ծանր կուգար իր ողբաձայն եր-
գը շարունակելով : Քսան տարեկանի մօտ պա-
տանի մ'էր եւ ճալմայի գերին : Դէմքը պղնձա-

գոյն էր, կապոյտ բամպակէ պարեգօտ մը հա-
գած էր, մէջքը երկնեւրանդ դօտի մը կապած,
գլուխը փոքրիկ կարմիր փաթթոց մը դրած, ա-
կանջներն արծաթէ օղեր եւ թեւերն ալ ման-
եակներ անցուցած էր . . . Նամակ մը կը բե-
րէր իր տիրոջը, որ ցերեկուան սաստիկ տաքին
ժամանակ այս տաղաւարին մէջ կը հանդէսէր: Բը-
նակած տունը բաւական հեռու էր այս տեղէն:

Նրբոր ծառուղիին այն կողմը հասաւ՝ ուր
ճանքան երկուքի կը բաժնուէր, գիրին առանց
վարանելու տաղաւարին ճանքան բռնեց, ուրկէ
հազիւ քառսուն քայլ հեռու էր:

Ճալայի մէջ դանուած այն խոշոր թիթեռ-
նիկներէն մէկը, որոց թեւերը բացուած ժամա-
նակ վեց կամ ութ մատնաչափ երկայնութիւն եւ
վերէն վար երկու ռակեգոյն գիծեր ունին կապոյ-
տի վրայ, տերեւէ տերեւ թռչտելով գնաց հնդիկ
պատանիին մօտ անուշահոտ կարտենիայի մը տե-
րեւին վրայ կեցաւ: Պատանին երզը դադրեցը-
նելով կանգ առաւ, նախ ոտքն զգուշութեամբ
յառաջ տարաւ, յետոյ ձեռքը երկնցուց եւ թի-
թեռնիկը բռնեց:

Յանկարծ գիրին խեղդիչին ահուելի երեսը
կը տեսնէ իր առջիւ կանգնած . . . պարսատի-
կի շչման պէս ձայն մը կը լսէ, պարանոցին վրայ
չուան մ'երեք անգամ կը դառնայ ու կը փաթ-
թուի վերջին ծայր արագութեամբ եւ ուժով, եւ
չուանին ծայրի կապարեայ գնտակն ուժգնու-
թեամբ գլխուն կը դարնուի:

Այս յարձակումն այնչափ յանկարծական եւ
անակնկալ կերպով կատարուեցաւ, որ ճալմայի
ծառան եւ ոչ իսկ պոռալու կամ հեծութիւն
մ'արձակելու ժամանակ ունեցաւ այլ դող-
դողեց խեղդիչն ուժով մը քաշեց ու թոթ-
փեց չուանը գերիին պղնձագոյն գէմքը
սեւ ու կարմիր գոյն մ'առաւ, եւ թեւերը տա-
տանելով ծունկերուն վրայ ինկաւ խեղդի-
չը դայն հրելով բոլորովին կործանեց եւ
չուանն այնպէս սասաիկ սեղմեց որ մորթէն ար-
իւն ցայտել սկսաւ խեղճ գոհը ջղային ցընց-
մամբ քանի մը վերջնական շարժում ըրաւ եւ
ամեն բան լմնցաւ

Այս արագ եւ քստմ'ներէի մահուան միջոցին,
մարդասպանն իր գոհին առջեւ ծունր դրած՝ անոր
ամենէն փոքր ցնցումները կը դիտէր՝ աչքերն
անոր վրայ տնկած, եւ կարծես թէ դադանային
դուարձութեամբ մը կը դմայլէր ունդերը
կը լայննային, քունքերուն ու պարանոցին երակ-
ները կուռնային, եւ այն չարադուշակ ժպիտը՝
որով ճալման ննջեալ տեսած ժամանակ շրթունքը
վեր ու վայր քաշուեր էր, վերստին իր սեւ ու սուր
ակռաները երեւան կը հանէր, որք կզակներուն
ջղային ցնցմամբն իրարու կը դարնուէին

Քիչ մ'ետքը թեւերը խաչաձեւ իր հեւացող
կուրծքին վրայ դրաւ, ճակատը խոնարհեցուց,
անհասկանալի խօսքեր մրմռաց՝ որք աղօթքի կը
նմանէին, եւ նորէն աչքը դիակին վրայ տնկելով
կատաղաբար նկատել սկսաւ

Բորենին կամ վագր-կատուն՝ որք իրենց
բռնած որսն ուտելէ առաջ քովը կը նստին ու վը-
րան կը նային, այս մարդէն աւելի անգուժ եւ
արիւնասխանձ նայուած ք մը չունին . . .

Բայց յիշելով որ դեռ իր պաշտօնը կատար-
ուած չէր, ակամայ բաժնուեցաւ այս տխուր տե-
սարանէն: Չոպանը գերիին պարանոցէն հանեց
մէջքը փաթթեց, եւ դիակը ճանրէն դուրս քա-
չելով թանձրախիտ կնիւններու ներքեւ պահեց՝
առանց արժաթէ օղերն ու մանեակները վրայէն
կապտելու: Յետոյ փորին ու ծունկերուն վրայ
սողալով ճալմայի տաղաւարին քով հասաւ:

Ուշագրու թեամբ մտիկ ընելէ ետեւ՝ մէջքէն
դանակ մը հանեց, որուն սայրասուր բերանն ա-
դամաթ ուղի տերեւով պատած էր, եւ անով փը-
սիաթին մէջ երեք ոտնաչափ երկայնութեամբ
ծակ մը բացաւ այնպիսի արագ եւ ճարտար դիւ-
րութեամբ՝ որ ապակի կտրելու համար անդա-
մանդին հանած թեթեւ ճղրտոցին չափ ալ ձայն
չլսուեցաւ:

Այն ծակէն տեսնելով որ ճալմա խոր քունի
մէջ էր, խեղդիչ սողոսկեցաւ ներս մտաւ ան-
հաւատալի յանդգնութեամբ:

ՔԼՈՒԹ Բ .

ՄԱՐՄԵԱՆԿԱՐ

Երկինքը՝ որ մինչեւ այն ժամանակ յատակ
կապուտագոյն էր, քիչ քիչ բաց կանանչ գոյն մ'ա-
ռաւ, եւ արեգակը կարծրորակ եւ չարագոյծ շո-
գիով մը ծածկուեցաւ: Այս տարօրինակ լոյսն
ամեն առարկայներու արտառոյ երեւոյթ մը կու-
տար, որուն վրայ դադաւիար մուկնուալու համար՝
պղնձի վոշիով օժուած ապակիի մը ետեւէ դաշ-
տերու եւ կանանչներու վրայ նայելով անսուած
երեւոյթը պէտք է երեւակայել:

Այսպիսի կլիմաներու մէջ՝ այս օդ երեւոյթը՝
բոցակէզ ջերմութեան հետ միանալով՝ փոթորկի
մը մերձենալը կը ծանուցանէ միշտ:

Մերթ ընդ մերթ ծծմբային վաղանցիկ հոտ
մը կելնէր . . . Այն ժամանակ ծառերուն տե-
րիւները ելեքտրական հոտանքէ մը թեթեւ կեր-
պիւ տատանելով կը դողային իրենց ստերուն
վրայ . . . յետոյ խոք լռութիւն եւ ակուր ան-
շարժութիւն մը կը ախրէր:

Հրատապ մթնոլորտին ծանրութիւնը բարկ
հոտերու հետ խառնուելով բոլորովին անտանելի
էր. քրտանց խոշոր կայլակներ մարդարաչի պէտ
շարուեր էին ճալմայի ճակտին վրայ, որ մեղկա-
ցուցիչ քունի մը մէջ ընկղմած էր միշտ . . . եւ.

այս քունը ոչ եւս հանգստութիւն մ'էր անոր
համար, այլ ճնշիչ ծանրութիւն մը:

Խեղդիչն օձի պէս աժուրայէն նիրս սպըր-
դելով՝ մէկ կողերքէն փորին վրայ սողալով մինչեւ
ճալմայի փոխաթին քով հասաւ, եւ հոն նախ
գետնին վրայ տախակնալով կձկեցաւ, որպէս զի
կարելի եղածին չափ քիչ տեղ բռնէ:

Ս.յն ժամանակ տեսարան մը սկսաւ, որ
գազանի եւ խոր լռութեան մէջ կատարուելուն
համար սարսափելի էր:

Ճալմայի կեանքը խեղդիչին ձեռքն էր . . .

Ս.յս մարդն ինք իր վրայ ամփոփուած, ձե-
ռացն ու ծնգացը վրայ կրթնած, պարանոցն կր-
կրնցուցած, աչքերը բացած ու տնկած՝ անշարժ
կը կենար արդիւնալ գազանի մը պէս . . . եւ
միայն կզակներուն ջղային թեթեւ ցնցմամբն իր
պղնձի դէմքը քիչ մը կերկրար:

Բայց շատ չանցաւ իր դարչելի դէմքին վրայ
նկարուիլ սկսաւ սրտին մէջ անցած կռիւր, վասն
զի մէկ կողմանէ մարդասպանութեան ծարաւն ու
զուարճութիւնը՝ որ քիչ մ'առաջ խեղճ գերիին
սպանութեամբն առաւել եւս բորբոքած էր,
զինքը կը գրգռէր, միւս կողմանէ ճալմային կե-
նացը չգպչելու հրամանը որ արուեր էր իրեն,
զինքը կարգելուր, թէ եւ աժուրային մէջ գալ
մանկունն նպատակը մահուանէ իսկ առաւել սոս-
կալի էր հնդիկ երխտասարդին համար . . .

Երկու անգամ խեղդիչը՝ որուն նայուածքը
կատարութեամբ կը վառէր, ձախ ձեռքին վը-

բայ միայն կրթընելով, աջ ձեռքը ճոպանին
ծայրին տարաւ . . . բայց երկու անդամուն ալ
դարձեալ թող տուաւ զայն . . . սպանու թեան
ընազդ ու մը տեղի տուաւ ամենազօր կամքի մ'առ-
ջեւ՝ որուն անդ իմադրելի իշխանութեան ներ-
քեւ էր խեղդիչը :

Իր մարդ ախոշոշ կատաղութիւնը մինչեւ յի-
մարութեան պէտք էր հասնէր, վասն զի իւր եր-
կար վարանամարը թ անկագին ժամանակ մը կը
կորսնցընէր . . . Ճալմա, որուն քաջութիւնն
ու ճարպիկութիւնը ծանօթ ու ահաւոր էր, մէկ
վայրկեանէն միւսը կընար արթննալ . . . եւ որ-
չափ ալ անդէն էր, դարձեալ սարսափելի ստիս
մը կըլլար խեղդիչին :

Վերջապէս խեղդիչը սրտէն բղխած խոր հա-
ռաչք մը զսպելով՝ իր պաշտօնն ակամայ կատա-
րել սկսաւ . . . պաշտօն մը՝ որ իրմէ դատ ուրի-
շի մ'անհնարին կերեւէր . . . ինչպէս որ պիտի
տեսնեն ընթերցողք :

Ճալմա, երեսը դէպ 'ի ձախը դարձուցած,
գլուխը թեւին վրայ կրթնցուցեր էր . ուստի նախ
պէտք էր՝ առանց արթնցընելու՝ երեսը դէպ 'ի
աջ՝ այսինքն դէպ 'ի դուռը դարձունել տալ, որ-
պէս զի եթէ դիպուածով կէս մ'արթննայ, չկըր-
նայ տեսնել խեղդիչը, որ իր գործը կատարելու
համար բաւական ժամանակ տաղաւարին մէջ
պիտի կենար :

Երկինքը քանի գնաց ճերմկցաւ . . . օդին
ջերմութիւնը վերջին աստիճանի սաստկութեան

հասած ըլլալով՝ ճալմայի թմրութիւնն աւելցը-
նելու եւ խեղդիչին դործն յաջողցընելու նպաս-
տաւոր էր . . . : Այս հրէշը՝ ճալմայի քովը՝ ծունկի
վրայ դալով, սկսաւ իր ճապուկ ու իւղոտ մատե-
րուն ծագովն անոր ճակատը քունքն ու արտե-
ւանունքը շփել այնպէս թեթեւ ու անզգալի կեր-
պով, որ երկուքին մորթն հաղիւ իրարու կը դըպ-
չէին . . . : Այս տեսակ մը մագնիսական թով-
չութիւնը քանի մը վայրկեան շարունակելով,
ճալմայի ճակտին քրտինքն աւելի շատցաւ,
խեղդուկ հառաչք մ'արձակեց, յետոյ երկու կամ
երեք անգամ երեսին մկանունքը ցնցուեցան .
վասն զի խեղդիչին թեթեւ շօշափումը՝ թէ եւ
զինքը չէր արթնցըներ, բայց տարտամ անհան-
գըստութեան զգացում մը կը պատճառէր . . . :

Խեղդիչն անհանդիստ եւ բողափայլ աչօք
դայն նկատելով շարունակեց իր շօշափումը, այն
աստիճան համբերութեամբ եւ ձեռքի արագու-
թեամբ, որ ճալմա՝ թէ եւ քունէն չարթնցաւ,
բայց շիրնալով այլ եւս գիտանալ այս տար-
տամ եւ զրգոխ զգացման, որուն ինչ ըլլալը չէր
հասկընար, աջ ձեռքը մեքենաբար երեսին տա-
րաւ՝ որպէս թէ զինքն անհանդիստ ընող ճանճ մը
կամ ճճի մը վանել ուղելով . . . բայց ձեռքը
թմրած ըլլալով՝ անկենդան եւ ծանր մարմնոյ մը
պէս կուրծքին վրայ ինկաւ . . . :

Այս նշանէն խեղդիչը հասկընալով որ բաղ-
ձացեալ նպատակին կը մօտենար, ճակտին
քունքին եւ արտեւանունքին վրայ շօշափումը

չարունակեց նոյն ճարտարութեամբ

Այն ժամանակ ճալմա, թմրութենէն եւ քան զեւս ճնշուած եւ գրեթէ զգայազրկութեան մէջ ինկած, չկրնալով ձեռքը ձակտին տանիլ, մեքենաբար գլուխը դարձուց, որ տկար եւ անզօր՝ աջ ուսին վրայ ինկաւ, եւ այսպէս գիրքը փոխելով իր վրայ ծանրացած անհաճոյ սպաւորութեանէն ազատիլ ուզեց :

Այս առաջին արդիւնքը ձեռք բերելէ ետեւ՝ խեղդիչը կրցաւ ազատութեամբ դործել :

Այն ժամանակ ուղեց նորէն հնար եղածին չափխորունկցընել ճալմայի քունը՝ զոր կէս մը կտրեր էր, ուստի ջանաց յարալէզի նմանիլ, եւ իր երկու ձեռքը ճալմայի տապակէզ ելեւը արագ արագ հովահրել

ճալմա՝ զինքը հեղձուցանող և ժոխային ջերմութեան մէջ անակնկալ եւ հեշտալի զովութիւն մ'զգալով՝ երեսը զուարթանալ սկսաւ, կուրծքն ընդարձակեցաւ, կիսաբաց շրթունքն ախորժանօք ծծեց այն հեզիկ հովը, եւ պահ մ'առաջ անհանդիստ եղած քունն այս երջանիկ զգացման անյաղթելի ազդեցութեամբը քաղցրանալով, վերստին ննջել սկսաւ խոր անդորրութեան մէջ :

Յանկարծ փայլակ մը շողալով լուսաւորեց ամուրային հովանաստուեր յարկը : Խեղդիչը վախնալով որ հնդիկ երիտասարդը որոտման ձայնէն յանկարծ կարթննայ, իր դործը լմնցընելու չիութաց :

Ճալմա՝ կրնրկին վրայ պատկած , գլուխն աջ
ուսին վրայ ծռած եւ ձախ թեւն ալ ասրածած
էր . խեղդիչն անոր ձախ կողմը կծկտած՝ հո-
վահրութիւնը քիչ քիչ դադրեցուց . յետոյ ճալ-
մայի ձախ բաղուկը ծածկող մուսկինէ ճերմակ
շապիկին երկայն ու լայն թեւն անհաւատալի
ճարպիկութեամբ վեր սօթտեց մինչեւ արմուկը :

Այն ժամանակ իր վարտիքին գրպանէն պը-
ղընձէ փոքրիկ տուփ մը հանելով , մէջէն ամե-
նաբարակ սուր ասեղ մ' եւ սեւուկ արմատի կտոր
մ' առաւ , քանի մ' անգամ ասեղն այն արմատին
խոթեց , եւ ամեն անգամուն ճերմակ եւ կաշուն
հիւթ մ' ելաւ անկէց : Երբոր տեսաւ որ ասեղը
բաւական տոգորուեր էր այն հիւթով , պակե-
ցաւ , մեղմով մը փչեց ճալմայի բաղուկին տակի
կողմը որպէս զի՛նորէն զովութեան զգացում մը
պատճառէ հոն , եւ իր ասեղովը քանի մը գաղտ-
նի եւ խորհրդաւոր նշաններ գծեց անոր մորթին
վրայ՝ գրեթէ աննշմարելի կերպով :

Այս գործողութիւնն այնչափ արագու-
թեամբ կատարուեցաւ , ասեղին ծայրն այնչափ
բարակ ու սուր էր , որ ճալմա իր մորթին ամե-
նաթեթեւ ցտումը չկրցաւ իմանալ :

Շատ շանցաւ խեղդիչին գծած նշանները
տեսնուիլ սկսան՝ նախ բաց վարդի գունով եւ մա-
ղի հաստութեամբ . սակայն ասեղին վրայի հիւ-
թըն այն աստիճան բարկ եւ կիզիչ էր , որ քիչ քիչ
մորթին տակը սողոսկելով ու ծաւալելով , քանի
մը ժամ ետքը կասպուտակ կարմիր գոյն մը պիտի

առնուր եւ աննշմարելի գիրերն յայտներեւ պիտի տեսնուէին :

Խեղդիչն այսպէս յաջողութեամբ իր սլաշտօնը կատարելէ ետեւ , վերջին արիւնասխան ճնայուած ք մը ձգեց ննջեալ հնդկին վրայ . յետոյ սողալով հեռացաւ փսիաթին վրայէն , բացած ծակէն դուրս ելաւ , եւ բնաւ կասկած անաց տեղի չթողու համար ծակին երկու շրթունքն իրարու բերելով հիւսեց . յետոյ փախաւ աներևոյթ եղաւ երբոր փայլակն հեռուէն օրոտալ կ'սկսէր :

ԳԼՈՒԽ Գ .

ՄԱՔՍԱԽՈՅՍ

Առաւօտեան փոթորիկը երկար ժամանակէ ՚ի վեր դադրած էր : Արեւը մարը մտնելու մօտ էր , եւ խեղդիչին ճալմայի տաղաւարը մտնելէն եւ քունին մէջ անոր թեւին վրայ խորհրդաւոր նշաններ նկարելէն ետեւ քանի մը ժամ անցեր էր :

Թաւախիտ ծառերէ շրջապատեալ երկար ճանքու մը մէջէ ճիւղու մը կանցնէր սրարչաւ : Հազարաւոր թռչուններ , այն կանանչայարկ կամարիններքեւ պատսպարուած , իրենց կարկաչներովն ու խաղերով երեկոյին գեղանշուլ պայծառութիւնը կողջունէին : Աանանչ եւ կարմիր թռթակներ՝ իրենց ճանգաձեւ կտուցին օդնութեամբ կարմիր ագասիաներուն կատարը կել-

նէին . սուտակագոյն մայնամէշնուներ , որք ոսկեփայլ պարանոցով եւ երկար պոչով մեծ թըռչուններ են , սեւ ու խարտեաչ սպինոսները կը հալածէին . ծիածանի պէս երփներանգ աղաւնիներ իրենց անուշ մ'նչիւնը կը հնչեցընէին դրախտահաւուց հետ , որոց շողշողուն փետուրները զմրուխտի յակնթի տպագիտնի եւ շափիրայի գոյներն ու փայլերն իրենց վրայ կը միացընէին :

Ծառուղին քիչ մը բարձր ըլլալով՝ լճակի մը վրայ կը նայէր , որուն վրայ տեղ տեղ թամարենիներու եւ նօբալներու կանանչ ստուերը դարկած էր . ջուրը հանդարտ եւ յստակ ըլլալով , մէջը բազմաթիւ կապոյտ եւ արծաթափայլ ձուկեր կը տեսնուէին ծիրանագոյն թեւերով , այնպէս անշարժ , որ տեսնողը կապոյտ բիւրեղի վըրայ դրուադներ կը կարծէր . վասն զի ամենն ալ ջուրին երեսը ելած , ուր արեւն իր իր ակնախըտիղ ճառագայթները դարկեր էր , կարծես թէ անոր ջերմութեան ու լուսոյն աղդեցութեամբը կը յօրանային : Հազարաւոր միջատներ , կենդանի գոհարներու նման հրացայտ թեւերով կը թռչըտէին ու կը բզզային այն թափանցիկ ջուրին վըրայ , ուր եղերքի ջրային տունկերուն ու ծաղիկներուն երփնազան գոյները կարգէ դուրս խորութեամբ կը ցլանային :

Անհնար է այս կողմի բնութեան ամենաուստ գոյներուն հոտերուն եւ պայծառութեան շռայլ ճոխութիւնը նկարագրել , որ կարծես թէ ծառուղիին մէջէն եկող առոյգ եւ գեղադէմ ձի-

աւորին պատկերին շրջանակ մը կը ձեւացընէր : Այս ձիաւորը ճալման էր : Գեռ չէր նշմարած որ խեղդիչն իր ձախ թեւին վրայ անեղծանելի նըշաններ դժադրած էր :

Իր ճալացի սեւ մատակը միջակ մեծութիւն մ'ունէր , բայց վերջին աստիճան ուժեղ եւ կրակոտ էր : Կամետի տեղ կարմիր նեղ գորգ մը ձըգուած էր վրան : ճալմա՝ մատակին յախուռն սատիւնները զգպելու համար պողպատէ փոքրիկ սանձ մը կը գործածէր , որուն կարմիր մետաքսէ պախուրցն ու երասանները դերձանի պէս թեթեւ էին : Աթենասայ հռչակաւոր տաճարին սիւներուն վրայ քանդակեալ հրաշակերտ ձիաւորներն այս հնդիկ երիտասարդին չափ շնորհալից եւ խորխտ երեւոյթ մը չունէին , որուն գեղեցիկ դէմքն երեկոյեան արեւով լուսաւորեալ՝ երջանակութիւն ու զուարթութիւն կը ցայտէր . աչերն ուրախութեամբ կը փայլէին . ունդերն ընդարձակած , շրթունքը կէս բացուած , հեշտութեամբ կը շնչէր դալարիներուն ու ծաղիկներուն անուշ հոտերով զմռսեալ հեզիկ հովը . վասն զի ծառերը փոթորկին յաջորդող առատ անձրեւէն դեռ խոնաւ էին :

Վարդագոյն գլխարկ մը՝ որ յունաց գտակին քիչ մը կը նմանէր , ճալմայի սեւ մազերուն վրայ դրուած , անոր ոսկեգոյն դէմքին առաւել վայելչութիւն մը կուտար . պարանոցը մերկ էր . ճերմակ մուսլինէ լայնածղի պարեգօտ մը հագած էր՝ մէջքը ծիրանեգոյն գօտիով , ճերմակ կտաւէ

լայն վարտիք մը մինչեւ կէսը բաց կը թողուր իր մերկ դեղին եւ ողորկ սրունքները, որոց վայելուչ ձեւը նկարուած կը թուէր մատակին սեւ կողերուն վրայ, զորս ճալմա իր ջղոտ թամբերովը թեթեւ կերպիւ կը սեղմէր: Ասպանդակ չունէր. իր փոքրիկ ունեղ ոտքը կարմիր սեկէ սանդալներ անցուցած էր:

Իր յանդուգն բայց սանձեալ մտածութեանց բոցեռանդ աշխոյժն իր մատակին ազդած ընթացքէն կը հասկցուէր, մերթ՝ անզսպելի խանդով բորբոքեալ երեւակայութեան պէս յանդուգն եւ դահավէժ, մերթ՝ խօլական տեսութեանց յաջորդող խորհրդածութեան պէս հանդարտ եւ չափաւոր: Այս տարօրինակ ընթացքին մէջ իր ամենափոքր շարժումները սէզ անկախ եւ քիչ մ'ալ վայրենի շնորհքով լի էին:

Ճալմա՝ իր հայրենի երկրէն անդ դիացւոց ձեռք զրկուած, եւ հայրը դէն 'ի ձեռին մեռնելէ ետեւ նախ իբրեւ տէրութեան դերի բանտարկուած (ինչպէս որ Պ. Ժողիւէ Վան-Տաէլ Պաթավիայէն գրեր էր Պ. Ռօտէնի), եւ յետոյ թող տրուած էր:

Այն ժամանակ ցամաքային Հնդկաստանը թողլով, Սիմօն զօրապետին հետ՝ որ իր վաղեմի բարեկամ Քաճա-Սինկ թագաւորին որդւոյն բանտին մօտերէն չէր հեռացած, Պաթավիա եկեր էր իր մօրը ծնած քաղաքը, որպէս զի անոր թողուցած աղքատիկ ժառանգութիւնը ձեռք անցունէ:

Այն ժառանգութեան մէջ, որ երկար ժամա-

նակէ 'ի վեր արհամարհուած ու մոռցուած էր իր հօրմէն , Ռօզի եւ Պլանշի քով եղած թուղթերուն ու միտալին յար եւ նման թուղթեր եւ միտալ մը գտնուեցաւ :

Միտոն զօրապետը միանգամայն զարմացեր եւ ուրախ եղեր էր այս գիւտին վրայ , որ ոչ միայն ազգականութեան կապ մը կը հաստատէր իր կընոջն ու Ճալմայի մօրը մէջ , այլ եւ ապագայ մեծ օգուտներ կը խոստանար այս վերջինին : Միտոն զօրապետը ճալման Պաթալիա թողուց քանի մը գործեր կարգադրելու համար , եւ ինքը մօտակայ Սուլթանի կողմէն գնաց , ուր յոյս տուեր էին իրեն թէ ուղղակի եւ շուտով Ներոպա երթալիք նաւ մը պիտի գտնէր . վասն զի հարկ էր որ հընդիկ երիտասարդն ալ 1832 փետրուար 13 ին անպատճառ Փարիզ գտնուէր : Եթէ Միտոն զօրապետն իրօք Ներոպա երթալու պատրաստ նաւ մը գտնէր , իսկոյն Պաթալիա պիտի դառնար եւ ճալման առնէր տանէր : Ուստի ճալմա ալ օրէ օր անոր դարձին սպասելով , յաճախ Պաթալիայի նաւահանգիստը կերթար որպէս զի զօրապետին Սուլթանայէն շոգենաւով գալը տեսնէ :

Հոս հարկ կըլլայ քանի մը տեղեկութիւններ տալ Քաճա-Սինկի որդւոյն տղայութեան եւ պատանեկութեան ժամանակներուն վրայ :

Ճալմա՝ իր մանուկ հասակին մէջ մայրը կորսընցընելով , պարզ եւ խիստ կենօք մեծցած էր , եւ տղայ ժամանակէն հօրը հետ վագրի որսերու գացած էր , որ պատերազմներու շափ վտանգա-

ւոր է . իսկ պատանեկու թեան հասակը մտնելուն
պէս պատերազմի երթալ սկսեր էր հայրենի երկ-
րին պաշտպանութեան համար դժնդակ եւ
արիւնուռչտ պատերազմ :

Այսպէս իր մայրը մեռնելէն 'ի վեր հայրենա-
կան անտառներուն ու լեռներուն մէջ ապրելով ,
այս կորովի եւ միամիտ բնութիւնն անդուլ կը-
ռիւններու մէջ անարատ եւ կոյս մնացեր էր : Ի-
րեն տրուած վեհանձն մականունն երբէք սխալ
չէր ելած : Իբրեւ թագաւորազուն իշխան՝ ճըշ-
մարիտ թագաւորազուն իշխան մ'էր որ
հազուադիւտ բան է իր բանտարկութեան
ժամանակ լռակաց ծանրութեամբն ակնածե-
լի եղեր էր անդղիացի բանտապաններուն : Եր-
բէք դանդաւ , երբէք տրտունջ մը չէր հանած
բերնէն , այլ իր դէմ գործածուած անիրաւ եւ
բարբարոսաւայել խստութեան դէմ խրոխտ եւ
տրտում հանդարտութիւն մը ցուցըցած էր միշտ՝
մինչեւ որ ազատութիւն արուեցաւ իրեն :

Մինչեւ այն ժամանակ իր երկրին լեռնական-
ներուն նահապետական եւ պատերազմային կե-
նացը վարժուած ըլլալով , որմէ քանի մ'ամիս
բանտարկուելու համար միայն բաժնուեր էր ,
ճալմա գրեթէ բնաւ ծանօթութիւն չունէր քա-
ղաքակիրթ կենաց . բայց , առանց իր այս բնական
վիճակին թերութիւնները դրապէս ունենալու ,
գոնէ անոր հետեւանքը մինչեւ յեաին ծայրը կը
հասցընէր . անընկճելի յամառ էր տուած խօս-
քին վրայ , անձնուէր մինչեւ 'ի մահ , վստահ մին-

չեւ 'ի կուրութիւն , բարեսիրտ մինչեւ 'ի մոռա-
ցումն անձին . իսկ ասոր հակառակ , անողոքելի
էր ապերախտութեան ստութեան կամ'նենդու-
թեան դէմ . վերջապէս դաւաճանի մը կամ
երդմ'նազանցի մը կեանքը բնաւ արժէք չունէր
իր աչքին . վասն զի այնպէս հաւտայած էր որ
եթէ ինք ալ դաւաճանութիւն կամ երդմ'նազան-
ցութիւն մ'ընէր , իր մահուամբը միայն պէտք
էր վճարէր : Մէկ խօսքով , կատարեալ եւ բա-
ցարձակ զգացմամբք մարդ մ'էր : Այսպիսի մարդ
մը՝ երբոր ամենաբարակ ընկերութեան մը սովո-
րութիւններուն , հաշիւներուն , ստութիւննե-
րուն , պատրանքներուն , խորամանկութիւննե-
րուն , զգուշութիւններուն եւ կեղծուպատիր ձե-
ւերուն , հետ դորժ ունենայ , ինչպէս է օրինակի
համար Փարիզի ընկերութիւնը , տարակոյս չկայ
որ խիստ հետաքրքրաշարժ ուսման մը նիւթ կըլ-
լայ :

Այս ենթագորութիւնը դիտմամբ մէջ կը բե-
րենք , վասն զի Գաղղիա երթալու որոշումն ըլ-
լալէն 'ի վեր ճալմայի խելքն ու միտքը Փարիզ
էր . . . Փարիզ . . . այն հրաշազան քաղաքը,
որուն վրայ դիւթական Ասիոյ մէջ անդամ դար-
մանասքանչ իրողութիւններ կը պատմուին : Հըն-
դիկ երիտասարդին կոյս եւ կրակոտ երեւակա-
յութիւնն ամենէն աւելի բորբոքողը դաղղիացի
կանայքն էին . . . այն սիրուն եւ հրապուրիչ
փարիզուհիները , վայելչութեան շնորհաց եւ դե-
ղոյ հրաշալիքը՝ որ քաղաքակրթեալ աշխարհի

մայրաքաղաքին շքեղութիւնները կը մթնցընէին
կըսուէր :

Նոյն միջոցին իսկ, այն փառաւոր ջերմ եւ
զմայլեցուցիչ ծաղիկներով ու անուշահոտութիւն-
ներով շրջապատեալ երեկոյին, որ այս եռան-
դոտ ու մատաղ սրտին բաբախումն առաւել եւս
կը փութացընէր, ճալմա այն գեղասքանչ է-
ակները կերեւակայէր՝ մտացածին ձեւեր ու
կերպարանքներ տալով անոնց : Ար թուէր իրեն
թէ ծառուղիին ծայրէն, այն ոսկեփայլ լուսոյ
հոսանքին մէջ՝ որ ծառերուն դալարախիտ կա-
մարներովը պատեալ էր, ամենասիրուն եւ հեշ-
տալի էակներ կանցնէին կը դառնային սպիտակ
եւ թեթեւաշարժ, եւ իրենց վարդագոյն մատանց
ծայրով սիրալիր համբոյրներ կը շրկէին իրեն
ժպտելով : Այն ժամանակ ճալմա չկրնալով զին-
քը յուզող բոցավառ կիրքը զսպել, եւ կարգէ
դուրս խանդով մը յափշտակեալ, յանկարծ սրտին
խորէն զօրաւոր եւ կէս վայրենի ուրախութեան
ձայն մ'արձակեց այն աստիճան խելակորոյս ար-
բեցութեամբ, որ իր կորովի մատակը վեր ցատ-
կեց իր ներքեւ . . . :

Արեւուն պայծառ ճառագայթը ծառուղիին
ստուերամած կամարէն անցնելով ճալմայի վրայ
զարկեր էր :

Նոյն միջոցին մարդ մը կուգար շտապով
կողմնական ճանրէ մը՝ որուն ծայրը ճալմայի ան-
ցած ծառուղին կտրելով անկիւն մը կը ձեւացը-
նէր : Մարդը վայրկեան մը ստուերին մէջ կանգ

առնելով հիացմամբ ճալմայի նայեցաւ հեռուէն :

Եւ արդարեւ զմայլելի բան մ'էր տեսնել ակնախափող լուսեղէն պսակով բոլորեալ այս դեղեցիկ առոյգ արբեալ եւ եռանդուն երիտասարդը, սպիտակ եւ հողմածաւալ հագուստով, զըւարթաբար սեւ ու խրոխտ մատակին վրայ հեծած, որ իր կարմիր երասանակը փրփուրով կը ծածկէր, եւ որուն երկար պոչն ու թաւահերբաշը երեկոյեան հովէն կը ծածանէին :

Բայց ինչպէս որ մարդկային ամեն բաղձանքներուն հակառակ զգացում մը կը յաջորդէ միշտ, ճալմա ալ այն երջանկաւէտ բերկրութեան միջոցին անբացատրելի բայց գողտրիկ տխրութիւն մը զգաց, եւ երասանն իր հլու մատակին պարանոցին վրայ ձգելով ձեռքն իր արտասուալից եւ քօղարկեալ աչքին տարաւ :

Մատակն իսկոյն կանգ առաւ, իր կարապի պարանոցն երկնցուց եւ գլուխը կէս մը դէպ'ի անտառին մէջէն եկող մարդուն դարձուց :

Ս, յս մարդը, որ մաքսախոյս Մահալ կը կոչուէր, գրեթէ Եւրոպայի նաւաստիներուն կերպարանքն ունէր: Ճերմակ հաստ կտաւէ բաճկոն մ'եւ տափատ մը հագած էր՝ մէջքը կարմիր լայն գօտիով մը, եւ գլուխը տափարակած եւ գլխարկ մը դրած. դէմքը թխորակ ու նշանաւոր էր. թէ եւ քառսուն տարու կար, բայց բնաւ մօրուք չունէր :

Շատ չանցաւ Մահալ ճալմայի քով հասաւ :

« Ճալմա արքայազունը դձուք էք . . . հարցուց գաղղիերէն դէշ արտասանութեամբ մ'եւ

ձեռքն ալ յարգանօք գլխարկին տանելով : — Ի՞նչ
կուզես , ըսաւ Հնդիկ երիտասարդը : — Դուք
Քաճա-Սինկ թագաւորին որդի՞ն էք : — Դարձ-
եալ կըսեմ , ի՞նչ կուզես : — Սիմօն զօրապետին
բարեկամը . . . — Սիմօն զօրապետը , գոչեց ճալ-
մա : — Ձինքը գիմաւորելու կերթաք , այնպէս
չէ . . . ինչպէս որ ամեն իրիկուն սովորութիւն
ունիք երթալու քանի որ Սուլմաթրայէն դալուն
կ'ստատէք : — Այո՛ . . . բայց ինչէն գիտես . . .
ըսաւ ճալմա զարմանօք եւ հետաքրքրութեամբ
մաքսախոյսին երեսը նայելով : — Այսօր կամ
վաղը Պաթալիա պիտի գայ շոգենաւով : — Մի-
թէ անոր կողմէն կուգաս . . . — Թերեւս , ը-
սաւ Մահալ կասկածոտ դէմքով մը , բայց ըսէք
ինձ , դուք ստուգիւ Քաճա-Սինկի որդի՞ն էք :
— Այո՛ , Քաճա-Սինկի որդին ես եմ . . . բայց
հեր տեսար դուն Սիմօն զօրապետը : — Որովհե-
տեւ դուք Քաճա-Սինկի որդին էք , ըսաւ նորէն
Մահալ կասկածոտ դէմքով մը ճալմայի նայելով ,
ի՞նչ է ձեր մականունը . . . : — Հայր Լեհանչին կը
կոչուէր իմ հայրս » պատասխանեց հնդիկ երի-
տասարդը , եւ դէմքին վրայէն տխրութիւն մ'ան-
ցաւ :

Այս խօսքին վրայ Մահալ համոզուիլ սկսաւ
որ երիտասարդն ստուգիւ ճալման էր , բայց բո-
ւորովին վստահ ըլլալու համար հարցուց . « Երկու-
օր առաջ Սիմօն զօրապետէն նամակ մ'առած պի-
տի ըլլաք . . . Սուլմաթրայէն դրուած : — Այո . . .
բայց ի՞նչ պատճառաւ այդ հարցումները կընես :

— Վստահ ըլլալու համար թէ ստուգիւ Քաճա-
Սինկի որդի^ն էք . . . որպէս զի կարենամ ըս-
տացած հրամաններս կատարել : — Ուրկէ են այդ
հրամանները : — Սիմօն զօրապետէն . . . — Բայց
ո՛ւր է ինքը : — Երբոր ձեռքս ապացոյց մ'ունե-
նամ որ դուք ճշմամբ արքայորդին էք , այն ժա-
մանակ պիտի ըսեմ ձեզ : Արդարեւ ինձ իմաց տը-
ւեր էին թէ կարմիր երասանակով սեւ մատակի
մը վրայ կը հեծնէք . . . բայց . . . — Մօրս
վրայ կերդնում . . . պիտի ըսես վերջապէս
— Ամեն բան կը յայտնեմ ձեզ . . . եթէ վերջին
անգամ Սուլաթրայէն Սիմօն զօրապետին ձեզ գը-
րած նամակին մէջ դրուած տպեալ թուղթին ինչ
ըլլալն ըսէք ինձ : — Գաղղիերէն լրագրէ հատ-
ւած մ'էր : — Այն լրագիրը բարի^ն թէ գէշ լու-
րեր կուտար զօրապետին վրայ : — Բարի , վասն
զի գրեր է թէ կայսրէն ստացած վերջին տիտղոսն
ու պատուաստիճանն իր տարակայութեան ժա-
մանակ ընդունուեր է Գաղղիոյ հիմակուան կա-
ռավարութենէն , ինչպէս նաեւ ուրիշ իրեն պէս
աքսորեալ զինուորականներու տիտղոսները : »
Մաքսախոյսը վայրկեան մը խորհելէ ետեւ ը-
սաւ . « Հիմա համոզուեցայ որ արդարեւ դուք
ճշմամբ արքայազունն էք , եւ կրնամ ամեն բան
ձեզ յայտնել . . . , Սիմօն զօրապետն այս գիշեր
ճովա հասաւ նաւով , բայց ծովեզերքին մէկ ա-
մայի կողմն ելաւ . . . : — Ամայի կողմն ելաւ
. . . : — Վասն զի պահուըտելու հարկադրեալ
է . . . : — Սիմօն զօրապետը , գոչեց ճշմամբ

ապշելով . եւ ինչո՞ւ համար պիտի պահուըտի :
— Չեմ գիտեր . . . : — Հիմա ինքն ո՞ւր է , հար-
ցուց ճալմա տատամսու թենէն երեսին գոյնը նե-
տելով : — Ասկէ երեք փարսախս հեռու ծովեզեր-
քին մօտ Չանտիի աւերակներուն մէջ . . . : — Սի-
մօն զօրապետը պահուըտելու հարկադրեալ ըլ-
լայ . . . կրկնեց ճալմա հետզհետէ զարմանքն
ու անձկութիւնն աւելնալով : — Թէպէտ ստոյգ
չեմ գիտեր , կը կարծեմ որ Սուլաթրայի մէջ ը-
րած մենամարտութեան պատճառաւ ըլլալու է ,
ըսաւ մաքսախոյսը խորհրդաբար : — Մենամար-
տութի՛ւն . . . որո՞ւ հետ : — Չեմ գիտեր , հա-
ւաստի չեմ . բայց գիտէք Չանտիի աւերակնե-
րը . . . : — Այո՛ : — Զօրապետը ձեզ հոն կըս-
պասէ , եւ ասոր համար զիս դրկեց ձեզ . . . :
— Ուրեմն դուն ալ անոր հետ եկար Սուլաթրա-
յէն : — Ես զինքը բերող ու այս գիշեր ամայի ծո-
վեզերքը հանող փոքրիկ մաքսախոյս նաւին ու-
ղեցոյցն էի : Ինքը գիտէր որ դուք ամեն օր նա-
ւահանգիստին ճանքուն վրայ կուգաք զինքը
կ'սպասէք . ուստի ես ալ տարակոյս չունէի որ
այս ճանքուն վրայ պիտի գտնէի ձեզ . . . : Զօ-
րապետէն առած վերջին նամակնուդ վրայօք տը-
ւած տեղեկութիւնս ինք հաղորդեց ինձ , որպէս
զի իր կողմէն եկած ըլլալս կարենամ հաստատել .
եթէ կարենար նամակ մը գրել ձեզ , կը գրէր :
— Չըսա՞ւ քեզ թէ ի՞նչ պատճառաւ պահուըտե-
լու հարկադրուած է . . . : — Այդ մասին բան
մը չըսաւ . . . բայց իր քանի մը խօսքերէն կաս-

կածեցի թէ մենամարտութեան մը պատճառաւ
է »

Ճալմա՝ Սիւսոն դօրապետին քաջութիւնն ու
դիւրաբորբօք բնաւորութիւնը լաւ ճանչելով ,
մաքսախոյսին կասկածներն հիմնաւոր կարծեց .

« Վայրկեան մը լուռ կենալէ ետեւ՝ ըսաւ ա-
նոր . « Կրնամ ձիս տուն տանիլ . . . տունս քա-
ղաքին դուրսն է , նոր մզկիթին մօտ , սա ծառե-
րուն մէջ ծածկուած՝ որք հեռուն կը տեսնուին :
Չանտիի լեռնէն վեր ելնելու համար ձիս նեղու-
թիւն պիտի տայ . ոտքով աւելի շուտ կերթամ
. . . . — Չեր տունը դիտեմ ես . Սիւսոն դօրա-
պետը հասկըցուցեր էր ինձ եթէ ձեզ հոս
չգտնէի , հոն պիտի գայի Ուրեմն տուէք
ձիերնիդ »

Ճալմա՝ մատակին վրայէն վար ցատկեց , ե-
րասանին ծայրը Մահալին նետեց , եւ դօտիին մէկ
ծայրը քակելով մետաքսեայ փոքրիկ քսակ մը
հանեց մաքսախոյսին տուաւ ըսելով . « Հաւա-
տարիմ եւ հնազանդ վարմունքիդ համար քեզ
կուտամ այս քսակս թէպէտ քիչ է
բայց ասկէ աւելի չունիմ . — Իրաւամբ Հայր Վհանջեան
կը կոչուի եղեր Քաճա-Սինկ » ըսաւ մաքսախոյսն
յարգանօք եւ շնորհակալութեամբ խոնարհելով ,
եւ Ճալմայի մատակին երասանէն բռնած՝ դէպ 'ի
Պաթավիա շտկուեցաւ : Հնդիկ երիտասարդն ալ
անտանին մէջ մտնելով՝ մեծաքայլ դէպ 'ի լեռը
շտկուեցաւ ուր Չանտիի աւերակները կը գտնուէ-
ին , եւ ուր դիչերէն առաջ չէր կրնար հասնիլ :

ԳԼՈՒԽ Գ .

ՊԱՐՈՆ ՃՕՋԻԻԷ ՎԱՆ-ՏԱԷԼ

Պ . Ճօղիւէ վան-Տաէլ , Հոլանտացի վաճառական , թղթակից Պ . Ռօտէնի , ճալա կղզւոյն Պաթալիա մայրաքաղաքը ծնած էր : Պատանկու թեան ժամանակ ծնողքը զինքը կրթութեան զրկեր էին Բօնտիշէրի քաղաքը՝ ճիզվիթաց ընկերութեան ձեռքն եղած մեծահամբաւ կրօնաւորական տուն մը : Հոն իբրեւ «-խեւ երեք» կամ իբրեւ աշխարհական «Վեյն» ճիզվիթաց ընկերութեան անդամ եղեր էր :

Պ . Ճօղիւէ՝ արդարակորով եւ իր գործերուն մէջ վերջին աստիճան ճիշդ , պաղարիւն , զգոյշ եւ նշանաւոր կերպիւ յաջողակ ու խելացի մարդ մ'էր . իր առեւտրական գործողութիւնները գըրեթէ միշտ յաջող էին , վասն զի պաշտպան զօրութիւն մը միշտ յարմար ժամանակին անոր կիմացընէր այն ամեն անցքերն ու դէպքերը որք կրնային օգտակար ազդեցութիւն մ'ունենալ իր տուրեւառութեանց վրայ : Բօնտիշէրիի կրօնաւորական տունը շահ ունէր անոր գործողութեանց մէջ . վասն զի այն երկրին մէջ ճիզվիթներուն ունեցած բազմաթիւ ընդարձակ կալուածոց բերքերուն փոխադրութիւնն ու փոխանակութիւնն անոր ձեռք կը կատարուէր :

Այս մարդը քիչ կը խօսէր, շատ մտիկ կը ընէր, բնաւ չէր վիճաբաներ եւ վերջին ծայր քաղաքավար էր: Քիչ կուտար, բայց ընտրանօք եւ յարմար առթի մէջ կուտար: Պ. Ժօղիւէ՝ թէ եւ համակրութիւն չէր գրաւած, բայց ճշդասիրութեանը պատճառաւ կը յարգուէր. վասն զի փոխանակ գաղթականաց ազատ եւ ցոփ բարուց ազդեցութիւնը կրելու, մեծ կանոնաւորութիւն կը ցուցընէր ապրելու եղանակին մէջ, եւ իր արտաքին կերպարանքն ալ այնպիսի խստակեաց երեւոյթ մ'ունէր, որ աեսնողին ակնածութիւն կազդէր:

Երբոր ճալմա Չանտիի աւերակները կերթար Սիւսոն դօրապետը տեսնելու, նոյն միջոցին Պաթավիայի մէջ հետեւեալ տեսարանը կանցնէր:

Պ. Ժօղիւէ քանի մը վայրկենէ՝ ի վեր իր սենեակը քաշուեր էր, ուր շատ մը դարակներ կային ստուարաթուղթէ պահարաններով լցուն, եւ դրասեղաններուն վրայ ալ սնտուկի մեծ հաշուեմատեաններ բացուած կը կենային: Սենեակը գետնի վրայ էր եւ միակ պատուհան մ'ունէր, որ փոքրիկ ամայի դաւթի մը վրայ կը նայէր, դուրսէն երկաթէ ամուր վանդակասիւններով պատըսպարեալ, եւ ապակիներու տեղ շարժուն վանդակափեղկ մ'ունէր ճավայի կլիմային սաստիկ տաքութեանը պատճառաւ:

Պ. Ժօղիւէ ապակիէ լապտերի մը մէջ դըրուած մումը դրասեղանին վրայ դնելէ ետեւ՝ ժամացոյցը նայեցաւ. « Ժամն իննուկէսն է, հիմա

Մահալ հուզայ » ըսաւ ինքն իրեն : »

Այս ըսելով դուրս ելաւ , նախասենեակէ մը անցաւ , հոլանտական խոշորագլուխ բեւեռներով պատած երկրորդ հաստ դուռ մը բացաւ , եւ ըզգուշանալով որ տանը մէջ ջինները չլսեն , կամացուկ մը դաւիթը ելաւ , ծածուկ սողնակ մը քաշեց , որ վեց ոտք բարձրութեամբ եւ սրածայր երկաթներով զինեալ մեծ դռնափեշկ մը գոցած էր : Յետոյ այն դուռը բաց ձգելով եւ միւս դռները հետզհետէ եւ զգուշութեամբ գոցելով իր սենեակը դարձաւ , դրասեղանին առջեւ նստաւ , երկյատակեայ դարակի մը մէջէ երկար նամակ մը կամ մանաւանդ յիշատակագիր մը հանեց զոր երկար ժամանակէ 'ի վեր սկսած եւ օր ըստ օրէ գըրած էր : (Աւելորդ է ըսել թէ Փարիզ Միլիէօ-Տէզիւրսէն փողոցը Պ . Ռօտէնի ուղղած նամակը ճալմայի ազատութենէն եւ Պաթալիա հասնելէն առաջ գրուած էր) :

Այս յիշատակագիրն ալ նոյնպէս Պ . Ռօտէնին ուղղուած էր : Ժողիւէ հետեւեալ կերպով շարունակեց գրութիւնը :

« Միմօն զօրապետին դառնալէն վախնալով , զոր իր նամակները ձեռքս անցունելով իմացած էի , (արդէն ըսած եմ ձեզ թէ զիս իրեն թղթակից ընտրել տալու յաջողեր էի) , վասն զի նամակները նախ կը բանայի կը կարդայի եւ յետոյ նորէն ըզգուշութեամբ կնքելով ճալմայի ձեռքը կը հասցընէի անորի՛ն , պարտաւորեցայ ժամանակէն եւ պարագաներէն ստիպեալ՝ ծայրագոյն միջոց-

ներ ձեռք առնուլ, արտաքին երեւոյթը կատարելապէս բարեքելով եւ մարդկութեան նշանաւոր ծառայութիւն մ'ընելով: Այս վերջինս պատճառը եւ մանաւանդ նոր վտանգի մ'երկիւղը զիս հարկադրեց այսպէս վարուելու:

« Ռե՛յէր շողենաւն երէկ հոս հասաւ եւ վաղը ցերեկին ճանբայ պիտի ելնէ: Այս շողենաւը Եւրոպա ճանապարհորդ տանելու համար Արաբիոյ ծոցէն կանցնի եւ ճանապարհորդները Սուէ՛յիչ կը հանէ, որք անկէց Աղէ քսանդրիա երթալով ուրիշ նաւ մը կը նստին եւ Գաղղիա կերթան: Այս արագ եւ ուղղակի ճանապարհորդութիւնը եօթն կամ ութ շաբաթի մէջ կը կատարուի: Եւ որովհետեւ հիմա հոկտեմբերի վերջն ենք, ճալմա այս ճանբով կրնար յունվարի սկիզբը Գաղղիա հասնիլ. ուրեմն ձեր հրամանին համեմատ, որուն պատճառը չեմ գիտեր՝ բայց փութով եւ հնազանդութեամբ կատարելու պարտական եմ, հարկէր անպատճառ ետ ձգել ճալմայի ճանապարհորդութիւնը, որովհետեւ կըսէք ինձ թէ Լիւիւր-Լեան ամենէն մեծ շահերէն մէկը վտանգի մէջ կլինայ եթէ այս երիտասարդ հնդիկը փետրվար 13էն առաջ Փարիզ հասնի: Արդ, եթէ բռնած միջոցովս՝ ինչպէս որ կը յուսամ՝ յաջողիմ Ռե՛յէր շողենաւով ճանբայ ելնելէ արդելուլ, այնուհետեւ անհնար կըլլայ իրեն ապրիլ ամսէն առաջ Փարիզ հասնիլ, վասն զի Ռե՛յէրէն դատ շողենաւ չկայ որ ուղղակի այս ճանապարհորդութիւնն ընէ. իսկ ուրիշ նաւերն առ նուազն չորս կամ հինգ ամսոյ մէջ

հաղիւ կրնան Ներուպա հասնիլ :

« Բայց ճալման իր ճանապարհորդութենէն արդիւլելու համար բռնած միջոցիս վրայ խօսելէ առաջ , որովհետեւ մինչեւ այս ժամս դեռ լուր մը չառի թէ արդեօք յաջողեցաւ թէ ոչ , լաւ կըլլայ քանի մը գործերու վրայ տեղեկութիւն տալ ձեզ :

« Անդդիական Հնդկաստանի մէջ այս օրերս ընկերութիւն մ'երեւան ելաւ , որուն անդամներն իրար Նշխար + Բարեգործութեան կամ Ֆանդիար կը կոչեն , որ պարզապէս խեղճելըսել է : Այս մարդասպաններն արիւն չեն թափեր , այլ միայն կը խեղդեն իրենց ձեռքն ինկած մարդիկը , ոչ այնչափ կողոպտելու նպատակաւ , այլ մանաւանդ Պօհվանի անուանեալ դժոխային Աստուծոյ մը օրինացըն հնազանդելու եւ մարդասպանութեան ուխտերնին կատարելու համար :

« Այս սոսկալի աղանդին վրայ ձեզ դադափար մը տալու համար արժան կը համարիմ Սլիմէն գնդապետին տեղեկագրութեան յառաջաբանին քանի մը տողերը հոս դնել : Յիշեալ գնդապետն անխոնջ եռանդով այս խաւարային ընկերութիւնը հալածելով տեղեկագրի մը շինած է , որ ասկէ երկու ամիս առաջ հրատարակուեցաւ : Ահաւասիկ յիշեալ տեղեկագրէն հատուած մը .

« 1822էն 1824 , երբոր Նէրսիսկբուր նա-
« հանդին դատաւորութեան եւ քաղաքական
« կառավարութեան պաշտօնը կը վարէի , հա-
« սարակ եղևոնագործի մը ձեռօք մարդասպա-

« նութիւն մը կամ ամենափոքր գողութիւն
« մը կատարուելուն պէս կիսմանայի . բայց եթէ
« այն ժամանակները մէկը դար ու ըսէր ինձ թէ
« որդի 'ի հօրէ ժառանգարար մարդասպանու-
« թիւնն իրենց արհեստ ընող ոճրագործներու
« խուճի մը կը բնակէր Քիւնտէլի գիւղը՝ որ հա-
« զիւ չորս հարիւր մէթրօ հեռաւորութիւն ու-
« նէր դատաստանարանէս , թէ Մընտըսուր գիւ-
« ղին զմայլելի ծառաստանը՝ որ նստած տեղէս
« մէկ աւուր ճանքայ հեռու էր , բոլոր Հնդկաս-
« տանի մէջ մարդասպանութեանց ամենէն սար-
« սափելի մթերանոցն էր , թէ բազմաթիւ Իւլտէ-
« ներ Հնդկաստանէն ու Տէքանէն գալով ամեն
« տարի այն ծառերուն ներքեւ կը համախմբին
« հանդիսաւոր տօն մը կատարելու պէս , եւ շր-
« ջակայ ճանքայներուն վրայ իրենց նողկալի
« ուխտն 'ի դորժ կը դնեն , այսպիսի լուր մ'ինձ
« տուող հնդիկը խենդի տեղ կը դնէի՝ ըսելով թէ
« մտացածին առասպելներու հաւատալով վախ-
« ցեր է . եւ սակայն խիստ ճշմարիտ էր . հարիւ-
« րաւոր ճանապարհորդներ ամեն տարի Մըն-
« տըսուրի ծառերուն ներքեւ կը թաղուէին .
« երկրին գերագոյն դատաւորն եղած ժամանա-
« կըս՝ մարդասպաններու զեղ մը կապրէր քթիս
« տակը , եւ իր մարդախոշոչ աւերումները մին-
« չեւ Բունահ եւ Հայտէրապատ կը տարածէր .
« երբէք չպիտի մոռնամ որ խեղդիչներուն գլխա-
« ւորներէն մէկը , իր ընկերները մասնելով , զիս
« համոզելու համար իմ բուն վրանիս ներքեւի

« հողէն տասներեք դիակ հանեց , եւ բոլորաբ-
« քի գետնէն ալ տակաւին անթիւ դիակներ հա-
« նելու պատրաստ էր : »

« Սլիմէն գնդապետին այս քանի մը խօսքե-
րէն կրնաք գաղափար մ'ստանալ այս հարաշուք
ընկերութեան վրայ , որ աստուածային եւ մարդ-
կային ամեն օրէնքներէ գուրս օրէնքներ պար-
տականութիւններ ու սովորութիւններ ունի :
Իրարու անձնուէր են մինչեւ 'ի մահ . կոյր հնա-
դանդութիւն մ'ունին իրենց մեծերուն՝ որք իրենց
գժնեայ աստուծոյն անմիջական երեսփոխաննե-
րը կը կոչեն զիրենք . իրենց աղանդէն չեղողները
թշնամի կը համարին , եւ ամեն տեղէ աշակերտ-
ներ գտնելու զարհուրելի ջանք մ'ունին այս մար-
դախանձ կրօնին առաքելները , որք ամեն կողմ
երթալով եւ իրենց նողկալի վարդապետութիւնն
ստուերի մէջ քարոզելով կարծես թէ անհուն ցան-
ցով մը պաշարած են Հնդկաստանի երկիրը :

« Ասոնց գլխաւորներէն երեքը եւ մէկ ալ
աշակերտ՝ անդդիացի կառավարչին անդուլ հա-
լածումէն փախչելով եւ ձեռքէն աղատելով
Հնդկաստանի հիւսիսային ծայրը հասան մինչեւ
Մալաքայինեղուցը՝ որ մեր կղզիէն շատ հեռու
չէ : Մահալ անուն մաքսախոյս մը , որ քիչ մ'ալ
ծովասպատակ է , յիշեալ ընկերութեան անդամ
ըլլալով զանոնք իր նաւն առած թէ հոս բերած է ,
ուր ինքզինքնին առ ժամանակ մ'ապահովու-
թեան մէջ կը կարծեն . վասն զի մաքսախոյսին
խորհրդովը խիտ անտառի մը մէջ գացած սպաս-

տանաժ են , ուր բազմաթիւ մեհեաններու աւերակներ գտնուելով՝ անոնց ստորերկրեայ նկուղներուն մէջ կրնան պահուըտիլ :

« Այս երեք գլխաւոր խեղդիչներուն մէջ որք նշանաւոր կերպիւ խելացի են , մէկը մանաւանդ՝ որ Յարէնկա կը կոչուի՝ կարգէ դուրս քաջասրտութիւն մ'եւ այնպիսի բարձր ձիրքեր ունի որք զինքը սարսափելի կընեն : Այս մարդը խառնածին է , այսինքն սպիտակամորթ մարդու մ'եւ հնդկուհիի մը ամուսնութենէն ծնած է . երկար ժամանակ այնպիսի քաղաքներու մէջ բնակած է՝ ուր եւրոպացի վաճառատուներ կան , եւ խիստ լաւ կը խօսի անգղիերէնն ու գաղղիերէնը : Միւս երկուքէն մէկը սեւամորթ եւ միւսը հնդիկ է . իսկ աչակերտը Մալեցի է :

Մաքսախոյս Մահալը մտածելով որ եթէ այս ռճրագործները մատնէ՝ լաւ վարձատրութիւն մը կրնայ ստանալ , եւ բոլոր այս տեղի մարդոց պէս ինքն ալ գիտնալով որ ես մտերիմ կապակցութիւն մ'ունիմ այնպիսի կնոջ մը հետ՝ որ մեր կառավարչին վրայ մեծ ազդեցութիւն ունի , ասկէց երկու օր առաջ ինձ եկաւ եւ քանի մը պայմաններով զանոնք մատնելու առաջարկութիւն ըրաւ . . . : Պայմաններն են՝ նախ բաւական մեծ կակ ստրկի գումար մ'իրեն համար , եւ երկրորդ Յւրոպա կամ Ամերիկա դացող նաւու մը մէջ իրեն համար տեղ մը , որպէս զի փախչի եւ խեղդիչներուն անողոքելի վրէժխնդրութենէն ազատի :

« Երեք մարդասպանները մարդկային ար-

դարու թեան ձեռքը մատնելու այս յարմար առի-
թը կորսնցընել չուզելով՝ մեծ հաճութեամբ ըն-
դունեցի այս առաջարկութիւնը, եւ խոստացայ
Մահալին որ կառավարչին երթամ եւ այս գործը
կարգի դնեմ. բայց ես ալ քանի մը պայմաններ
առաջարկեցի իրեն, անմեղ պայմաններ՝ որք ճալ-
մայի կը վերաբերին . . . եւ որոց վրայ երկարո-
րէն կը գրեմ՝ եթէ խորհած հնարքիս յաջողած
ըլլայն իմանամ, փասն զի Մահալ հիմա հոս պիտի
գայ : Արդ՝ նամակներս դեռ չգոցած, դորս վազն
եղնելիք Ռեյնէր շոգենաւով ճանքայ պիտի հանեմ,
որուն մէջ Մահալի համար ալ տեղ բռնած եմ եր-
բոր առաջարկած խորհուրդս յաջողի, ուրիշ կա-
րելոր գործի մը վրայ փակագլիծ մը բանալով քա-
նի մը խօսք ընեմ .

« Ա երջին նամակիս մէջ ճալմայի հօրը մահն
եւ իրեն ալ անգղիացւոց ձեռքով բանտարկուիլը
ձեզ ծանուցանելէս ետեւ՝ տեղեկութիւններ
խնդրեր էի Փարիզ բնակեալ Պ. Թրիբօ սեղանա-
ւորին եւ միանգամայն տարազագործին վրայ, որ
Կալկաթայի մէջ ալ երկրորդական վաճառատուն
մ'ունի : Այն խնդրած տեղեկութիւններս հի-
մա անօգուտ են՝ եթէ դժբաղդաբար լրսածս ըս-
տոյգ է . ուստի ձեզ կը մնայ պարագայից պա-
հանջման համեմատ պէտք եղածն ընել :

« Իր Կալկաթայի վաճառատունը մեծ գու-
մարներ պարտք ունի ինձ եւ Բօնտիշէրի մեր
ընկերին, եւ կըսուի թէ Պ. Թրիբօի գործերը հի-
մա խիստ խառնաշփոթ եւ վտանգաւոր կացու-

Թեան մէջ են . վասն զի նոր գործատուն մը բա-
նալ ուղեց , որպէս զի Պ . Ֆրանսոա Հարտի անուն
մեծ տարազագործին երկար ժամանակէ 'ի վեր
հաստատած հարուստ գործատունն անողոքելի
մրցանքով կործանէ : կը հաստատեն թէ այս ձեռ-
նարկու թեան մէջ արդէն Պ . Թրիրօ մեծ դրամա-
դըլուխ ընկղմեր է , եւ թէպէտ Պ . Ֆրանսոա
Հարտիի շատ վնաս տուեր է , բայց իր հարստու-
թիւնն ալ բոլորովին կորստեան վտանգի մէջ ձը-
գեր է . արդ՝ եթէ Պ . Թրիրօ անանկանայ , մեզ
ալ մեծ վնաս կըլլայ , որովհետեւ շատ ստակ
պարտք ունի թէ ինձ եւ թէ մերիններուն :

« Իրաց այս վիճակին մէջ վաւիաքելի էր որ
ձեր ձեռքն եղած ամենաղօրաւոր եւ բազմատե-
սակ միջոցներով Պ . Ֆրանսոա Հարտիի վարկը
կտարէիք եւ տունը կործանէիք , որ արդէն Պ .
Թրիրօի կատաղի հակառակու թեամբը բաւական
խախտած է : Եթէ այս հնարքը յաջողի , Պ . Թրի-
րօ քիչ ժամանակի մէջ իր վնասը կը հանէ եւ հա-
կառակորդին կործանմամբն իր յաջողութիւնն
ապահովելով՝ մեզ ունեցած պարտքը կը գոցէ :

« Անշուշտ ցաւալի բան է մեր ստակը ձեռք
բերելու համար այսպիսի ծայրայեղ միջոց մը բա-
նեցընելու ստիպուիլ , բայց հիմակուան ժամա-
նակս մարդ իրաւունք կունենայ իրեն դէմ ան-
դադար գործածուած զէնքը երբեմն ինք ալ
գործածելու : Եթէ մարդոց անիրաւութեան ու
չարութեան դէմ մաքառելու համար այսպէս
վարուիլ հարկ կըլլայ , պէտք է համբերութեամբ

յանձն առնուլ՝ մտածելով որ մեր այսպէս աշխարհային հարստութեանց ետեւէ ըլլալն Աստուծոյ ամենամեծ փառացը ծառայելու դիտաւորութեամբ է, իսկ մեր թշնամեաց ձեռքը մեղաց եւ դայթակղութեան վտանգաւոր միջոցներ են այս հարստութիւնները :

« Այս ըրածս խոնարհ առաջարկութիւն մ'է. եթէ այս առնելիքները ձեռք բերելու համար կարելի ալ ըլլար ինձ բան մ'ընել՝ չպիտի ընէի, վասն զի կամքիս տէրը ես չեմ . . . այլ իմ բոլոր ունեցածներուս պէս կամքս ալ անոնց կը վերաբերի՝ որոց կոյր հնազանդութիւն ուխտած եմ : »

Այս միջոցին դուրսէն թեթեւ ձայն մը դալով Պ. Ժօզիւէի գրութիւնն ընդ միջեց եւ ուշադրութիւնը գրաւեց : Յատկեց ոտք ելաւ, եւ ուղղակի պատուհանը երթալով լսեց որ դուրսէն երեք անգամ կամաց մը վանդակափեղկին զարկին :

« Դ՞նն ես, Մահալ, հարցուց Պ. Ժօզիւէ ցած ձայնով : — Այո՛, ես եմ, ըսաւ մէկը դուրսէն նոյնպէս ցած ձայնով : — Մալէցին ի՞նչ ըրաւ : — Յաջողութեամբ կատարեց . . . : — Իրմէ կըսես, գոչեց Պ. Ժօզիւէ խորին գոհունակունակութեամբ . . . աղէկ գիտես : — Ապահով եղիք . Մալէցիին պէս ճարպիկ եւ անվեհեր սատանայ չկրնար գտնուիլ : — Ճալմա ի՞նչ եղաւ : — Երբոր զօրապետին վերջին թղթակցութեան քանի մը խօսքերը յիշեցի, հաւտաց որ զօրապետին կողմէն կուգայի եւ Չանտիի աւերակներուն մէջ զայն պիտի գտնէր : — Ըսել է որ այս ժա-

մուս . . . — Ճալմա Չանտիի աւերակները դացած է , ուր սեւամորթը , խառնածինն ու հնդիկը միայն պիտի գտնէ . վասն զի հոն ժամագիր եղած են Մալէցիին հետ , որ ճալմայինն ջած ժամանակ թեւին վրայ նկարներ բանեցաւ : — Գացիր տեսար այն ստորերկրեայ անոցքը : — Երէկ դացի . . . արձանին պատուանդան եղող քարերուն մէկն իր վրայ դառնալով կը բացուի , եւ սանդուղը լայն է . . . եւ մեզի բաւական : — Երեք խեղդիչները վրագ կասկած չունին : — Բնաւ . . . առաւօտուն տեսայ դանոնք , եւ այս իրիկուն ալ Մալէցին անոնց քով երթալէ առաջ ինձ եկաւ եւ ամեն բան պատմեց , վասն զի ցերեկը Չանտիի աւերակները երթալու համար ձակելով թուփերուն մէջ պահուրտած էր : — Մահալ , եթէ այդ ըսածներդ ստոյգ են , եթէ ամեն բան յաջողի , ոչ միայն թողու թիւն , այլ եւ մեծ վարձատրութիւն պիտի գտնես : Արդէն տեղդ բռնուած է Ախյթէր շոգենաւին մէջ , եւ վաղը ճանբայ ելնելով խեղդիչներուն վրէժնդրութենէն վախնալու բան մը չունիս . վասն զի եթէ հոս մնաս , իրենց դըլուխներուն մահուան վրէժն առնելու համար մինչեւ հոս կուգան ետեւէդ կիցնան : Նախախնամութիւնը քեզ ընտրեց որ այդ երեք եղեռնագործներն արդարութեան ձեռքը մատնես . . . Աստուած պիտի օրհնէ քեզ . . . դնա շիտակ կառավարչին դուռը զիս սպասէ . . . ես քեզ կը ներկայացընեմ իրեն . վասն զի այս գործն այն աստիճան կարեւոր է , որ զիշերանց երթալ զին-

Քը քունէն արթնցընելու չեմ վարանիր . . . :
Ուրեմն շուտով հոն գնա . . . ես ալ ետեւէդ
կը հասնիմ : »

Մահալ արագ քայլերով հեռացաւ , եւ նորէն
տանը մէջ լռութիւն տիրեց :

Պ . Ժողիւէ գրասենեակը դարձաւ , ու սկը-
սած յիշատակագրին վրայ հետեւեալ խօսքերն
աւելցուց անպարանօք :

« Ինչ որ ալ ըլլայ , անհնար է որ ճալմա Պա-
թավիայէն մեկնի եւ յառաջիկայ փետրվար 13ին
Փարիզ գտնուի . . . : Այս մասին անհոգ ե-
ղիք . . . : Ինչպէս որ նախատեսած էի , այս
գիշեր ոտքի վրայ պիտի անցունեմ . հիմա կա-
ռավարչին տունը պիտի երթամ . . . վաղը քանի
մը խօսք ալ կաւելցընեմ այս երկար յիշատակա-
գրրիս վրայ , որ Ալիւթէր շոգենաւով Ներոպա
պիտի հասնի : »

Պ . Ժողիւէ գրասեղանը գոցելէ ետեւ զան-
գակը քաշեց եւ արտորնօք դռնէն դուրս ելաւ
կառավարչին պալատն երթալու համար : Տանը
մէջի մարդիկը գիշեր ժամանակ անոր այսպէս
շտապաւ դուրս ելնելը տեսնելով՝ դարմանքի
մէջ ինկան :

Այս պատմելնէս ետեւ՝ ընթերցողը Չանտիի
աւերակները տանինք :



ԶԱՆՏԻ ԱՒԵՐԱԿՆԵՐԸ

Յերեկուան փոթորիկէն ետեւ , որուն մօտե-
նալը խեղդիչին ճալմայի վրայ ըրած գործողու-
թեան խիստ օգտակար եղեր էր , հանդարտ եւ
պարզ գիշեր մը յաջորդեր էր :

Ղուսնին սկաւառակը ծանր ծանր կը բարձ-
րանար հոյաձեւ աւերակներու ետեւէ , որք Պա-
թալիայէն երեք փարսախ հեռու թանձր անտա-
ռէ մը շրջապատեալ բլրոյ մը վրայ կը տեսնուէին :

Ղայնանիստ քարեր , աղիւսէ բարձր պատեր ,
զոր ժամանակը մաշեցուցեր էր , եւ վայրի խոտե-
րով ծածկուած սիւնաղարդ դահլիճներ որոշ կեր-
պիւնկարուած կը տեսնուէին Ղուսնին արծաթա-
փայլ սփիւռին մէջ՝ որ հորիզոնին ծայրը երկնից
յստակ եւ ջինջ կապոյտին հետ կը խառնուէր :

Ղուսնին քանի մը ճառագայթները դահլիճ-
ներէն մէկուն պատառուած քէն ներս մտնելով
ահագին սանդուղի մը ստորոտը կեցած երկու
վիթխարի արձաններու վրայ դարկած էին . սան-
դուղին քայքայեալ աստիճաններն աներեւոյթ
կըլլային խոտերուն մամուռներուն ու մացառնե-
րուն ներքեւ : Արձաններուն մէկը կէս մէջքէն
խորտակած ըլլալով , կտորուանքը գետինը ծած-
կեր էին . միւս արձանն ամբողջ եւ կանգուն կե-

ցած էր , եւ տեսնողին սարսափ կը պատճառէր Անհեթեթ մեծութեամբ եւ ամենի դէմքով մարդ մ'էր , որուն գլուխը միայն երեք տոնաչափ բարձրութիւն ունէր : Իր մոխրագոյն երեսին վրայ սեւ ու փայլուն քարէ երկու բիբ գրուած էր . բերանը լայն խորունկ եւ տարապայման բացուած . իր քարակերտ շրթանց մէջ գեռունները բոյն շիներ էին , եւ լուսնին լուսովը կը տեսնուէր որ սոսկալի կերպիւ կը վիստային բերնին մէջ Խորհրդանիշ դարդերով նրկարեալ լայն դօտի մը պատած էր այս արձանին մէջքը , եւ աջ կողմէն երկայն սուր մը կախուած . իր չորս խոշոր ձեռքերով փղի գլուխ մը , գալարուն օձ մը , մարդու գանկ մը եւ ճայի նման ջրային թռչուն մը բռնած էր :

Նուսինը քովընտի դարկած ըլլալուն արձանին վրայ , դէմքին կէսն առաւել լուսաւորուած էր , եւ ասով առաւել սոսկավիթ խար տեսիլ մ'ուսնէր :

Տեղ տեղ , կիսաւէր պատերուն մէջ ճարտարութեամբ դրօշուած քարէ պատկերներու մնացորդներ կը տեսնուին : Ասոնցմէ մէկը՝ որ ամենէն լաւ պահուածն էր , փղի գլխով եւ հոլամուկի թեւերով մարդ մ'էր , որ տղայ մը կը կլնէր :

Այս թխականանչ ու խիտ ծառերով շրջապատեալ եւ զարհուրելի խորհրդանշաններով ծածկեալ աւերակները լուսնի լուսով եւ գիշերին խոր լռութեան մէջ տեսնողն աննկարագրելի սոսկում մը կ'զգար :

Հին մեհեան մ'էր այն ճավայի խորհրդաւոր
եւ արիւնասխանձ աստուածներէն մէկուն նուիր-
ուած : Պատերէն մէկուն առջեւ հիւղակ մը կը
տեսնուէր փլատակներուն քարերէն ու աղիւսնե-
րէն տձեւ կերպով շինուած . դուռը՝ որ կնիւննե-
րէ հիւսուած էր, բաց ըլլալով, մէջէն կարմիր բո-
ցերու լոյս մը դուրս կը դարնէր եւ գետինը ծած-
կող բարձր խոտերուն վրայ կը ցոլանար :

Երեք մարդ կային այս հիւղակին մէջ՝ որ
քօքենիի թելերէ շինուած պատրոյգով եւ ար-
մաւի իւղով լցուած կաւէ կանդեղով մը լուսա-
ւորուած էր : Մարդոցմէն մէկը գրեթէ քառսուն
տարու կար, եւրոպական աղքատիկ զգեստներ
հագած . իր դեղին եւ գրեթէ ճերմակ դոյնէն կը
հասկցուէր որ խառնածին էր, այսինքն սպիտա-
կամորթ հօրմէ եւ հնդիկ մօրմէ ծնած էր : Երկ-
րորդն էր հուժկու սեւ մը՝ լայն ուսերով եւ նիհար
սրունքով, որուն գիսախուլ մազերը ճերմկնալ
ակսեր էին . այս մարդը ցնցոտիներ հագած էր, եւ
հնդիկին քով ոտքի վրայ կեցած : Երրորդը հիւ-
ղակին մէկ անկիւնը փախաթի մը վրայ պառկած
կը ննջէր :

Այս երեք անձինք խեղդիչներուն գլուխ-
ներն էին, որք Հնդկաստանի ցամաք երկրին մէջ
հալած ուելով՝ մաքսախոյս Մահալին առաջնոր-
դութեամբ ճավա փախեր ապաստաններ էին :

« Մալէցին ուշացաւ, ըսաւ խառնածինը որ
Փարէնկա կը կոչուէր եւ այս մարդադաւ աղան-
դին ամենէն ահաւոր գլուխներէն մէկն էր . թե-

րեւս, ըսաւ, մեր հրամանները կատարած ժամանակ ճարմայէն սպաննուեցաւ : — Այս առարկան փոթորիկը բոլոր օձերն ու զեռուները դետնին տակէն դուրս հանեց, ըսաւ սեւը, կարելի է որ Մալէցին խածած ըլլան . . . եւ այս ժամուս անոր մարմինն օձերու բոյն մ'եղած ըլլայ : — Մեր բարե գործին ծառայելու համար, ըսաւ Յարէնկա տխուր դէմքով, պէտք է աներկիւղ դիմադրաւել եւ մեռնելու պատրաստ ըլլալ . . . : — Մեռցընելու ալ յաւելցուց սեւը :

Այս միջոցին խեղդուկ ձայն մ'եւ քանի մ'անյարիր խօսքեր լսուելով՝ երկու խօսակիցները մէկէն գլուխնին քնացած մարդուն դարձուցին : Այս երրորդը հագիւ երսուն տարու կար . դէմքը լերկ եւ պղնձագոյն դեղին . խոշոր կտաւէ պարեգօտ մը հագած եւ դեղին ու սեւ գիծերով փոքրիկ փաթթոց մը կապած էր գլուխը . առնցմէ կը հասկցուէր որ բուն հնդկաստանցի էր . իր քունը կարծես թէ ահուելի երազներով անհանգիստ կըլլար . առատ քրտինք մը ծածկած էր անոր երեսը՝ որ վախէն կնճռտած էր . երազին մէջ կը խօսէր . ձայնը կարճ էր եւ ընդհատ, եւ խօսած ժամանակ բոլոր մարմինը ջղային ցնցամամբ կը թոթվուէր :

« Միշտ նոյն երազն է, ըսաւ Յարէնկա սեւին, միշտ այն մարդուն յիշատակն է որ . . . : — Ո՞ր մարդուն, հարցուց սեւը : — Չե՞ս յիշեր որ ասկէց հինգ տարի առաջ՝ Քէննէտի անուն վայրագ դնդապետը . . . հնդկաց դահիճը՝ քսան ձիով,

չորս փիղով եւ յիսուն ծառայով Գանգէսի եզեր-
քը վագր որսալու եկեր էր : — Այո՛ , կը յիշեմ ը-
սաւ սեւը , եւ մեք երեքս՝ մարդոց որսորդներս՝
անոր ըրած որսէն լաւագոյն որս մ'ըրինք : Քէն-
նէտի՛ իր ձիերովը փիղերովն ու բազմաթիւ ծա-
ռաներովը չկրցաւ իր վագրը որսալ . . . եւ մեք
մեր վագրը որսացինք , յաւելցուց դժոխային
հեզնութեամբ : — Այո՛ , Քէննէտի , այն մարդա-
կերպ վագրը մեր թակարդն ինկաւ , եւ Բարեհա-
շտեան եղբայրներն այս գեղեցիկ որսը Պօնփանի
դիցուհւոյն նուիրեցին : Ար յիշես նաեւ որ երբ
Քէննէտին կը խեղդէինք , յանկարծ ճանապար-
հորդ մը նշմարեցինք , որ մեր այս գործողութիւ-
նը տեսաւ , ուստի եւ դայն ալ մեռցընել հարկ
եղաւ . . . : Այս վերջի մարդուն մահուան յի-
շատակն այն ժամանակէն 'ի վեր մեր հնդիկ ըն-
կերը կը հալածէ երազին մէջ : — Արթուն եղած
ժամանակն ալ , ըսաւ սեւն իմաստալից աչքով մը
Փարէնկայի երեսը նայելով : — Ականջ դիր , ը-
սաւ Փարէնկա հնդիկը ցուցընելով , որ երազին
յուզմանց մէջ նորէն սկսեր էր խեղդուել ճայնով
խօսիլ . մտիկ ըրէ , ահա այն ճանապարհորդին
պատասխանները կը կրկնէ՝ երբոր առաջարկե-
ցինք իրեն կամ մեռնիլ կամ մեր Բարեհաշտ ընկերու-
թեան ծառայել . . . : Մարդուն պատասխան-
ներն այն աստիճան տալաւորութիւն ըրեր են
մտքին վրայ , որ միշտ անոնցմով գրաւեալ է : »

Արդարեւ , հնդիկը երազին մէջ բարձր ճայ-
նիւ դադանի հարցաքննութիւն մը կարտասանէր ,

որուն հարցումներն ալ պատասխաններն ալ ինք
կընէր :

« Ճանապարհորդ , կըսէր ինքնիրեն ընդ-
հատ ձայնիւ եւ ստէպ լռելով , ի՞նչ է այդ սեւ
դիծը ճակատիդ վրայ , որ մէկ քունքէդ միւսը եր-
կընցած է . . . այդ դիծն աղետաբեր նշան մը
նէ . . . նայուածքդ մահուան պէս տխուր
է . . . Արդեօք չարութեան մը զոհ եղար . . .
ուրեմն մեզ հետ եկու . . . Պօհվանի քեզ պէս
զոհերուն վրէժխնդիր է . . . Արդեօք չարչա-
րանք կրեցիր : — Այո , շատ չարչարանք կրե-
ցի . . . — Ո՞րչափ ժամանակէ 'ի վեր : — Եր-
կար ժամանակէ 'ի վեր : — Տակաւին կը կրէս :
— Այո , միշտ : — Քեզ չարչարողին ի՞նչ փոխա-
րինութիւն ընել կը խորհիս : — Գթութիւն :
— Չարուածի դէմ հարուած տալ չէս ուղեր :
— Ատելութեան դէմ սէր հատուցանել կուզեմ :
— Ո՞վ ես ուրեմն դու՝ որ դէշութեան դէմ բա-
րիք ընել կուզես : — Ես եմ այն որ կը սիրէ կը
չարչարուի եւ կը ներէ :

— Կը լսես , եղբայր , ըսաւ սեւը Ֆարէնկա-
յին , ճանապարհորդին մեռնելէն առաջ ըսած
խօսքերը չէ մոռցած : — Երազը կը հալածէ զին-
քը . . . մտիկ ըրէ , տակաւին կը խօսի . . . հր-
չափ դեղներ է : »

« Ճանապարհորդ , շարունակեց հնդիկը
միշտ իր երազովը դրաւեալ , մեք երեք հոգի
ենք , երեքս ալ քաջասիրտ եւ աներկիւղ . մահը
ձեռքերնուս մէջ է . դու տեսար որ հիմա մարդ

մը գոհեցինք մեր բարի գործին . ուրեմն կամ
մեզ ընկեր եղիր . . . կամ մեռիր . . . մեռիր . . .
մեռիր . . . Ո՛հ , այդ ի՛նչ նայուածք է . . .
կաղաչեմ , մի ընկր . . . ինձ այդպէս մի նա-
յիր . . . : »

Այս ըսելով հնդիկն ուժգին շարժում մ'ը-
րաւ որպէս թէ իրեն մօտեցող բան մ'եստ մղել
կուզէր . ցնցուելով արթնցաւ , եւ ձեռքը քրտ-
նալից ճակատին տանելով՝ ապուշ աչօք չորս կողմը
նայիլ սկսաւ :

« Եղբայր . . . միշտ այն երանդն է , ըսաւ
Յարէնկա . կտրիճ մարդորսի մը համար գլուխդ
քիչ մը ակարէ . . . բայց բարեբաղդաբար սիր-
տըդ ու բազուկդ ուժով են . . . : »

Հնդիկը ձեռքերը ճակատին դրած՝ վայրկեան
մը լուռ կենալէ ետեւ՝ ըսաւ . « Շատ ժամանակ
է որ այն ճանապարհորդին վրայ երազ չէի տե-
տած : — Միթէ մեռած չէ , ըսաւ Յարէնկա հեզ-
նութեամբ ուսերը թոթվելով . միթէ ճոպանն
անոր պարանոցը նետողը դու չէի՞ր : — Այո՛ ,
ըսաւ հնդիկը ցնցուելով . . . — Միթէ անոր
համար ալ փոս մը չբացի՞նք Քէնէտի դնդապե-
տին փոսին քով : Միթէ անդղիացի դահճին պէս
զայն ալ չթաղեցի՞նք աւաղին եւ կնիւններուն
ներքեւ , ըսաւ սեւը : — Այո , փոսը փորեցինք ,
պատասխանեց հնդիկը դողալով , սակայն տարիի
մը չափ կայ , իրիկուն մը Պոմպայ քաղաքին դրան
մօտ կեցած մեր եղբայրներէն մէկուն կ'սպա-
սէի . . . արեւը փոքրիկ բլրին արեւելեան կող-

մի մեհեանին ետեւէն մայրը մտնելու վրայ էր ,
(այս ամենը կարծես թէ տակաւին աչքիս առջեւն
է) , թղենիի մը տակը նստած էի . . . ծանր հան-
դարտ եւ ամուր ռանաձայն մը լսեցի . գլուխս
այն կողմ դարձուցի . . . տեսայ որ նոյն ինքն
ճանապարհորդն էր որ քաղքին դռնէն դուրս
կելնէր : — Տեսի՛լք , դարձեալ տեսի՛լք , ըսաւ
սեւը : — Այո՛ , տեսիլք կամ տարտամ նմանու-
թիւն մը , յաւելցուց Ֆարէնկա : — Ճակտին վը-
րայ երկնցած սեւ գիծէն ճանչեցի զինքը որ ըս-
տուգիւ նա էր , եւ վախէս անշարժ մնացի աչ-
քերս խենդի պէս բացած : Չիս տեսնելով կանգ
առաւ եւ հանդարտ ու տխուր նայուածք մը ձը-
գեց վրաս . . . : Իսկ ես չկրնալով ինք զինքս
բռնել , & նոյն ինքն է տոռացի : — Այո՛ , ես եմ ,
պատասխանեց իր անուշ ձայնովը . քու ամեն
մեռուցած մարդիկդ ինձ պէս յարութիւն կառ-
նուն յ եւ մատովը երկինքը ցուցուց : — Ինչո՞ւ
համար մարդ կը մեռցընես : Մտիկ ըրէ որ ը-
տեմ . . . ես ճավայէն կուգամ եւ աշխարհի միւս
ծայրը կերթամ՝ յաւերժական ձիւնով ծածկուած
երկիր մը . . . : Թէ հոն եւ թէ հոս , արեւա-
կէզ կամ սառնապատ երկրի վրայ , միշտ ես
եմ . . . : Այսպէս , քու ճոպանովդ սպաննուած
մարդոց հոգին , թէ այս աշխարհիս մէջ եւ թէ
երկինքը , թէ այս ծածկոյթին եւ թէ ուրիշի մը
ներքեւ , միշտ հոգի է . . . եւ չես կրնար անոր
բան մ'ընել . . . ուրեմն ինչո՞ւ համար մարդ
կ'սպաննես . . . » — Եւ տխրութեամբ գլուխը

երերցընելով . . . անցաւ դնաց . . . միշտ ծան-
րաքայլ եւ գլուխն առ ջին ծռած . . . եւ մեհ-
եանին բլրէն վեր ելաւ : Աչքովս ետեւէն գացի
առանց տեղէս կարենալ շարժելու : Երբոր արեւը
մայրը կը մտնէր , բլուրին գագաթին վրայ կանգ
առաւ . . . իր բարձր հասակը երկինքին վրայ
նկարուած տեսնուեցաւ , եւ այնուհետեւ աներե-
ւոյթ եղաւ աչքէս : Ո՛հ , նոյն ինքն էր . . . յա-
ւելցուց հնդիկը դողալով , եւ երկար լռութենէ
մ'ետեւ կրկնեց . « Այո՛ , նոյն ինքն էր . . . »

Հնդիկն այս գարմանալի դէպքը շատ ան-
գամ իր ընկերներուն պատմելով՝ միշտ այսպէս
նկարագրած էր : Այս անսխալիտիս համոզումը վեր-
ջապէս խախտեց անոնց թերահաւատութիւնը ,
կամ մանաւանդ այս գերմարդկային երեւցած
դէպքին բնական պատճառ մը գտնելու հար-
կադրեց դանոնք :

Ծարէնկա՝ վայրկեան մը խորհելէ ետեւ՝
« կարելի է որ , ըսաւ , ճոպանին կապն աղէկ
մը չէ սեղմեր ճանապարհորդին պարանոցը , եւ
գեռ բոլորովին չմեռած թաղուելով , փոսը ծած-
կող կնիւններուն մէջէն օդը ներս մտեր ու մար-
դը ողջացեր է : — Ոչ , ոչ , ըսաւ հնդիկը գլուխը
թոթվելով , այն մարդը մեր սեռէն չէ . . . :
— Ի՞նչ ըսել կուզես , չեմ հասկընար : — Ես
գիտեմ հիմա . . . : — Գիտե՞ս մի : — Մտիկը ը-
րէք , Պօհվանիի որդւոց այսչափ դարերէ 'ի վեր
ըրած գոհերուն թիւը ոչինչ բան մ'է եթէ այս
սարսափելի ճանապարհորդին անցած տեղերն իր

ետեւը ձգած անհամար մեռեալներուն ու կի-
սամեռներուն հետ բաղդատուի : — Ա՛յդ մար-
դուն , գոչեցին սեւն ու Ֆարէնկա : — Ա՛յո՛ , այս
մարդուն , կրկնեց հնդիկն այն աստիճան հա-
մոզմամբ՝ որ իր ընկերներն ապշեցուց . տակա-
ւին մտիկ ըրէք եւ պիտի զարհուրիք : Երբոր ես
Պոմպայի դուռն այս ճանապարհորդին հանդիպե-
ցայ , ըսաւ ինձ թէ ճավայէն կուգար եւ դէպ 'ի
Հիւսիս կերթար . . . : Հետեւեալ օրը քօլէռան
սաստիկ ջարդ մ'ընել սկսաւ Պոմպայի մէջ . . .
եւ քիչ մը ետքն իմացուեցաւ որ նոյն հարուա-
ծը նախ հոս ճավայի մէջ սկսեր էր : — Ստոյգ
է , ըսաւ սեւը : — Տակաւին մտիկ ըրէք , յա-
րեց հնդիկը : Ճանապարհորդն ըսած էր ինձ թէ
դէպ 'ի Հիւսիս կերթար յաւերժական ձիւնով
ծածկուած երկիր մը . . . : Քօլէռան ալ նոյն-
պէս դէպ 'ի հիւսիս գնաց . . . Մասքաթէն ,
Սպահանէն , Բավրէժէն ու Տիխիսէն անցնելով
Սիպերիա հասաւ . . . : — Ճշմարիտ է , ըսաւ Ֆա-
րէնկա մտախոհ դէմքով : Քօլէռան ալ մարդու
մը պէս օրը հինգ կամ վեց փարսախ տեղ կը
քալէր . . . երբէք մի եւ նոյն ժամանակի մէջ
երկու տեղ երեւան չէր ելներ , այլ մարդու
քալուածքին պէս կամաց կամաց եւ միօրինակ
կերպով յառաջ կերթար . . . »

Այս տարօրինակ բաղդատութեան վրայ
հնդկին երկու ընկերները սարսափահար իրարու
երես նայեցան : Քանի մը վայրկեան լռութենէ
ետեւ սեւը դողալով ըսաւ հնդկին . « եւ դու կը

կարծես թէ այդ մարդը . . . — Ար կարծեմ թէ մեր մեռցուցած մարդը դժոխային աստուծոյ մը զօրութեամբ ողջնալով անոր հրամանաւ այս զարհուրելի հարուածը բերեր է երկրիս վրայ, եւ ամեն անցած տեղերը մահ կը տիռէ՝ առանց ինք մեռնելու . . . : Մի մոռնաք աւելցուց հնդիկը տխուր սրտայուզութեամբ, մի մոռնաք . . . այս զարհուրելի ճանապարհորդը շաւայէն անցաւ, քօլէռան հարուածեց շաւա . Պոմպայէն անցաւ, քօլէռան ապականեց Պոմպայ . դէպ 'ի հիւսիս գնաց, քօլէռան հոն ալ ասպատակեց . . . : »

Այս խօսքն ըսելէ ետեւ հնդիկը նորէն աչքը գոցեց եւ երազել սկսաւ : Սեւն ու Փարէնկա տխուր զարմանքով մը հիացեալ մնացին :

Քօլէռային համար հնդիկին ըսածները ճշմարիտ էին . վասն զի այս ահեղասաստ հարուածին ընթացքը՝ որ մինչեւ զայսօր անմեկնելի մընացած է, օրը հինգ կամ վեց վարսախի ճանքայ է միայն, եւ երբէք մի եւ նոյն ժամանակի մէջ երկու տեղ չգտնուիր : Աթէ մէկն այս աշխարհայած հարուածին բռնած ծանր բայց միշտ յառաջադէմ ընթացքն 1831ին գծուած աշխարհացոյց քարտէսներուն վրայ դիտէ, մարդու մը ճանապարհորդութեան ամեն կամահաճութիւններն ու դիպուածական հանգամանքները զարմանօք կը տեսնէ անոնց մէջ : Փոխանակ այն կողմէն անցնելու՝ այս կողմէն կանցնի . . . երկրի մը մէջ այս կամ այն դաւառը կընտրէ . . .

դաւառներուն մէջ քաղաք մը . . . քաղաքի մը
մէջ թաղ մը . . . թաղի մը մէջ փողոց մը . . .
փողոցի մը մէջ տուն մը . . . մինչեւ անգամ
դադրելու կամ հանգչելու տեղեր կընտրէ . . .
յետոյ նորէն կը շարունակէ իր ծանր անիմանա-
լի եւ աղետաբեր ընթացքը :

Հնդիկին խօսքերն՝ այս դարհուրելի տարօ-
րինակութիւնները նկարագրելով՝ անշուշտ ազ-
գու տպաւորութիւն մը պիտի ընէին սեւին եւ
Յարէնկային վրայ , այն վայրագ եւ ամեհի բնու-
թեանց , որք սոսկալի վարդապետութեանց հաւ-
տալով մտրդասպանութեան մենամուտութեամ-
բըն զգածեր էին :

Այո՛ . . . ստուգուած է որ Հնդկաստանի
մէջ այսպիսի նողկալի աղանդի մը հետեւողներ
գտնուած են , որք գրեթէ միշտ առանց պատ-
ճառի եւ առանց կրից մարդ կը մեռցընէին . . .
չէ թէ ուրիշ բանի համար , այլ միայն մեռցընե-
լու համար . . . մեռցընելու հեշտութեան հա-
մար . . . կենաց տեղ մահը դնելու համար . . .
կենդանի մարդը դիակնացընելու համար . . .
ինչպէս որ իրենց եղած դատաստանական հար-
ցափորձներուն մէջ խոստովանած են :

Մարդուս միտքը կը շուարի կը մնայ երբոր
այս այլանդակ երեւոյթներուն պատճառը խօ-
րախուզէ , Արդեօք ի՞նչ անհաւատալի դէպքե-
րու յաջորդութեամբ մարդիկ ինքզինքնին մա-
հու քահանայութեան նուիրած են . . . տարտ-
կոյս չկայ որ այսպիսի կրօնք մ'այնպիսի երկիր-

ներու մէջ միայն կրնայ ծաղկիլ , որք Հնդկաստանի պէս անագորուն ատրկութեան դատապարտեալ են , եւ ուր մարդիկ իրենց նմաններէն անխընայ կը կեղեքուին . . . : Այսպիսի կրօն մը . . . արդեօք հարստահարութեան դէմ չափազանց գրգռուած ատելութեան մ'արտայայտութիւնը չէ : Թերեւս այս մարդադաւ ազանդը՝ որուն ըսկիզբը դարուց խաւարին մէջ ծածկուած է , իբրեւ բռնաւորութեան դէմ գերութեան միակ հնարաւոր բողոք շարունակած է մինչեւ այսօր Հնդկաստանի մէջ : Վերջապէս , թերեւս Աստուած՝ իր անհասանելի տնօրէնութեամբ՝ այս Ֆանսէկարներն (խեղդիչ) ստեղծեր է , ինչպէս որ վագրերն ու օձերն ստեղծած է . . . :

Այս չարաշուք միաբանութեան նշանաւոր բաներէն մէկն ալ այն գաղտնի եւ խորհրդաւոր կապն է՝ որ իր ամեն անդամներն իրարու հետ կը միացընէ եւ ուրիշ մարդոցմէ կը հեռացընէ . քանզի այս ազանդաւորներն յատուկ օրէնք եւ յատուկ սովորութիւններ ունին իրենց համար . իրարու անձնուէր են , պաշտպան են , օգնական են . . . իրենց համար ոչ հայրենիք կայ եւ ոչ ընտանիք . . . աներեւոյթ եւ խաւարային իշխանութենէ մը միայն կախումն ունին , որուն հրամանացն ու վճիռներուն կոյր հնազանդութեամբ կը հետեւին , եւ որուն անուամբն ամեն կողմ կը ցրուին ~~բեմեռ շեմեռ~~ , ինչպէս որ իրենց վայրենական լեզուովը կըսեն

.

Նրեք խեղդիչները քանի մը վայրկեան խոր լռութեան մէջ կեցեր էին :

Գուրսը՝ լուսինն սպիտակ յորդ լոյս մ'եւ կապուտակ ստուերներ ախաժ էր աւերակներուն ահեղատեսիլ շեղջակուտին վրայ . աստղերը կը վառվռէին երկնից կամարին վրայ , եւ ժամանակ ժամանակ թեթեւ սիւզ մ'ադամաթղենիներուն ու արմաւենիներուն հաստ եւ փայլուն տերեւները կը տատանէր սօսափամբ : Միւնազարդ սրբահին ձախ կողմը բարձրացած անհեթեթ արձանին պատուանդանը՝ որ մեծամեծ սալաքարերու վրայ հաստատուած էր , կէս մը մացառներուն մէջ ծածկուած էր : Յանկարծ այն սալաքարերէն մէկը կարծես թէ խորասոյզ եղաւ առանց ձայնի , եւ ձեւացած փոսին մէջէն համազգեստ հագած մարդ մը մինչեւ կէս մէջքը դուրս ելնելով՝ ուշադրութեամբ չորս կողմը դիտեց եւ ականջ դրաւ : Տեսնելով հիւղակին ներսը վառած կանդեղին լոյսը որ դուրսի խոտերուն վրայ դողդոջելով կը ցոլանար , ետին դարձաւ , նշան մ'ըրաւ , եւ իսկոյն ինքը եւ երկու ուրիշ զինուորներ ամենամեծ լռութեամբ եւ զգուշութեամբ ստորերկրեայ սանդուղէ մը վեր ելնելով՝ աւերակներուն մէջ սպրդեցան : Քանի մը վայրկեան իրենց շարժուն ստուերները տեսնուեցան գետնին լուսաւոր մասերուն վրայ , յետոյ կիսաւէր պատերուն ետեւ աներեւոյթ եղան :

Խառնածինը հնդիկն ու սեւը՝ որք հիւղին մէջ մտախոհ նստեր էին , չկրցան քան մը նշմարել :

ԴԱՌԱՆ

Յարէնկա՛ քօլէնային դադտնի ընթացքին վրայ հնդկին խօսքերէն իր մտքին մէջ ծագած չարագոյժ խորհուրդները վանել ուզելով՝ յանկարծ խօսքը դարձուց : Աչքն աղօտ բոցով մը փայլեցաւ , դէմքը վայրագ խանդով մը վառեցաւ եւ գոչեց .

« Պօհվանի՛ . . . մեղ պէս անվեհեր մարդորսներուն վրայ միշտ կը հսկէ . եղբայրք , սիրտ առէք , ամենեւին մի վախնաք . . . աշխարհս մեծ է . . . եւ մեղ համար ամեն տեղ որս կայ . . . Անդդիացիք Հնդկաստանէն փախչելու կը հարկադրեն մեզ՝ որ Բաբ-Գադին գլուխն ենք . բայց հոգ չէ . մեր եղբայրները միշտ հոն են , միշտ ահաւոր , միշտ բազմաթիւ , եւ միշտ ծածկուած այն սեւ կարիճներուն պէս՝ որոց ներկայութիւնըն իրենց մահաբեր խայթումէն կիմացուի : Աքտորը մեր դործողութեանց սահմանն աւելի կընդարձակէ . . . : Եղբայր , Ամերիկան քուկդ է ըսաւ հնդկին՝ ներշնչեալ դէմքով մը , Ափրիկէն քուկդ է , ըսաւ սեւին , Եւրոպա ալ իմա . . . : Ուր որ մարդիկ կան՝ հոն դահիճներ եւ դոհեր կան . . . ուր որ զօհեր կան՝ ատելութեամբ ուռուցեալ սրտեր կան . մեր դործը պիտի ըլլայ՝

այն ատելութիւնները վրէժխնդրութեան բոցով
բորբոքել . մեր դործը պիտի ըլլայ նենդու-
թեամբ եւ հրապուրանօք մեր մէջ առնուլ եւ
Պօհիլանիի ծառայ ընել այն ամեն մարդիկը՝ ու-
բոց քաջութենէն անվեհերութենէն ու նախան-
ձայուղութենէն կրնանք օգուտ քաղել : Մեր
մէջ եւ մեզ համար աշխատինք որ անձնութեան
թեան ու անձնութեան կողմէ իրար դերա-
զանցենք , իրարու օգնական , ուժ եւ նեցուկ ըլ-
լանք : Անոնք որ մեզ հետ չեն՝ մեր որսն ըլլան .
առանձին ըլլանք ամենուն մէջ եւ ամենուն դէմ :
Մեզ համար ոչ հայրենիք կայ եւ ոչ ընտանիք .
մեր ընտանիքը մեր եղբարքն են , եւ մեր հայրե-
նիքն ալ . . . բոլոր աշխարհ : »

Այս վայրենի ճարտարխօսութիւնը խոր աը-
պաւորութիւն մ'ըրաւ սեւին ու հնդկին վրայ ,
որք սովորաբար Պարէնկայի ազդեցութեան են-
թակայ էին , վասն զի միւսներէն հանճարեղ էր .
թէ եւ անոնք ալ այս արիւնառու ընկերութեան
ամենէն երեւելի եւ յաջողակ գլուխներն էին :

« Այո , իրաւունք ունիս , եղբայր , գոչեց
հնդիկը Պարէնկայի պէս բոցավառելով , աշխար-
հըս մերն է . . . : Հոս ճավայի մէջ անգամ մեր
ճանքուն հետքը ձգենք . . . : Մեր մեկնելէն
առաջ մեր Բրե-բրեժը հիմնենք այս կղզւոյն
մէջ . . . ուր շուտով կրնայ ծաւալիլ , վասն զի
հոս թշուառութիւն կայ . Հոլանտացիք ալ անդ-
ղիացւոյմէ վար չեն մնար ընչաքաղցութեան ու
կեղեքողութեան կողմէ . . . : Եղբայր , ես այս

կղզւոյն ճախճախուտ գետեղերաց վրայ՝ որք միշտ
մահաբեր են մշակութիւն ընողներուն, այնպիսի
մարդիկ տեսայ որք կարօտութենէ ստիպեալ
կաշխատէին, եւ ամենուն ալ դէմքը դիակի պէս
դալկահար էին. մէկ քանին հիւանդութենէ աշ-
խատութենէ եւ անօթութենէ սպառած՝ ինկան
եւ ալ չկրցան որք ելնել . . . : Նղբայր, մեր
բռե-բռե՞ր շատ կը մեծնայ այս երկրին մէջ : — Անց-
եալ իրիկուն, ըսաւ խառնածինը, լճին եղեր-
քըն սպառածի մ'ետեւ նստած էի, մանկա-
մարդ կին մը հոն եկաւ, որուն նիհար եւ արե-
ւակէզ մարմինը հաղիւ ծածկուած էր ցնցոտիի
մը կտորուանքով. գիրկը մանկիկ մ'ունէր զոր
լալով կը սեղմէր իր ցամքած ստինքին վրայ : Ն-
րեք անգամ համբուրեց երեսը եւ « գոնէ դու ալ
հօրդ պէս թշուառ չըլլաս » ըսելով վերցուց ջու-
րը նետեց : Տղան ճիչ մ'արձակելով աներեւոյթ
եղաւ . . . : վասն զի եղեգներուն մէջ պահուը-
տած կոկորդիլոսներն անոր ձայնը լսելնուն պէս
ուրախութեամբ լճին մէջ նետուեցան . . . :
Նղբայրք, հոս մայրերն իրենց դաւակաց ապագայ
թշուառութեանը վրայ գթալով կը մեռցընեն դա-
նոնք . ուստի մեր բռե-բռե՞ր շատ կրնայ աճիլ ու
դարգանալ այս երկրին մէջ : — Այս առաւօտ,
ըսաւ սեւն ալ, երբոր խարազանով սեւ դերի մը
կը խոշտանգէին, կարճահասակ ծեր մը՝ որ Պա-
թալիայի մէջ վաճառական մ'է, գեղի տունէն
ելեր քաղաքը կերթար գահաւորակի մը մէջ հեղ-
գաբար տարածուած, եւ երկու մատղաշ աղջ-

կանց տխուր գգուանքն ընդունելով կը հեշտա-
նար : Այն մարդուն կանանոցը լի է այսպիսի աղ-
ջիկներով , զորս ծախու կառնու իրենց աղքատ
ծնողքէն՝ որք զանոնք սնուցանելու կարողու-
թիւն չունին : Գահաւորակը՝ որուն մէջ այս փոք-
րիկ ծերն ու երկու աղջիկները նստած էին , տա-
սըներկու առոյգ եւ կորովի երիտասարդներ վե-
րուցած կը տանէին :

« Եղբայր , հոս այնպիսի մայրեր կան՝ որք
չքաւորութենէ ստիպեալ իրենց աղջիկները կը
վաճառեն . գերիներ կան՝ որք անդադար խարա-
զան կուտեն . մարդիկ կան՝ որք ուրիշ մարդիկ-
ները բռնաբարձ գրաստներու պէս կը վարեն . . .
ուստի մեր Բարե-Գործը շատ կրնայ ծաղկիլ այս երկ-
րին մէջ . . . : — Ոչ միայն այս երկրին մէջ , յա-
ւելցուց հնդկիկը , այլ եւ ուրիշ ամեն երկիրնե-
րու մէջ՝ ուր հարստահարութիւն , թշուառու-
թիւն , գերութիւն եւ բարուց ասկականութիւն
կը տիրէ : Երանի՛ թէ ճալման ալ մեր մէջ առնե-
լու եւ մեզ ընկեր ընելու կարող ըլլայինք , ինչպէս
որ մաքսախոյս Մահալ խրատ տուաւ մեզ . այն
ժամանակ մեր ճավա գալը կրկնապէս շահաւոր
կըլլայ . վասն զի ասկէց երթալնէս առաջ մեզ եղ-
բայր կուենենանք այն արի եւ ձեռներէց երիտա-
սարդը՝ որ բազում պատճառներ ունի մարդատ-
եաց ըլլալու : — Հիմա հոս պիտի գայ . . . իր
սրտին ոխը եւս առաւել դառնացընենք . հօրը
մահը , ազգականներուն ջարդը , իր բանտար-
կութիւնը յիշեցընենք . թող մէկ անգամ ատե-

լուծեան կրակը բորբոքի սրտին մէջ, եւ կը տեսնէք ինչպէս կը միանայ մեզ հետ »

Սեւը որ քանի մը վայրկենէ ՚ի վեր մտախոհ կեցեր էր, յանկարծ ըսաւ . « Եղբարք եթէ մաքսախոյս Մահալ մեզ խաբէ — Ա՛ն, գոչեց հնդիկը գրեթէ բարկանալով, իր նաւին մէջ մեզ պատսպարեց, ցամաքէն փախչելիս ապահովեց, եւ քիչ օրէն ալ իր հրամանատարութեան ներքեւ մտնելիք կօէլէթ նաւովը մեզ Պոմպայ պիտի տանի, ուր Ամերիկա Եւրոպա եւ Աֆրիկէ երթալիք նաւեր կրնանք դնել : — Ի՛նչ շահ կրնայ ունենալ մեզ մատնելով, ըսաւ Ծարէնկա . ազէկ գիտէ որ եթէ այնպիսի բան մ՛ընելու ըլլայ՝ Պօհվանիի որդւոց վրէժխնդրութենէն ազատ չկրնալ մնալ : — Վերջապէս, ըսաւ սեւը, Մահալ խօսք չտուան որ ճարման խաբելով այս իրիկուն հոս բերէ անգամ մը որ մեր մէջ դայ պէտք է որ մեզ ընկեր ըլլայ — Մաքսախոյս Մահալը չէր դարձեալ մեզ ըսողը թէ « Հրաման ըրէք Մալէցիին որ ճարմայի տաղաւարը երթայ, քնացած ժամանակ ներս մտնէ, եւ փոխանակ դայն մեռցընելու՝ թեւին վրայ Պօհվանիի անունը նկարէ : ճարմա ասկէց պիտի դատէ մեր եղբարց անվեհերութիւնը ճարտարութիւնն ու անձնուէր հնազանդութիւնը, եւ պիտի հասկընայ թէ այսպիսի մարդիկ ի՞նչ չեն կրնար ընել : Ուստի թէ դարմանքէն եւ թէ վախէն պիտի ստիպուի մեզ հետ միանալու : — Եւ եթէ մարդոց դէմ ատելութեան պատ-

ճառներ ունենալուն հակառակ չուզէ միաբանիլ
մեզ հետ. . . . Սյն ժամանակ Պօհլանի անոր բազ-
դը կը վճռէ, ըսաւ Յարէնկա սպառնալից դէմ-
քով. ես արդէն որոշած եմ ընելիքս: — Բայց
Մալէցին պիտի յաջողի՞ արդեօք ճարման քու-
նին մէջ բռնել, ըսաւ սեւը: — Մալէցին պէս
քաջասիրտ, արագաշարժ եւ ճարպիկ մարդ
դժուարաւ կը գտնուի, ըսաւ Յարէնկա: Անգամ
մը համարձակեցաւ սեւ յովազի մը որջը մտնելու
երբոր դադանն իր կորիւնը կը դիւցընէր. . . .
մայրն սպաննեց եւ էգ կորիւնը վերցուց տարաւ,
դոր ետքը եւրոպացի նաւապետի մը վաճառեց:
— Մալէցին յաջողեր է, դոչեց հնդիկն ականջ
դնելով տարօրինակ ձայնի մը՝ որ դիչերին եւ ան-
տառաց խոր լռութեան մէջ լսուեցաւ: — Այո՛,
իր որսը յափշտակող տանող անդղին կռինչն է,
ըսաւ սեւը նոյնպէս ականջ դնելով. այս նշանով
մեր եղբայրներն իրենց որսը ձեռք ձգած ըլլալ-
նին կիմացընեն: »

Քիչ մ'ետքը Մալէցին հիւղակին դռնէն
ներս մտաւ՝ կարմիր ու դեղին գիծերով բամ-
պակեայ մեծ կտաւի մը մէջ փաթթուած:

« Է՛, ի՞նչ ըրիր, ըսաւ սեւն անհանդիսա-
սրտով, յաջողեցա՞ր: — Ճարմա բոլոր կենացը մէջ
պիտի կրէ Բու՛ր-Գու՛ն նշանը, սլատասխանեց Մա-
լէցին գոռոզութեամբ: Անոր քով երթալու հա-
մար պարտաւորեցայ Պօհլանիին մարդ մը նուխ-
րել, որ ճանքուս վրայ կը գտնուէր. . . եւ մար-
մինը ծալուբային մօտ մացառներուն ներքեւ

Թողուցի : Բայց ճալմա մեր նշանն իր վրայ կը
կրէ հիմա : Այս բանն արդէն մաքսախոյս Մահալ
իմացած է : — ճալմա չարթնցաւ քունէն , հար-
ցուց հնդիկը հիանալով Մալէցիին ճարպիկու-
թեանը վրայ : — Եթէ արթննար , պատասխանեց
Մալէցին հանդարտութեամբ , ես մեռած էի . . .
որովհետեւ կենացը չպիտի դպչէի : — Վասն զի
անոր կեանքը մահուանէն աւելի օգտակար կըր-
նայ ըլլալ մեզ , ըսաւ խառնածինը , եւ Մալէցիին
դառնալով . — Եղբայր , Բրե-Գրեթին համար կեան-
քըդ վտանգի մէջ դնելով այն բանն ըրիր՝ ինչ
որ երէկ մեք ըրինք եւ վաղն ալ պիտի ընենք . . .
այսօր կը հնազանդիս , ուրիշ օր մը պիտի հրամա-
յես : — Ամենքս ալ Պօհվանիին ենք , ըսաւ Մա-
լէցին . ուրիշ ի՞նչ կայ ընելիք , հրաման ըրէք ,
պատրաստ եմ կատարելու : »

Մալէցին այս խօսքերն ըսած ժամանակ
խրճթին դրանը դարձած էր . յանկարծ կամաց
ձայնով մ'ըսաւ . « Ահա ճալմա դէպ 'ի հոս կու-
գայ . Մահալ մեզ չէ խաբեր . . . : — Թող զիս
չտեսնէ առ այժմ , ըսաւ Ֆարէնկա հիւղին մէկ
մութ խորշը քաշուելով եւ փսիաթի մը ներքեւ
պահուրտելով . դուք ջանացէք որ համոզէք
զինքը . . . եթէ դէմ կենայ . . . այն ժամա-
նակ զիտեմ ընելիքս . . . : »

Հաղիւ Ֆարէնկա այս խօսքը լմնցուցեր ու
փսիաթին ներքեւ մտեր էր , ճալմա խրճթին դու-
ռը հասաւ :

Երբոր ճալմա այս երեք ժանտաղէմ մարդի-

կը տեսաւ , 'ի սկզբան զարմանալով ետ քաշուեցաւ : Բայց չգիտելով որ այս մարդիկը Ֆանսէկարաց աղանդէն էին , եւ խմացած ըլլալով որ այս երկրին մէջ պանդոկ չգտնուելուն , ճանապարհորդները շատ անգամ գիշերները վրանիներ քեւկամ աւերակներու մէջ կանցունեն , վերստին քայլ մ'առաջ եկաւ : Երբոր իր առաջին զարմացումն անցաւ , եւ մարդոց մէկուն պղնձագոյն դէմքէն ու հագուստէն ճանչցաւ որ Հնդիկ էր , հնդկաց լեզուով ըսաւ անոր . « Ար կարծէի որ հոս եւրոպացի մը . . . դաղղիացի մը պիտի գըտնեմ . . . : — Փնտռած դաղղիացիդ դեռ չեկաւ , պատասխանեց Հնդիկը , բայց չուշանար կուգայ : » Հնդիկը ճալման ծուղակը ձգելու համար Մահալի բանեցուցած միջոցն այս հարցումէն հասկընալով ժամանակ վաստըկելու համար ճալմայի սխալ կարծիքը չցրեց :

« Գու կը ճանչես դաղղիացին , հարցուց ճալմա Ֆանսէկարին , — Քեզ պէս մեզ ալ ժամադիր եղած է հոս , պատասխանեց Հնդիկը : — Ի՞նչ բանի համար , ըսաւ ճալմա , որուն զարմանքը քանի կերթար կաւելնար : — Երբոր հոս գայ՝ կիմանաք . . . : — Միթէ Միմօն զօրապետն ըսաւ ձեզ որ հոս գտնուիք : — Այո՛ , Միմօն զօրապետը » պատասխանեց Հնդիկը :

Վայրկեան մը լռութիւն տիրելով , ճալմամտքովն այս զարմանալի դիպուածը մեկնելու կաշխատէր :

« Գուք ո՞վ էք » հարցուց Հնդկին կասկա-

ծոտ դէմքով մը . վասն զի Ծանսէկարի երկու ընկերներուն տխուր լռութեամբ իրարու երես նային իրեն կասկած տալ կ'սկսէր . . . — Ո՛վ ենք մեք , պատասխանեց Հնդիկը , մեք քուկդ ենք . . . եթէ դու ալ մերն ըլլալ ուզես : — Ոչես ձեզ պէտք ունիմ , ոչ դուք ալ ինձ պէտք ունիք . . . — Ո՛վ գիտէ : — Ես . . . գիտեմ . . . : — Շատ կը սխալիս . . . Անգղիացիք հայրդ սպաննեցին . . . որ թագաւոր մ'էր . . . քեզ ալ բանտարկեցին . . . բոլոր ունեցածդ կողոպտեցին . . . »

Այս սրտակէզ յիշատակութեան վրայ ճալմայի դէմքը տխրեցաւ , բոլոր մարմնովը ցնցըռեցաւ , եւ դառն ժպիտով մը շրթունքը կընձռեցաւ :

Ծանսէկարը շարունակեց . « Քու հայրդ արդար քաջ եւ իր ժողովրդեան սիրելի էր . զինքը Հայր Վեհանձին կը կոչէին , եւ արդարեւ արժանի էր այս անուան . . . : Միթէ չպիտի խընդրես անոր մահուան վրէժը . միթէ սիրտդ մաշկեցընող ատելութիւնն ամուլ պիտի մնայ : — Իմ հայրս դէն 'ի ձեռին մեռաւ . ես անոր մահուան վրէժն առի անգղիացիներէն՝ պատերազմի մէջ անոնցմէ շատերն սպաննելով : Այն մարդը որ հիմա հօրս տեղ դրած եմ եւ հօրս համար պատերազմած է , ըսաւ ինձ թէ այսուհետեւ յիմարութիւն էր հայրենի երկիրս վերստին ձեռք բերելու համար անգղիացւոց հետ կռուիլ : Երբոր անգղիացիք զիս թող տուին , երդում ըրի որ յաւիտեան

ուք չկոխեմ Հնդկաստանի երկիրը , եւ ես այն-
պիսի մարդ մ'եմ որ տուած երդումս երբէք չեմ
աւրեր . — Անոնք որ քեզ կապտեցին , բանտար-
կեցին , հայրդ սպաննեցին . . . մարդիկ են . . . :
Այնպիսի մարդիկ կան ուրիշ տեղեր , որոցմէ կըր-
նաս վրէժ առնուլ . . . թող ատելու թիւնդ ա-
նոնց վրայ թափի : — Մարդոց վրայ այդպիսի
խօսքեր ըրած ժամանակդ կը մոռնաս որ դու
ալ մարդ մ'ես : — Ես եւ իմ նմաններս մարդոցմէ
դերագոյն բան մ'ենք . . . : Մեք ուրիշ մար-
դոց նկատմամբ այն քաջասիրտ որսորդներուն
դիրքն ունինք՝ որք անտառներուն մէջ վայրի դա-
ղանաց ետեւէն կիյնան ու կը հալածեն . . . :
Կուզես դուն ալ մեզ պէս՝ մարդոցմէ դերագոյն
ըլլալ : Կուզես՝ քեզ եղած անիրաւութեանց վը-
րէժն առնուլ եւ սիրտդ լափող ատելու թիւնդ
ապահովութեամբ լիովին եւ անպատուհաս յա-
ղեցընել : — Քու խօսքերդ քանի կերթան ան-
հասկանալի կըլլան ինձ , ըսաւ ճալմա . ես սրտիս
մէջ ատելութիւն չունիմ . երբոր թշնամիս ինձ
արժանի մէկն է , քաջութեամբ կը կռուիմ հե-
տը . երբոր արժանի մէկը չէ , կարհամարհեմ . . . :
Ուստի ոչ քաջերու՝ ոչ ալ վատերու դէմ ատելու-
թիւն ունիմ : — Ա՛հ , մատնուեցանք , դոչեց յան-
կարծ սեւն արագ շարժմամբ դուռը ցուցընելով ,
ուսկից ճալմա եւ Հնդիկը քիչ քիչ հեռացեր էին
խօսակցած ժամանակնին , եւ հիւղին մէկ ան-
կիւնը կը դտնուէին այն միջոցին :

Յարէնկա , դոր ճալմա չէր տեսած , սեւին

աղաղակը լսելուն պէս, փախաթը վրայէն մէկդի նետեց, եւ դաշոյնը քաշելով վազրի պէս ցատկեց դուրս նետուեցաւ հիւղէն, եւ տեսնելով որ զինուորներու շրջանակածեւ խուճբ մը զգուշութեամբ յառաջ կուգար, մէկը զարկաւ դետինը տարածեց, ուրիշ երկուք ալ տասլալեց եւ աւերակներուն մէջ անհետ եղաւ :

Այս ամենն այն աստիճան արագութեամբ կատարուեցաւ, որ երբ ճալմա սեւին ահաբեկ գոչման պատճառը հասկընալու համար գլուխը դարձուց, Պարէնկա աներեւոյթ եղեր էր :

Նոյն միջոցին ճալմա եւ երեք խեղդիչները տեսան որ զինուորները խրճթին դռնէն հրացաններն իրենց վրայ ուղղեր էին, մինչդեռ մէկ քանին Պարէնկայի ետեւէն կը վազէին որ բռնեն :

Սեւը Մալէցին եւ Հնդիկը տեսնելով որ դէմ դնել անհնար էր, քանի մը խօսք ըսին իրարու եւ ձեռքերնին երկնցուցին որ զինուորները մէջերնէն ոմանց ձեռքն եղած պարաններով դան զիրենք կապեն :

Այն ժամանակ խուճբին հրամանատար Հոլանտացի հարիւրապետը խրճթէն ներս մտաւ : « Այս ալ, ըսաւ (ճալման ցուցընելով) զինուորներուն՝ որ երեք Պանսէկարները կը կապէին : — Անոր ալ կարգը կուգայ, հարիւրապետ իմ, ըսաւ ձերունի տասնապետ մը, հիմա դայն ալ կը կապենք : »

Ճալմա զարմանքէն քար կտրեր մ'նացեր էր՝ առանց բան մը հասկընալու այս եղածներէն . բայց

երբոր տեսաւ որ տասնապետն եւ երկու զինուոր
պարաններով իր վրայ կուգային որ զինքն ալ
կապեն , զայրադին ցասամբք ետ հրեց զանոնք ,
եւ ինքը դէպ 'ի դուռը դիմեց' ուր հարիւրապե-
տը կեցեր էր :

Չինուորները կարծելով որ ճալմա ալ միւս-
ներուն պէս հանդարտութեամբ անձնատուր պի-
տի ըլլար , չէին սպասեր այս դիմադրութեան .
ուստի քանի մը քայլ ետ քաշուեցան Քաճա-Սին-
կի որդւոյն աղնիւ եւ ծանր դէմքէն ակամայ
պատկառելով :

« Ինչո՞ւ համար զիս ալ այս մարդոց պէս
կապել կուգէք , դոչեց ճալմա հնդկերէն հարիւ-
րապետին՝ որ երկար ժամանակ հոլանտական դադ-
թականութեանց մէջ ծառայած ըլլալով հնդկացի
լեզուն կը հասկընար : — Քեզ ինչո՞ւ համար կա-
պել կուգենք մի՛ , թշուառական , անոր համար
որ այս մարդասպաններուն խումբէն ես » , Եւ
զինուորներուն դառնալով յարեց հոլանտերէն .
« Դուք ալ միթէ կը վախնամք ատկէ , կապեցէք ,
ամուր մը սեղմեցէք թեւերը , մինչեւ որ ուրիշ
ճոպան մ'ալ պարանոցը սեղմէ : — Ար սխալիք ,
ըսաւ ճալմա այնպիսի հանդարտ ծանրութեամբ
եւ անշիթի դէմքով մը որ զարմացուց հարիւրա-
պետը . իմ հոս գալս հազիւ քառորդ մը կայ . ես
այս մարդիկը չեմ ճանչեր . . . ես հոս դադ-
դիացի մը գտնելու յուսով եկայ : — Միթէ դու
ալ ասոնց պէս Ֆանսէկար չես , որո՞ւ պիտի կըլ-
նեցընես այդ սուտը : — Ստոնք Ֆանսէկար են ,

գոչեց ճալմա այնպիսի բնական սոսկումով մը ,
որ հարիւրապետը ձեռքով նշան ըրաւ զինուոր-
ներուն որ քիչ մը կենան ու չկապեն . այս մար-
դիկն այն սոսկալի մարդասպաններուն խումբէն
են եղեր եւ դուք զիս ասոնց մեղսակից կամ-
բաստանէք . . . ուրեմն հոգս չէ հիմա , ը-
սաւ երիտասարդն արհամարհոտ ժպիտով մ'ու-
սերը վեր վերցընելով : — Հոգս չէ ըսելը բաւա-
կան չէ , ըսաւ հարիւրապետը . մեղ տրուած տե-
ղեկութեանց շնորհիւ Պանսէկարները ճանչելու
գաղտնի նշանները գիտենք հիմա : — Նորէն կը-
սեմ ձեզ , Պարսն , թէ ես մահու չափ կատեմ
այդ գարշելի մարդասպանները . . . թէ ես հոս
եկած եմ . . . : »

Սեւը ճալմայի այս խօսքն ընդդիջելով կա-
տաղի ուրախութեամբ մ'ըսաւ հարիւրապետին .
« ճիշդ է ըսածդ , Բաբե-Գործին որդիքն իրենց մարմ-
նոյն վրայ նկարուած նշաններով կը ճանչեն զի-
րար . . . : Սեք գիտենք որ մեր ժամն եկած
է , պարանոցնիս ճոպանին պիտի տանք . . . :
Սեք ալ շատ անգամ մեր Բաբե-Գործին չձառայող
մարդոց պարանոցները ճոպանով սեղմած ենք . . . :
Նայէ նախ մեր թեւերը , եւ ետքն ալ այս երի-
տասարդինը տես : »

Հարիւրապետը սեւին խօսքը լաւ չհասկը-
նալով ըսաւ ճալմայի .

« Յայտնի է որ եթէ այս սեւին ըսածին պէս
ձեր թեւին վրայ այն գաղտնի նշանը չունիք , դոր
հիմա պիտի ստուգենք , եւ եթէ ձեր հոս գտնը-

ուելուն պատճառը գոհացուցիչ կերպով բացատրէք, երկու ժամէն թող կը տրուիք: — Իմ ըսածս չհասկըցար, ըսաւ սեւը հարիւրապետին. ճալմա արքայազուներ մեզնէ է, իր ձախ բազուկին վրայ Պօհվանիի անունը դրոշմուած է . . . : — Այո, մեզ պէս Բաբ-Գաբին որդի է, յաւելցուց Մալէցին: — Մեզ պէս Ֆանսէկար է » ըսաւ հնդիկը:

Նրեք խեղդիչները բարկանալով որ ճալմա իրենց Ֆանսէկար ըլլալը իմացած ժամանակ սուկում ցուցուց, պարծանք կը սեպէին իրենց հաւտացընել թէ Քաճա-Սինկի որդին ալ իրենց նողկալի ընկերութեան անդամ էր:

« Ի՞նչ պիտի պատասխանես ասոր » ըսաւ հարիւրապետը ճալմայի:

Ճալմա արհամարհոտ գլխով թեամբ մ'ուսերը վեր թռթվեց, եւ աջ ձեռքով իր պարեգօտին երկայն ու լայն թեւը վեր քաշելով՝ ձախ բազուկը բացաւ ցուցուց:

« Ի՞նչ յանդգնութիւն » գոչեց հարիւրապետը:

Եւ արդարեւ, բազկերակէն քիչ մը վեր, բաց կարմիր գունով Պօհվանիի անունը կը տեսնուէր հնդիկ նշանագրերով դրոշմուած:

Հարիւրապետը Մալէցիին ալ թեւը բանալով՝ նոյն անունն ու նոյն նշանները հոն ալ դրոշմուած տեսաւ. ասով ալ գոհ չըլլալով, սեւին ու հնդիկին թեւերն ալ քննեց ու տեսաւ որ անոնք ալ մի եւ նոյն նշաններն ունէին:

Այն ժամանակ հարիւրապետը ճալմայի դառնալով . « Թշուառականն , գոչեց զայրադին , դուն ասոնցմէ աւելի չարածճի ես : Ապեցէք սա գարշելին վատ մարդասպանի մը պէս , ըսաւ զինուորներուն , վատ մարդասպանի մը պէս , որ գերեզմանին եզրը հասած՝ սուտ կը խօսի . վասն զի կրելիք մահուան սլատիժը չպիտի ուշանայ :

Ճալմա , ապշած , շուարած , աչքը թեւին վրայ դրոշմեալ չարաշուք նկարներուն վրայ մ'նայցեր էր . ոչ խօսք մը կրնար բերնէն հանել եւ ոչ շարժում մ'ընել : Միտքը կը շարշարէր եւ չէր կրնար մեկնութիւն մը տալ այս անհասկանալի դորժին :

« Կը համարձակի՞ս այս նշանն ուրանալ , ըսաւ անոր հարիւրապետը ցասմամբ : — Ի՞նչպէս կրնամ ուրանալ տեսածս . . . աչքիս առջեւ կեցածը . . . ըսաւ ճալմա ապշեալ տարակուսանօք : — Բարեբաղդաբար այս անգամ չկրցար ուրանալ , Թշուառականն , ըսաւ հարիւրապետը . եւ դուք , զինուորք , հսկեցէք ատոր եւ իր ընկերներուն վրայ . . . ձեզնէ կուզեմ : »

Ճալմա այս ամենը տարօրինակ երազ մը կարծելով , առանց ընդդիմութեան թողուց որ զինքը կապեցին տարին : Հարիւրապետը զինուորներէն ոմանց հետ Ծարէնկան աւերակներուն մէջ երկար փնտռեց , բայց աշխատութիւնը պարապ ելաւ , եւ ժամ մ'ետքը Պաթալիա դարձաւ , ուր արդէն հասած էին ճալմա եւ երեք խեղդիչները

Այս անցքէն քանի մը ժամ ետքը , Պ . Ժօ-
զիւէ Վան-Տաէլ Պ . Ռօտէնի ուղղած երկար յիշա-
տակագրին վրայ հետեւեալ յաւելուածը կրնէր .

« . . . Պարագայներն այնպէս բերին որ ու-
րիշ կերպ չէի կրնար ընել . ուտի մեծ բարիք մը
ձեռք բերելու համար փոքրիկ գէշութիւն մ'նել
հարկ եղաւ : Երեք մարդասպան արդարութեան
ձեռքը մատնուեցան , եւ ճալմայի ալ առժամա-
նակեայ բանտարկութիւնն առաւել անարատ պայ-
ծառութեամբ իր անմեղութիւնը երեւան հանե-
լու պիտի ծառայէ :

« Արդէն այս առաւօտ քաղաքապետին դայի
եւ ճալմայի համար բարեխօսեցի : « Ռոմի հետեւիմ
« ձեռքս այդ երեք մեծ ոճրագործներն իշխա-
« նութեան ձեռքն ինկան , ըսի քաղաքապետին ,
« գոնէ 'ի շնորհս ինձ հոգ տարուի արեգական
« լուսոյն պէս յայտնի ընել ճալմա արքայազու-
« նին անմեղութիւնը , որ իր ազնիւ բարեմաս-
« նութիւններովն ու կրած դժբաղդութիւննե-
« րովն արդէն կարեկցութեան արժանի է : Ճշմա-
« րիտ կըսեմ , որ երբ երէկ աճապարանօք եկայ
« ձեզ իմացուցի թէ Չանտիի աւերակներուն մէջ
« Չանսէկարներ գումարուած են , բնաւ մտքէս
« չէր անցներ որ Սիմօն զօրապետին պէս ազնիւ
« անձի մը՝ որուն հետ ժամանակէ մ'ի վեր խիստ
« պատուաւոր յարաբերութիւններ ունիմ , որ-
« դեգիրն ալ (ճալմա) անոնց հետ պիտի շփո-
« թէին : Ուրեմն պէտք է անպատճառ երեւան
« հանել այն անհասկանալի դաղանիքը՝ որ ճալ-

« ման այս վտանգաւոր կտորութեան մէջ ձգած
« է , եւ ես այնչափ աներկմիտ եմ անոր անմե-
« ղութեան վրայ , որ բնաւ չնորհ կամ ներում
« չեմ խնդրեր անոր համար : Ինքը բաւական
« քաջութիւն ու արժանապատուութիւն ունի ,
« եւ կրնայ բանտին մէջ համբերութեամբ սպա-
« սել մինչեւ որ իր արդարութիւնը յայտնուի : »

« Արդ , կը տեսնէք որ այս ամեն ըսածներս
ճշմարիտ էին , եւ բնաւ սուտ մը չկար մէջը , վա-
որն զի չկայ աշխարհի մէջ մէկը՝ որ ինձ չափ հա-
մոզեալ ըլլայ ճալմայի անմեղութեան վրայ :

« Քաղաքապետը՝ ինչպէս որ կը յուսայի՝
պատասխան տուաւ ինձ թէ ինք ալ բարոյապէս
համոզուած էր երիտասարդ իշխանազնին անմե-
ղութեան վրայ , եւ թէ մեծ ակնածութեամբ պի-
տի վարուի անոր հետ , բայց պէտք է որ դատաս-
տանն ալ իր պաշտօնը կատարէ , վասն զի առանց
անոր կարելի չէ ամբաստանութեան ստութիւնն
ապացուցանել եւ հասկընալ թէ ինչ զարմանալի
դժբաղդութեամբ այն զաղտնի նշանը ճալմայի
թեւին վրայ նկարուեր է :

« Մաքսանենդ Մահալը՝ որ միայն կրնար այս
մասին ստոյգ տեղեկութիւններ տալ եւ դատաս-
տանը լուսաւորել , մէկ ժամէն Պաթալիայէն պի-
տի մեկնի Արւշիէր շողենաւոյ եւ Նգիպատոս եր-
թայ : Հիմա տոմսակ մը պիտի տամ ձեռքը որ
տանի նաւապետին տայ , որպէս զի հասկցուի
թէ վճարած նաւողչէքս անոր համար էր , միան-
գամայն այս երկար իշատակագիրս ալ անոր պի-

տի տամ . որովհետեւ Աւրոպա երթալիք նամակներն երէկ իրիկուն հաւաքուեցան , բայց ես ուղեցի որ նամակներս գոցելէ առաջ՝ այս առաւօտ քաղաքապետին հետ տեսնուիմ :

« Ահա այսպէս ճալմա արքայազունն ամիս մը հոս արգիլուած կը մնայ , եւ Ռիւյթէր շողե՛նաւով մեկնելու պատեհութիւնը կորսնցընելէ ետեւ՝ յառաջիկայ փետրվար 13ին Գաղղիա գրտնուիլը նիւթապէս անհնար կըլլայ իրեն :

« Ար տեսնէք . . . որ դուք հրամայեցիք , ես ալ կոյր հնազանդութեամբ ձեռքէս եկած միջոցներն ՚ի գործ դրի խորհելով որ վախճանը կարգարացընէ դանոնք , որովհետեւ կիմացընէք ինձ թէ Ղնկերութեան համար անհուն շահ մը կայ այս գործին մէջ : Ձեր ձեռքին տակ այնպէս վարուեցայ՝ ինչպէս որ պէտք է վարուինք մեր մեծաւորներուն ձեռքին մէջ . . . այսինքն իբրեւ գործիք . . . ըստ որում Աստուծոյ ամենամեծ փառացը համար առանց կամի դեմքեր՝ պէտք է ըլլանք մեր մեծաւորներուն ձեռքը : Թող ուրիշներն ուրանան մեր միաբանութիւնն ու դորութիւնը . ժամանակը մեզ հակառակ կը թուի , բայց դէպքերը միայն կը փոխուին , մեք չեն քիոխուիր :

* Յայտնի է որ բացարձակ եւ կրաւորական հնազանդութեան վարդապետութիւնը ձեռնարկութեամբ ընկերութեան առանցքն է , որ Աոյօլայի մեռնելու ժամանակն ըսած այս սարսափելի խօսքին մէջ կը բովանդակի . « Ղնկերութեան Բոլոր անդամներն երեւոյ ժշտասրնեբան յեռն եբեռ դեմի պեռի ըլլան : »


« Հնազանդութիւն եւ արիութիւն, գաղտնիք եւ համբերութիւն, խորամանկութիւն եւ անվեհերութիւն, միութիւն եւ անձնուիրութիւն մեր մէջ. վասն զի մեր հայրենիքն աշխարհ է, մեր ընտանիքը մեր եղբայրներն են, եւ մեր թագուհին Հոռմ է »

(Ստորագրութիւն) Ժ. Վ. »

Առաւօտեան ժամը տասնին միջոցները մաքսախոյս Մահալ այս կնքեալ յիշատակագիրն առնելով Պ. Ժօզիւէ Վան-Տաէլի տունէն մեկնեցաւ Ռիւյթէր շոգենաւն երթալու համար: Բայց մէկ ժամեաքը Մահալի մարմինը՝ Ծանակարներուն սովորական ձեւովը խեղդուած՝ կնիւններու ներքեւ պահուեր էր ծովեզերքին մէկ ամայի կողմը, ուր իր նաւակը գտնելու գացեր էր, որպէս զի հոն մտնելով Ռիւյթէր շոգենաւն երթայ:

Շոգենաւին ելնելէն ետեւ՝ երբոր մաքսախոյսին գիակը գտնուեցաւ, Պ. Ժօզիւէ դուր տեղը փնտռել տուաւ անոր յանձնած երկար յիշատակագիրը: Ռիւյթէրի նաւապետին արուելիք տոմսակն ալ նոյնպէս չգտնուեցաւ անոր վրայ:

Վերջապէս Ծարէնկայի հետքը գտնելու համար երկրին ամեն կողմն եղած խուզարկութիւնները պարապ ելան. խեղդիչներուն անուանի սլարագլուխը մէկ մ'ալ բնաւ չտեսնուեցաւ ճախայի մէջ:



2480

2481

2013

